

ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ
ՎԱԼԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՆԱՆՑ


ԳԱՐԴՄԱՆ-ՈՒՏԻՔԻ
ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ



ԵՐԵՎԱՆ 2022

ԳԻՐՔԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է ԲԱՆԱՆՑՈՒՄ ԾՆՎԱԾ ԵՎ ԲԱՆԱՆՑՅԱՆ
ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲՈԼՈՐ ԲԱՆԱՆՑԵՑԻՆԵՐԻՆ

STANANAB



Բանանց

Բանանցը կյանքիս ընթացքում տեսածս ավելի քան 3.000 հայկական գյուղերից ամենից հրաշալին է ամեն առումով, թե՛ կառուցապատելիս արգասաբեր հողի խնայման, թե՛ ճարտարապետության և թե՛ հարդարանքի տարրերի և ընդհանրապես գեղարվեստի առումով անգերազանցելի է: Ելնելով սրանից մի առանձին հատոր եմ պատրաստում՝ նվիրված միայն Բանանց գյուղին և մասնավորապես նրա ճարտարապետությանը:

Սամվել Կարապետյան
12 մայիսի, 2015 թ.

ANGELA TERYAN
VALERI GRIGORYAN

BANANTS

ANCIENT SETTLEMENT OF GARDMAN-UTIQ



Բանանց, հայատառ գորգ, 1202 թ., Վիեննա

АНЖЕЛА ТЕРЯН
ВАЛЕРИ ГРИГОРЯН

БАНАНЦ

ДРЕВНЕЕ ПОСЕЛЕНИЕ ГАРДМАН-УТИКА

YEREVAN 2022 ЕРЕВАН

9(47.925)


20-40

h2

ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ
ՎԱԼԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՆԱՆՑ

ԳԱՐԴՄԱՆ-ՈՒՏԻՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ



Բանանցի «Ծեր, Պահապան» ավետարանը, 7-րդ դար

6470



ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ
ՏՊԱԳՐԱՆՈՒ. ԳՐԱՏՈՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022



ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5<)
S 470

**Գրքի տպագրությունը հովանավորել է
Բանանցի արժանավոր գավակ,
Արդարադատության առաջին դասի խորհրդական
Վալերի Հարությունի Գրիգորյանը**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տերյան Ա., Գրիգորյան Վ.

S 470 Բանանց. Գարդմանի հնագույն բնակավայր / Տերյան Ա., Գրիգորյան Վ. – Եր.: Ոսկան Երևանցի, 2022.– 320 էջ:

Գրքում ներկայացվում է Գարդման-Ուտիքի հնագույն հայկական բնակավայրերից մեկի՝ Բանանցի հնագիտական պեղումներով վկայված ավելի քան 4000-ամյա պատմությունը՝ սկսած մ.թ.ա. 2-րդ հազարամյակից: Բանանցը 4000 տարի մշտապես հայերով բնակեցված է եղել: Բանանցեցիները եղել են տարածաշրջանի լավագույն երկաթագործները, արհեստավորները, հողագործները, նաև երաժիշտները: Քա- նի որ հողը քիչ է եղել, տները կառուցել են ժայռերի վրա, որը յուրահատուկ ճար- տարապետական տեսք է տվել բնակավայրին: Բանանցեցի հողագործները նաև ծաղկեցրել են ժայռերը: Նրանք շալակով հող են տեղափոխել, լցրել ժայռերի վրա և բերք ստացել: Բանանցեցիները լավ խաղողագործներ են եղել: Հայտնի է «Բանանցենի» (Բայան) խաղողի տեսակը, որից նույնանուն «Բանանց» գինին են ստացել: Անցնելով բազում արհավիրքների միջով, 1989 թ. ամռանը Գարդման- Ուտիքի շատ այլ հայաբնակ բնակավայրերի նման Բանանցը ևս գրկվել է իր բնիկ հայ բնակիչներից: Բայց սա վերջը չէ: Պատմությունը շարունակվում է...

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5<)

ISBN 978-99930-0-301-4

© ՏԵՐՅԱՆ Ա., 2022
© ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ., 2022

Հայոց հնագույն բնակավայր **Բանանցը Գարդման-Ուտիք նահանգի Գարդման գավառի** հայտնի բնակավայրերից է: Ծանոթանանք Գարդման գավառի համառոտ պատմությանը, որը նաև Բանանցի պատմությունն է:

Կուր գետի աջափնյա տարածքը մինչև Սևանի լեռնաշղթա հայ պատմագրու- թյան մեջ հայտնի է **Գարդման** անունով: **Գարդմանը** հայտնի է նաև Ուտիք, Շա- կաշեն (**Շիկաշեն**) և **Արշակաշեն** անուններով, որոնք նաև գավառների անուններ են: Եվ ըստ գավառի տերերի զբաղեցրած դիրքի, տվյալ ժամանակաշրջանում նահանգը (աշխարհը) կոչվել է գավառի անունով՝ Գարդման, Ուտիք, Շակաշեն (**Շիկաշեն**): Հետևաբար երեք անուններն էլ հավասարազոր են:

Հնագույն ժամանակներից սկսած հայոց բոլոր թագավորները փորձել են միավորել հայկական ցեղերին ու պետական կազմավորումները, որոնք ապրում էին Միջերկրական ծովից՝ Սև ծով ու Կասպից ծով ընկած տարածքներում: Հայոց Արարատ-Ուրարտու պետության (մ.թ.ա. 9–7-րդ դդ.) թագավորներ Իշպուինիի, Արգիշտի 1-ինի, Սարգուրի 2-րդի և այլոց արձանագրությունները վկայում են, որ Հայկական լեռնաշխարհը միավորելու նպատակով մ.թ.ա. 8–6-րդ դարերում նրանց կազմակերպած արշավանքների արդյունքում Գարդմանը և Արցախը ընդգրկվել են հայոց Արարատ-Ուրարտու պետության կազմում: Այս առումով հետաքրքիր է Ստրաբոնի (մ.թ.ա. 63 – մ.թ. 23) վկայությունը: Ստրաբոնը «Աշ- խարհագրություն» աշխատության մեջ խոսելով սկյութական արշավանքների մասին գրում է. «Սակերը կատարեցին զանազան արշավանքներ, ... գրավե- ցին Բակտրիան և Հայաստանի լավագույն հողերը, որը և պահելով իր վրա նրանց մականունը՝ կոչվեց Սակասեն» (Ստրաբոն, XI, 8, 4): Հայտնի է, որ սկյութական արշավանքները թվագրվում են մ.թ.ա. 7-6-րդ դարերով, իսկ դա նշանակում է, որ Աջափնյա Կուրը (Սակասեն, Շակաշեն) (Գարդման, Արցախ) Հայաստանի կազմում էր դեռևս Արարատ-Ուրարտուի ժամանակ: Գարդմանը հայոց պետության կազմում էր նաև Երվանդունիների (մ.թ.ա. 6–2-րդ դար), Արտաշիսյանների (մ.թ.ա. 2 – մ.թ. 1-ին դար), Արշակունիների (1–4-րդ դդ.), Բագրատունիների (9–11-րդ դդ.) և Զաքարյանների (12–13-րդ դդ.) ժամանակ: Սակայն Գարդման-Ուտիքը հաճախ է պոկվել Հայաստանից ու կցվել օտար պետությունների: Առաջին պայմանագիրը, որով Գարդմանն անջատվել է Հա- յաստանից, Հռոմի ու Պարսկաստանի միջև 363 թ. կնքված պայմանագիրն էր: 371 թ. հայոց Պապ թագավորի ժամանակ Գարդմանը նորից միացվել է Հայաստանին: 387 թ. տեղի է ունեցել Հայաստանի առաջին բաժանումը Հռո- մի և Պարսկաստանի միջև: Գարդմանն այլ ծայրագավառների հետ նորից անջատվել է Հայաստանից և կցվել Պարսկաստանին: V դարի կեսին Գարդմա- նը և Արցախը մտցվել են նոր կազմավորված Աղվանք մարզպանության կազ- մի մեջ: Վարչական այդ փոփոխությունից հետո, մարզի եկեղեցին մնալով են- թակա հայոց լուսավորչական եկեղեցուն, առանձնացել է՝ կոչվելով Աղվանից կաթողիկոսություն:

7-րդ դարում Հայաստանը, այդ թվում Աղվանքը (նաև Գարդմանը), ընկել են արաբական տիրապետության տակ, ընդգրկվելով Արմինա (Արմենիա) ոստիկանության կազմում: Արաբները նվաճված ժողովուրդներին մահմեդականացնելու քաղաքականություն էին վարում: Մահմեդական դարձած հպատակները ազատվել են հարկերից, ստացել արտոնություններ, նշանակվել զանազան պաշտոնների և այլն: Այդ քաղաքականության արդյունքում շատ ցեղեր, այդ թվում՝ կովկասյան ցեղերը, ընդունել են մահմեդականություն: Իսկ հայ ժողովուրդը իր մշակույթի, լեզվի, գրի ու գրչության, կրոնի և ավանդույթների շնորհիվ կարողացավ պահպանել էթնիկ դիմագիծը:

885 թ. վերականգնվել է հայոց պետականությունը: Աշոտ Բագրատունին (Աշոտ 1-ին, 885–890) հռչակվել է հայոց թագավոր: Դրսևորելով պետական, դիվանագիտական ու զորավարական մեծ հմտություն՝ Աշոտ 1-ինը կարողացել է վերականգնված հայկական պետության մեջ միավորել հայկական շատ իշխանություններ, այդ թվում՝ Արցախն ու Գարդմանը: Սակայն Բյուզանդիայի անհեռատես քաղաքականության հետևանքով 1045 թ. կործանվել է Անիի Բագրատունյաց թագավորությունը: Բյուզանդիայի այս անհեռատես քաղաքականությունը ճակատագրական եղավ և Հայաստանի, և հենց իր՝ Բյուզանդիայի համար:

ԹՈՒՐԹ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1047 թ. Հայաստան են ներխուժում շատ վտանգավոր նոր թշնամիներ՝ թուրք-սելջուկները, որոնք 1071 թ. Մանազկերտի մոտ պարտության են մատնում բյուզանդացիներին: Անպաշտպան մնացած Հայաստանը (նաև Գարդմանը), այնուհետև՝ նաև Բյուզանդիան նվաճվում են թուրք-սելջուկների կողմից: Վրաստանը, որ համեմատաբար զերծ էր մնացել սելջուկյան արշավանքներից, կարողանում է հայ զորահրամանատարներ Զաքարե ու Իվանե Զաքարյանների գլխավորությամբ հաջող ռազմական գործողություններ վարել: 1196 թ. Զաքարեն ու Իվանեն ջախջախում են Գանձակի ամիրայի զորքը: Գարդմանը հայկական այլ տարածքների հետ անցնում է Զաքարյաններին: Սակայն շարունակում են հայտնվել նորանոր թշնամիներ: Թուրք-սելջուկներին (11-րդ դ.) հաջորդում են մոնղոլ-թաթարները (13-րդ դ.): Այնուհետև հայտնվում են Լենկ Թեմուրի հրոսակները (14-րդ դ.): Մոնղոլ-թաթարական արշավանքների նախօրյակին Այսրկովկասում խիստ փոխվել էր ժողովրդագրական պատկերը: Ատրպատականում տիրապետող է դառնում թուրքալեզու տարրը: Զախափնյա Կուրից հյուսիս ընկած տարածքներում ևս բնակչությունը հետզհետե թուրքանում է: Հայկական լեռնաշխարհի բարեբեր հարթավայրերում ու հովիտներում (Գարդման, Նախիջևան) բնակչություն են հաստատում թուրքական, թաթարական ու քրդական ցեղեր: Իսկ Գարդմանի ու Նախիջևանի բնիկ հայ բնակչությունը բռնու-

թյամբ տեղահանվում է Լենկ Թեմուրի որդի Միրանշահի կողմից (1396 թ.): Այս պայմաններում կենսունակ գտնվեցին նախալեռնային ու լեռնային շրջանների հայկական գյուղական համայնքները, որոնք պահպանեցին իրենց ավանդական նիստուկացը, օրենքներն ու սովորույթները:

1512 թ. մինչև 1639 թ., կարճ ընդմիջումներով Օսմանյան Թուրքիայի ու Սեֆյան Իրանի միջև տեղի ունեցող պատերազմների ժամանակ Հայաստանը դառնում է ռազմական թատերաբեմ: 1639 թ. կնքված պայմանագրով Պարսկաստանին են անցնում Պատմական Հայաստանի Սյունիք, Արցախ, Գարդման, Փայտակարան, Պարսկահայք նահանգներն ամբողջությամբ և Այրարատի, Գուգարքի ու Վասպուրականի արևելյան գավառները: Իրենց թալանչիական հարձակումներն են շարունակում Կովկասի լեռնականները, հատկապես լեզգիները: Նրանք գերեվարում են տասնյակ հազարավոր հայերի, հատկապես կանանց ու երեխաների: Այդ է պատճառը, որ այսօր Հյուսիսային Կովկասի ժողովուրդների, հատկապես լեզգիների ու ավարների մեջ մեծ թիվ են կազմում հայկական արտաքինով մարդիկ (արմենոիդ մարդաբանական տիպի ներկայացուցիչներ): Գարդմանահայությունը զանազան պատճառներով (գերեվարություն, սով, համաճարակ, գաղթ) հայտնվում էր նաև Վրաստանում: Դրա հետևանքով Կախեթում, Թիֆլիսում (Հավլաբարում) և Վրաստանի այլ բնակավայրերում անընդհատ մեծանում էր հայ բնակչության, մասնավորապես գարդմանահայության թիվը:

ԳԱՐԴՄԱՆ-ՈՒՏԻՔԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

19-րդ դարի սկզբին հայերի ակտիվ մասնակցությամբ Այսրկովկասում հաստատվում են ռուսները: 1804–1813 թթ. տեղի է ունենում ռուս-պարսկական պատերազմը: 1804 թ. գրավվում է Գարդմանի տարածքում ուշ միջնադարում ստեղծված Գանձակի խանությունը և այնտեղ ապրող գարդմանահայերը մտնում են ռուսական կայսրության կազմի մեջ: 1813 թ. Գյուլիստանում կնքված պայմանագրով Վրաստանի, Պատմական Աղվանքի ու հայկական այլ տարածքների հետ Ռուսաստանին են անցնում նաև Ղարաբաղի ու Գանձակի խանությունները: Գանձակի (Գյանջայի) խանությունը Ռուսաստանին միացվելուց հետո վերանվանվում է Ելիզավետպոլի նահանգ: 1828 թ. Արևելյան Հայաստանը ռուսական կայսրության կազմի մեջ մտնելուց հետո Պարսկաստանից, Արևմտյան Հայաստանից և այլ վայրերից կազմակերպվում է հայ բնակչության ներգաղթ դեպի Արարատյան դաշտավայր, Արցախ, Գարդման ու Զավախք: Ներգաղթողները հիմնականում տեղավորվում են հայաթափված նախկին հայկական բնակավայրերում, որտեղ պահպանվել էին հայկական շինությունների հետքեր (վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր, գերեզմաններ՝ հայատառ արձանագրություններով): Մեծ էր հայերի հույսը, որ հավատակից Ռուսաստանը վերջ կտա ազգամիջյան ընդհարումներին, որից հատկապես տուժում էր հայ ժո-

ղովուրդը: Սակայն մյուս օտար տիրակալների նման ռուսական կայսրերը ևս վարում էին հայերին Հայաստանից դուրս մղելու քաղաքականություն: Խրախուսվում էր հայերի գաղթը դեպի Հյուսիսային Կովկասի մերձկասպյան նվաճված տարածքներ, իսկ Գարդմանում և այլ հայաբնակ վայրերում բնակեցվում էին ռուս (նաև գերմանացի) վերաբնակիչներ: Արվում էր ամեն ինչ (վարչական նոր բաժանումներ, գաղթ), որ հայերը մեծամասնություն չկազմեն իրենց հայրենիքում: Իսկ հետագա դեպքերը ցույց տվեցին, որ 1905-1906 թթ. Այսրկովկասում սկսված հայ-թուրքական (թաթարական) ընդհարումները ռուսական կառավարության թողությունների հետևանք էին (ենթադրվում է միջազգային գաղտնի կազմակերպությունների հրահրմամբ), Ռուսաստանում սկսված հեղափոխական շարժումների դեմն առնելու համար:

ԲՈՒՆՏԵՎԻԿՆԵՐԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՐԴՄԱՆԻ ՀԱՅՏՆՎԵԼԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Ռուսական կայսրերի հակահայ քաղաքականությունը շարունակում են բուլղարիկյան ու խորհրդային ղեկավարները: Օգտվելով 1917 թ. ռուսական հեղափոխությունից՝ Թուրքիային, որի նպատակը մեծ Թուրանի ստեղծումն էր, միջազգային գաղտնի կազմակերպությունների պարագլուխների (Տրոցկի, Զինովև, Կամենև, Էնվեր, Ջեմալ) օժանդակությամբ հաջողվում է 1918 թ. մայիսին Այսրկովկասում ստեղծել Ադրբեջան անունով նոր թուրքական պետություն, որն էլ ավելի է սրել հայ-թուրքական հարաբերությունները: 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվում են խորհրդային կարգեր: Խորհրդային հանրապետությունների սահմանները որոշվում են կամայականորեն: Մի դեպքում հաշվի էր առնվում տարածքի էթնիկ բնակչության բնակության սահմանը, այլ դեպքում՝ դրանք անտեսվում են: Այս կերպ հիմնականում հայաբնակ Գարդմանը, Արցախը և Նախիջևանը հայտնվում են նորաստեղծ Ադրբեջան կոչվող թուրքական պետության կազմում:

Խորհրդային Ադրբեջանի բոլոր կառավարությունների ցանկությունը մեկն էր. ստեղծել միատարր թուրքական պետություն: Սակայն դա դժվար իրագործելի էր հայերի դեպքում, որոնք հազարամյակներ շարունակ ապրել ու ապրում էին նախնիների հողում, ստեղծել էին մեծ մշակույթ և հոգևոր կապերով կապված էին Հայաստանի հետ: Այդ է պատճառը, որ իր ստեղծման առաջին օրերից Ադրբեջանի կառավարությունը վարում էր հակահայ քաղաքականություն: Օգտագործելով տնտեսական, մշակութային և կրթության հարցերը, նաև բռնությունն ու շանտաժը՝ Ադրբեջանի ղեկավարները հայերին իրենց բնօրրանից դուրս մղելու քաղաքականություն էին վարում: Ցավոք, չհանդիպելով խորհրդային Հայաստանի և ԽՍՀՄ կառավարությունների հակազդեցությանը՝ Ադրբեջանի կառավարությանը հաջողվում է իրագործել իր ծրագիրը:

Դարասկզբի պատմությունը կրկնվեց 1988-1990 թթ., երբ կոմունիստական վարչակարգը փրկելու համար, խորհրդային իշխանությունների թուլությունից հայկական ջարդեր են կազմակերպվում Սումգայիթում, Բաքվում, Գանձակում և այլ վայրերում: Գարդմանահայությունը, որը 18-րդ դարից մեծ հույսով սպասում էր հավատակից քրիստոնյա ռուսներին, իր ազատագրական պայքարի հաջողությունը կապում էր նրանց գալստյան հետ: Գարդմանահայությունը, որն այնքան շատ բան էր արել ռուսական զենքի հաջողությունն ու ռուսների ներկայությունն Այսրկովկասում ամրապնդելու համար, մոտ 200 տարի հետո նույն ռուսական զինուժի օգնությամբ 1988-1992 թթ. դուրս մղվեց իր բնօրրանից ու սփռվեց աշխարհում:

Անդրադառնանք Գարդման աշխարհի հնագույն բնակավայրերից մեկի՝ ավելի քան 4000-ամյա բնակավայր Բանանցի պատմությանը, որը լավագույնս է բնորոշում այդ տարածաշրջանում հայ էթնոսի հազարամյակներ շարունակվող ներկայությունը: Բանանցը եղել է Ուտիք նահանգի Գարդման գավառի («Աշխարհացոյց»), այնուհետև՝ Գանձակի խանության, Ելիզավետպոլի նահանգի, իսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ Դաստաֆյուրի, Խանլարի և Դաշքեսանի շրջանների կազմում:

Մեր օրերում Բանանցը գտնվում է Կարաբաղի հանրապետության Արցախի մարզի Մարտունի շրջանի Բանանցի համայնքում: Բանանցը համայնքի կենտրոնն է, որը 2003 թ. հունիսի 1-ին կազմավորվել է Բանանցի համայնքի և Կարաբաղի հանրապետության Արցախի մարզի Մարտունի շրջանի Բանանցի համայնքի միավորման արդյունքում: Բանանցը Կարաբաղի հանրապետության Արցախի մարզի Մարտունի շրջանի Բանանցի համայնքի կենտրոնն է, որը 2003 թ. հունիսի 1-ին կազմավորվել է Բանանցի համայնքի և Կարաբաղի հանրապետության Արցախի մարզի Մարտունի շրջանի Բանանցի համայնքի միավորման արդյունքում: Բանանցը Կարաբաղի հանրապետության Արցախի մարզի Մարտունի շրջանի Բանանցի համայնքի կենտրոնն է, որը 2003 թ. հունիսի 1-ին կազմավորվել է Բանանցի համայնքի և Կարաբաղի հանրապետության Արցախի մարզի Մարտունի շրջանի Բանանցի համայնքի միավորման արդյունքում:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԲԱՆԱՆՑԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ
(մ.թ.ա. II-I հազարամյակներ)

Կուր-Արաքսյան մշակույթի նշանավոր կենտրոններից է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում՝ Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքում գտնվող Գարդման աշխարհը: Այս մշակույթի առաջին հնագիտական նյութերը հայտնաբերվել են 1869 թ. Ջազիկ (Փիփ) գյուղի մոտ (Գանձակ գավառ) և 1879 թ. Արմավիրում (ՀՀ, Արմավիրի շրջան):

Գարդմանում հայտնաբերված Կուր-Արաքսյան մշակույթի և Հայկական լեռնաշխարհի հնագույն հուշարձաններից մեկը հայոց **Աղբերդ** (Քաղաղաշտ, Քաղաձոր, այժմ Աղղաշ) գավառում գտնվող Մինգեչաուր (Քանդակ) բնակավայրն է, որտեղ կատարված հնագիտական պեղումների ժամանակ (1935 թ., 1946-1950թթ.) հայտնաբերվել են հարուստ ու բազմազան մշակութային արժեքներ:

Քանդակ-Մինգեչաուրի վաղ շրջանի նյութերը թվագրվում են մ.թ.ա. III հազարամյակի վերջ ժամանակաշրջանով: Հայտնաբերված իրերից հետաքրքիր են հատկապես եզան գլխի նմանությամբ պատրաստված բրոնզե խոշոր անոթները (եզան պաշտամունք): Այդպիսիք հայտնաբերվել են նաև **Բանանցի**, Ղալաքենդի և այլ բնակավայրերի դամբարաններից (հմմ. էջմիածնից հայտնաբերված բրոնզե նույնատիպ անոթը, Շիրակից հայտնաբերված եզան պղնձե գլուխը):


Դամբարանաբլրային թաղումներ հայտնաբերվել են Ելենենդորֆի (Խանլար) և Ոսկանապատի (Ջուրնաբաղ) միջև՝ դեպի **Բանանց** ճանապարհին, Ելենենդորֆից արևմուտք (Կիլիկիդաղ լեռան մոտ, մ.թ.ա. XIII-XI դդ.) և Ելենենդորֆից արևելք, Գանձակի մոտ (Գանձակ գետի ձախ ափին, մ.թ.ա. XI-IX դդ.): Այդ ժամանակաշրջանում արդեն երկաթից պատրաստում էին մանգաղներ, դանակներ, հատիչներ, մուրճեր: Սակայն դեռևս օգտագործում էին նաև քարե գործիքներ՝ բրիչներ, աղորիքներ, սանդեր, սանդակոթեր և այլն: Նշենք, որ ի սկզբանե Բանանցի բնակչության հիմնական զբաղմունքը եղել է նաև հանքարդյունահանումը, մասնավորապես երկաթագործությունը, և Բանանցն է երկաթ մատակարարել տարածաշրջանի բնակավայրերին: Այդ մասին վկայում են գյուղում պահպանված մեծ խորշերը (հնոցներ):

Բացի դամբարանաբլրային թաղումներից, Լենինքենդ, Վերին Քարհատ, Քարհատ, **Բանանց** և Հարցհանգիստ գյուղերում հայտնաբերվել են նաև քարարկղային թաղումներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. XIII-XI դարերով: Այս դամբարաններից հայտնաբերվել է խեցի և բրոնզե զարդեր՝ շքասեղներ, հեռացող ծայրերով ապարանջաններ, մատանիներ, կոճակներ, ականջօղեր, ուլունքներ և այլն: Այս խմբի գտածոների մեջ հայտնաբերվել են նաև երկաթե իրեր՝ նիզակներ, շքասեղներ, շղթաներ, մատանիներ, ճակատակալներ, նետեր, բրոնզե դաստակով երկաթե դաշույններ, խողովակներ և այլն: **Բանանցի** «Բարսեղի բլուր» կոչվող տեղանքի թիվ 13 դամբարանում հայտնաբերվել է երկու երկաթե խողովակ:

Այս ժամանակաշրջանում (մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկիզբ) ևս, ինչպես նախորդ շրջանում, բնակիչները հիմնականում զբաղվել են երկրագործությամբ, անեցնելով ցորեն, գարի ու կորեկ: Հողը մշակել են փայտե արորով, երկաթե ու ոսկրե բրիչներով: Բերքը հավաքելու ժամանակ օգտագործել են երկաթե մանգաղ: Ջրաղվել են նաև այգեգործությամբ: Հայտնաբերվել են դեղձի, նռան, խաղողի, կեռասի և այլ մրգերի կորիզներ: Կարասներում հայտնաբերվել են **քարացած գինու հետքեր**: Իսկ խեցանոթների վրա պատկերված կենդանիները թույլ են տալիս ասելու, որ բնակիչները շարունակում էին զբաղվել անասնապահությամբ (այծ, ոչխար), օգտագործել են նաև ձիեր և այլն:

Հայկական լեռնաշխարհում Կուր-Արաքսյան մշակույթին (մ.թ.ա. IV-II հազարամյակներ) հաջորդում են այլ մշակույթներ (Լճաշենյան, Գանձակ-Արցախյան կամ Գետաբեկյան...): Գանձակյան կամ Գետաբեկյան մշակութային խմբի յուրահատկություններից է այն, որ ոչ ամրացված բնակավայրերը կառուցվել են լեռների փեշերին, իսկ կիլիկոյան կառույցները՝ լեռներում: Գանձակ-Գետաբեկյան խմբերի հուշարձաններում հանդիպում են և քարարկղային, և դամբարանաբլրային թաղումներ: Ընդհանրապես նկատվում է թաղման ձևերի բազմազանություն (կծկված, ձգված, նստած դիրքեր): Դիակիզումով թաղումները եզակի են: Այն հանդիպել է **Բանանցում**: Քարարկղային թաղումներ հատնաբերվել են Գետաբեկում, Կալաքենդ և Կարաբուլաղ (Սև Աղբյուր) գյուղերի միջև գտնվող տարածքում, Խաչքուլաղ (Խաչի Աղբյուր), Հարցհանգիստ (Չովդառ), Կիրանց, **Բանանց**, Կուշի (Խաչակապ) և Միրզիկ գյուղերի մոտ: Դամբարանաբլրային (կուրգանային) թաղումներ հայտնաբերվել են Խաչքուլաղում, Լենինքենդում (նախկինում Սեյֆալի), **Բանանցում** և Հարցհանգիստում: Վերին Քարհատ, Քարհատ, **Բանանց** և Հարցհանգիստ գյուղերի քարարկղային թաղումները թվագրվում են մ.թ.ա. XIII-XI դարերով: Այս դամբարաններից հայտնաբերվել են բրոնզե զարդեր՝ շքասեղներ, հեռացող ծայրերով ապարանջաններ, մատանիներ, կոճակներ, ականջօղեր, ուլունքներ և այլն: Բրոնզե զենքեր չեն հանդիպում: Խեցին սև, մոխրավուն և կարմրավուն գույնի է: Դրանք քրեղաններ, գնդաձև անոթներ, սափորներ և գավաթներ են, որոնք հաճախ զարդանախշված են եղևնաձև ու ակոսավոր նախշերով:

Ինչպես նկատում ենք, Գարդմանը հարուստ է հնագույն բնակավայրերով և դրանց շուրջն առաջացած հարուստ դամբարաններով: Ցավոք, կանոնավոր պեղումներ քիչ բնակավայրերում են կատարվել, հայտնաբերված գտածոներն էլ ցիրուցան են արվել, անհասցե հայտնվելով տարբեր թանգարաններում և մասնավոր հավաքածուներում: Իսկ բնակիչների կողմից պատահականորեն հայտնաբերված շատ իրեր ոչնչացվել են իբրև «կռապաշտական իրեր»: Դրանում համոզվելու համար ծանոթանանք **Բանանց** գյուղի շրջակայքում եղած դամբարանների պատմությանը (մ.թ.ա. II հազ. կես - I հազ. սկիզբ):




Դամբարանադաշտ Բանանցում

Բանանց գյուղի շրջակայքում կան բազմաթիվ դամբարաններ, որոնք հայտնաբերվել են գյուղացիների կողմից: Գյուղի բնակիչները հնուց ի վեր զբաղվել են երկրագործությամբ ու այգեգործությամբ: Հենց երկրագործությամբ զբաղվելու հետևանք է դամբարանների բացվելը: Յորենի հասկերը ծեծելու և հարողը քամուն տալու համար բարձր, բաց տեղ էր անհրաժեշտ: Դրա համար ընտրել են բլուրների գագաթները և կալ շինել: Երբ հարթեցրել են բլուրների գագաթները, բացվել են հնագույն դամբարաններ: 1897 թ. գյուղ այցելած մի ակադեմիկոս (Ե. Համամյան) վկայությամբ կալերի եզրերին, ամենուր թափված են եղել խոշոր, ողորկ գետաքարեր, որոնք վկայում են, որ կալերը սարքելիս հայտնաբերվել են դամբարաններ: Դամբարաններից հայտնաբերված իրերը, նույն ակադեմիկոսի վկայությամբ, գյուղացիները հաճախ օգտագործել են կենցաղում: Այսպես, գյուղացիներից մեկը կալից գտած բրոնզե նիզակի ծայրը, որպես զարդ, ամրացրել է իր գավազանին: Մեկ ուրիշը իր գտած կնուճը (քոցին) օգտագործել է կենցաղում: Մեկ ուրիշն էլ իր տան հիմքերը փորելիս հայտնաբերել է բրոնզե օղակներ, որոնցից ամենահաստը և ամուրը զութանի վրա է խփել: Սակայն քիչ չեն եղել դեպքերը, երբ հայտնաբերված իրերը ոչնչացվել են իբրև կռակաշտական իրեր, որոնք կարող էին դժբախտություն բերել: Գյուղացիները պատմում են, որ բնակիչներից մեկը հայտնաբերել է եզան գլխի նման բրոնզե մեծ անոթ (ծիսական), որը սակայն ոչնչացրել է, երբ առավոտյան հայտնի է դարձել, որ գիշերը այդ գյուղացու ձիուն գայլերը կերել են: Ծեր կանանց խորհրդով անոթը մուրճով ծեծել են և զցել գետը, իբրև կռակաշտական իր¹:



Եզան գլուխ, բրոնզ, մ.թ.ա. I հազ. սկիզբ

Մեկ այլ դեպքում կալից գյուղացին տուն է բերել մի գեղեցիկ կնուճ՝ զարդանախշված կենդանիների պատկերներով: Սակայն գիշերը սատկել է նրա ջորին, և գյուղի պառավները որոշել են, որ պատճառը դարձյալ կռակաշտի այդ կնուճն է: Առավոտյան այն ջարդել են ու նորից թաղել հողում: Գյուղացիներից մեկն էլ պատմել է, որ իր կալից հայտնաբերել է բրոնզե դանակ, ապարանջան և ծայրը կտրած կեռ սուր, որոնք վաճառել է Գանձակից եկած մի մարդու, որն էլ իր հերթին դրանք ուղարկել է Պետերբուրգի Հնագիտական ընկերություն և 25 ռ. նվեր ստացել²:



Սափորներ և սափորի արձվակերպ կափարիչ բռնակով, Բանանցի դամբարաններ, մ.թ.ա. II հազ. կես, ՀՊԹ



Իլիկի գլուխ, քար, մ.թ.ա. II հազ. վերջ, Բանանց, ՀՊԹ, ՄՄ 2759-7

Քարե կշռաքարեր՝ 3 կգ և 1 կգ, միջնադար, Բանանց

¹ Համամյան Ե., Բանանց գյուղի կուրգանները, Ազգ. հանդես, գիրք Բ, 1897 թ., էջ 309:

² Համամյան Ե., Բանանց գյուղի կուրգանները, ... էջ 311:

Ե. Համայնյանի նախածեռնությամբ ու մասնակցությամբ 1897 թ. Բանանցում բացվել են մի շարք դամբարաններ, որոնք հիմնականում քառանկյունի են եղել: Յուրաքանչյուր դամբարանի վրա տեղադրված են եղել ութ մեծ, ողորկ գետաքարեր, մեկական գլխի և ոտքերի վրա, երկուական՝ թևերի վրա, երկուսն էլ կենտրոնում՝ գլխի ու ոտքերի միջև: Այդ դամբարանները թվագրվում են մ.թ.ա. II հազարամյակի կեսով: Բացված դամբարաններից մեկում աճյունի գլխի մոտ տեղավորված են եղել երեք սափորներ՝ մեկական գլխի և ուտերի մոտ: Դամբարաններից հայտնաբերվել են ապակուց, ոսկորից և քարից պատրաստված **ուլունքներ**, լայնաբերան **սև սափոր**, զարդանախշված թեք, միմյանց հասող այլ թեք գծերով (մոտավոր պատկերը՝ Միքայել Տերյանի), **գոտու բրունզե թերթիկներ** (տր. 13 սմ), որոնք զարդանախշված են գմբեթավոր, ուռուցիկ և ծակոտկեն նախշերով: Թերթիկների եզրերը զարդանախշված են եղել զուգահեռ, փոքր ուռուցիկ կետերով: Հայտնաբերված **ապարանջանները** ամբողջական և հեռացող ծայրերով են, զարդանախշված զուգահեռ և ուղղահայաց գծերով: Հետաքրքիր են հատկապես հայտնաբերված **երեք զույգ թռչունները**, որոնցից առաջին զույգը առանց ոտքերի է (բարձր. 4 սմ, երկ. 5 սմ), երկրորդ զույգը երկու ոտանի է (բարձր. 4 սմ, երկ. 5,5 սմ), երրորդ զույգը երեք ոտանի է (բարձր. 4 սմ, երկ. 5 սմ): Թռչունների մեջքի վրա կան **կանթեր**, իսկ կողքերը և տակը զարդանախշված են հակառակ դիրքով դասավորված եռանկյունաձև կտրվածքներով: Հայտնաբերվել են նաև չորս հատ կլոր, տափակ օղակներ (տր. 6,5 սմ), որոնց երկու ծայրերին կան մեկական անցքեր, երկու զույգ **բրգաձև ականջօղեր**, որոնց մեջ մոխրագույն քար էր դրված: Հայտնաբերված իրերից ուշադրության արժանի են **երկու կիսալուսնաձև քրմական գավազանի նմանությամբ իրեր**, որոնց վրա կան նշանագրեր³: Հետաքրքիր են նաև կշեռքի նժարի նմանությամբ երկու **գոգավոր ամանները** (տր. 7 սմ, շրջագիծը 20 սմ), որոնց գոգավոր մասում իրար դիմաց տեղադրված են չորս կանթեր:



Խեցանոթի պատկեր (վերականգնումը Միքայել Տերյանի), Բանանց, մ.թ.ա. II հազ. կես

³ 1930-ական թվականներին ուսումնասիրողները հնագիտական գտածոների վրա եղած նշանագրերը (այդ թվում **Բանանցում** հայտնաբերվածի վրա) հանելուկային նշաններ էին համարում: Ենթադրվում է, որ նշանագրերը Արարատ-ուրարտական շրջանի արձանագրություններ են (մ.թ.ա. IX-VII դդ.): И. Мещанинов, Закавказские иероглифы, Сообщения, ГАИМК, 1932, № 3-4, с. 54.



Նիզակի ծայրակալ, մ.թ.ա. II հազ. կես, Բանանց



Ապարանջանի մաս, բրունզ, մ.թ.ա. II հազ. կես, Բանանց



Ապարանջան հաստ կլորավուն լարից, օձագլուխ ծայրերով, բրունզ, մ.թ.ա. II հազ. 2-րդ կես, Բանանց, ՀՊԹ, ՄՄ 2759-1



Ապարանջան հաստ կլորավուն լարից, իրար վրա եկած ծայրերով, բրունզ, մ.թ.ա. II հազ. 2-րդ կես, Բանանց, ՀՊԹ, ՄՄ 2759-2



Ապարանջան բարակ լարից, ճանկավոր ծայրով, մյուս ծայրը՝ թերի, բրունզ, մ.թ.ա. II հազ. 2-րդ կես, Բանանց, ՀՊԹ, ՄՄ 2759-3




Ապարանջան բարակ, ոլորուն լարից, իրար վրա եկած ծայրերով ու փականով: Վրան ամրացված են 3 փոքր կլոր օղեր, բրունզ, մ.թ.ա. II հազ. 2-րդ կես, Բանանց, ՀՊԹ, ՄՄ 2759-4




Ուլունքաշար՝ ծարիրե և սարդիոնե,
Բանանց, ՀՊԹ, ՄՄ 2759-6



Հատված ուլունքաշարից



Թոչնակերպ անոթների օրինակներ, Քանդակ-Մինգեչաուր, մ.թ.ա. II հազ. կես



Հայտնաբերվել են նաև երկու բրոնզե շղթաներ (29, 40 սմ երկարությամբ), բրոնզե թիթեղից ութ հատ խողովակներ (երկ. 18 սմ, տր.1,5 սմ), գլխիկով շքասեղ (երկ. 15,5 սմ), որի հաստ ծայրին 3,5 սմ տրամագծով ակ դնելու տեղ կա, բրոնզե հաստ լարից պատրաստված խխունջածև ականջող, երկու բրոնզե կոճակ, երեք կապույտ ուլունք, հինգ ոսկրե կոճակ (2 անցքով), մեկ շարք կարմիր ապակուց ուլունքներ (հազիվ ձեռքի չափով) և այլն: Բացի վերոհիշյալ դամբարաններից, Բանանցում հայտնաբերվել են նաև կամարածև դամբարաններ՝ պատրաստված գետաքարերից ու կավից⁴, որոնք ավելի հարթ ու ցածր մասերում են տեղադրված և թվագրվում են ավելի ուշ շրջանով (մ.թ.ա. I հազ. սկիզբ): Այդ դամբարաններից հայտնաբերվել են նաև մարդկանց կմախքի ոսկորներ, որոնք սակայն շատ փխրուն են եղել և անմիջապես փշրվել են ձեռքի մեջ: Ի դեպ աճյունների գլուխները ուղղված են եղել դեպի հյուսիս-արևելք, որի պատճառով գյուղացիները դրանք համարել են կռապաշտների գերեզմաններ: Սակայն ուսումնասիրողները նշում են, որ այդ ժամանակ «Գերեզմանի ուղղությունը աշխարհի նկատմամբ միանգամայն կամավոր է եղել»⁵:

Նշենք, որ այս գտածոները հայտնաբերվել են ընդամենը մի քանի օրում, հետաքրքրասեր մի մարդու՝ Ե. Համամյանի նախաձեռնությամբ սիրողական

մակարդակով կատարված պեղումների ժամանակ: 1901թ. անվանի հնագետ Ե.Ռեսլերի կողմից պեղումներ են կատարվել Գանձակ գավառում, Արթենագետի (Կոշկարա գետ) հոսանքի ուղղությամբ ընկած բնակավայրերում: Բանանցի դամբարաններից մեկում Ռեսլերը այլ իրերի թվում հայտնաբերել է գեղեցիկ մի սափոր զարդանախշված սվաստիկայի պատկերով⁶ (տեղն անհայտ է):



Արևխաչ-սվաստիկայի պատկերով խեցանոթ,
Գետաբեկ (նման Բանանցի կորած խեցանոթին), մ.թ.ա. II հազ. կես

Թիֆլիսի հնագիտական ընկերության կողմից ուղարկված հնագետ Ֆ. Շուլցը, որը պեղումներ է կատարել Գանձակ գավառում, Միրզիկ գյուղի մոտ պեղել է կրկնակի թաղումով դամբարան, որտեղից հայտնաբերված իրերը թվագրվում են միջին բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանով (մ.թ.ա. II-I հազարամյակ): Դամբարանի ստորին շերտում հայտնաբերվել է ինը կմախք, բրոնզե իրեր և այլն: Վերին շերտում՝ դարձյալ ինը կմախք և երկաթե իրեր: Կմախքները ուղղված են եղել դեպի հյուսիս: Դամբարանում հայտնաբերվել են նաև մատանիներ, ապարանջաններ, նետ, դաշույն և ուլունքներ⁷:

Խորհրդային տարիներին նույնպես պատահականորեն գյուղի տարածքում հայտնաբերվել են հնագիտական իրեր: Օրինակ՝ Ալեքսան Շահմուրադյանը իր տան բակում 3 մետր խորության վրա հայտնաբերել է սանդ, որն օգտագործել է որպես հավերի ջրաման⁸:

Ինչպես նկատում ենք, հայոց Գարդման աշխարհում և նրա բազմաթիվ բնակավայրերում, այդ թվում Բանանցում, ստեղծվել է հզոր մշակույթ, որը Հայկական լեռնաշխարհում ստեղծված մեծ ու հզոր մշակույթի անբաժանելի, բաղկացուցիչ մասն է:

19-րդ դարի վերջին Գարդմանի, Արցախի, նաև Կուր գետից հյուսիս ընկած տարածքներում ու Ապշերոնում ապրող ցեղերի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանը: 1890 թ. նա եղել է այդ շրջաններում, գրի առել իր տեսածն ու լսածը և հրատարակել արժեքավոր աշխատություն (Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղվանից,

⁴ Համամյան Ե., Բանանց գյուղի կուրգանները, էջ 312:
⁵ Լալայան Ե., Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 29:

⁶ Մամոնեյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, 1941, էջ 165:
⁷ «Մշակ», 1903, N 117, էջ 22:
⁸ Մ. Չալոմյանի նոթատետրից:

հ. Ա. Վաղարշապատ, 1902, հ. Բ, Թիֆլիս, 1907), որի դերը շատ մեծ է Աղվանքի (Գարդման-Ուտիք, Արցախ) պատմությունն ուսումնասիրելու համար: Շատ արժեքավոր աշխատանք է կատարել նաև ազգագրագետ Ե. Լալայանը, Գանձակի տարածաշրջանի մասին պատմական ու ազգագրական նյութեր հավաքելով ու հրատարակելով «Ազգագրական հանդեսում» («Ազգագրական հանդես», 2. Թիֆլիս, 1900): 1980-ական թթ. Բանանցում և Գարդմանի շատ հայկական գյուղերում ուսումնասիրություններ է կատարել նաև հուշարձանագետ Սամվել Կարապետյանը: Նա ուսումնասիրել ու լուսանկարել է պահպանված եկեղեցիները, վանքերը, մատուռները, խաչքարերը, արձանագրությունները, հանգստարանները, ինչպես նաև քաղաքները, գյուղերը և մարդկանց: Հավաքված նյութերի հիման վրա Ս. Կարապետյանը 2004 թ. հրատարակել է «Հյուսիսային Արցախ» աշխատությունը:

ԲԱՆԱՆՑԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Բանանց (Պանանց, Բանանոց, Բայան) գյուղը գտնվում է Արթինագետ կամ Արթենաջուր (Արուփին, Բանանց, Ղոչ-Ղարա, Կոշկարա) գետի ձախ ափին: Գետը սկիզբ է առնում Արուփինա սարից, ընդունում Խաչիաղբյուր վտակը, անցնում Բարիատ և Բանանց գյուղերով, միանում Զովդարչայ գետակին ու թափվում Կուր գետ: Գյուղը շրջապատված է Փոփոս սեռ (կոնաձև), Ծակ քար, Փլաթի սեռ (կաղնու) և Տատի սեռ լեռներով:

Բանանց անվան մասին գյուղում սերնդեսերունդ փոխանցվել է ավանդություն, ըստ որի **Բանանց** անունն առաջացել է **բանանոց** բառից, որը **բանելու, արարելու, աշխատելու, ստեղծելու վայր** իմաստներն ունի:

Հնագիտական նյութերից բացի բնակավայրի տարածքում կան միջնադարյան շատ հուշարձաններ՝ եկեղեցիներ, խաչքարեր, կամուրջներ, աղբյուրներ, տապանաքարեր և այլն: Պահպանվել են նաև մագաղաթներ, գորգեր, կենցաղային, ծիսական, աշխատանքային գործիքներ և այլ իրեր, որոնք վկայում են, որ գյուղը բնակեցված է եղել մշտապես՝ մ.թ.ա. II հազարամյակից (հավանաբար նաև ավելի վաղ) մինչև մեր օրերը (ցավոք, մինչև 1989 թ. բռնագաղթը): Ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ եղել են դժվարին ժամանակներ, այդ թվում թշնամական հարձակումներ, երաշտ ու սով, ժանտախտ և այլ հիվանդություններ, որի հետևանքով գյուղը դատարկվել է: Սակայն որոշ ժամանակ անց գյուղը նորից վերաբնակեցվել է: Մեծ արտագաղթ տարածաշրջանից, այդ թվում Բանանցից, գրանցվել է 18-րդ դարի վերջերին, երբ 1796թ. Գանձակի ու շրջակա գյուղերի վրա են արշավել վրաց Հերակլ թագավորը, սուլթան Շամշադինի զորքը և Շուշիի Իբրահիմ խանը լեզգիների հետ: Գյուղը նորից վերաբնակեցվել է 19-րդ դարի սկզբին, երբ ոռանների հայտնվելով համեմատաբար խաղաղ պայմաններ են ստեղծվել տարածաշրջանում:

ԲԱՆԱՆՑԻ ԲՆԱԿՆԵՐԿՈՒՄ

Բանանցի դամբարաններից հայտնաբերված հնագիտական իրերը վկայում են, որ Բանանցը բնակեցված է եղել մ.թ.ա. II հազարամյակից սկսած (հավանաբար նաև ավելի վաղ): Բանանցը հազարամյակներ շարունակ եղել է նաև տարածաշրջանի առավել մարդաշատ բնակավայրերից մեկը: Այդ մասին են վկայում գյուղի մերձակայքում հայտնաբերված հեթանոսական և միջնադարյան ժամանակաշրջաններից պահպանված ընդարձակ դամբարանադաշտերն ու հանգստարանները (գերեզմանոցները), ինչպես նաև կանգուն կամ ավերակ եկեղեցիների ու մատուռների առատությունը:

Սակայն գյուղի բնակչության թվաքանակի մասին վիճակագրական տվյալներ կան 19-րդ դարի սկզբից: Ներկայացնենք Բանանցի 49 ազգատոհմերի 1839 թ. կազմված բնակիչների հետևյալ անվանացուցակը.

«1. Մակի Զօփուրեանց, կինն՝ Մարիամ, ուսուր՝ Եսայի, դուստր՝ Նազի, եղբայրն՝ Յակոբ, կինն՝ Անախաս, ուսուր՝ Յոհաննէս, եղբորորդիք՝ Յարուփին, եղիսաբէթ, մայրն՝ Սանդուխտ:

2. Արր(ա)համ Մօսէսով, կինն՝ Մարիամ, ուսուր՝ Պետրոս, եղբարքն՝ 1. Յակոբ, կինն՝ Մարիամ, ուսուր՝ Յոհաննէս, 2. Յարուփին:

3. Զաքար Մէլիքով, կինն՝ Մարիամ, ուսուր՝ Ստեփան, դուստր Հէրիք, եղբայրն՝ Աազ:

4. Գրիգոր Պօղոսով, կինն՝ Մարիամ, դուստր՝ Զանի, եղբայրն՝ Դադի, կինն՝ Շողակաթ:

5. Ղուկաս Զալադով, կինն՝ Գիւլի, ուսուր՝ Մարտիրոս, դուստր՝ Վարդի, եղբայրն՝ Վիրապ, կինն՝ Սայբի, քոյրն՝ Մարիամ:

6. Օհաննէս Մէլիքով, եղբայրք՝ Ծատուր և Գալուստ, քոյրն՝ Սաբէդ:

7. Սահակ Զովիով, կին սորա՝ Մարիամ, եղբոր որդիք՝ Գրիգոր և Մարիամ:

8. Սարգիս Բարսեղով, կինն սորա՝ Եղիսաբէթ, ուսուր՝ Մարտիրոս, դստերք՝ Մարգարիտ և Հէրիք:

9. Պօղոս Կոստիով, կինն՝ Մարգարիտ, ուսուր՝ Անդրէաս, կին սորա՝ Սաբէդ, եղբորորդին՝ Վարդան, կինն՝ Հոռոմսիմ, դուստր՝ Նազի:

10. Դալաք Սարգիսն, կինն՝ Սիրուն, ուստերք՝ 1. Մակի, կին՝ Մարիամ, ուսուր՝ Գէորգ, 2. Գրիգոր, կինն՝ Անախաս, դուստր՝ Մարիամ:

11. Օվանէս Այվազով, կինն՝ Մարինոս, ուսուր Մօսի, դստերք՝ Հէրիք և Սաբէդ, եղբայրն՝ Դանիէլ, կինն՝ Մարգարիտ, ուսուր՝ Մակի, դուստր՝ Ռէհան:

12. Գրիգոր Շահումով, կինն՝ Մարգարիտ, ուսուր՝ Յակոբ, դստերք՝ Սառայ և Հէրիք:

13. Գրիգոր Թօրոսով, կինն՝ Խանում, ուսուր՝ Մակար, դստերք՝ Նազի և Զանի:

14. Գաբրիէլ Տէր-Մկրտչեանց, կինն՝ Գայիանէ, ուսուր՝ Ռուսիան, կինն՝ Սաբէթ, հարսն՝ Շողակաթ, ուսուր՝ Գէորգ, կինն՝ Մարիամ, ուսուր՝ Օհաննէս: Եղբայրն՝ Յարուփին, կին՝ Հէրիք, ուսուր՝ Ստեփան:

15. Պետրոս Վանեան, կինն՝ Գիւլի, ուստերք՝ Աւագ և Խաչատուր, եղբայրն՝ Պողոս, կինն՝ Մարիամ, դուստերք՝ Մագթաղ և Գիւլի:
16. Փափջի Խաչատուր, կինն՝ Գուլի, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Հոռոմսիմ:
17. Ստեփան Տէր-Աւետիսեան, կին՝ Մարգարիտ, ուստերք՝ Գրիգոր և Օհանէս, դուստր՝ Խաթուն, եղբայրն՝ Յարութիւն, կինն՝ Շողի, դուստր՝ Մագթաղ:
18. Ներսէս Չլալով, կինն՝ Մարինոս, դստերք՝ Նազի և Հէրիք, եղբայրն՝ Ղազար, կինն՝ Մարգարիտ:
19. Գրիգոր Աւագեան, ուստերք՝ 1. Վարդան, կինն՝ Մարիամ, 2. Սարգիս, դստերք՝ Հոռոմ, Զանի, եղբորորդի՝ Ղուկասն, կինն՝ Մարգարիտ:
20. Օհանէս Պետրոսով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Արզուման, եղբորորդի՝ Մակին, կինն՝ Զանի, եղբայրն՝ Ղուկաս և Նաւասարդ:
21. Առաքել Տէր-Օհանով, կինն՝ Հէրիք, ուստր՝ Դաւիթ, դուստր՝ Սաբէթ, եղբորորդի՝ Եսայի, կինն՝ Մարիամ, ուստր՝ Մկրտիչ, դուստր՝ Սանդուխտ և Ռէհան:
22. Յարութիւն Շուշապագեան, կինն՝ Սառայ, ուստր՝ Սարգիս, դստերք՝ Գօգալ, Փարի և Հէրիք, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Հէրիք, ուստր՝ Մկրտում:
23. Օհաննէս Անանեանց, կինն՝ Մարիամ, մայրն՝ Նազի:
24. Կարապետ Գուլունց, կինն՝ Մարինոս, ուստր՝ Սարգիս, դստերք՝ Շողի և Մարիամ:
25. Կարապետ Ծապովեան, կինն՝ Հոռոմսիմ, եղբայրն՝ Օհաննէս, կինն՝ Սառայ, ուստր՝ Պողոս:
26. Գրիգոր Մանիշակով, կինն՝ Խանում, ուստր՝ Ստեփան, դուստր՝ Մարիամ, Խաթուն, եղբայրն՝ Պողոս, կինն՝ Ազիզ, դուստր՝ Սառայ և Անայ:
27. Ղուլի Տէր-Եղեան, կինն՝ Խաթուն, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Վառի:
28. Օհան Յակոբեան, կինն՝ Շողակաթ, ուստր՝ Գրիգոր, կինն՝ Խանում, եղբայրն՝ Ղազար, թոռն՝ Կիւլի:
29. Յարութիւն Զաքարեան, կինն՝ Ազիզ, ուստերք՝ Սարգիս և Բարսամ, դստերք՝ Հոռոմ, Մարգարիտ, եղբայրն՝ Հանէս, կինն՝ Մարիամ, ուստր՝ Մաթէոս և Կարապետ, դուստր՝ Վառի:
30. Յակոբ Դափիով, կինն՝ Սաբէթ, ուստերք՝ Վիրապ և Ստեփան, դստերք՝ Հէրիք և Մագթաղ, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Եղիսաբէթ, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Մարինոս և Վառի:
31. Մարտիրոս Բաղալեան, կինն՝ Նազի, ուստր՝ Անտօն, դուստր՝ Փարի, Վարդի, եղբայրն՝ Յարութիւն, կինն՝ Դադա:
32. Մօսէս Ղաթուզով, կինն՝ Շահփառ, ուստր՝ Յարութիւն, դստերք՝ Սօնայ և Անայ:
33. Աղաջան Նալբանդով, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Օհանէս և Ներսէս, դստերք՝ Եղիսաբէթ և Մագթաղ, եղբորորդի՝ Յովսէփ, կինն՝ Աննայ, ուստր՝ Անտօն, Զաքի, Վառի:
34. Սարգիս Գրիգորով, կինն՝ Եփրոսիմէ, ուստր՝ Գալուստ, կինն՝ Մարիամ, ուստր՝ Օհաննէս, եղբայրն՝ Գալուստ, Բարսեղ, կինն՝ Սաբէթ, եղբորորդին՝ Աւետ, կինն՝ Մարգարիտ, ուստր՝ Պողոս, դստերք՝ Վարդի և Խաթուն:

35. Յական Աղեանով, կինն՝ Մաթօ, ուստր՝ Յարութիւն, դուստր՝ Ռէհան, Հէրիք, եղբայր՝ Մակի:
36. Աղաջան Մաթէոսեան, կինն՝ Սաբէթ, ուստր՝ Մաթէոս, կինն՝ Խանում, եղբայրն՝ Սարգիս, կինն՝ Մահալեփ (գուցէ՛ Մահալեփ), ուստերք՝ Յարութիւն և Պողոս, դուստր՝ Շողի:
37. Պապա, կինն՝ Զավահիր, ուստերք՝ Գաբրիէլ և Գրիգոր և Մակի, դստերք՝ Խանում և Վառի:
38. Մարգար Բնչեան (իմա՝ Բանուչեան), կինն՝ Հոռոմ, ուստր՝ Մակի, կինն՝ Մարիամ, ուստր՝ Օհաննէս, եղբայրն՝ Աւագ, կինն՝ Նազի, ուստր՝ Ստեփան, Գրիգոր, դստերք՝ Մարինոս, Խաթուն և Սանդուխտ:
39. Օհան Տէր-Խաչատուրեան, կինն՝ Մարինոս, ուստր՝ Գրիգոր, կինն՝ Մարիամ, դուստր՝ Սաբէթ, ուստր՝ Յոսէփ, եղբորորդին՝ Ղևոնդ, կինն՝ Գիւլի, ուստր՝ Հանէս, կինն՝ Վարդի, եղբայրն՝ Օհաննէս, ուստերք՝ Ղևոնդ, Պողոս, դստերք՝ Մարիամ, Սաբէթ:
40. Յովսէփ Թուսիով, կինն՝ Գիւլի, ուստերք՝ Ստեփան, Մօսէս, դուստր՝ Մարիամ, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Սանդուխտ, ուստերք՝ Յակոբ, Պետրոս և Պողոս:
41. Յովսէփ Տէր-Օսէփեանի որդի՝ Ներսէսն, եղբորորդին՝ Գրիգոր, քոյրն՝ Զանի, եղբայրն՝ Սարգիս:
42. Մօսէս Ոսկանեան, ուստերք՝ Մնացական և Յօհաննէս, եղբորորդի՝ Աւետն այրի, ուստերք՝ Գիկ., Կարապետ:
43. Ղազար Առաքելեան, կինն՝ Մարգարիտ, եղբայրն՝ Գրիգոր, կինն՝ Նազի, դուստր՝ Մարիամ:
44. Թէոդորոս Յակոբեան, կինն՝ Վարդի, մայրն՝ Շարմաղ, եղբայրն՝ Կարապետ, կինն՝ Ազիզ, դուստր՝ Մարիամ:
45. Աբրահամ Յովակիմեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Թէոդորոս, դուստր՝ Ռէհան, եղբայրն՝ Մակի, կինն՝ Սանդուխտ, ուստր՝ Կարապետ, դուստր՝ Հէրիք, միս եղբայրն՝ Մարտիրոս:
46. Ղուլի Հայրապետեան, կինն՝ Զառի, ուստր՝ Մակի, կինն՝ Գուլի, եղբայրն՝ Կարապետ:
47. Գալուստ Տէր-Ղուկասով, կինն՝ Մարիամ, ուստր՝ Մաթէոս, դուստր՝ Վարդի, եղբայրն՝ Օհան, կինն՝ Հոռոմսիմ:
48. Սարգիս Մունթօյեան, կինն՝ Մարիամ, ուստերք՝ Օհաննէս, Գրիգոր, Գալուստ, դուստր՝ Անայի:
49. Մարտիրոս Դալաքեան, կինն՝ Մարիամ, ուստր՝ Հանէս, դուստր՝ Մարինոս, Զառի և Վարդի»⁹:

⁹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1 . գ. 3800, թ. 33-34: Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, 2004, էջ 141:

Ուսումնասիրելով ցուցակը նկատում ենք, որ կարծես այն ամբողջական չէ: Նշենք, որ ցուցակը կայուն չէր կարող լինել, քանի որ բնակչությունը տարբեր պատճառներով, ինչպես այլ բնակավայրերի դեպքում, այս դեպքում էլ մշտապես եղել է տեղաշարժման մեջ: Որոշ ընտանիքներ, նաև տոհմեր հեռացել են: Այլ բնակավայրերից, այդ թվում Արցախից, Բանանց են եկել նորերը և այսպես շարունակ: Արցախից տեղափոխվածների թիվը շատացել է հատկապես այն ժամանակ, երբ հայ մելիքների օգնությամբ Արցախն անցել է Ռուսաստանին (Գյուլիստանի պայմանագիր, 1813 թ.), սակայն ցարի հրամանով Արցախի (Ղարաբաղի) կառավարիչ է նշանակվել Շուշիի Իբրահիմ խանը: Այս խանի բռնաճնշումների հետևանքով շատ հայեր հեռացել են Արցախից:

Անունների շարքն ուսումնասիրելով, նկատում ենք ուսուրերի և դուստրերի հիմնականում հայկական գեղեցիկ անունների շարք, որոնցով դարեր շարունակ անվանակոչվել են բանանցեցիները: Թվարկենք այդ անունները.

Կանացի անուններ – Նազի, Զանի, Զառի, Սանդուխտ, Շարմաղ, Շողակաթ, Վարդի, Սալբի, Հոռոմսիմ, Սիրուն, Ռէհան, Շողի, Մարինոս, Զավահիր, Փարի (Փառի), Անայի (Անահիտ), Վառի, Դադա, Եփրոսինէ, Մաթօ, Անախաս, Սաբէթ, Շուշանիկ, Սիրանուշ, Թագուհի, Փառանձեմ, ... և այլն:

Տղամարդու անուններ – Մակի, Եսայի, Զաքար, Ավագ, Դադի, Մարտիրոս, Վիրապ, Օհաննէս, Ծատուր, Գալուստ, Մօսի, Ռուսիան, Նավասարդ, Բարսամ, Հանէս, Ավետիք, Ավետիս, Արշակ, Վազգեն, Մամիկոն և այլն:

Բանանցը ուներ հաճելի, բարեխառն կլիմա, մեղմ ամառ ու մեղմ ձմեռ: Շրջապատված էր անտառապատ սարերով ու լեռներով, ինչի հետևանքով բնակչության մեջ շատ էին երկարակյացները: Մարդիկ այստեղ ապրում էին մինչև 80-85 և ավելի տարիներ: Հայտնի է օրինակ, որ Բանանցի երկարակյացներից մեկը՝ Մուսունց Հայր վախճանվել է 103 տարեկան հասակում:



Բանանցեցի երկարակյացներ, 1908 թ.
1-ին շարքում՝ Պողոս Պողոսյան (Քաչալ), Աթանես Թնիսանց (կոխ բռնող), Մակի Օհանյան (Սայունց), 2-րդ շարքում Սարգիս Բաղայան (Մուրադանց), Հովհաննես Սեյրանյան (Բոռ-Բոռ), Ստեփան Տոնի Տոնյան (հայրը Բանանց է տեղափոխվել Տոնաշենից):



Բանանցեցի երկարակյացներ, 1985 թ.
1-ին շարքում ձախից աջ՝ Հարությունյան Համբարձ (Դուրի), Դանիելյան Մակիչ (Բատրակ), Միրզոյան Ալիք, Ավագյան Անդրի, Շահմուրադյան Ալեքսան, 2-րդ շարքում կանգնած են ձախից՝ Ավագյան Ալեքսան (Պիճո Ալիք), Դադյան Սիմոն (Ճինգի):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Բարեբախտաբար պահպանվել են Բանանցի բնակչության 1804-1917 թթ. վիճակագրական տվյալները: Ներկայացնենք այդ տվյալները¹⁰.


տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1804	51	100	80	180
1839	49	191	191	382
1845		477	414	891
1847		485	439	916
1849		509	438	947
1850	118	519	509	1028
1852		529	517	1046
1853		536	523	1059
1854		553	527	1080
1856		582	562	1144
1857		589	579	1168
1858		595	582	1177
1860		599	584	1183
1861	75			
1863		620	580	1200
1864		635	595	1230
1865	103	640	595	1235
1866	146	709	573	1282
1872		964	874	1838
1873				1644
1874				1560
1875				1704
1876				1739
1877		923	843	1766

¹⁰ Բանանցի բնակչության վիճակագրության տվյալների վերաբերյալ տեղեկություններ կան Հայաստանի ազգային արխիվում, «Նոր դար», «Արծազանք» և այլ թերթերում ու ամսագրերում: ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 33-34: Նոր Դար, 1889, N 204, էջ 2: ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, էջ 2: ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, էջ 10 և այլն: Ս. Կարապետյան, 2004, էջ 146:

1878		929	836	1765
1881		990	883	1873
1882		1021	911	1932
1883		1003	884	1887
1885		950	900	1850
1886	174	1135	860	1995
1887		1029	925	1954
1888		1063	951	2014
1889		1076	952	2028
1890		1104	981	2085
1891		1144	*	*
1892		1198	1131	2329
1893		1221	1145	2366
1894		1232	1180	2412
1897		1326	1279	2605
1898		1374	1312	2686
1899		1382	1316	2698
1900		1390	1333	2723
1901		1436	1365	2801
1902		1431	1384	2815
1905		1448	1392	2840
1906		1516	1412	2928
1907				2310
1908	262	1156	930	2086
1909		1462	1394	2856
1910		1203	971	2174
1912		1508	1423	2931
1914				2390
1917	400			2596
1924	600			2364
1940	1200			4500
1976				1675


Տեղեկություն¹¹ կա նաև 1924 թ. Բանանցի բնակչության թվաքանակի մասին: Պահպանվել է Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին ուղղված Գանձակի հոգևոր թեմի առաջնորդ Լևոն եպիսկոպոսի գրությունը, որի համաձայն 1924թ. Բանանցի ծխամատյանի տվյալներով գյուղում կար մոտ 600 տուն և 2364 բնակիչ: Ըստ այդ գրության, Բանանցը բնակչության թվաքանակով թեմի չորրորդ գյուղն է:

Գրության մեջ նշվում է նաև, որ 1925 թ. նոյեմբերին 1361 հոգու ստորագրությամբ Բանանցի նոր, երկրորդ քահանա է ընտրվել բանանցեցի երկարամյա դպիր Հովհաննես մահտեսի Մովսիսյանցը: Նշվում է, որ գրությունը ստորագրել է պետական դումայի անդամ Ստեփան Տեր-Ավետիսյանը:



Լևոն եպիսկոպոսի գրությունը

Մեկ այլ գրությամբ հայտնվում է, որ 1916 թ. համայնքի ցանկությամբ քահանա է ընտրվել Անանիա ավագ քահանա Շիրակունին, սակայն քանի որ համայնքը մեծ է, նաև նրանց ծառայություններից օգտվելու էին Կիրանց ու Քարհատ գյուղերը, ապա անհրաժեշտ էր երկրորդ քահանայի ներկայությունը Բանանցում: Այդ նպատակի համար հարմար թեկնածու է նկատվում վերը նշված Հովհաննես մահտեսի Մովսիսյանցը, որը գյուղում հայտնի ընտանիքի զավակ էր և լավ կրթություն էր ստացել, սովորելով գյուղի ծխական դպրոցում: Շիրակունին նույնպես կողմ է, որ Հովհաննես մահտեսի Մովսիսյանցը դառնա Բանանցի երկրորդ քահանան:



Գրություն Բանանցում երկրորդ քահանայի անհրաժեշտության մասին

Ինչպես նկատում ենք, ներկայացվող տվյալները վկայում են, որ մինչև Խորհրդային կարգերի հաստատումը Բանանցի բնակչության թվաքանակը մշտապես աճել է: Անդրադառնանք բանանցեցիների **զբաղվածության** հարցերին:

¹¹ Տեղեկությունները և գրությունները տրամադրել է Արշակ Բանուցյանը:

ԵՐԿԱԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Բանանցի շրջակա լեռները հարուստ են մետաղահանքերով, և բնակիչները զբաղվել են հանքագործությամբ: Հատկապես հայտնի է Բանանցից դեպի Քարհատ տարածքը, որը հարուստ է երկաթի, պողպատի, պղնձի, ածուխի, կորալտի և բազմատեսակ քարերի հանքերով: Բանանցը հնուց ի վեր հայտնի է եղել իր հմուտ արհեստավորներով, մասնավորապես երկաթագործ վարպետներով: Այդ են վկայում Կալերի և այլ վայրերի հնագույն դամբարաններն ու գերեզմանները, որտեղից գյուղացիները հողը մշակելու ժամանակ շատ հաճախ հայտնաբերել են բրոնզե, պղնձե ու երկաթե իրեր, որոնք ինչպես վերևում նշվել է, թվագրվում են մ.թ.ա. II-I հազարամյակներով: Արդեն նշվել է, որ **Բանանցի** «Բարսեղի բլուր» կոչվող տեղանքի թիվ 13 դամբարանում հայտնաբերվել է երկու երկաթե խողովակ, որը թվագրվում է մ.թ.ա. II հազարամյակի վերջ ժամանակաշրջանով: Բանանցի բնակիչները, դեռևս այդ ժամանակներից, օգտագործել են պղնձի ու երկաթի հանքերը, հալեցնելով դրանք և պատրաստելով աշխատանքային գործիքներ ու կենցաղային իրեր: Բանանցի դարբինները պատրաստել են գուբանի խոփեր, արորներ, կացիներ, ցակատներ և աշխատանքային այլ գործիքներ, որոնք վաճառում էին նաև երկրամասի այլ բնակավայրերում: Բանանցը ունեցել է նաև հմուտ արհեստավորներ, որոնք բրոնզից, պղնձից ու երկաթից պատրաստել են աշխատանքային գործիքներ, զարդեր՝ մատանիներ, ապարանջաններ, ականջօղեր, կախիկներ, ծիսական ու կենցաղային անոթներ և այլն:



Պղնձե թաս, 19-րդ դար



Ծառի կեղևը հանելու գործիք, երկաթ, 19-րդ դար (Մ. Չալումյանի հավաքածու)



Պտտատակահան, 19-րդ դար

Գյուղում գործել է յոթ երկաթածուլարան: Մեծերը պատմում են, որ բանանցիցի հանքագործները մեծ խորությամբ փորել են գետինը և հանել երկաթաքարեր, որոնք այնուհետև խոշոր մուրճերով մանրացրել են և լցրել քուրայի մեջ, որտեղ այն հալվել է: Ստացված երկաթից դարբինները պատրաստել են անհրաժեշտ աշխատանքային գործիքներ և կենցաղային իրեր: Հետաքրքիր է, որ պահպանվել են այն խոր փոսերը, որոնք ժամանակին փորվել են երկաթաքարը հանելու համար: Գյուղում երկաթի արդյունահանումը դադարել է, երբ ռուսական էժան երկաթը մուտք է գործել տարածաշրջան: Երկաթի արդյունահանման անարդյունավետ դառնալը և հողի պակասությունը պատճառ են հանդիսացել, որ բանանցեցիների մի մասը հեռանա գյուղից: Բանանցը հնուց ի վեր ունեցել է նաև հմուտ բրուտներ ու խեցեգործ վարպետներ: Բրուտանոց է եղել Ագունց թաղում: Գաջը բերել են Վազգունց բաղերից: Բանանցի տների տանիքները կղմինդրածածկ են եղել: Իսկ կղմինդրի պատրաստման արհեստանոցը գտնվել է Մելիյանցի դիմաց, Արթինագետի ձախ ափին:

Բանանցեցիները նաև փայտածուխ են ստացել շատ հետաքրքիր ձևով: Հայտնի է օրինակ, որ Բալյանները ածուխ ստացել են հորերում պեխի (բոխի) փայտը այրելով:

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Բանանցեցիները հմուտ հողագործներ են եղել, սակայն գյուղում մշտապես զգացվել է հողի պակասություն և հողը խնայելու նպատակով տները կառուցել են ապառաժների ու ժայռերի վրա: Բանանցի բնակիչները զբաղվել են հացաբույսերի մշակմամբ և այգեգործությամբ, մասնավորապես խաղողագործությամբ: Մեծահասակ բանանցեցիները պատմում են, որ իրենց պապերը շալակով կողովներով հող են կրել, լցրել ժայռերի վրա ու խաղող և այլ մրգատու ծառեր աճեցրել: Հայտնի է **Բանանցենի** կոչվող խաղողի տեսակը, որի հատիկները սպիտակ են, կլոր, համեմատաբար մանր և ոչ շատ քաղցր: Այս խաղողից բանանցեցիները պատրաստել են **Բանանց** (Բայան շիրա) կոչվող հայտնի գինին, որի համբավը տարածված էր մինչխորհրդային ու հատկապես խորհրդային տարիներին: Խաղողի այս տեսակը ստացվել ու աճեցվել է Բանանցի հողագործների համառ աշխատանքի շնորհիվ: Հաշվի առնելով **Բանանց** տեսակի բարձր բերքատվությունը, խորհրդային տարիներին Տավուշի Բերդ ավանում ստեղծվել է տնկարան, որտեղ աճեցրել են խաղողի այդ տեսակը և տարածել Հայաստանի այլ շրջաններում, այդ թվում՝ Արարատյան դաշտավայրում: 19-րդ դարի վերջերից բանանցեցիները պատրաստում էին նաև օղի:



«Բանանցենի» խաղողի տեսակ



Խաղողի վազը էտելու և քաղելու մկրատներ, 20-րդ դարի սկիզբ (պատկանել է Քիրունց Պետրոսին)



Բանանց, օղի քաղելու տեսարան (Մուսունք), 1904 թ.



Կոլտնտեսության գինու պահեստը



Մանգաղ



Յակատ վարպետի դրոշմով.



ABETICA

(Գործիքները պատրաստվել են Բանանցի դարբնոցում, դարբին Հուսունց Ավետիսի կողմից)



Կենցաղում օգտագործվող իրեր. տաշտաքերից, նախշազարդ քափգիր՝ մակագրությամբ (Ոհանյան Մակիչ. Հ.) և փայտե շերեփ: Պատրաստվել են Բանանցում, 1930-ական թթ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Բանանցը ունեցել է տանուտեր, սակայն գյուղի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը կարգավորվել են հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Տանուտերը ընտրվում էր հասարակության կողմից: Ընտրվում էր նաև տեղակալ (անձնափոխանորդ, նաև կանդիդատ): Հետաքրքիր է, որ ընտրությունների արդյունքներից գյուղացիները գոհ էին լինում: Այդ մասին են վկայում պահպանված փաստաթղթերը: Փաստաթղթերից մեկը (1906 թ.) այսպիսին է. «Այսօր մեր գիւղի ժողովատեղում կայացաւ նոր տանուտերի ընտրութիւնը: Բոլոր 1906 թ. հասարակութիւնը միաձայն ընտրեցին տանուտէր՝ Սարգիս Յակոբեանցին, իսկ կանդիտատ նորան Մամիկոն Բաղալեանցին: Բոլոր գիւղացիք գոհ եղան այս ընտրութիւնից...»¹²:

Մեկ այլ փաստաթուղթ վկայում է, որ 1913 թ. գյուղապետի ընտրության արդյունքում «Ժողովուրդը համարեա միաձայն ընտրեց Գարեգին Եպիսկոպոսեանին՝ տանուտէր, իսկ Յովհաննէս Սէյրանեանին՝ անձնափոխանորդ...»¹³:

Բազմաթիվ տանուտերներից ոմանք հիշատակության արժանի գործեր են կատարել: Այսպես. 1878 թ. գյուղի տանուտեր Ստեփան Հովհաննիսյանցի գործուն մասնակցությամբ 1886 թ.՝ մեկ տարվա ընթացքում, Արթինաջուր գետի վրա կառուցվել է քարե կամուրջ, որի կառուցման ծախսը (2000 ռ.) հավաքվել էր գյուղացիներից¹⁴: 1884 թ. տանուտեր Ա. Տ. Ավետիքյանի նախաձեռնությամբ կառուցվել է Բանանցից Գանձակ տանող երկրորդ ճանապարհը և այլն:

¹² ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 560, թ. 26: Ս. Կարապետյան, 2004, էջ 152:

¹³ «Հորիզոն», 1913, N 266, էջ 3: Նույն տեղը:

¹⁴ «Նոր դար», 1887, N 113, էջ 3: Նույն տեղը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Բանանցեցիները մեծ կարևորություն են տվել առողջության պահպանմանը և առողջապահական խնդիրներին: Այդ է վկայում այն փաստը, որ սկսած 1903թ. Բանանցում գործել է հիվանդանոց¹⁵: Իսկ երկհարկ, մեծ հիվանդանոցը գյուղի մեծահարուստներից մեկի՝ ինժեներ Լևոն Տեր-Միքայելյանի նվերն էր գյուղին, որը լիովին ապահովում էր ոչ միայն Բանանցի, այլև շրջակա հայկական գյուղերի բնակչության առողջապահության խնդիրները: Հիվանդանոցի առաջին հարկի պատից կախված էր Լ. Տեր-Միքայելյանի մեծադիր նկարը, որը բազմաթիվ անգամ շրջանից եկած ստուգող ադրբեջանցիները ցանկացել են հանել, բայց բանանցեցիները չեն թողել, նրանց բացատրելով, որ հիվանդանոցը նրա միջոցներով է կառուցվել: Ի դեպ, տարածքը, որտեղ կառուցվել է հիվանդանոցը, նույնպես Միքայելյաններինն է եղել:

1950-ական թթ. այդ հիվանդանոցում էր աշխատում հրաշալի բժիշկ Հովհաննես Ավետիքյանը (Աբրի Հանեսը), որը երկար տարիներ աշխատելով, ձեռք էր բերել բոլոր հիվանդությունների բուժման հմտություն ու հիվանդները լիովին վստահում էին նրան: Երկարամյա աշխատանքի շնորհիվ մեծ հմտություն էր ձեռք բերել նաև մանկաբարձուհի Հերիքնազը: Պատմում են, որ նրա երկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում չի եղել մահվան ոչ մի դեպք:




Հիվանդանոցը բակի կողմից



Հովհաննես Ավետիքյանը (Աբրի Հանեսը)

Բացի բժշկից, Բանանցում կային նաև հեքիմներ, սնիսչիներ, աղոթողներ և այլն: Հատկապես հայտնի էին աղոթքի միջոցով բուժողները, որոնք հիմնականում ընտանեկան բուժողներ էին, բայց օգնում էին նաև օգնության կարիք ունեցող այլ մարդկանց: Նրանք աղոթում էին տարբեր հիվանդությունների, գլխացավի, չար աչքի, գործերի հաջողության համար և այլն:



Հիվանդանոցի շենքը



Մանկաբարձուհի Հերիքնազը

Աստծուն ուղղված աղոթքի ուժն ու զորությունը բազմաթիվ անգամներ զգացել են անձամբ, երբ Սանդուխտ տատս ասեղը ձեռքին, թեթևակի ծակոցներ պատճառելով գլխի և ուսերի հատվածում, աղոթում էր: Սանդուխտ տատս բուժում էր նաև ուռած կոկորդի ցավը (քաշում էր բողազը): Նա գրալի պոչով թեթևակի վախեցնում էր ուռած կոկորդը ներսից, որից հետո հիվանդը լավ էր զգում: Կային նաև այլ աղոթողներ. Սիմոն դայի (Առաքելյան), Քիքունց Թագուհի, Հըսանի Շուղի...: Նրանք աղոթքի տեքստը հիմնականում բանավոր ստանում էին իրենց տատերից ու պապերից և փոխանցում էին երեխաներին ու թոռներին: Ու այդպես շարունակվել է սերնդեսերունդ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑ

Մոտավորապես 1872 թ. Բանանցում սկսել է գործել ծխական-եկեղեցական դպրոց, որը մեծ հեղինակություն է ունեցել տարածաշրջանում, այնքան, որ այլ գյուղերից նույնպես գալիս էին սովորելու այդտեղ: 1878 թ. դպրոցը փակ է եղել, հավանաբար տեղի և ֆինանսական միջոցների սակավության պատճառով: Դա խիստ մտահոգել է բանանցեցիներին, և նրանք դիմել են իշխանության ներկայացուցիչներին, նորից ուսուցում կազմակերպելու խնդրանքով: Խնդիրը հաջող լուծում է ստացել: Գյուղ այցելած իշխանության ներկայացուցիչ, թեմական վերատեսուչ Հ. Տեր-Հովհաննիսյանն ու օգնական Մ. Եպիսկոպոսյանը գյուղի ներկայացուցիչների հետ քննարկում են հարցը: Պահպանված փաստաթուղթը վկայում է այդ մասին, որ Բանանցի հասարակության ներկայացուցիչները որոշում են իրենց արոտատեղիների արդյունքը, տուգանքները և այլ ֆինանսական միջոցներ, որը կազմում էր տարեկան 600 ռուբլի, հատկացնել դպրոցի ծախսերի համար: Ընտրվում են նաև նոր հոգաբարձուներ, որի անդամներն էին «Յոզսեփ Տեր Իսրայելեանցը, քահանաներ տէր Պողոսն ու տէր Անդրեաս, և գիւղական տանուտէրը»: Ֆինանսները կառավարելու համար գանձապահ է ընտրվում

¹⁵ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2492, թ. 192:

Յովսէփ Տէր Իսրայէլեանցը: Ուսուցիչ է նշանակվում Վ. Եղիազարեանցը: Իսկ ժողովրդի ոգևորությունը այնքան մեծ էր, որ ժողովրդականներից մէկը՝ պ.Տեր Միքայելյանցը, որին պատկանում էին դպրոցի համար նախատեսված երկու սենյակները, որոշում է իր սենյակները ձրի տրամադրել դպրոցին, իսկ հոգաբարձուներից մէկը՝ պ. Յովսէփ Տէր Իսրայէլեանցը, իր տան սենյակներից մէկը, դարձյալ ձրի, տրամադրում է վարժապետին նրա բնակության համար: Տրամադրված սենյակները, որ ունեին գավիթ ու պարտեզ, շատ հարմար ու գեղեցիկ էին ուսումնարանի (դպրոցի) համար: Բանանցի դպրոցի այս հաջողությունը թեմական տեսուչը համարում է այն, որ ժողովրդի մեջ մեծ էր ուսման հանդեպ սերն ու ծարավը: Դպրոցի գոյությունը ապահովվեց նաև գյուղում բարձր գիտակցություն ունեցող անձանց գոյությամբ: Շուտով կարիք է զգացվում ունենալու նոր դպրոց: Որոշվում է նոր դպրոց (ծխական ուսումնարան) կառուցել ավերակների վերածված Աբ. Աստվածածինի հին եկեղեցու տեղում: 1886 թ. սկսվում են նոր դպրոցի շինարարական աշխատանքները: Նախածեռնողն էր տանուտերի եղբայրը՝ բժիշկ Եգոր Հովհաննիսյանցը, ի հիշատակ իր վաղամեռիկ որդու: Պահպանված փաստաթղթերից հայտնի է դառնում, որ 1903 թ. բանանցեցիները դիմել են Գանձակի հոգևոր կառավարությանը՝ դպրոցի համար առանձին նոր շենք կառուցելու թույլտվություն ստանալու խնդրանքով:


Բանանցի դպրոցում ուսման մակարդակը բարձր էր: Ամեն ինչ արվում էր, որ աշակերտները բարձր գիտելիքներ ձեռք բերեն ուսման ընթացքում: Հայտնի է, որ օրինակ 1911/12 ուս. տարվա դրությամբ դպրոցն ուներ գրադարան՝ 750 կտոր գրքով (1031): Պահպանվել են նաև տվյալներ 1871-1913 թթ. դպրոցի գործունեության վերաբերյալ¹⁶: Ներկայացնենք դրանք.

տարեթիվ	այլ տեղեկ. բացվել է	ուսուցիչներ	աշակերտներ
1871			
1873	1	106	
1874	գործել է որպես արական դպրոց, ուսուցիչն էր Ավետիք Ստեփանյան Տեր-Ավետիքյանցը,		120
1875	Անդրեաս քին. Տեր-Միքայելյանց		
1876	2	90	
1877	1	55	
1877/78	մի կարճ ժամանակամիջոց փակ է մնացել		
1878	գործել է 1878/79 ուստարվա հոկտեմբերից		
1879	1	35	
1888	նորակառույց դպրոցին նյութական մեծ օժանդակություն է ցույց տվել Մակի Ջաղեթյանցը: Վերաբացումը տեղի է ունեցել		

¹⁶ Բանանցի 1871-1913 թթ. դպրոցի գործունեության վերաբերյալ տեղեկություններ կան Հայաստանի ազգային արխիվում, «Նոր դար», «Արծազանք» և այլ թերթերում ու ամսագրերում: ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 33-34: Նոր Դար, 1889, N 204, էջ 2: ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 240, էջ 2: ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, էջ 10 և այլն: Ա. Կարապետյան, էջ 151-152:

հունվարի 24-ին: Հոգաբարձության կազմում հաստատվել են Պողոս քին. Եպիսկոպոսյանցը, երեցփոխ Պողոս Կարապետյանն ու բժիշկ Յագոր Գրիգորյան Հովհաննիսյանցը

1890	60	
1890/91	դասատվությունը սկսվել է սեպտ. 3-ին:	73
	Ուսուցիչ՝ Ստեփանոս դպիր Մկրտչյան Տեր-Միքայելյանց	
1891		70
1892	միդասյա	70
1893	գործել է որպես արական դպրոց	
1894	1	59
1895-1905	կառավարության կարգադրությամբ փակվել է	
1906	վերաբացվել է սեպտ. 15-ին որպես երկսեռ դպրոց	
1907	3	155 (43-ը՝ աղջիկ)
1908	ուսուցիչներ՝ Արշակ Մելիքսեթյան, օր. Վ. Ազատյան, օր. Սիրանույշ Տեր-Սահակյան, հոգաբարձուներ՝ բժիշկ Միքայել Տեր-Միքայելյանց, Լևոն Տեր-Ավետիքյան, Հովհ. Հովհաննիսյան, Վազգեն Տեր-Ավետիքյան և Սիմոն Նադիրյանց	
1909	3	155 (43-ը՝ աղջիկ)
1911	3	147 (45-ը՝ աղջիկ)
1911/12	քառամյա, ուսուցիչներ՝	140 (40-ը՝ աղջիկ)
	Եղիաբեթ Տեր-Վարդանյան, Շուշանիկ Ջալադյանց, Միքայել Շահմուրադյանց	
1913	ուսուցիչ՝ Ստ. Սարգսյանը, հոգաբարձուներ՝ Ստ. Տեր-Ավետիքյան և Հովհ. Հովհաննիսյան	



Բանանցի ծխական դպրոցի ուսուցիչները և աշակերտները (19-րդ դ. սկիզբ) Կենտրոնում Ստեփան Տեր-Ավետիքյանն է:

1893 թ., ըստ Մ. Բարխուտարեանցի, Բանանցի արական միդասյա ուսումնարանում (դպրոց) սովորում էր 55 աշակերտ, որոնցից 48-ը վճարում էր, իսկ 7-ը սովորում էր ծրի¹⁷: Ըստ մեծերի հաղորդման, տարբեր ժամանակներում իրենց տները դասասենյակների են վերածել ու երեխաներին տրամադրել նաև Եպիսկոպոսյաններն ու Ջաղեթյանները: Սակայն գյուղի բնակիչների ցանկությամբ ու միջոցներով կառուցվել է դպրոցի երկհարկանի, գեղեցիկ շենքը, որի կառուցումը սկսվել է 1928 թ., իսկ սկսել է գործել 1932-33 ուսումնական տարում, որպես միջնակարգ դպրոց: Դպրոցի մուտքի պատին գրված էր. «Կառուցվել է 1928-32թթ. հասարակության ուժերով»: Դպրոցի նախագծման աշխատանքները շատ գրագետ ձևով կատարել է Գևորգ Հարությունյանը (Ասրունց Գևորգ): Պատմում են, որ շրջանի ղեկավարությունը իմանալով դպրոցի կառուցման մասին, դիմել է Բաքվին, որպեսզի համապատասխան մասնագետներ տրամադրեն նոր դպրոց կառուցելու համար: Բաքվից եկած մասնագետները տեսնելով դպրոցի կառուցման համար Գևորգ Հարությունյանի կազմած գծագիրը, զարմանքով ասել են. «Եթե դուք ունեք այսպիսի մասնագետ, ինչու եք կանչել մեզ»: Դպրոցի բետոնապատման աշխատանքները, այդ թվում՝ երկկողմ աստիճանների ու դրանց կից մեծ, գեղեցիկ երկու ծաղկամանների հարդարման աշխատանքները նույնպես կատարվել է բանանցեցի վարպետի՝ Պետրոս Հակոբի Գրիգորյանի կողմից:

Հետաքրքիր պատմություն ունի դպրոցի զանգը, որը նախկինում Գր. Լուսավորիչ եկեղեցու գմբեթի զանգն է եղել: Անաստվածության տարիներին՝ 1930-ական թթ. այն դպրոց է բերվել եկեղեցուց: Երկար տարիներ զանգը իր ղողանջով դասի է հրավիրել աշակերտներին: Ավելի ուշ դպրոցում գործել է էլեկտրական զանգ: Սակայն այդ զանգը պահպանվել է: Զանգը 1989 թ. մարտին իր հետ Երևան է բերել դպրոցի ուսուցիչ Արեգ Մկրտչյանը: Բրոնզե զանգի բարձրությունը 16 սմ է, տրամագիծը՝ 14,5 սմ, երկաթե լեզվակի երկարությունը՝ 16 սմ: Զանգը գոտևորված է նոնաշար զարդաքանդակներով: Բանանցից բերված այլ իրերի հետ զանգը պահվում է Հայաստանի պատմության թանգարանում (զանգը ի պահ է տրվել):



Գևորգ Հարությունյան (Ասրունց Գևորգ), դպրոցի շենքի նախագծի հեղինակ



Դպրոցի բրոնզե զանգը

¹⁷ Մ. եպս. Բարխուտարեանց, էջ 306:



Բանանց, միջնակարգ դպրոցի նոր, երկհարկանի շենքը և մուտքը՝ երկկողմ աստիճաններով և ծաղկամաններով



Բանանցի միջնակարգ դպրոցի 1938-39 թթ. շրջանավարտները: Մեջտեղի շարքում նստած են ընկեր Սրբուհին և ընկեր Ալեքսան Շահմուրադյանը, աջից թուրքերենի ուսուցիչն է (թուրք), նրանից ձախ աշակերտուհի Աստղիկն է և Բեկնազարյան ազգանունով աշակերտուհին: Առաջին շարքում, ձախից Գոհար Աղիխանյանն է:



Բանանց, 1939-40 թթ. շրջանավարտները, մայիս, 1940 թ.: Ձախից երկրորդ շարքում՝ Աստղիկ Ջալադյանն է:



Բանանց, 1960 թ., դասղեկ Բ. Բարայանի դասարանը

Հետպատերազմյան շրջանում՝ 1950-ական թթ., Բանանցի բնակչությունը աճում էր: Դպրոցում սովորում էին հարյուրավոր աշակերտներ: Նրանց թիվը 1960-ական թթ. հասնում է մինչև 800-900 հոգու: «Արծիվ» հուշարձանը ավերելուց հետո, բնակչության արտագաղթի հետ սկսում է պակասել աշակերտների թիվը: Իսկ 1988 ուս. տարում, ըստ դպրոցի մաթեմատիկայի և այլ առարկաների ուսուցիչ Արեգ Սկրտչյանի, 100 աշակերտ էր մնացել դպրոցում, որոնց թիվը դեկտեմբերին արդեն 10 էր:



Բանանցի մանկապարտեզը 1950-ական թթ.:
Դեռևս 1930-ական թթ. գյուղում մշտապես գործել է մանկապարտեզ:

ԲԱՆԱՆՑԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Բանանցը հարուստ է ճարտարապետական կառույցներով ու հուշարձաններով, այդ թվում՝ եկեղեցիներով, մատուռներով, կամուրջներով, գեղեցիկ երկհարկ ու եռահարկ տներով ու այլ շինություններով: Անդրադառնանք Բանանցի եկեղեցիներին, հուշարձաններին, բնակելի տներին ու այլ կառույցներին:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ, ՎԱՆՔԵՐ, ԽԱՉՔԱՐԵՐ

Գյուղի հնագույն եկեղեցին միանավ **սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցին է**, որի կառուցման ժամանակը հայտնի չէ: Եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում՝ Փողոսկում: Եկեղեցին ձախ կողմից կառուցված է ժայռի վրա¹⁸: Եկեղեցու պատերին ներսից ու դրսից ագուցված են գեղեցիկ խաչքարեր, որոնցից հնագույնը թվագրվում է ՌԵ (1556) թվականով: Եկեղեցին ունի դեպի ներս լայնացող ոչ մեծ երկու պատուհան: Ունի լայն խորան: Եկեղեցին առանձնահատուկ է այն առումով, որ Ա ներսից, Ա դրսից պատերի մեջ ագուցված են բազմաթիվ խաչքարեր ու տապանաքարեր: Ըստ հաշվարկների՝ դրանց ընդհանուր քանակը 153 էր, որոնցից 22-ը՝ տապանաքար, 131-ը՝ խաչքար¹⁹: Խաչքարերը դրված են եղել այժմյան Փողոսկի կենտրոնում: Իսկ տապանաքարերը և խաչքարերի մի մասը թերվել են Եղեցի հողերի հանգստարանից: Ըստ ավանդության՝ կրի հետ, որով ամրացրել են քարերը, խառնել են կաթ:


Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցուն կից կառուցվել է գյուղի մեծ, **սբ. Գրիգոր Լուսավորիչ գմբեթավոր եկեղեցին**, որը կառուցվել է ապառաժի վրա 1863-1866 թթ.: Պահպանված փաստաթղթում այդ մասին գրված է. «Գիւղիս բարեպաշտ ժողովուրդը 1863 թօին հիմնարկելով, 1866-ին աւարտել է իւր այժմու ընդարձակ հոյակապ եկեղեցին, որը պարծանք կարող է բերել ժողովրդին»²⁰:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին սյունազարդ է, ունի վեց սյուն: Եկեղեցու ներսում գեղեցիկ, նրբափյուռ խաչքարեր կային: Եկեղեցու բակում եղել է սպիտակ քարից պատրաստված երկու տապանաքար, որոնք պատկանել են եկեղեցու քահանաներին (տապանաքարերը ստալինյան բռնապետության տարիներին ծածկվել են հողով ու շինություններով): Չնայած եկեղեցին նոր էր կառուցվել, այնուամենայնիվ 19-րդ դարի վերջին այն անմխիթար վիճակում էր գտնվում ու վերանորոգվում է Եգոր Հովհաննիսյանի նվիրատվությամբ: Այդ մասին է վկայում պահպանված մի փաստաթուղթ, որը գրվել է Տեր-Պողոս Եպիսկոպոսյանցի կողմից:

¹⁸ Եկեղեցուն կից ժայռի երևացող մասը երեխաների խաղալու՝ ներքև սահելու սիրելի վայրն էր: Սահելու հետևանքով ժայռը կոկվել, դարձել էր փայլուն, սահուն վայր, որն արևի տակ պսպղում էր, իսկ սահելու ժամանակ շատ հագուստ էր մաշվում, որն առաջացնում էր մայրերի դժգոհությունը:

¹⁹ Ս. Կարապետյան, էջ 161:

²⁰ «Արձագանք», 1886, N 20: Ս. Կարապետյան, էջ 171:



Բանանց, սր. Աստվածածին եկեղեցին



Խաչքար եկեղեցու արևելյան ճակատում



Տապանաքար ագուցված եկեղեցու պատին



Եկեղեցու ճախարակ, կանթեղների համար (դրսից) 17-18-րդ դդ.



Սր. Մարիամ Աստվածածին եկեղեցու պատի մեջ ագուցված խաչքարեր, արտաքին մաս (1 հատ) և ներսից (2 հատ)

Փաստաթղթում գրված է. «...յետ իսպառ քայքայման փայտակերտ տանեաց ս. Ա(ստուա)ծածին հին եկեղեցոյ գեղջս սրբավայրն օրրստօրէ անշքանայր և լիներ կոխան մարդուց և անգամ անասնոց, քանզի ի վերջին ամս որմունքն տեղիս փլեալ էին: ...Շինութիւն սենեկաց սկսեալ է ի 1886 ամի արդեամբք եկեղեցոյ, նուիրատութեամբ պ. Եագորի Յովհաննիսեանց ի յիշատակ որդոց իւրոյ Աղէքսանդրի և եղբարց Տէր-Յովսէփեանց՝ դպիր Ներսեսի և Յովսէփայ ի յիշատակ բազմեքախտ եղբօր իւր մահտեսի Աւետիքի, նոյնպէս և այլոց ոմանց բարեսիրաց և օժանդակութեամբ ժողովրդի... միայն թէ շինութիւնն յատկապէս կատուցեալ է վասն ...անհրաժեշտ պիտոյից եկեղեցոյ ի տեղի և ի վերայ հիման հին եկեղեցոյ»²¹:


Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պահվել են 13 գրչագիր **Ավետարաններ**, այդ թվում՝ չորս մագաղաթե, որոնցից մեկը արդեն շատ հայտնի դարձած **Բախանցի Ծեր ու պահապան Ավետարանն էր** (այդ մասին կխոսվի քիչ ուշ): Խորհրդային տարիներին եկեղեցին դարձել է կուլտնտեսության պահեստը: 1981 թ. եկեղեցին վերանորոգվել ու գործում էր:




Գր. Լուսավորիչ եկեղեցին



Եկեղեցու դուռը



Գր. Լուսավորիչ եկեղեցին Փողոսկի կողմից



Գր. Լուսավորիչ եկեղեցին ներսից

²¹ ՀԱԱ, ֆ. 461, գ. 1, ց. 9, թ. 161: Ա. Կարապետյան, էջ 160:



Եկեղեցու գմբեթի զանգը, այնուհետև՝ դպրոցի զանգը



Եկեղեցու գրակալ, 1892 թ.



Գր. Լուսավորիչ եկեղեցու պատի մեջ ագուցված խաչքար՝ ոճավորված կենաց ծառի պատկերով



Բանանցում հայտնի քահանա տեր Պողոսը (Իրիցանց, Եպիսկոպոսյան)

Բանանցի միջնադարյան շատ հայտնի հոգևոր կառույցներից է **Թարգմանչաց անապատ վանքը**: Այս վանքը գտնվում է գյուղից վերև, Արթենագետի աջ կողմում, Բոլորացճուր գետակի աջ բարձունքին: Վանքը շրջապատված է անտառածածկ, գեղեցիկ լեռներով: Ենթադրվում է, որ Թարգմանչաց անապատը հիմնադրվել է Ե (5-րդ) դարում²²: Եղել է հին վանք, իսկ պահպանված նորը՝ անտաշ քարերով շինված եկեղեցի է, որն ամայի ու անմարդաբնակ է: Եկեղեցու արևմտյան դռան վրա գրված է, որ եկեղեցին կառուցել է «Միլխաւճայ Ազիզն թվ. ՌՀԹ», այն է 1630 թ.: Եկեղեցին ունի նաև գավիթ ու զանգակատուն հարավային դռան վրա, կառուցված 1759 թ., որի մոտ կա տապանաքար հետևյալ արձանագրությամբ. «Այս է տապան Տէրունց Յարութիւնի որդի Գաբրիէլ՝ եպիսկոպոսին, 60 ամ վանահայր էր սա անապատիս, 96 ամեա էր, որ փոխեցաւ առ Քրիստոս 13. 02. 1831 ՌՄՁ»²³:

Մեկ այլ արձանագրությունից հայտնի է դառնում, որ «Յիշատակ է Ապովի որդի Խոճայ Ղազարին ի դուռն Բանանցայ սուրբ Անապատին թվ. ՌՃԺԶ.»։ Անապատի արևելյան կողմում, շրջապարսպի ներսում կա 9 թաղակապ խուց, որոնք անվնաս են:

Մոտակա բարձունքներից մեկում էլ կա մի ավերակ մատուռ, որի մեջ դրված են «ույթ հնածև քարեայ խաչեր»։ Կան նաև XVII-XVIII դարերի հանգստարաններ: Գաբրիել եպիսկոպոս Հարությունի Տերյանի (1735-1831) ժամանակ Թարգմանչաց անապատը ծաղկում է ապրել: Այստեղ է Գաբրիել եպիսկոպոսը (նաև մյուսները) Բանանցի ու շրջակա այլ գյուղերի եկեղեցիների համար ծխական քահանաներ ձևնադրել:

Վանքը ծաղկուն վիճակում է եղել նաև վանահայր Ստեփանոս վարդապետ Բալյանցի ժամանակ: Վարդապետ Բալյանցը վանահայր է եղել 1830-ական թվականներին, և նրա «օրով վանքը բառական ծաղկած դրութեան մեջ է եղել, թէ կալուածական և թէ նիւթական կողմից...»²⁴:

Վանահայրերից Սարգիս վարդապետ Ազարեանց Տփխիսեցին նույնպես ամեն ինչ արել է, որ վանքը բարվոք վիճակում լինի: Այս վանահայրը հայտնի է եղել իր տարօրինակության հասնող խստակենցաղ վարք ու բարքով: Պահպանված փաստաթղթերից մեկում Սարգիս վանահայրը հիշատակվում է 1864 թ.²⁵: Մեկ այլ տեղ գրված է. «Ամբողջ 30 տարի Բանանցի անապատում ապրելով, նա մի անգամ գոնե չը մտաւ գիտըր, որպէս զի կնոջ չը հանդիպի, իսկ վանքում ուխտաւորներ եղած ժամանակը նա ամբողջ օրերով կառանձնանար մէկ մութ քարանձաւում, որը այժմ կոչվում է Ճգնաւորի խուց»²⁶: Թարգմանչաց անապատում այս վանահայրը պաշտոնավարել է մինչև 1870-ական թվականները: Թարգմանչաց անապատում 1874 թ. գործել է անապատի արական դպրոցը: Իսկ կյանքի վերջին տարիները նա անցկացրել է Միրզիկի մոտ գտնվող Քարհանի վանքում, որտեղ և 1877 թ. վախճանվել է 96 տարեկան հասակում:

Մոտ տասը տարի վանքը վանահայր չի ունեցել: Այդ շրջանում իբրև «պահպան» վանքում է գտնվել մի տիրացու. «...վերջին պահապանը եղել է գանձակեցի տիրացու Մարտիրոս Ղալէեանցը, որ մենակեաց լինելով վանքում, պահել պահպանել է վանքը մինչև վերջին տարիներս...»²⁷: Այդ ընթացքում վանքը անշուք ու ոչ բարվոք վիճակում է հայտնվել: Այդ իրավիճակից դուրս գալու համար րանանցեցիները 1892 թ. վանահայրության պաշտոնը ստանձնելու համար հրավիրել են «Սևանայ անապատի միաբան արժ. Գէորգ վարդապետ Տէր-Յովհաննէսեանցին»²⁸:

²² «Նոր Դար», 1892, N 170, էջ 3: Ա. Կարապետյան, 2004, էջ 193:

²³ Մ. եպս. Բարխուդարեանց, էջ 306: Լալայան Ե., էջ 317:

²⁴ «Նոր Դար», 1892, N 170, էջ 3: Ա. Կարապետյան, էջ 197:

²⁵ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 1:

²⁶ «Մշակ», 1888, N 75, էջ 2: Ա. Կարապետյան, էջ 198:

²⁷ «Նոր Դար», 1890, N 123, էջ 3: Նույն տեղը:

²⁸ «Նոր Դար», 1892, N 170, էջ 3: Նույն տեղը:

Անապատի վանքը իբրև սեփականություն ունեցել է կալվածքներ՝ վարելահողեր, այգիներ, անտառ, կովեր, ջորիներ և այլն, որոնք տարբեր ժամանակներում տարբեր չափերի ու քանակի են եղել:

Վերջերս հայտնի դարձավ, որ Թարգմանչաց վանքը ադրբեջանցիները հոչակել են այբանական:



Բանանց, Թարգմանչաց անապատի վանքը



Թարգմանչաց անապատի վանք, Խաչքար՝ արձանագրությանը. «ԽԱՂՍ ՓԱՐԻՆ», 17-րդ դ.




Անապատի վանքի խցերը

Գյուղում կան նաև այլ եկեղեցիներ, մատուռներ ու ճարտարապետական հուշարձաններ (խաչքարեր): Ծեր կամ **Մեծ Պապ** խաչը (մատուռը) գտնվում էր Տերունց թաղի և Կոստանդունց տների միջև գտնվող փոքր հրապարակում (տարածքում), Շիումանց աղբյուրի դիմաց: Մատուռը հավանաբար Ծեր էր կոչվում հին լինելու պատճառով: Կարծում ենք, որ մինչև սբ. Աստվածածին եկեղեցու կառուցումը Պահապան Ավետարանը պահպանվել է **Ծեր կամ Մեծ Պապ** խաչում, որից էլ Ավետարանի Ծեր անվանումը: Նշենք, որ Բանանցում եկեղեցին ու մատուռը նաև **խաչ** էին անվանվում: Տարվա մեջ շատ մատաղներ էին արվում

Ծեր Պապ խաչում: Մատաղը, որը կարող էր լինել որևէ կենդանի (ոչխար, աքլոր) կամ կաթնով (ղզնամեջ), բաժանվում էր յոթ տուն, այնուհետև մասնակից բարեկամները հենց խաչի բակում, որտեղ հարմարեցված նստարաններ կային ու փոքր սեղան, օրհներով՝ «ընդունելի լինի» ասելով, վայելում էին իրենց բաժինը: Գյուղի մեջ, Փողոսկից քիչ հեռու, Յանցի աղբյուրի ճանապարհին էր գտնվում **Խլփանց խաչ** կոչվող փոքր սրբատեղին՝ մատուռը, որի խաչքարերից մեկը թվագրվում է 1556 թվականով: Ներկայացնենք Խլփանց խաչի մասին պահպանված մի գրույց, որը գրի է առել Մարտիրոս Չալումյանը:



Մեծ կամ Ծեր Պապ մատուռը



Խլփանց մատուռը



Ծեր Պապ մատուռը: Մատաղի պարագաներ

«Խլփանց խաչ» մատուռի մասին

Լազգիները Բանանցը ասպատակելուց հետո անցնում են հարևան Խաչակապ (Ղուշչի) գյուղ ու կողոպտում այն: Դեռ լույսը չբացված ճանապարհ են ընկնում դեպի Հարցհանգիստ (Չովդատ) գյուղ: Խաչակապից Հարցհանգիստ տանող ճանապարհին, աջ կողմի մի խոր ձորում գտնվում էր Շատախ հայկական

գյուղը: Թշնամիները չգիտեին այդ գյուղի տեղը, բայց երբ երթի ժամանակ լսում են արբաղաղի ձայն, հասկանում են, որ ներքևում գյուղ կա և հարձակվում, կողոպտում ու կոտորում են բնակիչներին: Ողջ մնացածները ցրվում ու ապաստան են գտնում մոտակա գյուղերում: Բանանց գյուղում հաստատվում են Խալիփյան, Բեգյան և Հովհաննիսյան ազգատոհմերը: Պռազյան ազգատոհմը հաստատվում է Խաչակապում: Այդ կոտորածից հետո Շատախը ամայացել է, իսկ որոշ սրբացած մասունքներ ու խաչքարեր այնտեղից փոխադրվել են Բանանց և դրանց վրա 19-րդ դարում կառուցվել է մատուռ՝ «Խլփանց խաչը»: Այս մատուռի ներսում ազուցված ու մոմերի ծխից սևացած խաչքարին փորագրված է՝ ՍԲ ԽԱՉՍ ԱԲՐԱ-ՀԱՄԻՆ, ԹՎ ՌԻԵ (1576):

Բանանցում տարածված էր նաև «խաչերի» պաշտամունքը: Դրանք սրբատեղիներ էին, որոնք քարեր էին, ծառեր, խաչքարեր, ավերակ փոքր մատուռներ, աղբյուրներ և այլն: Հետաքրքիր է, որ դրանք որոշ դեպքերում հատուկ նշանակության սրբատեղիներ էին: Այդ են վկայում դրանց անունները. «Մըկնըտամի խաչ» («Բաղերի կըրմընջումը»), «Աչքերի խաչ» («Ծըկերի ծյորում»), «Ծակ քար» (որն արձագանքում էր), «Կաղնի խաչ», «Ծոնավեր» (V-աձև ծառով, որի միջով անցնում էին ամուկ կանայք կամ ոտքի չելնող երեխաները), «Նընդիրի ծակ», «Վանքի խաչ» կամ «Մընդոտա խաչ», «Նհատակ խաչ» և այլն: Ճանաչված սրբատեղի էր «Մզնապերթը» (Մաճնաբերդ), որը քիչ հեռու էր, բայց դա չէր խանգարում, որ սրբատեղին հատկապես ամռանն ու աշնանը ունենա շատ ուխտագնացներ: Գյուղից դուրս, «Խաչի հողեր» կոչված վայրում էր գտնվում 9-10-րդ դարերով թվագրվող հանգստարանը՝ իր խաչարձաններով:

Բանանցի հոգևորականները

Ըստ Աստվածածին եկեղեցու խաչքարերի վրայի գրությունների Բանանցում հայտնի հնագույն հոգևորականը Տեր Գրիգորն է. 1600 թ. (հավանաբար մահվան տարեթիվն է): Այնուհետև հիշատակվում են Տեր Մելիքսերթը՝ 17-րդ դար, Տեր Աստվածատուրը՝ 17-րդ դար, Տեր Ակորը (Տերկուփանց)՝ 17-րդ դար, Տեր Եղիշեն՝ 17-րդ դար, Տեր Օսեփը՝ (Բաղդասարի) 1695 թ., Տեր Անտոն Եղիշեի՝ 17-րդ դար, Տեր Գրիգոր Եղիշեի՝ 17-րդ դար, Տեր Եղիան՝ 17-րդ դար, Տեր Մկրտիչ Բարսեղի՝ 1716 թ., Տեր Գրիգոր Նաղիթանց՝ 1761 թ., Տեր Եփրեմ վանահայր՝ 1781 թ., Տեր Մկրտիչ Քոստունց՝ 1791 թ., Տեր Դավիթ Խլփանց՝ 1796 թ., Տեր Հարություն Առաքելի Վահանանց՝ 1801 թ., Տեր Ավետիս Ծապովանց՝ 1809 թ.: Տեր Եսայի Օհանյան՝ 1803 թ., ըստ Ավետարանի հիշատակության, Տեր Իսրայել Պետրոսի Տեր Հովսեփյան՝ 1811թ.: Տեր Գաբրիել Հարությունի Տերունց, վանքի վանահայր, 1735-1831 թթ.: Տեր Ստեփանոս Բալյանց, վանահայր, 1830-1852 թթ.: Տեր Սարգիս վարդապետ Ազարյանց, քյանդեգիրմազ, մահ. 1877 թ.: Տեր Հովհաննես արեղա, 1895 թ.²⁹:

1904 թ. Բանանցում կար երկու քահանա. Պողոս Տեր Հովհաննիսյան-Եպիսկոպոսյանը և Երվանդ Միքայելի Տեր Մկրտչյանը:

²⁹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 53, ց. 1, գ. 509, գ. 795, գ. 890:

ԲԱՆԱՆՑԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԴԻՐՔԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԻՃԱՆԱԶԵՎ ՏՆԵՐ

Բանանցի յուրահատուկ աշխարհագրական դիրքը՝ անտառապատ լեռներն ու սարերը, ժայռերը, ապառաժները, նաև հողի քիչ լինելը պատճառ են հանդիսացել, որ ստեղծվի այդ դիրքին համապատասխան **ճարտարապետություն**: Եվ հողը խնայելու նպատակով տները կառուցվել են ապառաժների ու ժայռերի վրա, որի արդյունքում Բանանցը ունեցել է յուրահատուկ ճարտարապետություն: Երկհարկ ու նաև եռահարկ տները կառուցվել են ժայռերի վրա աստիճանաձև հորինվածքով, նրա մեկի կտուրը մյուսի պատշգամբը կարող էր լինել: Տանիքները պատվում էին հիմնականում կարմիր կղմինդրով, որն էլ ավելի գեղեցիկ տեսք էր տալիս գյուղին (ավելի ուշ սկսում են համադրել կղմինդրը և շիֆերը): Եղել են նաև հողե հարթ կտուրներով տներ, որոնք 20-րդ դարի կեսերին արդեն համարյա վերացել էին:



Բանանց. Տերունց թաղը, աստիճանաձև տներ




Աստիճանաձև տներ: Կիսաքանդ, առանց տանիքի տունը ռեժիսոր Արտաշես Հովսեփյանի հայրական տունն է, իսկ տանիքով, կիսատ երևացող տունը իմ հայրական՝ Ավետիս Տերյանի տունն է հետևի կողմից: Հեռվում երևացող մեջտեղի ապակեպատ եռահարկ տունը Գրիգոր Պողոսյանի (Թիվի Քոքոր) տունն է:

Բանանցի տները աչքի էին ընկնում նաև իրենց մեջ ագուցված շինարարական արձանագրություններով, որոնք տեղեկություններ էին տալիս տուն կառուցողի, շինարարության և վերակառուցման թվականի մասին: Հնագույնները վերաբերում են 19-րդ դարի 2-րդ կեսին:




Մուսունց (Տեր-Մովսիսյան) տան շինարարական արձանագրությունը. «Շինեցաի տունս Տ(է)ր Մով/սիսեանց 1884»:



Գրիգոր Բեկնազարյանցի (Բզզնարանց) տան շինարարական արձանագրությունը. «1899 այս սենեակը շինեցաւ Գրիգոր Բէկնազարեանցը»:

Բանանցում կային նաև գերանակապ (հազարաշենի նման) առաստաղներ ունեցող տներ, որոնց պահող փայտե սյուները ունեին զարդանախշված խոյակներ:



Բանանց, Թորոսյանների գերանակապ (հազարաշեն) տունը՝ զարդանախշած փայտե խոյակով




Եպիսկոպոսյանների տան բուխարին

Բանանցեցիները իրենց տները զարդարել են աչք շոյող գեղեցիկ իրերով (զարդանախշված կոմոդներ, հայելիներ, պահարաններ, սնդուկներ...): Շատ յուրահատուկ բուխարի կար Եպիսկոպոսյանների տանը: Այն գլխի հարդարանքով, բուսական ու կենդանական նախշերով զարդանախշված կանացիակերպ արձանիկ էր:


ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

Տարբեր ժամանակներում Բանանցի միջով հոսող Արթինաջուր գետի և այն սնող գետակների ու առուների վրա կառուցվել են կամուրջներ և շատ գեղեցիկ, յուրահատուկ փոքր կամրջակներ:



Արթինաջուր գետը, դպրոց տանող ճանապարհը նոր կամրջով

Ենթադրվում է, որ Բանանցում պահպանված հնագույն կամուրջը 17-րդ դարում Արթինագետի վրա կառուցված միաթոփչք **Հին կամուրջն է**: Կամրջի կամարի քարերը սրբատաշ են, իսկ մնացած մասերը կառուցվել են անձակ քարերով: Կամրջի թոփչքը 9 մ 25 սմ է, իսկ լայնությունը՝ 4 մ 90 սմ: Շատ հետաքրքիր լուծում է տրված կամրջի ներքին հարդարանքին: Կամրջի մեջ, երկու կողմերում կառուցվել են մեկական թաղակապ սենյակներ, որոնք կարող էին ծառայել իբրև հյուրատուն, պահակատուն կամ մաքսատուն: Սակայն այս կամրջի կառուցման հետ կապված պատմություն կա: Գյուղի մեծերը պատմում են, որ իրենք իրենց մեծերից լսել են, որ կամուրջը կառուցվել է բերգենների (հույներ) կողմից: Իբր այն կառուցել է Ալ. Մակեդոնացին, իր զորքը գետի մյուս ափը անցկացնելու համար: Ժողովրդական այս ավանդությունը մեկ անգամ ևս վկայում է Բանանցի հնագույն բնակավայր լինելու մասին:




Բանանց. Հին կամուրջը



Աջից՝ ծառի ճյուղերի հետևում երևում է թաղակապ սենյակի մուտքի վերին մասը


Բանանցում շատ գեղեցիկ ու հայտնի է **Յանցի** կամուրջը: Այս կամուրջը նույնպես կառուցվել է Արթինագետի վրա, «Հին» կամրջից վերև ընկած հատվածում: Միաթոփչք, կամարածև Յանցի կամուրջը կառուցվել է 18-րդ դարում: Կամարի քարին պատկերված է ձիու գլուխ, որը հավանականությամբ կարող էր լինել տոհմական զինանշան: Հայտնի է, որ 19-րդ դարում կամուրջը նորոգել է Շամի Սաքին: Կամրջի թոփչքը 10 մ 70 սմ է, իսկ լայնությունը՝ 4 մ 90 սմ: Յանցի կամուրջը 1918 թ. դարձյալ վերանորոգվել է: Այդ մասին է վկայում կամրջի կենտրոնում՝ կամարից վերև տեղադրված մարմարե սալիկի 5 տողանոց արձանագրությունը. «Կամուրջս այս վերանորոգեց | Սարգիս Վիրաբեան | Յակոբեանց, անմահ | յիշատակ իր | ծնողաց, 9.6.1918 թ.» (հրատարակվել է Ա. Կարապետյանի կողմից):



Բանանց. **Յանցի** կամուրջը

«**Ներքի հանդի**» կամուրջ. Արթինագետի վրա՝ Բանանց-Գանձակ ճանապարհի շինարարության ժամանակ՝ 1870 թ. կառուցվել է նաև քարաշեն այս կամուրջը: Ցավոք, այս կամուրջը քանդվել է 1945 թ. պայթեցումների ժամանակ, երբ կառուցվում էր Գանձակ-Կուշչի կամուրջ երկաթուղագիծը:

«**Բոլորածորի**» (Բոլորաց ջուր) կամուրջ. կառուցվել է 17-րդ դարում, Բոլորաջուր (Բոլորանց) գետակի վրա: Կամուրջը եղել է միաթոփչք, թաղակապ շինություն: Պահպանվել են կամրջի հետքերը՝ շարված անմշակ քարով, ամրացված կրաշաղախով: Անկյունաքարերը եղել են սրբատաշ: Երևում է, որ կամուրջը ուշ միջնադարում լայնացվել է: Իսկ ի սկզբանե այն ունեցել է 2 մ 50 սմ լայնություն, լայնացվելուց հետո՝ 4 մ 50 սմ: Կամրջի թոփչքը եղել է 9 մ 20 սմ: Բոլորաց ջուր գետակը ունի շատ գեղեցիկ ջրվեժ, որի մոտ բոլոր ժամանակներում նկարվել են համարյա բոլոր բանանցեցիները և Բանանցի հյուրերը:




Բոլորաց ջուր գետի ջրվեժը:
1930-ական թթ. վերջ



«Ղազան ծով»
1960-ական թթ.



«**Եկեղեցածորի**» («Քիլիսադարա») կամուրջ, կառուցվել է 18-րդ դարում, Բանանցից 5,5 կմ հարավ՝ Եկեղեցաջուր գետակի վրա: Միաթոփչք, թաղակապ շինություն է: 1932 թ. կամուրջը նորոգել է Հովհաննես Գյուրջյանը (Գուրջունց Օվանը):



Բանանց. «**Եկեղեցածորի**» կամուրջը

«**Մազի կամուրջ**». Արթինագետի վրա կառուցված կամուրջներից մեկն էր: Կամրջի լայնությունը 3 մ է, թոփչքը՝ 10 մ 15 սմ: Քանդվել է 19-րդ դարի վերջերին: Նեղ կիրճի հանդիպակաց բարձրադիր ափերին պահպանվել են անմշակ քարերով և կրաշաղախով կառուցված երբեմնի կամրջի խելերը:


Դպրոցի մոտի կամուրջ. եղել է միաթոփչք, շարված անմշակ քարով, կրաշաղախով: Քանդվել է 1960 թվականին:




Բանանց, Նոր կամուրջը, որի վրայով երկաթգիծ էր անցնում:

Գյուղամիջյան փոքր կամուրջներ

Գյուղի համարյա կենտրոնով հոսող (ոչ միշտ հոսող) առուների վրա կառուցվել են մի քանի փոքր, գեղեցիկ կամարածն կամուրջներ: Այդ կամուրջները ունեն միջինը 3 մ երկարություն: Շարված են անմշակ քարով, ամրացված կրաշաղախով: Այդ առուներից ոչ բոլորը ունենին մշտապես հոսող ջուր: Առուների հունը տեղ-տեղ ժայռոտ էր: Իսկ բոլոր առուները առատ ջուր էին ունենում տարվա մեջ մի քանի անգամ, երբ հորդ անձրև էր լինում գյուղում կամ դիմացի սարերում: Այդ ժամանակ առուները դառնում էին խիստ վտանգավոր գետեր, քանի որ իրենց ճանապարհին ամեն ինչ սրբում տանում էին: Այդ հեղեղներից հետո գյուղամեջի ճանապարհները դառնում էին խորդուբորդ, որոշ տների ներքնահարկերն ու ցածր աղբյուրները ջրածածկ էին լինում և այլն:




Փոքր կամուրջ, «Սրնանանց» կամուրջը



Փոքր կամուրջ «Կանտորի» ճանապարհին, երևում են Ավետիս Տերյանի (աջից) և Մուսունց Սերգի տների պատերը, կառուցված ժայռի վրա: Ինչպես երևում է, ժայռը հիմք է դարձել տան կառուցման համար:

ՋՐԱՂԱՑՆԵՐ

Բանանցում եղել են շատ ջրաղացներ: Դրանք տեղադրված են եղել Արթինազետի ափերին, քանի որ դրանց աշխատանքի համար օգտագործվել են Արթինազետի ջրերը: Հայտնի էին **Տեր-Ավետիքանց ջրաղացները**՝ «Յանցի» կամրջից վեր՝ թթենու այգու մոտ, **Կվերքանց Կաբրիելի** (Գևորգյան Գաբրիել) **ջրաղացը**՝ «Հին» կամրջից վեր, **Ծպովանց ջրաղացը**՝ նույն կամրջի մոտ, գետի ձախ ափին, **Անյանց ջրաղացը**՝ Արթինաջրի ձախ ափին, **Մուսունց, Քիքունց Մակիի** (Գրիգորյան Մկրտիչ) **ջրաղացները**՝ «Հին» կամրջից վեր: Հետաքրքիր է, որ ջրաղացը նաև որպես օժիտ կարող էին տալ աղջկան: Այսպես, հայտնի է, որ Քիքունց Մակին «Հին» կամրջից վեր գտնվող ջրաղացը՝ որպես օժիտ էր տվել իր դստերը՝ Թագուհուն (փեսան էր Թևոս Հովհաննիսյանը): Թվարկված ջրաղացներից երկար ժամանակ գործել է մի ջրաղաց, որը բանանցեցիները անվանում էին **Նազունց Մեխակի ջրաղացը**: Այդ ջրաղացը գործել է մինչև 1970-ական թթ. սկիզբը:



Բանանցի գործող վերջին՝ Նազյանի ջրաղացը Արթինաջուր գետի ափին

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Բանանցում համարյա յուրաքանչյուր թաղ ուներ իր աղբյուրը, որոնք կառուցվել են հասարակության կամ անհատ բարերարների կողմից:

Բանանցը խմելու ջրով ապահովելու գործը նախաձեռնել ու աշխատանքները սկսել է Գևորգ Հարությունյանը (Ասրունց Գևորգը): Նրա մտահղացմամբ Վզանաջրի աղբյուրի ջուրը պետք է տեղափոխվեր գյուղ և բաժանվեր թաղամասերում կառուցվող աղբյուրների միջոցով: Բայց սկսված պատերազմը անավարտ է թողնում այդ մտահղացումը: Հետպատերազմյան շրջանում դա իրագործվում է **Բագրատ Եպիսկոպոսյանի** շնորհիվ: Այս անուն-ազգանունը շատերին, հատկապես նոր սերնդի բանանցեցիներին ոչինչ չի ասում: Սակայն «Լավ է ուշ, քան երբեք», -

ասում է ժողովրդական ասացվածքը: Թեկուզ ուշացումով, բայց ճանաչենք նրան ու իմանանք այդ մարդու կատարած հսկա ու մարդասիրական աշխատանքը Բանանց գյուղի համար³⁰:


Եպիսկոպոսյանները ծագումով Խաչակապից էին: Տոհմը առանձնանում էր հայրենիքի նկատմամբ իրենց գործունեությամբ: Հետագայում նրանք տեղափոխվել են Գանձակ: Եպիսկոպոսյան Բագրատը շրջապատում ճանաչված էր որպես աղբյուրներ կառուցելու և բնակավայրերը ջրով ապահովելու մասնագետ: Այդ ժամանակ Բանանցը ջրի կարիք շատ ուներ: Գյուղացիները կժերով ու դուլերով գյուղի մի ծայրից մյուսն էին հասնում՝ իրենց կենցաղային կարիքները հոգալու համար:

Եպիսկոպոսյան Բագրատն այդ դժվարին տարիներին նախաձեռնեց և հանձն առավ կատարել չափազանց ծանր այդ գործը և գյուղի իշխանությունների հետ միասին «Վզանանց ջուրը» հասցրեց Բանանց: Գործի նպատակը նաև Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հիշատակը հավերժացնելու համար գյուղում աղբյուր-հուշարձան ունենալն էր: Այդ գործի համար տարիների ծանր ու հոգնատանջ աշխատանքը իրականություն դարձավ Եպիսկոպոսյան Բագրատի շնորհիվ: Ջուրը գյուղ հասցնելով ու մի քանի թաղամասերում խողովակներ անցկացնելով՝ Բանանցն ունեցավ մի քանի աղբյուր. համեմատաբար թեթևացավ գյուղացիների հոգսը: Այդ ժամանակ կառուցվել են հետևյալ աղբյուրները.

1. Փողոսկի աղբյուրը (Հայրենական պատերազմի զոհերին նվիրված):
2. Ներքի թաղի աղբյուրը (Պրսեղանց աղբյուր):
3. Տոնունց թաղի աղբյուրը:
4. Կարմիր սեռի աղբյուրը (Ջալլադյանների):
5. Ադիխանյանների աղբյուրը (Դխանանց թաղ):
6. Քիբունց աղբյուրը (Գրիգորյանների):


Բանանցի աղբյուրներից շատ համով ու սառն էր հատկապես **Յանցի աղբյուրի** ջուրը, որը գտնվում էր գյուղի ծայրամասում, Յանցի կամրջի մոտ: Այդ աղբյուրից ջուր բերելը արարողության էր վերածվում: Ջահել աղջիկները գեղեցիկ հագ ու կապով, ջրի համար նախատեսված կուլաներով, բիդոններով ու դուլերով, հիմնականում երեկոյան կողմ, խմբով գնում էին ջրի: Դեպի Յանցի աղբյուր գնացող ճանապարհը անցնում էր գյուղի հրապարակով՝ Փողոսկով, որը հատկապես երեկոյան կողմ միշտ մարդաշատ էր լինում: Դա կարծես նաև ցուցադրվելու արարողություն էր: Հետաքրքիր է, որ բերվող ջուրը երբեմն տեղ չէր հասնում, քանի որ Փողոսկում հավաքվածները սառը ջուր էին խնդրում, որը չէր մերժվում: Ստացվում էր այնպես, որ ամբողջ ջուրը խմում էին և հարկ էր լինում նորից ջրի գնալ:

³⁰ Ներկայացվում է Դշխուհի Մովսիսյանի (Մուսունց Դշխ) տրամադրած նյութը Բագրատ Եպիսկոպոսյանի և Բանանցը ջրով ապահովելու նրա ջանքերի մասին:



Յանցի աղբյուրը

Բրնչանց աղբյուրը շատ ցածր էր և հեղեղումների ժամանակ ամբողջովին ծածկվում էր ջրով ու ավազով: Այդ աղբյուրի նույն (ավազանը) ցածր էր ու հարմար, որ անասունները ջուր խմեն այդտեղից: Այդ աղբյուրի մոտով բարակ առու էր հոսում, որն անցնում էր խիտ տնկված ու գեղեցիկ շարված ընկուզենիների պուրակի միջով: Այս աղբյուրի մասին կա պատմություն, որը տրամադրել է Մագրա Մանուշակյանը: Ըստ այդ վկայության՝ Սահար աքիրը՝ Մնիշականց Թյունի դայի քույրը, մահամերձ վիճակում կանչում է իր աղջկան՝ Դխանանց հարս Գուհարիկին (Գուհարիկ ազի) և խնդրում, որ աղբյուրից ջուր բերի իր համար: Նա Բրնչանց աղբյուրից ջուր է տանում մորը, որը խմելով օրհնում է աղջկան, ասելով,– սիրտս հովացավ, էս ինչ սառն ու համով էր: Աղջիկը պատասխանում է,– անան Բրնչանց ըխարի ճյուրն ա: Սահար աքիրը հավաքում է ուժերն ու ասում,– Գուհարիկ ջան է՛ր աղբյուրը իմ մորաքույրենցն է՝ Գրիգորյաններինը, ոչ ոք չի իմացել էտ մասին: Ժողովուրդը էդպես է ասել, որովհետև Բրնչանց թաղին է գտնվում: Գուհարիկը երկար ժամանակ մոռանում է այդ մասին: Մի օր էլ գիշերը հիշում է և տղային խնդրում, որ այդ մասին հիշեցնի բոլորին: Տղան՝ Թյունին ծանր հիվանդ էր, բայց կատարում է մոր խնդրանքը: Մի քարի վրա փորագրում է, որ աղբյուրը պատկանում է Գրիգորյաններին՝ Քիբունց, և գիշերով տանում տեղադրում է աղբյուրի ճակատին:



Բրնչանց աղբյուրը

Բբանց Մակի աղբյուրը գտնվում էր հանգստարան տանող ճանապարհին: Երկար նով ունեցող աղբյուր էր, որի ջրով երեսները և թաշկինակներն էին լվանում թաղումից տուն վերադարձող հանգուցյալի հարազատներն ու թաղման մասնակիցները: Կա արձանագրություն, որ աղբյուրը վերանորոգել է Միրզանց Հանեսը (աբեշիկ):



Բբանց Մակի աղբյուրը

Փողոսկի սպիտակ քարե աղբյուրը կառուցվել էր 2-րդ համաշխարհային պատերազմից հետո և նվիրված էր զոհված բանանցեցիների հիշատակին: Ամառը աղբյուրի ջուրը բարակում էր և կանայք ու երեխաները ժամերով հերթ էին կանգնում ջուր վերցնելու համար: Աղբյուրը կառուցելու ժամանակ օգտագործվել է եկեղեցու բակում գտնվող Մանուշակյան Գրիգորի գերեզմանի սպիտակ քարը: Աղբյուրից ոչ հեռու կար մեծ բարդու ծառ, որը տնկել ու խնամում էր գյուղում իր առակներով հայտնի Հաթամը (Սիմոն Առաքելյանը): Այդ ծառի տակ հավաքվում էին հիմնականում ջահելներ ու նարդի խաղում:



Փողոսկի աղբյուրի մոտ: Ամռանը ջրի պակասության պատճառով աղբյուրների մոտ հերթեր էին գոյանում: 1960-ական թթ. վերջ



Փողոսկի աղբյուրը
Հուշարձան-աղբյուրի վերին մասում կար կարմիր աստղ, որն արդեն իր տեղում չէ:



Փողոսկի աղբյուրը
(գերված Բանանցում)



Պապի (Խաչի) աղբյուրը: Պատկերված են ուսուցիչներ Հարությունյան Հայկանուշը, Հարությունյան Արամայիսը, Շահմուրադյան Ալեքսանը և Բաբայան Բաբին:



Արտեմի աղբյուրը (Նազյանի ջրաղացի մոտ):
Նվիրվում է 2-րդ համաշխարհային պատերազմում զոհվածների հիշատակին





Քիցունց (Ղուտուղի) աղբյուրը

Չինարի աղբյուր: Այստեղ պահպանվում է երկու հաստ, մեծ չինարի ծառ, աղբյուր, շատ հին գերեզմանոց ու մատուռի ավերակ:

Բանանցը բարեկարգելու, գեղեցիկ բնակելի տներ, հասարակական շենքեր, ճանապարհներ և այլ շինություններ կառուցելու գործում մեծ ավանդ ունի վերը հիշատակված նոր դպրոցի կառուցման նախագծի հեղինակ, հայտնի որմնադիր Գևորգ Հարությունյանը (Ասրունց Գևորգը): Նա եղել է գյուղի կոլտնտեսության շինքրիգադի բրիգադավարը: Գևորգ Հարությունյանը ոչ միայն սկզբից մինչև վերջ մասնակցել է Բանանց գյուղի նոր դպրոցի կառուցմանը, այլև մեծ մասնակցություն է ունեցել գյուղի հիդրոէլեկտրակայանի կառուցմանը: Նա գյուղում կառուցել է գեղեցիկ ջրավազաններով աղբյուրներ, նաև՝ Չինարի գոմերի հանդին, Մեծ գոմերում, Քարհատա գոմերում, Ներքին հանդին, մեր սարերում և այլն: Կառուցել է հսկայական շենքեր, գոմեր, սարայներ, պահեստներ և գեղեցիկ ու հարմարավետ բնակելի տներ: Վերակառուցել է կամուրջներ, աղբյուրներ, հին շենքեր և այլն:

Նրա գլխավորությամբ են կարգավորվել ամբողջ գյուղի և շրջակայքի ավտոճանապարհները: Նա իր շինքրիգադով մասնակցել է դեպի Սար, Ներքի հանդ, Շինի հանդ գնացող ճանապարհների կառուցմանը:

Գևորգ Հարությունյանն է նախաձեռնել ու սկսել աշխատանքները, որոնք Վզանաջրի աղբյուրի ջուրը պետք է հասցնեին գյուղ, իսկ թաղամասերում կառուցվեին աղբյուրներ: Բայց սկսված պատերազմը անավարտ է թողնում այդ մտահղացումը, քանի որ Գևորգ Հարությունյանը զոհվում է պատերազմի ժամանակ:

Բանանցում և Բանանցից դուրս կան շատ այլ աղբյուրներ ևս: Հիշատակենք բոլոր աղբյուրները, որոնք ներկայացվում են ըստ բանանցեցիների հիշողությունների:

Ղուտուղի աղբյուր, Խաչի աղբյուր, Փողոսկի աղբյուր, Գյուղսովետի աղբյուր, Յոնունց թաղի աղբյուր, Պլլանց ճուր աղբյուր, Ղազան ծովի աղբյուր, Յանցի աղբյուր, Ստանցի թաղի աղբյուր, Ճաղացի մոտի աղբյուր, Բնիչանց աղբյուր, Լբաստրակի աղբյուր (Պլլանից դեպի աջ բարձրացող լեռան լանջին), Արտեմի աղբյուր (Ստանցի ճանապարհի մոտ), Կիշանունց ծորի աղբյուր, Մեծ ծորի աղբյուր (Յոնունց թաղի վերջում), Հակվի աղբյուր, Միրզանց Գոհարիկի աղբյուր (Խտորոտ հողերում), Վիրի ծորի աղբյուր՝ վրան գրաբարով գրած՝ Յիշատակ... «Կիրիզմա»-նի աղբյուրը... (Հանգստարանի), Դիսանանց թաղի աղբյուրը (շուտ-շուտ ջուրը կտրվում էր), Շըհումանց աղբյուր, Դպրոցի աղբյուր, Ծիռնիվերի ծորի աղբյուր, Դղլարունց Մակիչի աղբյուր, Լալունց աղբյուր (ծորի), Մնասանց աղբյուր, Մելի յանցի աղբյուր (կառուցել էր Պետրի Վարդին պատերազմում զոհված իր տղաների համար), Մելի յանցի մեկ այլ աղբյուր (կառուցել էր Քոստյան Սերոժը իր հոր հիշատակի համար), Սարայի տակի աղբյուր, Խաչի աղբյուր, Քուրդունց տան տակի աղբյուր կամ «Բուլրաց ջրի» ջրվեժի աղբյուր, որի շատ սառը ջուրը մամոտ ժայռից էր բխում, Սաթիկի աղբյուր, Կումերի երկար նովով աղբյուր, Վրզանա ճրի աղբյուր, որը 2 նով ուներ (նովերը մամոակալած էին, ջուրը կանաչ գույնի), Ներքի Հանդի աղբյուր, Տըռհողի աղբյուր, Կրիտեղի ճըմպի աղբյուր, Տիրքի գյահի աղբյուր, Գարոյի աղբյուր (Տոնունց թաղի), Միրզանի ծորի աղբյուր, Սուսունց աղբյուր (սիլավոյ), Կարմունջի աղբյուր, Ճղոպրուտի աղբյուր, Կիրատեղի աղբյուր, Ներքին հանդի աղբյուր, Քյոհնա կարմունջի աղբյուր...:

**Արթինաջուր (Կոշկարա) գետի «ծովերը»
(ըստ Գրիգոր Ղևոնդյանի)**

Բանանցում լողանալու համար շատ տեղեր ունեինք, քանի որ գյուղի միջով անցնում էր Ա գետ, Ա փոքրիկ գետակ՝ Բուլրանց ջուրը, որոնցում լողանալու շատ հարմար տեղեր կային, իսկ մեր բանանցեցիները դրանք անվանակոչել են ըստ արտաքին տեսքի ու դրանց հետ կապված դեպքերի, և բոլորը ծով են անվանվել:

Սկսենք մեր բաղերից. ճանաչվածներից են Ազունց բաղի տակի **Ազունց ծովը**, **Լալունց բաղի տակի ծովը**, **Գյուլունց բաղի տակինը**, **Մածունց բաղի տակինը**, **Ջլլադանց ճըխնըկապի տակի ծովը**, **հիմիկվա Դըխանանց Արսենի տղայի հիշատակի աղբյուրի մոտ**, **Աղաջանանց բաղի տակի ծովը** (Թմասունց Մադոսի հիշատակի աղբյուրի տակ), **Տոնունց բաղերի տակի ծովը** (մի մեծ փափաշի գույնի քարի տակ էր), **հիմա Ստանցի Բայանի խորովածանցի տակ է:** **Մելի յանցի կամ Կյումեշ ծովը**, մեր կոլխոզի Սարայի տակի **Սըրնոցի ծովը**, Անյանց ջրաղացից քիչ ցած **Թուզան ծովը**՝ Դըղլարունց տների տակ, **հիմա Բուլրանց ջուրը**, որ խառնվում է Բանանցա գետի հետ, դրանից մի հիսուն-վաթսուն մետր ցած, որն ամենաջրառատն էր լինում և հաճելի ծով էր, որի վրա կախված մի դածի (բոխի, պեխի) ծառ կար, որից կախվում-թոնում էինք ջրի մեջ: Հետո Անյանց դահնի

(նաև դինի=կալվածք, տարածք) տակի **Պառավ վրրցակի ծովն էր, Մուսունց ծովը**, որը նրանց ջրաղացից մի քիչ վերև էր, այնտեղ հիմնականում աղջկեքն էին լողանում:

Խաթունխեղդի ծովը, որը Վանունց Մեծի տան տակինն էր և ամենազարհուրելի ծովն էր, դրա հենց վերև էլի մեկը կար, որ **Թուզան ծով** էինք ասում, քիչ վերև **Չափար ծովն** էր, որի մեջտեղն էլ հենց մի կլոր քար կար, որ կանգնում էինք վրեն, մինչև ծնկները ջուրը ծածկում էր: Այս բոլորը Վանունց Մեծի տան տակինն էին: Քիչ վերև Մուսունց դրինի (դահնի) տակին **Չայդանխեղդի ծովն** էր, կամրջի տակի ծովը...:

Գյուղխորհրդի շենքի մասին

Հետաքրքիր պատմություն կա Բանանցի գյուղխորհրդի (գյուղսովետ) շենքի մասին: Գյուղսովետի շենքը պատկանել է Մանուշակյան Գրիգորին, ով ամուսնացած էր Զլլադանց Ղուկասի աղջկա հետ: Գրիգորը հարուստ մարդ է եղել և շատ է օգնել Զլլադանց ցեղին: Սակայն նրանք երեխա չեն ունեցել: Երբ նա ծերանում է, խնդրում է գյուղապետին, որ եթե խոստանա, որ իր մահից հետո իրեն կթաղեն եկեղեցու բակում՝ ինքն իր տունը կնվիրի գյուղին: Այդպես էլ վարվում են, նրան թաղում են եկեղեցու բակում: Նրա գերեզմանի վրա դրվում է սպիտակ մարմարե քար՝ շրջապատված երկաթե ցանկապատով:

Հետագայում Փողոսկի աղբյուր-հուշարձանը կառուցելու ժամանակ օգտագործվում են նրա գերեզմանի սպիտակ քարերը: Իսկ երկաթե ցանկապատը օգտագործվում է հին ակումբի կառուցման համար:





Գյուղխորհրդի (գյուղսովետի) շենքը



Գյուղխորհրդի նախագահ Ստեփան Սեյրանյանը և երկարամյա քարտուղար Հարություն Գրիգորյանը գյուղխորհրդի պատշգամբում

ՀԱՆԳՍԱՐԱՆՆԵՐ

Բանանցը ոչ միայն հնագույն բնակավայր է, այլև ինչպես վերևում նշվել է, հազարամյակներ շարունակ բնակեցված է եղել: Այդ են վկայում գյուղի շրջակայքում եղած հնագույն դամբարանաբլուրները (որոնք շատ քիչ են հետազոտված), հանգստարանները, ինչպես նաև ավերակ կամ կանգուն եկեղեցիների, մատուռների, խաչքարերի ու այլ հուշարձանների առատությունը: Հին հանգստարանի հնագույն տապանաքարը, որ կոչվում է **Ցից քար**, թվագրվում է ՋԻՉ (1477) թվականով:




Ցից քար

Հայկական այլ բնակավայրերի նման Բանանցում ևս տապանաքարի վրա քանդակվել է ննջեցյալի մասնագիտությունը բնորոշող պատկեր³¹: Միջնադարյան և ուշ միջնադարյան տապանաքարերին պատկերված են թոնրի մեջ հաց թխող կին, քեֆ անող մարդիկ, թառ նվագող մարդ, սայլի անիվ պատրաստող արհեստավոր և այլն: Տապանաքարերին գրված են նաև հետաքրքիր ասույթներ կյանքի ու մահվան մասին, խրատական գրություններ, հանգավոր ոտանավորներ և այլն: Հետաքրքիր է գյուղում իր խստությամբ հայտնի Տեր-Պողոս քահանա Եպիսկոպոսյանցի կնոջ՝ Թագուհի Տեր-Պետրոսյան Եպիսկոպոսյանցի (1840–1901) տապանաքարի վրայի՝ զավակներին ուղղված գրությունը. «Սիրելի զաակունք իմ, ձեր փոխադարձ սերն ու միաբանությունը կը լինի յափտենական երանելի յուշարձան ինձ համար, ուստի միշտ սիրեցեք միմեանց»³²:

³¹ Բանանցի Հին հանգստարանի տապանագրերի մասին տես Մ. Չալոյանի հոդվածը, «Գարդմանք» թերթ, 1996 թ., № 1, 2, 3:

³² Կարապետյան Ա., 2004, էջ 187:



Բանանց, Հին հանգստարանը: Այս տապանաքարերի զույգ, ազդեցիկ տեսքը և ձևերը վկայում են մեր նախնիների ճաշակի և հանգուցյալների հանդեպ ունեցած հարգանքի մասին:



Տապանաքարեր Հին հանգստարանում, հանգուցյալների մասնագիտությունը բնորոշող պատկերներով:


Փոքր Բանանցը կամ **Դամբլաձորը** (Տմբլաձոր) գտնվում է Մեծ Բանանցից 1,5 կմ հեռավորության վրա, նույն Արթինագետի աջ կողմի բարձունքի վրա: Պահպանվել է ավերակ գյուղատեղի և կիսավեր եկեղեցի: Ավերակներից ներքև, ձորի մեջ Նահատակ սրբատեղին է, որտեղ մի մեծ քարի տակից բխում է հորդ աղբյուր: Քարի արևմտահայաց երեսին հնուց պատկերված խաչը այն դարձրել է ուխտատեղի: Ամեն տարի ավագ չորեքշաբթի շրջակա գյուղերից այդտեղ են գալիս ուխտավորներ, հատկապես բորոտությամբ (քոս) վարակվածներ, որոնք լողանալով աղբյուրի ջրով, բուժվում են: Նահատակ սրբատեղիի դիմաց, ձորի ձախ կողմում կա քարայր, որի մեջ երկար տարիներ ճգնել է մի ճգնավոր:

Բանանցի եկեղեցիներում կար 10 ավետարան: Թե ինչպես են դրանք հայտնվել Բանանցում, անհայտ է: Ենթադրվում է, որ որոշ տոհմեր նախկին րնակավայրերից տեղափոխվելով Բանանց, իրենց հետ բերել են նաև պապական, տոհմական ավետարանները: Օրինակ. Տեր Խաչատրյանները եկել են Սյունիքից, Գրիգորյանները՝ Սրսոտից, Առաքելյանները՝ Ջրաբերդից, Իսրայելյանները՝ Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղից և այլն: Բանանցի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պահպանված ավետարաններից մեկը արդեն շատ հայտնի դարձած **Բանանցի Ծեր ու Պահապան Ավետարանն է**³³: Մագաղաթե այդ ավետարանը մեծադիր է, գրված գլխագրերով, որը հատուկ է 7-րդ դարում գրված մատյաններին: Բանանցի Ավետարանը առանց պատկերների է, չունի հիշատակարան, և սկզբից ու վերջից պակասում են էջեր: Սակայն կա ընդ-օրինակողի գիրը, որից տեղեկանում ենք, որ Ավետարանը նորոգվել է **ՋԲ թվ.** (1453), **ՋԿ թուին** (1511), ապա «Չվերջին նորոգիլ տուող սուրբ զաստվածաշունչ **ծեր** աւետարանիս Պանանցայ... ճամահաթն թվին **ՌՇԴ.** (1625) էր. նորոգեցաւ ձեռամբ Շատախեցի Յովհաննէս երիցու...»: Ինչպես նկատում ենք, արդեն **Ծեր** (ՀԻՆ) կոչվող Ավետարանը վերջին անգամ հիմնավորապես նորոգվել է Բանանցում **ՌՇԴ** (1625) թ., որը համայնքի (ճամահաթ) ուժերով, ի հիշատակ իրենց ու ննջեցյալների բարեխոսության, ինչպես նաև, որ Ավետարանը օգնական ու պահապան լինի Բանանցի ամբողջ համայնքին: Նշենք, որ այս Ավետարանը Նարեկի նման բուժիչ ու այլ հատկություններ է ունեցել: Այն օգտագործել են հիվանդներին բուժելու, նոր տների հիմնադրման, հարսանիքների և այլ ծեսերի ժամանակ: Այստեղից էլ առաջացել է **Ծեր** Ավետարանի մյուս անվանումը՝ **Պահապան**: Բարեբախտաբար այս Ավետարանը պահպանվել է և այժմ գտնվում է Մատենադարանում: Այն պահպանված հայոց հնագույն ամբողջական մատյաններից է (VII դարի 2-րդ կես), ունի 255 մագաղաթյա թերթ և կաշվե կազմ, վրան՝ թանկարժեք քարերով զարդարված բրոնզե ոսկեզօծ խոշոր խաչ: Ձեռագիրը 1890-ական թվականներին տեսել է Մակար Բարխուդարյանը ու նկարագրել իր «Արցախ» գրքում:

Դարեր շարունակ Ավետարանը պահվելով Բանանցի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, 1975 թ. տարվել է Գանձակի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Այնուհետև այն ժամանակվա Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Վահան Տերյան եպիսկոպոսը (ավագանի անուն-ազգանունը Անդրանիկ Գալամդարյան) «Բանանցի Ավետարանը» բերել է Էջմիածին ու Ավետարանի մագաղաթե էջի վրա իր նվիրատվական մակագրությամբ, որն անթույլատրելի էր, հանձնել Վազգեն Վեհափառին: Այդ մակագրությամբ Վ. Տերյանը միանձնյա, անիրավացիորեն

³³ Բանանցի Ծեր ու Պահապան ավետարանի մասին տես Ա. Ս. Մաթևոսյան, «Երկու արժեքավոր ձեռագրեր ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին», «Էջմիածին» հանդես, 1976, թիվ 12, էջ 45-51: Ռ. Գրիգորյան. «Իմ ցավ Բանանց» գիրքը, էջ 30-36:

«Բանանցի Ավետարանը» կոչել է «Վեհամոր Ավետարան»՝ ի հիշատակ Վազգեն կաթողիկոսի այդ ժամանակ վախճանված մայրիկի: Վազգեն 1-ին կաթողիկոսը «Բանանցի Ավետարանը» նվիրել է Մատենադարանին, որտեղ Վ. Տերյանի արված մակագրության հիման վրա այն ստացել է «Վեհամոր Ավետարան» անունը: Ինչպես նկատում ենք, մեկ մարդու անպատասխանատու պահվածքի պատճառով «ԲԱՆԱՆՑԻ ԾԵՐ, ՊԱՀԱՊԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ» այժմ անարդարացիորեն կոչվում է «Վեհամոր Ավետարան»:



Բանանցի Ծեր, Պահապան Ավետարանը, VII դ. կես

Ավետարանն ունի երկու անանուն հիշատակարան, որոնցից մեկի համաձայն մատյանը գրվել է Սբ. Երրորդության վանքում, որի տեղակայման վայրը անհայտ է: Ավելի ուշ ավելացված գրառումները վկայում են, որ 13-րդ դարում այն պահվել է Հավուց Թառ վանքում, որտեղից այն 1294 թ. ձեռք է բերել ոմն Համենավագ: 15-րդ դարում ձեռագիրը եղել է Մաքենյաց վանքում: 16-րդ դարում Ավետարանը հայտնվել է Բանանցում:

Ավետարանն իր պատվավոր տեղն ունի Մատենադարանում և Հայոց երրորդ հանրապետության նախագահները երդման արարողությունների ժամանակ ձեռքը դնում են **Բանանցի Ծեր ու Պահապան Ավետարանի** վրա:

2005 թ. Հայաստանի կառավարության որոշմամբ ձեռագիրը ներառվել է «Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների» ցանկում (Տեղեկությունն ըստ տեր Վահրամ քահանա Մելիքյանի):



Բանանցի Ծեր, Պահապան Ավետարանը, VII դ. կես, Մատենադարան

1989 թ. գյուղը հայաթափվել է: Կորցնելով հայրենի Բանանց գյուղը, բանանցեցիները մեծ ցանկություն ունեն, որ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՆՈՐԻՑ ԿՈՉՎԻ ԻՐ ՆԱԽԿԻՆ ԱՆՈՒՆՈՎ՝ «ԲԱՆԱՆՑԻ ԾԵՐ ՈՒ ՊԱՀԱՊԱՆ ԱՎԵՏԱՐԱՆ» կամ «ԲԱՆԱՆՑԻ ԱՎԵՏԱՐԱՆ»:



Բանանցի «Ծեր ու Պահապան Ավետարանի» հին ու նոր պահապանները՝ Վալերի Գրիգորյանը և Գևորգ Տեր-Վարդանյանը:

Ավետարաններից մեկի հիշատակարանը վկայում է XVIII դարի վերջին պարսիկներից, թուրք-թաթարներից, վրացիներից և լեզգիներից Բանանցին ու բանանցեցիներին հասցված ծանր հարվածների ու կորուստների մասին:

1796 թ. Գանձակի վրա են արշավում վրաց Հերակլ թագավորը, սուլթան Շամշադինի զորքը և Շուշիի Իբրահիմ խանը լեզգիների հետ: Չկարողանալով դիմադրություն ցույց տալ, Գանձակի Ջավադ խանը փախչում է: Սուլթան Շամշադինը իր զորքով հարձակվում է Բանանցի վրա: Սուտ երդում տալով՝ նա գյուղից հանում է բնակիչներին, գերի վերցնում և սրախողխող անում: Բնակիչների մի մասը ապավինելով ոտքերին, փախչում է այս ու այն կողմ: Այնուհետև հիշատակարանի «գրիչը» շարունակում է. «Յետոյ զօրքն վրաց հանդերձ լազկին եկն եւ զմնացեալսն կերի արարին եւ Բանանց գիւղն այրեցին հրով»: 1798-1799թթ. սարսափելի սով է սկսվում, որի ժամանակ ամուսինը կնոջն է ուրանում, կինը՝ ամուսնուն, հայրը որդուն է ուրանում, որդին՝ հորը, մայրը դստերն է ուրանում, դուստրը՝ մորը և այլն: Իսկ կերակուրը կաղինն էր ու կաղնու կլեպը: Սովին հաջորդում է ժանտամահը և շատ այլ բնակավայրերի բնակիչների հետ, Բանանցի բնակիչները ևս անողոքաբար կոտորվում են: Շատերն են առանց քահանայի թաղվում, շատ տներ են ավեր մնում: Եվ այս ամենը ընկալվում է իբրև աստծո պատիժ իրենց կատարած մեղքերի համար: Այնուհետև Դավիթ վարդապետը կեն-

դանի մնացածներից մի մասի հետ գնում է Փոքր Բանանց (Դամբլաձոր, Բանանց գյուղից վեր, դեպի Քարհատ), մի մասը գնում է դեպի Կյումեր (գոմեր), մյուս մասը՝ դեպի այգիներ (բաղեր): Որոշ ժամանակ անց ցավը կարծես հանդարտվում է³⁴: Հիշատակարանն ավարտվում է Գանձակը ռուսների կողմից գրավելով (1804 թ.):

Ինչպես նկատում ենք, ավետարանները վկայում են, որ Բանանցը միջնադարում շարունակում էր բնակեցված լինել. մարդիկ աշխատում, արարում էին, ստեղծում բարիքներ: Սակայն ինչպես հայկական այլ քաղաքների ու բնակավայրերի պարագայում էր, այս դեպքում էլ շենացող Բանանցը իր վրա է հրավիրել շրջակա թշնամական ցեղերի ուշադրությունը և գյուղը պարբերաբար ենթարկվել է հարձակումների: Տարածաշրջանը ռուսներին անցնելուց հետո, 19-րդ դարի սկզբներից Բանանցը կրկին վերաբնակեցվում է: Կյանքը նորից շարունակվում է: Նույն՝ 19-րդ դարի վերջում Բանանցում կար 263 ծովս (ընտանիք), որից 1144 արական, 1116 իգական սեռի բնակիչներ էին³⁵:



Բանանց, տեսարան գյուղի կենտրոնից (երևում են սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ակումբը և կոլտնտեսության երկհարկ գրասենյակը հեռվում):

³⁴ Հին-ընապատ և Ճնճա-քար լեռների միջև կա մի նեղ անցք, որն ինչպես նկարագրում են այնտեղ մուտք գործած համարձակ երիտասարդները, ձգվում է մինչև լեռան մյուս լանջը: Այդ անցքը կոչվում է Նաղիրի ծակ: Ավանդությունը պատմում է, որ պարսիկների (Նաղիր շահ) հարձակումներից մեկի ժամանակ բնակիչների մի մասը փախել և թաքնվել է այդ ծակում, այստեղից էլ՝ «Նաղիրի ծակ» անունը:

³⁵ Մ. Եսյու. *Բարխուդարբանց*, էջ 303:

Բանանցի հայատառ հնագույն գորգը

Բանանցում կանայք ու աղջիկները մշտապես գործել են գորգ, կարպետ, խուրջին, գուլպա և այլ կենցաղային ու հագուկապի իրեր: Տատիկներն ու մայրերը գործելու արվեստը պարտադիր սովորեցրել են իրենց աղջիկներին ու թոռներին, ընդհուպ մինչև 1970-80-ական թթ.:

Ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ պահպանված հայատառ գրությամբ առաջին գորգը գործվել է Բանանցում 1202 թ. և այժմ պահվում է Վիեննայի արդյունաբերության և արվեստի պատմության թանգարանում: Այն այդ թանգարանին է հանձնվել Մխիթարյան միաբանության կողմից:

Գորգը եռակամար խորանով է, սյունազարդ, ծաղկազարդ, գործված ոճավորված կենաց ծառի ավանդույթով: Գորգի կենտրոնական դաշտը մուգ կարմիր հիմնագույնի վրա պատկերված եռակամար խորան է, որի սյուների պատվանդանները ոճավորված են **կենաց ծառ և արմավենյակ** նախշերով: Սյուների վերին հատվածը ամբողջովին զարդանախշված է բուսական և այլ պատկերներով: Կենտրոնական դաշտը բոլորող զարդագոտիները երեքն են, որոնցից կենտրոնական շրջագոտու վրա պատկերված են շուշանի ոճավորված պատկերներ: Արտաքին զարդագոտու վրա պատկերված են ճյուղավորված վարդյակներ: Գործված է ներդաշնակ գույնի թելերով՝ մուգ կարմիր, ոսկեգույն, սպիտակավուն, նաև կարմիր, դեղին ու կանաչ գույներով: Ներքին շրջագոտու վրա կա գրություն. «Արկանիս Կիրակոսի Բանանցեցուց յ յիշատակ Հռիփսիմէի տ(ա)ն ՌԾԱ թվին զսա գործեցի»:

Գորգը գործողի անվան տառերը անընթեռնելի են, իսկ պատվիրատուն Կիրակոս Բանանցեցին է:

Բանանցում կարմիր գույն ստանալու համար գորգագործները օգտագործում էին ալիզարին (տորոն) բույսը: Այդ բույսը մինչև 1930-40-ական թթ. աճում էր Հանգստից (գերեզմանոցից) վերև ընկած տարածքներում: Ալիզարինը կամ տորոնը կարճ տունկ էր ու երբ տերևները դեղնում էին, արմատները հանում էին, եփում ու եռացնում: Ստացվում էր կարմիր գույն, որով ներկում էին բրդյա թելերը:

Նշենք, որ բանանցյան գորգերը շատ գեղեցիկ են ու ճաշակով: Աչք են շոյում հատկապես զարդանախշերը և թելերի գույների համադրությունը: Այդպիսին են ներկայացվող գորգերն ու կարպետները:



Բանանցում գործված հայատառ գորգը (1202 թ.)



Բանանց, գորգ «Աստղահավք», 1830-1870 թթ.: Պատկերված են առասպելական թռչուններ, կեռազարդեր և տիեզերական այլ զարդանախշեր: Գործողն անհայտ է:



ա



բ

Առաջին գորգում (ա) մուգ կապույտ հիմնադաշտի երկայնքով տեղադրված են շեղանկյուն վահաններ՝ կապույտ, սպիտակ, դեղին արևանշաններով, որոնց միջև պատկերված են եղջերուներ և թռչուններ (բուրդ, 215x120 սմ, XIX դ. վերջ, Բանանց, ՀՊԹ, ՄՄ 9535):

Երկրորդում (բ) մուգ կապույտ հիմնադաշտի ուղղահայաց կենտրոնագծով տեղադրված են երեք խոշոր մեղալիոններ, որոնցից երկուսը աստիճանաձև կողերով են՝ կենտրոնում կեռազարդ նախշերով, հավասարաթև ծաղկաձև խաչերով, ծաղկաթերթիկներով ու այլ պատկերներով: Գորգի երկայնակի կողերը եզրափակված են երեք տարբեր նախշազարդերով: Գորգի կապույտ հիմնադաշտի վերին մասի ծախ կողմում գրված է «փիրաղա», իսկ աջ մասում՝ «Մարքարիտ» (բուրդ, 208x124սմ, XIX դ. վերջ, Բանանց, ՀՊԹ, ՄՄ 10793):

Կոստանդյան Վարդուհու (Զփուռանց Վարթի) գործած գորգը ունի հայատառ մակագրություն. «Վարդից իր որդի Վալդիին» և թվագրություն «1961»: Կիսատ երևացող գորգի վրա ավելի վաղ թվագրություն կա «1937»:



Իսալի գործելու գործիք, 18-19-րդ դդ., երկաթ



Զփուռուց Կարթի գործած խաչիները



Ձեռագործ աշխատանքներ, հեղինակ վաստակավոր ուսուցչուհի Գոհար Աղիխանյան, Բանանց, 1940-50-ական թթ.

Բանանցում կանանց ու աղջիկների շրջանում շատ տարածված էր ձեռագործ աշխատանքներ կատարելու հմտությունը: Աղջիկները ձեռագործության հետ ծանոթանում էին վաղ մանկությունից: Այդ գեղեցիկ արվեստը նրանց ուսուցանում էին տատիկներն ու մայրիկները: Ինչպես հայկական շատ քաղաքներում ու գյուղերում, այնպես էլ Բանանցում յուրաքանչյուր կին տունը զարդարում էր իր ձեռագործ աշխատանքներով: Հաճախ ստեղծվում էին հրաշալի, բարդ ու գեղեցիկ գունային համադրությամբ աշխատանքներ, որոնք նկարչի կտավներ էին հիշեցնում: Այդպիսի հմուտ վարպետ էր Պողոսյան Սաբեթը (Սիպտակունց Սապետը), որը գործում ու ասեղնագործում էր անգամ փակ աչքերով:

ԲԱՆԱՆՑԻ ԹԱՂԱՄԱՍԵՐԸ

Շենատեղ
Կիրատեղ
Քիքունց թաղ
Ջոջունց թաղ
Տոնունց թաղ
Փողոսկ
Տերունց թաղ
Ագունց թաղ
Ստանցի
Լոկունց թաղ
Էլյանց - յեղեցի հողեր
Դիմաց տեղ
Կարմիր սըռ
Ղուռուխ

Բանանցի թաղամասերը հիմնականում կոչվում են տոհմերի անուններով: Այսպես, գյուղի ստորին մասը, որ սկսվում է գետափից ու տարածվում դեպի արևմուտք, կոչվում է Տերունց թաղ: Սրանից արևմուտք, փոքր-ինչ վեր, գյուղի կենտրոնական մասում տարածվում են Տեր-Մկրտչյանների և Բալունց կամ Քաշ-Ավագունց թաղերը: Գյուղը հյուսիսից եզրափակվում է Լոկունց, իսկ արևմուտքից՝ Տոնունց (Տոնյաններ) և Քիքունց թաղերով: Երկու թաղամաս էլ, կապված գյուղի զարգացման, ընդարձակման ու բնակելի նոր տների կառուցման հետ, գոյացել են Արթինաջրի աջ ափին. մեկը «Դիմաց տեղ» անվամբ, մյուսը՝ Էլիանց թաղը, «Եղեցի հող» հնավայրի շրջակայքում: Բանանցի կենտրոնը, որտեղ խաչվում են վեց գլխավոր ճանապարհները, իրենից ներկայացնում է ոչ մեծ հրապարակ՝ «Փողոսկ» կամ «Փողոսք» անվամբ:

Փողոսկը շրջապատված էր զույգ՝ Մարիամ Աստվածածին և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներով, երկհարկանի հանրախանութով՝ տնտեսական և մթերային բաժիններով, Բարատովի գինետնով, ակումբի շենքով, որտեղ նաև գրքերի հարուստ հավաքածու ունեցող գրադարանն էր և բնակելի տներով, որոնք ավելի ուշ դարձել են խանութներ: Այդ տներից մեկի վրա ամրացված էր բարձրախոս-ոսպիտ, որտեղից լուրեր ու հիմնականում աղբրեջանական երաժշտություն՝ մուղամներ էին հաղորդվում:

Փողոսկը գյուղի տղամարդկանց հիմնական հավաքատեղին էր, որտեղ նրանք հավաքվում էին աշխատանքից հետո, նաև տոն օրերին: Փողոսկից սկիզբ էին առնում տարբեր թաղամասեր տանող վեց նեղ ու լայն ճանապարհներ (փողոցներ): Կարելի է մտածել, որ հենց **փողոց** բառից էլ առաջացել է հրապարակի **Փողոսկ** հատուկ անունը:

Գյուղին մոտ գտնվող որոշ տեղամասերի համար կան հետաքրքիր մեկնաբանություններ: Ներկայացնենք մի քանիսը:

Նիկոլայ ցարի ժամանակ, մի դեսյատնիկ ռուս ամեն ամառ եկել ու հանգստացել է սարում, այստեղից էլ **Ռուսի յուրդ** (տեղամաս) անվանումը:

Սարվորների համար այստեղ զանգ են կախել, ճաշի ազդանշանի համար, այստեղից էլ՝ **Չանգի գահ** անունը:

Մի անգամ կայծակը խփում է այդ տեղամասին և որոշ տեղեր ճեղքում, այստեղից էլ **Կծակի հողեր** անունը:

Բանանցը իր հողերով շրջապատված էր Բրաջուր (Բարի ջուր), Միրգիկ, Ահմատի, Միլա Հասան, Վիրի և Ներքի Քարհատ. Խաչակապ (Կուշի), Չովղառ, Դանայեղու, Յալըշլաղ, Լուկալու, Թոփալիասանլու գյուղերով: Հաճախ վեճեր են եղել, երբ այդ սահմանը խախտվել է, տուգանել են, երբ անասուն են բերել Բանանցի հանդում արածացնելու: Հարևան գյուղերի սահմաններին Ցից քար, խաչքար կամ ածուխ էին թաղում: Իսկ մի անգամ Տրսեփանց (Հովսեփյան) Վազգենի հայրը՝ Հակոբը, Յալըշլաղի մոտ, Խոզի ձոր (դոնգուզ դամի) կոչվող տեղամասի հողի մեջ թաղված տաքյարներով (կարասներ) ապացուցում է, որ այդ տարածքը Բանանցին է պատկանում: Եվ առաջացած վեճը լուծվում է բանանցեցիների օգտին: Մեկ ուրիշ անգամ, 19-րդ դարի սկզբին խանի հինգ չոբանները ոչխարի հոտը բերում են Ռուսուլի յուրդ արածացնելու: Ղուկունց Թյունին, որը զիենով (հունարով) մարդ է լինում, մի չումախով այս չոբաններին և իրենց շներին քշում բերում է մեկ այլ՝ Չոբած յուրդ ու ջարմա (հարկ) վերցնում:



Բանանց: Պատկերված է գյուղի կենտրոնի՝ Փողոսկի մի մասը: Երևում են Աստվածածին և Գր. Լուսավորիչ եկեղեցիները (գերված Բանանց): Իսկ բարձրախոս-ոսպիտն աջից կիսատ երևացող շենքի վրա էր տեղադրված:

Բանանցը հայտնի էր նաև իր բարոյական վարք ու բարքով: Դարեր շարունակ պահպանվել ու սերնդեսերունդ են փոխանցվել հասարակության կողմից ընդունված, չգրված օրենքներ, որոնցով առաջնորդվել են բանանցեցիները: Ներկայացնենք մի շարք չգրված օրենքներ: Այսպես. Բանանցում շատ խիստ էր դրված հայի գենի ու տեսակի պահպանման հարցը: Մեծերը պատմում են, որ թշնամական (թաթարներ, թուրքեր, լեզգիներ) հարձակումների կամ այլ պատճառներով առևանգված բանանցեցի կանանցից ծնված երեխաներին տատմերները ծնվելուց հետո անմիջապես շրջում էին երեսնիվար, որից օտար գեն կրող նորածինը շնչահեղձ էր լինում: Խիստ էր դրված նաև բարոյականության հարցը: Վատ վարքի կանանց թաղում էին ընդհանուր գերեզմանոցից հեռու, ձորում: Կա այդպիսի երկու գերեզման: Մեկ այլ չգրված օրենքի համաձայն, երբ երիտասարդն առաջին անգամ մտնում էր վարսավիրանոց թրաշվելու, վարսավիրը փողը չէր վերցնում:

Բանանցում նաև յուրահատուկ ձևով էին հաշտեցնում կռվող ջահելներին: Երբ երկու ջահել կռվում էին, ոչ ոք չէր խառնվում, թողնում էին, որ կռվեն: Կարևոր չէր, թե ով կհաղթի: Կռվից հետո գառ կամ ոչխար էին առնում, բոլ-բոլ գինի և գնում էին մի աղբյուրի մոտ նստում, բարիշում ու լավ քեֆ անում: Մեկը մյուսի վրա մոտ չէր պահում: Դա Բանանցա լավ աղաթներից մեկն էր:

Բանակում չճառայած տղաներին աղջիկ չէին տալիս:

Հին ժամանակներում, երբ նորապսակները տուն չէին ունենում, ամբողջ գյուղը հավաքվում էր, մի սենյակ շինում հաշվված օրերի ընթացքում, մինչև սրանք ոտքի կանգնեն ու իրենց տունը մեծացնեն:

Տղամարդը, որ գործով գնում էր մեկի տուն ու տանտերը տանը չէր լինում, միայն կինն էր լինում, իսկույն դարպասից հետ էր դառնում:

Բանանցում ուշ հասկացող մարդկանց քարթո էին (վրացի) ասում:

Բանանցից տեղափոխվել են (գնացել են) Սղնախ (ամուր ապաստան), Շուլավեր, Թիֆլիս, Գանձակ, Բաքու:

Հետաքրքիր էր նաև այն փաստը, որ արդեն իմաստնացած, տարեց մարդկանց Բանանցում **Հայ** էին կոչում: **Հայ** բառը իբրև **պատվանուն** հնչեցվում էր տարիքն առած մարդու անունից հետո. Մուսունց Հայը, Տերունց Հայը, Քիքունց Հայը, Ղվանդունց Հայը: Իսկ տարեց կինը իր ամուսնու համար օգտագործում էր **մեր հայը** արտահայտությունը: Տարեց կնոջ համար օգտագործվում էր **Նան, Մեծ Նան, աքիր** (քույր) արտահայտությունները:

Մի տարի երաշտ է լինում ու գետը կտրվում է: Պառավ կանայք բահերը ձեռներին գետը փորում են ու անձրև է գալիս:

Երաշտ էր, արդար աղջկեք էինք, մեծերի թելադրանքով կժերով ջուրը տանում էինք, լցնում խաչքարերի վրա և անձրև եկավ: *Հիշում է Ջաղեթյան Մանին:*

Շամի Սաքին (Հակոբյան), որը վերանորոգել էր Յանցի աղբյուրը, երբ մահանում է, տանում են թաղեն: Դիանանց տան տակին վերակենդանանում է: Իսկ հետո ունենում է ևս մեկ տղա:

Դավիթ Բեկի զորքի համար Բանանցում պատրաստել են նիզակ, թուր և իրազեն: *Պարմել է Ավաքանց Վալոդը:*

Հին ժամանակներում Բանանցում մի մարդ է լինում, որը ոչ մի մեռելի թաղման չի մասնակցում: Օրերից մի օր էս մարդու հայրը մահանում է: Գյուղացիներից ոչ մեկը չի գնում նրան ցավակցելու: Էս մարդը հասկանալով իր սխալը, գնում ընկնումա գյուղացոց ոտքերը, խնդրում, որ գան հոր թաղմանը մասնակցեն: Մի քանի հոգի խղճալով օգնում են, հորը տանում թաղելու, բայց ոչ մեկը մեռելահացի չի գնում: Այս դեպքից հետո բանանցեցիները դառնում են ավելի համախմբված ու ավելի նամուսով:

Խորհրդային տարիներին Գանձակում մի միայնակ պառավ կին է մահանում, որը ոչ մի հարազատ չի ունենում: Հարևանները լուր են տարածում, որ այդ կինը արմատներով բանանցեցի է: Մի քանի ժամում բանանցեցիք հավաքվում են, ամեն պատրաստություն տեսնում ու էդ կնկանը տանում մարդավարի թաղում: Գանձակի գավառում տարածված էր, որ բանանցեցիք նամուսով, պատվով ու համախմբված են, երբ դա անհրաժեշտ է:

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հին ժամանակներում Բանանցում Ավաքանց ազգից մի հարուստ ու դաժան մարդ է լինում, որը Դիմաց տեղում Արթինագետի աջ ափին խաղողի մեծ այգի է ունենում: Այգում կային տաքյարներ (մեծ կարասներ), որտեղ գինի էին պահում: Օրերից մի օր էս հարուստը նկատում է, որ տաքյարներից մեկը կիսատ է: Որոշում է հետևել, բռնել ու պատժել գողին: Մի լուսնյակ գիշեր, բերդանկա հրացանը ձեռքին թաքնվում է այգում, կիսատ տաքյարից ոչ հեռու: Կես գիշերին տեսնում է, որ մի համազրուղացի քյասիբ, խեղճ մարդ մոտեցավ տաքյարին, փափախը հանեց գլխից, չոքեց, մեծ զգուշությամբ սկսեց մաքրել տաքյարի կափարիչի յուղը ու դրեց մի կողմ: Հետո ծալապատիկ նստելով տաքյարի մոտ, ծոցից հանեց մի կյավաթ (գավաթ) չրմփալի լցնելով գինին, ինքն իրեն ասաց,– Աստված օրհնի այգատիրոջ անցյալներին,– ու խմեց: Էլի մի քանի անգամ խմեց օրհնելով այգու

տիրոջը: Այնուհետև խնամքով փակելով տաքյարի բերանը, ուզում է հեռանալ: Այդ միջոցին հարուստը դուրս գալով թաքստոցից, բռնում է գողի ձեռքից ու ասում, - Ես որոշել էի դաժանորեն պատժել գողին, բայց որ դու առաջին գավաթով օղորմի տվիր իմ անցավորաց, քեզ դրա համար ներում եմ: Այսօրվանից էդ տաքյարը քոննա: Ամեն տարի լցնելու եմ, երբ որ ուզես արի խմի (*Մաթևոս Արմենակի Չալումյանի պատմածը*):

ԲԱՆԱՆՑՈՒՄ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՏՈՆԵՐ, ԾԵՍԵՐ, ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանանցը հայտնի է իր ավանդապահությամբ և 19-րդ դարի վերջերից 20-րդ դարի կեսերն ընկած ժամանակահատվածում Բանանցում նշվում էին գրեթե բոլոր հայտնի տոները՝ **Նոր տարի, Տրնդեզ** («**Դըղընդառունչ**»), **Բարիկենդան** («**Պարիզենթան**»), **Մեծ Պաս, Ծաղկազարդ** («**Ծըղը-զարթար**»), **Ջատիկ, Վարդավառ** («**Վըրդիվեր**»)³⁶:

Գանձակի գավառի բնակչության կյանքը, նիստն ու կացը, ավանդություններն ու սովորույթները և այլ ազգագրական նյութեր, անգամ բնակլիմայական պայմանները և բնության մասին նյութերը մեծ սիրով ու ճշգրտությամբ հավաքել ու գրի է առել ազգագրագետ Երվանդ Լալայանը: Ե. Լալայանը մեծ ուշադրություն է դարձրել ճաշատեսակներին, խմիչքների ու խմորեղենի տեսականուն, հիվանդություններին, ժողովրդական դեղամիջոցներին, թաղման ծեսերին և այլն: Ե.Լալայանը անդրադարձել է անգամ հեթանոսական ժամանակներից պաշտվող **լեռների** (Մռավ, Քյափաս, Պանդ), **քարի** (Մկնատամի խաչ, Շնըտեղի խաչ, Քաջքարուն (կոխված երեխաների ժայռ), **ջրի** (Խաչ-աղբյուր, Քոսի աղբյուր, Նահատակի աղբյուր), **կրակի** (կրակով երդվում են, կրակին չեն խփում, ջուր չեն լցնում), **ծառերի** (կաղնի, բարդի, չինարի, թխկի, բոխի), **կենդանիների** (ծիծեռնակ, հոպոպ), **տարերքի, տիեզերական երևույթների** (երկինք, արև, լուսին, աստղեր, որոտ, կայծակ), **ոգիների** (պահապան հրեշտակներ, քաջքեր) պաշտամունքներին: Այդ նյութերը շատ մեծ արժեք ունեն, քանի որ Գանձակի գավառը գրկվել է իր բնիկ հայ բնակչությունից³⁷:

Անդրադառնանք Բանանցում պահպանված տոներին: Մինչև 19-րդ դարի 30-ական թվականները Բանանցում մեծ շուքով նշվել է **հունվարի 6-ը**, իբրև նոր տարվա սկիզբ. «Թագա տարին գետը սառած ա ըլում, քընում ինք վրեն

հաղ անում. տերտերը գալիս էր, մեկին կարգադրում՝ սառույցը կտտրի ու խաչը ցուրն էր գցում...»: հիշում է Հասմիկ Դանիելյանը: Խաչը ջրից հանելու պատիվը տրվում էր որևէ մեկին, օրինակ մեկի մինուճար որդուն, կամ ինչ-որ բանով աչքի ընկած մեկին: Այնուհետև սեղան էին գցում և նշում նոր տարին: Իսկ սեղանները առատ էին լինում, ինչպես վկայում են մեծահասակ բանանցեցիները. «բացի մսի խաչլամայից, սեղանին դնում էին նաև իշխան ծուկ, որ քթոցներով բերում էին Աևանից՝ «Վիրի Քարհատով, Ջագիկով»:

20-րդ դարի կեսերից տոնը նշվում էր **հունվարի մեկին** ու շատ անշուք էր անցնում: Այս շրջանում արմատավորվում է նոյեմբերին մորթած խոզերից պատրաստված «սալոխոնը»³⁸, «բիչինան» (խոզի ծխահարած բուրդ)՝ որպես տոնական պարտադիր ուտեստ: Ամանորի ծիսական ուտեստ էր նաև խաղողի շփոթով ու ընկույզով սարքած «չինչլոխը» (սուջուխ), որը պահվում էր պատի մեջ բացված պահարանում («դոլաբ»), կամ ներքի տանը (մառանում, պաղվալում), որն ուտում էին սովորաբար ծյունը գալուց հետո: Այս տոնի ծիսական միակ արարողությունն այն էր, որ գյուղի երիտասարդները կեսգիշերին մոտ բարձրանում էին սարերը, կրակ վառում և ուղիղ կեսգիշերին՝ 12- ին, իջնում տուն ու հրացաններից կրակում, ինչը նշանակում էր, որ փախցնում են հին տարին և ընդունում նոր տարին:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանը շատ շուտ է մոռացության մատնվել և քիչ հիշողություններ կան: Հատուկենտ մարդիկ նշում են, որ անունը ծանոթ է, բայց չեն հիշում, թե երբ կամ ինչի հետ էր կապված տոնը: Իսկ տոնի ժողովրդական բացատրությունը ըստ Գոհար Ադիխանյանի այսպիսին է. «Պարիզենդան են ասում խոտը նոր դուրս եկած ժամանակը. էդ ժամանակ մարդկանց էրեսները սվըրանում են. գարնան արևը սրվըցնում ա»: Իսկ ամենաընդունված սովորույթն այդ տոնին այն էր, որ մարդիկ տնետուն էին գնում ու միմյանց շնորհավորում, աչքալույս տալիս այն բանի համար, որ «հողը շարժվել ա, կենդանացել..., ծառը ջուր ա ընկել»: Այս բացատրությունը բառացիորեն հուշում է տոնի բնապաշտական էության, ծմռան ու գարնան սահմանաբաժան լինելու հանգամանքի մասին: Բարեկենդանի մասին հիշողությունը ամրագրել է նաև առանձին փաստեր, մասնավորապես այն, որ այդ օրը բաց գույնի շորեր էին հագնում, չամիչով, «ալթովսարի տամբլով» (սև սալորաչիր) բրինձի փլավ անում, եփում «փխընձըխաշիլ», «խոխոփ» (առատ սոխով տապակած ոչխարի միս, այնուհետև՝ նուան հատիկներ), հացն էլ «թորոնում» էին թխում: Ուշագրավ է, որ այստեղ ևս, ինչպես Հայաստանի մնացած շրջաններում, Բարեկենդանը ամենավաղ վերացած տոնն է, որի մանրամասները գրեթե հնարավոր չէ ներկայումս վերականգնել:

³⁸ Սալոխոն էր կոչվում խոզի գլխից պատրաստված, յուրահատուկ հաճելի համով երջիկանման ուտեստը: Պատրաստվում էր աշնանը, երբ ծմռանն ընդառաջ մորթում էին խոզերը:

³⁶ Օգտագործվել են բանանցեցիների հուշերն ու հիշողությունները, նաև ազգագրագետ Սուսաննա Մելիքյանի «Տոնածիսական համակարգի առանձնահատկությունները Բանանցի էթնոմշակութային համատեքստում» հոդվածը: Ս. Մելիքյանը, որը Փիփ (Ջագիկ) գյուղից է, հավաքել ու հոդվածով ներկայացրել է բնագաղթից հետո Հայաստանի տարբեր բնակավայրերում ապրող բանանցեցիների հիշողությունները: Այդ հոդվածի ամբողջական տարբերակը նայել հետևյալ հղումով՝ <http://hrj.asj-oa.am/5642/1/18.-S.-Meliqyan.pdf>

³⁷ Հավաքագրված նյութի մասին տես Ե. Լալայան, Երկեր, Գանձակի գավառ, Երևան, 1988, հ. 2:

Հիշատակվում են նաև **Տրնդեզի** ու **Ծառզարդարի** տոները, որոնցից առաջինի մասին հիշողությունը սահմանափակվում է նրանով, որ տղաներն ինչ-որ բան էին վառում ու շարտում աղջիկների վրա, իսկ վերջիններս փորձում էին մազերը պաշտպանել, որ չվառվեն: Սակայն տեղական «Դրոնդառունչ» և «Ծրռըզարդար» անվանումներն արդեն իսկ խոսում են այն մասին, որ այդ տոները ժամանակին նշվել են, սակայն նույնպես շատ վաղ վերացել: Հետաքրքիր է, որ կրակի վրայից թռչելու ավանդույթը չի պահպանվել այստեղ, ինչպես Հայաստանի մնացած շրջաններում, և խորհրդային տարիներին այս տոնը լրիվ դուրս է եկել կենցաղավարությունից: Բանն այն է, որ Տրնդեզն այս տարածաշրջանում նշվել է եկեղեցու հսկողությամբ: Ըստ պահպանված հիշողությունների (Գոհար Ադիխանյան)՝ այդ օրը 2 բեռ փայտ ցրտնին բերում, կիտում էին «փողոսկում», հետո վառում էին ու շուրջը պտտվում: մեծերն ասում էին, թե իբր Քրիստոսը դրա տակ «կյաղլու ա կցել» ու փրկվել: Հարս ու աղջիկ հավաքվել են, պարել, երգել:

ԶԱՏԿԻ ՏՈՆ

Բանանցի տոնական համակարգում առանձնապես ուշագրավ է **Զատկի տոնը**: Բանանցում այն պարտադիր նշում էին, մասնավորապես՝ ձու ներկելով, ձվախաղերով, նոր շորեր հագնելով: Բանանցում հետաքրքիր մի ավանդույթ կար, որն իր հատկանիշներով տեղավորվում է Զատկի տոնական համակարգում: Այն կոչվում է «Ութի օր» (Շուշանիկ Դանիելյանի հիշողությունից) և վերաբերում է ավելի վաղ շրջանին: «Ութի օրը» ոչ ոք ստույգ չի հիշում. այն հավանաբար շարժական էր և մարտ-մայիս ամիսների միջև ընկած ժամանակահատվածում էր: Ժողովրդական պատկերացումներում այն հստակորեն սահմանազատվում էր Զատկից և ավելի շուտ համարվում էր մեռելոց օր: Անվան ժողովրդական ստուգաբանությունը հայտնի չէ: Հայտնի է միայն, որ «Ութի օրվա» ավանդույթը 20-րդ դարի կեսերին պահպանում էին միայն տարիքով մեծերը և հատկապես կանայք: Ժամանակին նրանցից յուրաքանչյուրը եկեղեցում ուներ իր համար նախատեսված սալաքարը, որի մոտ վաղ առավոտյան առանձնանում էր և լացուկոծ անում: Ասում են, որ այդ օրը բոլոր կանայք պիտի լային Քրիստոսի մոր լացը: Բանանցեցիներից մեկը (Գոհար Ադիխանյան) պատմում է, որ իր տատի մահից հետո (1905 թ.) վերջինիս սալաքարը ժառանգաբար անցել է իր մորը՝ Սանդուխտին, որն այդ ժամանակ 16 տարեկան է եղել: Ինքը՝ բանասացը հիշում է, որ մոր հետ գնացել է եկեղեցի և լսել քահանայի աղոթքն այն պահին, երբ վերջինս հարցրել է՝ «Մարիամ, քո որդին ո՞ր տարան, որտե՞ղ է...», ի պատասխան կանայք սկսել են լացուկոծը: Ապա գնացել են գերեզմանատուն, յուրաքանչյուրն՝ իր հարազատի գերեզմանը և մոմ վառել քարին³⁹:

³⁹ Ս. Մելիքյան, նշված հոդվածը:

Մեկ այլ բանանցեցի (Բարաթովի Լյուբա) հիշում է, որ «Ութի օրը» մայիսի 2-ից առաջ էր, ապրիլի վերջերին, կիրակի օր. «սկեսուրս ասում էր, որ հալա մթին հենց քընալ տես կյաս «հանգիստը», որ լիսը բացված չի»⁴⁰: Ընդ որում, այդ օրվա համար հատուկ թխում էին ընկույզով ու դոշաբով բլիթներ, բաղարջ, որը մանր կտորների էին բաժանում և մի շիշ օղու հետ վերցնում հետները, որպեսզի գերեզմանի ճամփին պատահած մարդկանց հյուրասիրեն: Ուշագրավ են առավոտ «ծեգին» (ժ. 4-5) գերեզման գնալու ժողովրդական բացատրությունները. «փայ են տանում իրենց մեռելին» կամ «հոգիներին դիմավորելու համար են գնում»⁴¹: Թեև մեծահասակները սահմանազատում էին ձուն ներկելը և «Ութի օրը» միմյանցից և պնդում, որ առաջինը Զատկին էր, իսկ երկրորդը՝ մեռելոցը, սակայն առանձին մանրամասներ, այդ թվում՝ եկեղեցում կատարվող արարողությունը, հուշում են, որ, այնուամենայնիվ, «Ութի օրը» Զատկի տոնական համակարգի մասն է կազմում: Եվ միայն ավելի ուշ շրջանում այն տարանջատվել է, իմաստային կապից զրկվել և մարդկանց հիշողության մեջ պահպանվել իբրև ծիսական առանձին ավանդույթ:

Բանանցեցիներից մեկը (Մագդա Մանուշակյանը գրում է. «... մեր գյուղը այս օրերին (ապրիլի 10): Գյուղում այս օրը կոչում էին «ութի ուրբաթ»: Առավոտյան մուրը տված գյուղի այրի կանայք, տատիկները, բլիթ, բաղարջ ու մոմ վերցրած գնում էին գերեզմանոց: Մոմ էին վառում գերեզմաններին, թխվածք դնում՝ հանգուցյալների բաժինը: Ով էլ չէր կարողանում գնալ, անպայման մեկին խնդրում էր, - «աղջի մի երկու պատրիք տամ մըր հինգիստումն ել կվառես, ողորմի քու հորն ու մորը», դեռ լույսը չբացված հետ էին դառնում, որպեսզի աշխատանքի գնացողներին հյուրասիրեն քաղցրով՝ իրենց հանգուցյալների հոգու համար: Զգիտեմ ինչու, մեր մոտ Սուրբ Զատիկը միշտ նշվում էր ապրիլի 6-ին: Ողորմի այնտեղ մնացած մեր բոլոր հանգուցյալներին»:

Նյութի համադրությունը հնարավորություն է տալիս զարգացնել այն թեզը, որ «Ութի օրը» Զատկին նախորդող Զարչարանց շաբաթվա Ուրբաթ օրն է, որի ծիսական համակարգի մեջ զուգակցված են քրիստոնեական գաղափարաբանությամբ արմատավորված Քրիստոսի չարչարանքի, մահվան ու թաղման, նրա շիրմաքարի վրա Մարիամի սուգը վերարտադրելու և հեթանոսական՝ նախնիների գերեզմանին այցելության գնալու ու նրա բաժին քաղցրեղենը իբրև մատաղ պատահական անցորդներին բաժանելու ավանդույթները: Իսկ «Ութի» բառը, հավանաբար, Հուդայի անվան հետ է կապված (Հուդայի-Հուդի-Հութի-Ութի), որի հետ իմաստային կապը մոռացվել է⁴²:

⁴⁰ Նույն տեղը:

⁴¹ ԴԱՆ, տետր-2, էջ 7 (Դան-Դաշտային աշխատանքների նյութեր):

⁴² Ս. Մելիքյան, նշված հոդվածը:

ՆԱԶԵՑՅԱԼՆԵՐԻ ՕՐ (ՄԱՅԻՍԻ 2)

Ինչպես Բանանցում, այնպես էլ Գանձակի ողջ տարածաշրջանում 20-րդ դարի կեսերին ամենատարածված արարողությունը «Մայիսի 2»-ն էր, որը տեղի հայության կողմից համընդունված էր իբրև մեռելոց օր: Այն խորհրդային տարիների ամենամասսայական արարողությունն էր, որին մասնակցելու համար գալիս էին ոչ միայն շրջակա քաղաքներից, այլև Երևանից, Մոսկվայից ու հեռավոր այլ բնակավայրերից: Արդյոք «Մայիսի 2-ը» կապ ունի՞ որևէ կոնկրետ հիշատակի օրվա հետ, թե՞ այն այդպիսին է դարձել իբրև խորհրդային պաշտոնական **հետտոնական ազատ օր**: Կարծիք է եղել, որ այն կարող է կապ ունենալ 1918թ. հենց նույն օրը՝ մայիսի 2-ին տարածաշրջանի ամենամեծ կոտորածներից մեկի հետ⁴³: Սակայն այդ վկայությունը չի ամրապնդվում այլ վկայություններով: Եվ այնուամենայնիվ, փաստ է, որ «Մայիսի 2-ը» որպես գերեզմանների օր արմատավորվել է խորհրդային շրջանում, 1918–20 թթ. հետո և ամենայն հավանականությամբ ընտրվել է այդ օրը, որպես Մայիսի 1-ին հաջորդող ազատ օր: Այդ օրը գերեզմանոցում սուփրա-սեղաններ էին զգում՝ ճոխ ուտելիքով ու խմիչքով, և «զուռնա ածող մուզիկանտներին» պարտադիր հրավիրում էին բոլորի գերեզմանների վրա նվագելու: Ձու ևս տանում էին, բայց առանց ներկելու:

Ամենայն հավանականությամբ, հետտոնական այս օրն իր մեջ ներառել է ժողովրդի ողջ հիշողությունը Ջատկի ու մեռելոց օրերի մասին, որոնք աստիճանաբար մարել են խորհրդային տարիներին:



Մայիսի 2, հոգեհանգիստ հանգստարանում, 1970-ական թթ., նկարում Հակոբյանների (Տերկուփանց) գերդաստանն է:

ՎԱՐՂԱՎԱՌ

Բանանցի տոնական կյանքում իր առանձնահատուկ տեղն է ունեցել նաև **Վարդավառը**, որի մեջ խտացված են Համբարձման, Տրնդեզի, Նավասարդի և տոնական այլ տարրեր: Վարդավառի տոնի ժամանակ Գանձակի տարածաշրջանի համարյա բոլոր բնակավայրերից, այդ թվում Բանանցից ուխտագնացություն էր կազմակերպվում դեպի հեռավոր սրբավայրեր, մասնավորապես՝ Պանդ, Մլրզնապետ, Չուլակ և այլն: Այդ մասին վկայում են մի շարք նյութեր, մասնավորապես, նկարագրելով բանանցյան Վարդավառը՝ Ստեփանոս Տեր-Միրայեյանը կենտրոնանում է գլխավորապես «Գիւլումի» ծեսի և «Դիմաց տեղում» բացված պարահրապարակի շուրջ, ինչպես նաև շեշտադրում տոնի կապակցությամբ եկեղեցում արվող պատարագին հոծ բազմության մասնակցության հանգամանքը, ինչի վերաբերյալ հատուկ նշում է, որ միայն այս գյուղում է, որ պաս պահողները պարտադիր հաղորդվում էին «5 նավակատեաց տօներին», մինչդեռ ուրիշ գյուղերում այդ տոներին անգամ պատարագի երես չէին տեսնում:

Վարդավառին ժողովուրդը հավաքվել է գերազանցապես «Դրղլարանց» բախյում, ուր մի քանի աղբյուրներ կային, թաղեթաղ նստել թթան ծառերի տակ, քեֆ արել, ապա՝ ջուր լցրել միմյանց վրա: Վարդավառի կապակցությամբ մեծերից մեկը՝ Մարիետա Բարսեղյանը հիշում է, որ «պառավների տված տիկնիկները ձեռքներիս (շերեփի վրա սարքած, բանտիկով) պտտեցնում ու նուրին-նուրին էինք երգում»: Իսկ եթե տարին երաշտ էր լինում, մեծահասակ կանայք գետի հունն էին վարում կամ Արթինասարից քար էին բերում ու գետը զցում, որ անձրև գար (Մագթաղ Գրիգորյան): Առանձին բանասացներ ծանոթ էին նաև «Վիճակի» արարողությանը, սակայն նրանց պատկերացումներում դա ավելի շատ բնորոշ էր «Թումանյանի գյուղին» (նկատի ունեն, հավանաբար, հանրահայտ պոետը) և ուրիշ օր էր, իսկ Բանանցում Վարդավառի ժամանակ էին վիճակ հանում:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍ

Բանանցի հարսանիքներն այցի են ընկել իրենց ընդգծված արարողակարգով և ճոխությամբ: Այդ ճոխությունը պայմանավորված էր ոչ միայն տեղի բնակչության համեմատաբար ապահովված լինելու հանգամանքով և սեփական գինու մեծ պաշարների առկայությամբ, այլև, ի տարբերություն շատ այլ գյուղերի, ժողովրդական երաժշտական մի քանի խմբերի (դաստա) ու անհատ կատարողների առկայությամբ, այդ թվում՝ տարածաշրջանում մեծ հռչակ վայելող Աշրափի (Գրիգոր Տոնյան) երաժշտությամբ: Ըստ ականատեսների՝ նրա «սըհարին» ուրիշ էր, լսողը չէր կարող չհուզվել, չզգալ, չպարել: Աշրափի որդին՝ Ժորա Տոնյանը չի հիշում, թե կոնկրետ ինչ տիպի երաժշտություն էր հայրը նվագում հարսանիքներին, բայց հիշում է. «Հարսին տանից հանելու հավեն ուրիշ էր, ճամփինը՝ ուրիշ, ժամի առաջին՝ ուրիշ, տալյարը ջարդելիս՝ ուրիշ»:

⁴³ ԴԱՆ, տետր-2, էջ 43 (Ս. Մելիքյան, նշված հոդվածը):



Այսպիսին էին հարսանեկան հրավիրատուները 1950–60-ական թթ.

Հարսանեկան ծիսաշարի գլխավոր առանձնահատկություններից էր այն, որ թե՛ նախահարսանեկան, թե՛ բուն հարսանիքի, թե՛ հետահարսանեկան ընդունված ծիսակարգը կատարվում էր ամենայն մանրամասնությամբ: Հազվադեպ էր պատահում, որ որևէ ընտանիք միջոցների սղության պատճառով զանց առներ ավանդական արարողակարգի այս կամ այն փուլը: Այդ է պատճառը, որ «եզմորթեքի» և «ալյուրմաղեքի» կամ «տըշտըտրեքի» շատ շրջաններում վաղուց մոռացված ծեսերն իրենց ամբողջական համակարգով մինչև 1980-ականների վերջերը պահպանվել են այստեղ:

Ե. Լալայանը հավաքագրել ու մեծ ուշադրություն է դարձրել ընտանեկան բարքերին՝ ամուսնությանն ու հարսանեկան արարողություններին՝ խնամախոսությանը, նշանադրությանը, հարսի շոր ձևելուն, տաշտատրեքին (հինգշաբթի), կովի կամ եզի մորթեքի արարողությանը (ուրբաթ), իսկ շաբաթ օրը սկսվում էր հարսանեկան արարողությունը և այլն:

Բանանցյան հարսանիքները տևում էին երեք օրից մինչև մեկ շաբաթ: Սկսվում էին հինգշաբթի օրից: Առաջին արարողությունը տաշտատրեքի արարողությունն էր: Հարսի ու փեսայի տանը հավաքվում էին հարազատները ներկա գտնվելու խորհրդանշական ալյուր մաղելու և հաց թխելու արարողությանը: Դրվում էր տաշտը, փոքր աղջիկներից մեկը (հավանաբար իբրև կյանքի խորհրդանիշ) մաղում էր ալյուրը, իսկ ալյուրը մաղի մեջ էր ցնում փոքր տղաներից մեկը: Այնուհետև այն շարունակում էին մեծերը: Նախատեսված ալյուրը մաղելուց հետո այն խաչակնքում էին և պատրաստվում հաց թխելու արարողությանը: Ներկաները հիմնականում դրամի տեսքով նվերներ էին տալիս (դրված ափսեի մեջ կոպեկներ էին զցում, որը խորհրդանշում էր ապագայում հարուստ ապրելու ցանկությունը): Նվեր էր ստանում նաև փոքրիկ աղջիկը: Հաջորդ օրը թխվում էր հացը:

Ծիսական արարողության տարրեր կային նաև «եզմորթեքի» արարողության ժամանակ: Մեծերից մեկը (Ռոզա Մկրտչյան) հիշում է, որ «սահարին» փչելուն պես իր տատը «ձեռքերին զույգ խնձորներ՝ մեջը դրամ խրած, մտավ հրապարակ և տապալված եզան շուրջը պտուղներով՝ սկսեց պարել. այդպես պարում էին միայն մեծերը, երիտասարդները չէին կարողանում այդպես պարել»: Խնձորները պարի ընթացքում անցնում էին ձեռքից ձեռք և պարահրապարակ մտնող յուրաքանչյուր ոք իր դրամն էր խրում խնձորի մեջ: Հետո եզան վզի կարմիր ժապավենով խնձորները փնջում ու տալիս էին փեսային: Իսկ բուն հարսանեկան ծեսը սկսվում էր շաբաթ օրը:

Ստ. Տեր-Միքայելյանը հարսանեկան արարողությունների մինչխորհրդային տարիների, հետագայում չպահպանված հետագա իրադարձությունները ներկայացրել է իր հոդվածում⁴⁴: Ըստ նրա՝ բուն հարսանիքը Բանանցում սկսվում էր շաբաթ օրը, առավոտյան, երբ հարսնացուն մետաքսյա կանաչ-կարմիր թելով խաչածն կապած ծաղիկ ու խնձոր է ուղարկում սկեսրայրի («պտրունանց») տուն: Վերջիններս էլ երեկոյան փոխադարձաբար ուղարկում են իրենց հարսնացուի «վրթըվըրափայլը»՝ 6 գաթա, 4 «ծվերես» (լոշի ձև, բայց փոքր-ինչ հաստ հաց), հավ, կարմիր ձու, գլխին զցելու «հեյրաթի աղլուխ», չամիչ, կոնֆետ («կանփետ»), «բաղդատի խուրմա» (արմավ), սեխ, ինչպես նաև՝ հինա («խինա»): Հարսնացուն հինան շաղախում է իր քույրերի ու հարևան աղջիկների հետ, ձեռքերը հինայում և ընթրիքից հետո նորահարսների ու նորափեսաների, նշանված ու դեռ չնշանված աղջիկ-տղաների հետ զնում վեց փողոցների հատման հրապարակ՝ «Փողոցք»: Այստեղ բաժանվում են տղաների ու աղջիկների խմբերը և սկսում «Ջանգլուամի» խաղ-մրցույթը, որը շարունակվում է մինչև կեսօրվա ժամը 2-ը, որից հետո, այս անգամ արդեն «Դիմաց տեղում», հավաքվում են պատանիների առանձին խմբեր և մինչև լուսաբաց «գարմոնի» նվագակցությամբ երգում «Ի ննջմանէդ արքայական», «Հայոց աղջիկներ», «Կապույտ երկնքում» ու այլ երգեր: Հաջորդ՝ կիրակի օրը, պատարագից հետո տղամարդիկ առանձին, հարսն ու աղջիկ առանձին, խմբվում են կանաչազարդ պարտեզներում ու քեֆ անում: Այնուհետև բոլորը կրկին հավաքվում են «Դիմաց տեղում» և, այս անգամ արդեն զուտնայի նվագակցությամբ, պարում: Աղջիկները զույգ-զույգ մտնում են շրջանի մեջ ու պարում, իսկ տղաներն իրենց նշանածի կամ արդեն հավանած աղջկա պարելու միջոցին զուտնաչուն «շորոշ» են բաշխում՝ այդպիսով մատնելով իրենց նվիրական զգացմունքները:

Մինչև 20-րդ դարի սկիզբը Բանանցում, ինչպես հայաբնակ շատ բնակավայրերում, ամուսնության տարիքը 14–16-ն էր, երբեմն ավելի վաղ, ինչն ավելի հաճախ պատճառաբանվում էր «աչքը չբացվելու», «խելքը չհասնելու» կամ այլոց, հատկապես մահմեդականների կողմից չառևանգվելու մտավախությամբ:

⁴⁴ Ստ. Տեր-Միքայելյան. Վարդավառի տօնը Բանանցում. – «Արձագանք» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1884, № 30: Ս. Մեյիքյան, նշվ. հոդվածը:

Հարսանիքների, քեֆերի և այլ ուրախությունների ժամանակ Բանանցում պարում էին «զոմփի» և «յալլի» կոչվող շուրջպարերը, որոնք վաղնջական տարրեր էին պարունակում: Ըստ ժողովրդական բացատրության՝ հարսանիքների ժամանակ «զոմփի տալով» գնալը նշանակում է, որ երիտասարդների խումբը՝ շրջան կազմած, պարելով գնում է մինչև հարսի տան դուռը: Կենտրոնում մակարբաշին է (պարբաշի), որը կառավարում է պարը, ճիպտով վերահսկում, որ շրջանը որքան էլ աջ ու ձախ ձգվի՝ չկտրվի: Այն կտրում է հարսնաքույրը կամ հարսի մայրը, որը ձվածեղով ու քաղցրով դիմավորում է խմբին և հյուրասիրում փեսային ու քավորին:



Բանանց: Ալեքսան Տերյանի և Խանումի (Մոնթի Խանումի) հարսանիքը Ար. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում, 1906 թ.: Նկարում լայնեզր գլխարկովը՝ դպրոցի վարժապետն է, նրա երկու կողմերում պետական պաշտոնյաներ են (պրիստավ, դատավոր):



Հարսանեկան արարողություն Բանանցում, 1950-ական թթ.



Բանանց: Հարսանեկան արարողություն: Հարսանիքի գլխավոր անձերից մեկը՝ մակարբաշին պատկերված է երկար ճիպտով: 1950-60-ական թթ.:

Հարսի տուն գնալու ժամանակ, երբ «հարսանքավորը շարժվում էր դեպի հարսի տուն, մի խումբ երիտասարդներ շրջան էին բռնում ու մակարբաշու դեկավարությամբ պարելով գնում էին, հանգիստ առանց քաշքշոցի, առանց մակարբաշու ճրպատի դաղոցի: Իսկ արդեն հարսը բերելուց նորից շուրջպարը շարունակվում էր, բայց արդեն հարբած վիճակում: Իրար քաշքշում էին, ճանապարհից շեղվում, մակարբաշու ճրպատի դաղոցի տակ նորից հավաքվում իրար գլխի ու շարունակում»: Հարսանիքում մակարբաշին հատուկ դեր ուներ:

«Հիշում եմ, առաջներում, պարելը հրավերով էր, ում էլ չէին պարեցնում, նեղանում էր: Բնանցա մի լազաթն էլ սա էր: Մեր կազմակերպվածությունը, հարևան ոչ մի գյուղ չունեիր», – հիշում է Սոֆյա Օհանյանը: Կիրակի օրը պատրաստվում են հարսին տանելու փեսայի տուն: Նորից հավաքվում են հարսանքավորները: Հարսը շրջապատված ընկերուհիներով մոտենում է օջախին, խոնարհվում ծնրադիր, վերցնում մի քիչ մոխիր, մոտենում հորն ու մորը, համբուրում նրանց ձեռքերը և լացում: Փեսան նույնպես մոտենում և համբուրում է հարսի ծնողների ձեռքերը և կանգնում հարսի մոտ: Այնուհետև հարսի հայրը բռնում է հարսի ձեռքը և տալով փեսայի հորը ասում. «Քո որդուն տվա, աստված խեր անի, աստված ամորթի չանի», – «Տվածդ բախտավոր ըլի, խնամի ջան», – պատասխանում է փեսայի հայրը⁴⁵:

Բանանցում հարսին հոր տանից հանելուց Աշրաֆը էնքան երկար էր դուրան (տխուր նվագ) անում, մինչև հարսին լացացնի, հիշում է Մարիամ Միքայելյանը:

⁴⁵ Ե. Լալայան, Երկեր, հ. 2, Գանձակի գավառ:

Բանանցում (նաև Գարդման-Ուտիքում և Արցախում) տարածված էր նաև **Յալի** (նաև **Յայի**) կոչվող պարը, որը փոքր խմբային պար էր՝ շուրջպար: Յալի կամ Յայի բառը «ալիքվող լեռնապար», «ալիքածն լեռնապար» իմաստներն ունի⁴⁶:

Ուսումնասիրողները տարբերակում են «Մեծ Յալի» և «Փոքր Յալի» պարերը: Իսկ փոքր ու մեծ անվանումները կապված են պարի դանդաղ ու արագ տեմպի հետ: Շուրջպարը կազմված է երեք մասերից՝ դանդաղ, արագ, գերարագ: Պարը սկսվում է ձախ ոտքից և գնում դեպի աջ: Ձախ ոտքի թաթով հարված տեղում, ապա չորս քայլ դեպի աջ և երկու քայլ դեպի ձախ: Պարն աստիճանաբար զարգանում է՝ ընդունելով արագ տեմպ: Վերջում մասնակիցների կազմը նոսրանում է, կապված պարի տեմպի արագացման հետ: Պարաշարքից առաջինը դուրս են գալիս կանայք, մնում են միայն տղամարդիկ, որոնք պարում են էլ ավելի արագացված տեմպով, իսկ պարաքայլերը կատարվում էլ ավելի խոշոր թռիչքներով, նման վերվերի պարին: Ձախ ոտքով երկու անգամ ցատկ են կատարում պարակենտրոն, նույն շարժումը կրկնվում է աջ ոտքով պարակենտրոնից դուրս: Հայտնի է, որ Բանանցում տղամարդկանց հավասար, առանց հոգնելու «Յալի» էր պարում իր յուրահատուկ կոլորիտով հայտնի Լկանի Սապետը: Բանանցում և Գանձակի գավառի գյուղերում տարածված էր մի երգ, որը երգում էին հարսանիքի մականները թագվորի՝ փեսայի տանը մոտենալիս⁴⁷:

*Թագվորի մեր, փանեն փյուս եկ,
Տես, քը հեպի ինչ ենք պիրել,
Գլուխդ քթվող ենք պիրել,
Շորերդ թափող ենք պիրել,
Ուրներդ լվացող ենք պիրել,
Մեջքդ քորող ենք պիրել...*

*Թագվորի մեր, փանեն փյուս եկ,
Տես, քը հեպի ինչ ենք պիրել,
Քյոմագ անող ենք պիրել,
Ալիրդ մաղող ենք պիրել,
Խմորդ հունցող ենք պիրել,
Տյափդ փոնող ենք պիրել,
Խմորդ պյուլող ենք պիրել,
Թորոնդ էրող ենք պիրել,
Հացդ թխող ենք պիրել,*

⁴⁶ Լևոն Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսությունից, Նարինե Շամամյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ: Շահվերլույանների տոհմական պարերը (ըստ Լոռու մարզի Այգեհատ գյուղում 2015 թ. դաշտային հետազոտությունների):

⁴⁷ Երգի ամբողջական տարբերակը ներկայացվում է ըստ ազգագրագետ Երվանդ Լալայանի: Ե.Լալայան, Երկեր, հ. 2, Ե. 1988, էջ 356-358: Այս երգի որոշ հատվածներ մանկության տարիներին առաջին անգամ լսել եմ Սանդուխտ տատիցս:

*Թագվորի մեր, փանեն փյուս եկ,
Տես, քը հեպի ինչ ենք պիրել,
Շուշան քաղող ենք պիրել,
Փիփերթ հնդրող ենք պիրել,
Ճրագ վառող ենք պիրել,
Կրակ անող ենք պիրել,
Խորակ եփող ենք պիրել,
Հաց-ջուր անող ենք պիրել...*


*Թագվորի մեր, փանեն փյուս եկ,
Տես, քը հեպի ինչ ենք պիրել,
Գոմդ (թովեղ) քերող ենք պիրել,
Մարագդ սրբող ենք պիրել,
Կովդ կթող ենք պիրել,
Հորթդ կապող ենք պիրել,
Ուլդ բոնող ենք պիրել,
Այծդ կթող ենք պիրել,
Խնեցիդ հարող ենք պիրել,
Մածունդ մերող ենք պիրել,
Թանդ կտրցնող ենք պիրել,
Յեղդ հալող ենք պիրել...*

*Թագվորի մեր, փանեն փյուս եկ,
Տես, քը հեպի ինչ ենք պիրել,
Տունդ սրբող ենք պիրել,,
Կուժդ ուտող ենք պիրել,...
Բախճեղ ջրող ենք պիրել,,
Լորիդ քաղող ենք պիրել,,
Շորդ կարող ենք պիրել,,
Գլուխդ լվացող ենք պիրել,
Ասեղդ թելող ենք պիրել,
Գուլպեդ գործող ենք պիրել...*

*Թագվորի մեր, փանեն փյուս եկ,
Տես, քը հեպի ինչ ենք պիրել,
Գլուխդ հողող ենք պիրել,,
Տունդ քանդող ենք պիրել,
Գլխիդ բամփող ենք պիրել,
Ումբրդ թաղող ենք պիրել,
Տղիդ խլող ենք պիրել,
Ծամերդ քաշող ենք պիրել,
Տունդ փիրող ենք պիրել,*

*Թագվորի մեր, տաննն տյուս եկ,
Տես, քը հեպի ինչ ենք պիրել,
Սափանայի ճուպ ենք պիրել,
Մուֆ դժոխքից դև ենք պիրել,
Ինչ որի ա՛քու ապրանքն ա,
Դու ես մենակ սրա տերը,
Եկ պրովի, կուլավն ինզի,
Ետնեդ գցի ու ներս քաշի:
Թե Տերն ուզի բախտ քու օջախին,
Թյամուզ կպահի սիրտը հարսի...*

Բանանցի հարսանիքների ամենաուշագրավ արարողությունը «**թամաշայի**» ավանդույթն էր: Հարսին տուն բերելուց հետո սկսվում էր պարերի շարքը զուռնա-դիդի նվագակցությամբ: Հարս ու փեսայի առջև պարում էին ոչ միայն հրավիրվածները, այլև գյուղի ողջ երիտասարդությունը: Ընդ որում, պարում էին ոչ թե մենապար, այլ զուգապար և հրավիրողն էլ տղան էր, եթե աղջիկը պարի հրավերին արձագանքում էր պարահրապարակ մտնելով՝ նշանակում է՝ նա «համաձայն է»: Այս ամենը կատարվում էր ողջ գյուղի աչքի առաջ, և որևէ ծնող երբևէ չէր արգելում դստերը՝ այդ օրվա «թամաշային» մասնակցելու: Նրանք, ովքեր հարսանիքին կանչված չէին, կարող էին գնալ թամաշայի, այսինքն՝ երգ ու պարը նայելու: Ի դեպ, «թամաշայի» ավանդույթը թեև պահպանված է միայն հարսանեկան ծիսակարգում, սակայն այն բնորոշ է եղել համաժողովրդական շատ տոների ևս: Այդ մասին գրում է Ստ. Տեր-Ավետիսյանը իր վերոհիշյալ գրքում, մի ամբողջ գլուխ նվիրելով «թամաշայի» նկարագրությանը (Վարդավառի հետ կապված ուխտագնացության առիթով):



Թամաշայի տեսարան

Յուրահատուկ ծիսակարգ էր նաև փեսայի տանը յիղիծու (ծվածեղ) բաժանելը: «Յիղիծվի համը դեռ բերանիս մեջ է: Հիմնականում քառակուսի մանր կտրտած քաղարջի վրա էին տալիս: Չեմ մոռանում նաև առաջին պարից հետո հնչող, «Աստվաաած շնհավըր անի» արտահայտությունը», - հիշում է Անուշ Աղիխանյանը:

Սեղան նստելուց հետո, թե հարսի, թե փեսայի տանը առանձին-առանձին՝ ըստ իրենց կանչած հյուրերի, ամենահարագատ մարդը թամադաներ էր նշանակում՝ գենացի թամադա, պարի, երգի..., նույնիսկ սուսի թամադա: Երբ աղմուկ էր լինում. հնչում էր. «Մըր սուսի թամադըն լավ չի ղեկավարում, խի չի տըզըցընում», հիշում է Անուշ Աղիխանյանը:

Երկրորդ ուշագրավ փաստն առնչվում է շեմի հետ կապված արարողությանը: Երբ հարսանքավորները հասնում են փեսայի տուն, բակում նորից նվագում ու պարում էին մակարբաշու խիստ հսկողության ներքո: Այնուհետև սկսվում էր նվերներ տալու արարողությունը (պրովելը): Հիմնականում նվիրում էին ոսկե զարդեր և կենցաղային իրեր: Արարողությունների ժամանակ հիշում էին նաև մահացած նախնիներին: Եվ դրան շեմին ոտքով չարը խափանող ափսեն կոտրելուց հետո, նվագողների խմբի ուղեկցությամբ նորապսակները գնում են մահացած ծնողի կամ պապ ու տատի (նախնու) գերեզմանին այցելության, հնչեցնում զուռնան, այնուհետև վերադառնում տուն, մի քիչ հանգստանում: Իսկ երեկոյան դեմ սկսվում էր իսկական ուրախ խնջույքը, որի ժամանակ օգտագործվում էր բանանցյան հայտնի «Բանանց» կոչվող գինին: Խնջույքները երբեմն ավարտվում էին գինովցած երիտասարդների միջև սկսվող վիճաբանությամբ, որը ավագների միջամտությունից հետո ավարտվում էր խաղաղությամբ:

Ինչպես նկատում ենք, Բանանցի տոնական և ծիսական արարողությունները ունեն միայն իրենց հատուկ ինքնատիպ առանձնահատկությունները, որոնք աչքի են ընկնում հնագույն ավանդույթների պահպանվածությամբ, զուգորդվելով նորի հետ:

Բանանցում բոլոր արարողությունները՝ հարսանիքները, թաղումները, անգամ նորակոչիկի հետ կապված արարողությունները մշտապես եղել են բազմամարդ: Ազգականներից ու հարևաններից բացի, արարողությանը կարող էր մասնակցել գյուղի մեծ մասը: Այս առումով ուշագրավ է՝ «Որտեղ որ հավաքված չափից շատ մարդ կտեսնեք, իմացեք, որ բընընցեցի են», թևավոր խոսքը:

Բանանցյան ավանդույթներին բնորոշ է նաև արարողություններին ներկայանալի ձևով, պատշաճ հագ ու կապով մասնակցելու հանգամանքը: Սա ևս քաղաքային մշակույթին բնորոշ երևույթ է և, ամենայն հավանականությամբ, հետևանք է քաղաքների, հատկապես Գանձակի հետ Բանանցի ունեցած առանձնահատուկ սերտ կապերի: Ներկայացնում ենք Բանանցի հարսանիքներում հարսին ու փեսային ուղղված հաճախ հնչող մաղթանքներ⁴⁹:

⁴⁹ Հարսանեկան մաղթանքները գրի է առել Անուշ Աղիխանյանը:

Աստված հըրսանիքը շնհավըր անի,
 Էրկուսի միութիւնը անսիոշման իլի,
 Էս յըղըծվի պըս շապ համով իլի,
 Վըր արած ծախսն ըլ շապ չհամարի:
 Թագա հարսի վըրը թող խըրավ իլի,
 Սկըսուր-պըրրունի հեպ միշպ սըրավ իլի,
 Մարդի յոթ պորտին ընդունող իլի,
 Միչև մի փարին ճոխարակ դոչ փղա պիրի:
 Տրանից ետով ախճիկ էլ պիրի,
 Տան մարդի աշկը դիրա փուն իլի,
 Ինքն էլ առողջ ու պիրապեր իլի,
 Կնիկը խոնար, սփըղծող իլի,
 Ըշկոնին ցամաք մի պարցի միծանան,
 Մի ծեռավ վըր փան, մինավ սփանան,
 Մահը վըր կա, ուրուր հեպ փանի,
 Թայսուզ չմնան, ընհամած փանան...

Ե. Լալայանը անդրադառնում է նաև ընտանիքում ծերացած ծնողների ոչ միշտ բարեհաջող դասավորված վիճակին, երբ մահանում էր ամուսիններից մեկը, հատկապես ամուսինը և կինը մեռակ էր մնում: Գանձակի գավառում տարածված ժողովրդական բանաստեղծությունը լավագույնս է նկարագրում իրավիճակը:

Հորն ընկա՝ խոր հորն ընկա,
 Մորն ընկա՝ դռնեդուտ մուրն ընկա,
 Աղբորն ընկա՝ աղբահորն ընկա,
 Մարդն ընկա՝ մարդն ընկա,
 Շղթաթախ վարդն ընկա⁴⁹:

ՎՏՆԱԿԱՆ

Բանանցում պահպանված շատ հետաքրքիր ծես էր նորակոչիկ գինվորին բանակ ճանապարհելու արարողությունը, որը կոչվում էր **վտնակախ**:

Նմանը չունեցող մի արարողությամբ էին բանանցեցիները ճանապարհում բանակ գնացող ապագա գինվորներին⁵⁰: Զորակոչի ենթակա գինակոչիկների թվի հետ կապված այդքան օր էլ քեֆ էին անում: Զորակոչիկներից հեղինակություն վայելողը կրում էր Բարատովի պոզը: Իսկ որպես քեֆի վայր ընտրում էին այն գինակոչիկի պատշգամբը, որը մեծ էր ու հարմար այդ նպատակի համար: Գյուղի

տղամարդկանց մեծամասնությունը իր պարտքն էր համարում մի բիդոն գինով ներկայանալ քեֆի վայր ու իր բարեմաղթանքը ասել գինակոչիկներին: Քեֆի օրերին ցերեկը նրանք երաժիշտների ու երեխաների ուղեկցությամբ պատվում էին գյուղում և յուրաքանչյուրը իր պարտքն էր համարում հրավիրել իրենց բակ ու հյուրասիրել գինով, յուղուծուով (ծվածեղ), չինչիխով (քաղցր սուջուխ), խնձորի ու խաղողի բանդաղներով (շարանով) և այլ մրգերով: Իսկ երեխաների գլուխներին էին թափում կոնֆետներ: Մեկ օր հատկացվում էր հանգստարան (գերեզմանոց) գնալուն և Տասի սեռ բարձրանալով Մուսունց Հայի «օրհնությունը» ստանալուն: Մուսունց Հայի գերեզմանի վրա կար մեծ քար, որը 14 եզներով մի կերպ հասցրել էին այնտեղ: Այդ հսկա քարը 2 հոգով թեքված (պառկած) վիճակից պետք է ուղղեին: Ովքեր չէին կարողանում, այդ մասին լուրը իրենցից շուտ ուղեկցող երեխաները հասցնում էին Փողոսկ:

Վտնակախի արարողությունը կատարվում էր բանակ մեկնելուց մեկ օր առաջ, որպեսզի նրանց հետ դրվող ուտելիքը, հատկապես խաշած հավերը, շուտ չփչանային:

Բանակ գնացողների համար պատրաստվում էին հատուկ ծիսական պսակ-գլխարկներ, պատրաստված ծաղիկներից, տերևներից ու զարդարված ժապավեններով: Այնուհետև այդ պսակ-գլխարկներով զարդարված նորակոչիկները զոտնա-դիով նվագելով գնում էին «Դիմաց տեղը», որտեղ դարավոր մի մեծ ընկուզենի՝ ճղաքի ծառ կար:

Բանակ գնացող տղաներին հերթով մեծ ճղաքի ծառի ճյուղից պարանով գլխիվայր, ոտից կապում էին ու այդ վիճակում նորակոչիկը տալիս էր հարազատի կամ բարեկամի անունը, ում տնից պետք է բերվեր կենդանի հավը կամ աքլորը (ավելի ուշ բերում էին նաև ոչխար): Ներկա գտնվող և թամաշա անող երեխաները շատ արագ, վազելով գնում էր նշված տներից բերելու կենդանի հավերը: Որքան արագ բերվեին հավերը, այնքան քիչ կախված կմնար զորակոչիկը: Գլխիվայր կախված նորակոչիկը պետք է թափով պտտացնելով պոկեր հավի վիզը: Եվ որքան շուտ պոկվեր հավի վիզը, այնքան լավ, որովհետև դա վկայում էր նրա ուժեղ լինելու մասին (ոչխարը նույնպես օդում էր մորթվում): Բոլոր նորակոչիկները մասնակցում էին այդ արարողությանը: Ավարտից հետո հավաքված հավերը տանում էին նրանցից մեկի տուն և սկսվում էր ուրախ քեֆը: Հավաքված հավերի թիվը շատ մեծ էր լինում, այնքան, որ հերիքում էր և՛ քեֆին, և՛ հետները տանելուն, մինչև հավաքակայան հասնելը:


Այս արարողության ժամանակ երիտասարդ տղան՝ նորակոչիկը դժվարին պայմաններում ցույց տալով իր ուժն ու ճարպկությունը, ապացուցում էր, որ ինքը ուժեղ է և պատրաստ է մեկնելու բանակ և ծառայելու հայրենիքին: Վտնակախի ժամանակ նվագում էին **Ալաշկերտի քոչարի**:

⁴⁹ Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 387:

⁵⁰ Ներկայացնում են վտնակախի մասին որոշ մանրամասներ, որպես արարողության ակնատես ու մասնակից, Վալերի Գրիգորյան:



Վտնակախ: Պատկերված է Հովիկ Օհանյանի գլխավոր դիրքով ոչխար մորթելու արարողությունը, 1969 թ., աշուն



«Վտնակախ», նկարիչ Մ. Բաղայան



1957 թ. Բանանցի միջնակարգ դպրոցի շրջանավարտները՝ ապագա զորակոչիկները նկարվել են ծիսական գլխարկներով: Նկարը Շուշաննա Դադյանի ՖԲ էջից:



Բանանցեցի գինակոչիկ «Բարատովի պոզով»



Ձինակոչիկները ծիսական գլխարկներով



Նորակոչիկներ՝ քեֆի սեղանի համար հավաքված մրգերով ու խաղողի շարանով: 1970-ական թթ.

Ներկայացվող լուսանկարներից մեկը շատ խորհրդանշական է: Նորակոչիկը կանգնել է գյուղի կենտրոնում կառուցված Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված բանանցեցիների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձանի ութանկյուն պատվանդանի վրա: Գլխին կրում է ծիսական գլխարկ-պսակ, վզից կախել է Բանանցում շատ հայտնի պոզը (4-4,5 լիտր տարողությամբ): Ապագա գինվորը ձախ ձեռքով շշից գինի է խմում, աջով բռնել է խաղողի վագի ճյուղ (սրի նմանվող): Նկարը խորհրդանշական է նրանով, որ ապագա գինվորը ծիսական հագուկապով նկարվել է զոհված գինվորների հիշատակին նվիրված հուշարձանի մոտ: Վտնակախի ավանդույթը պահպանվել է մինչև 1980-ական թթ. վերջ:

Այսպիսով, կարելի է ասել, որ Բանանցում պահպանվել են դարեր շարունակ գործող հայոց ծեսերը, արարողություններն ու ավանդույթները, որոնք նույն տարածքում անընդմեջ բնակության (կամ պարբերաբար վերաբնակեցման) հետևանք են: Իսկ դա նշանակում է, որ մշակութային ավանդույթները շատ ավելի կենսունակ են և ապագայում էլ վերարտադրվելու մեծ ներուժ ունեն:

Ծիսական արարողության նման էր նաև հաց թխելու գործընթացը: Նորից հիշենք սրբազան այդ արարողության մանրամասները, որը դարեր շարունակ փոխանցվել է սերնդեսերունդ: Ներկայացնում ենք Վարդուհի Բաղայանի հուշերը հացի թխման արարողակարգի մասին:

Մանկության հացի բույրը

Անհիշելի ժամանակներից Բանանցում կանայք հաց էին թխում: Ամեն թաղում փոռ կար: Թխում էին հերթով՝ օրը մի քանի տուն: Նախօրոք տեղյակ էին պահում իրար, պայմանավորվում էին՝ ով պիտի առաջինը փուռը վառեր:

Առաջին կրակը «ճախ» (ցախ) շատ էր տանում, ու ամեն անգամ մեկն էր առաջինը փուռը «էրում» (վառում):

Հաց թխելու արարողությունը մի մեծ պատմություն էր: Այն սկսվում էր վաղ առավոտյան, կամ նույնիսկ կարելի է ասել՝ գիշերը, երբ դեռ մուսուլուսին ալյուրը մաղում, խաշ էին անում ու ծածկում հազար ու մի ծածկոցով, որ «գա», այսինքն՝ հասունանա: Ու այսպես՝ մի քանի փուլերով հասունանալով՝ ալյուրը թխվելու, հաց դառնալու համար շաղախվում էր ջրով ու աղով, թթվում էր թթխմորով, տաշտից քերվում էր տաշտաքերիով ու կտրատվում, բուլ էր արվում՝ համաչափ, կլոր, բուրավետ, շարվում էր ալյուր ցանած սփռոցի վրա, ծածկվում մի ուրիշ սփռոցով, մինչև «գա»: Ու մինչ «կգային»՝ սկզբում խմորը, հետո գնդած ալյուրը, խմորարած կանայք մի քանի անգամ իրար տուն էին այցելում, որ իմանան, թե խմորն «ինչ բանի է», որ չուշանան՝ ետ չընկնեն, չշտապեն՝ առաջ չընկնեն, որովհետև խմորն իր թխման ճշգրիտ, ժամանակակից լեզվով ասած, տեխնոլոգիան ուներ: Երբ այն խախտում էին, հացը «փշտում էր»: Այդպես էին ասում, երբ հացի երեսը տեղ-տեղ կարմրում ու փչվում էր, իսկ մեջը քարի պես պինդ էր ստացվում:

Իրեն հարգող տանտիկինը թույլ չպիտի տար, որ իր հացը «փշտեր»:

Տատիս թխած հացը ոսկեգույն կեղևի տակ փրփուրի պես ճերմակ ու փափուկ էր ու հալվում էր բերանում: Նա ինքն էր երկար դափով փուռը տալիս իր հացը և չէր թողնում, որ անփորձ մեկը ետ աներ՝ այսինքն՝ գնդերը բացեր, որպեսզի հացերը լիալուսնի պես անթերի կլոր լինեին ու համաչափ:

Մեզ՝ երեխաներիս համար մեծ ուրախություն էր, երբ տատս թույլ էր տալիս, որ մի որևէ իր առած՝ փուռը գնայինք իր հետ: Մենք իրար ետևից շարքով քայլում էինք դեպի մոտակա փուռը՝ տատս գնդերով լի փայտե «խոնչան» ուսին, նրա հետևից մի բարեկամուհի կամ հարևանուհի՝ հատուկ այդ նպատակով կանչված՝ ևս մի «խոնչա» ուսած, հետո մենք՝ ջրով լի ամանով, դափով, ալյուրի փոքրիկ դոյլով, հարած դեղնուցներով... Տատս զգուշացնում էր. հանկարծ որևէ իր ցած գցեինք կամ մի բան թափեինք, նա մեզ իր օրում էլ մոտ չէր թողնի հացի թխման արարողությանը:

Ավելի խիստ պատիժ չէր կարելի մտածել, մանավանդ որ մենք տատիս հետ ամեն մեկս մի-մի բլիթ էինք գնդում ու հետո անհամբեր սպասում էինք մեր բլիթի թխվելուն: Իսկ դա միշտ սկզբում էր արվում, որովհետև մենք սպասելու համբերություն չունեինք: Երբ հերթով՝ փոքրից մեծ, ստանում էինք մեր արդեն թխված բլիթը, գալիս էր նախ լոշի (լոշտի՝ դա բարակ ու ավելի մեծ բացված հաց էր, որ

անմիջապես սպառվում էր հենց փռան դռանը), հետո՝ մյուս գնդերի թխվելու հերթը: Մեր գործն ավարտված էր, մեզ մնում էր ակորժակով կծոտել մեր տաք հացիկներն ու տատիս պատվերով քշել մեր ու օտար հավերին, որ մոտ չգան ու չկոցեն հացատան դարակներին փռած տաք հացերը: Իսկ դա հեշտ գործ չէր, որովհետև մեր ուշքն ու միտքը բոլորովին էլ հավերը չէին: Մի ճանճ, մի թիթեռ, կոնֆետի գույնզգույն թուղթ ու անգամ հավի կտուցից խլած փայլվիլուն հուլունք կարող էին իրար մազ քաշելու աստիճան գբաղեցնել մեզ:

Հետո մենք նույն հերթականությամբ շարքով տուն էինք վերադառնում. ասցնից տատս՝ հացերով բեռնավորված «խոնչան» ուսին, մյուս՝ դատարկ խոնչան՝ մյուս թևի տակ, որովհետև թխված հացերը իրար վրա էին դարսվում. նրա հետևից՝ օգնող բարեկամուհին՝ ջրի, ձվի դատարկ ամաններով, ալյուրի փոքրիկ դոյլով ու դափով: Ու մենք՝ կիսակերած հացիկները ձեռքներիս՝ շոգին լաթիկները թորիկ ոտքներիս՝ փոշու մեջ քստքստացնելով, անձրևին՝ ցեխի միջից ծանրացած ոտնամաններս մի կերպ դուրս քաշելով, ծիծաղ-ծղրտոցով:

Արարողությունն իր գագաթնակետին էր հասնում, երբ ճանապարհին մարդ էր պատահում: Հարկ էր պատահողին հաց առաջարկել, ու շարքը կանգ էր առնում. «Տաք-տաք հաց կտրի»:

Ոմանք քաղաքավարի հրաժարվում էին, ոմանք օգտվում էին առիթից... Ու դեռ գոլորշի արձակող հացը միջից կիսվում, բաժանվում էր մասերի՝ թաղը լցնելով իր ջերմացնող բույրով:

Տանը հացերը խոզանակով մաքրելուց հետո՝ տատս ընտրում էր ամենալավը, փաթաթում էր գոգնոցի մեջ, ու մենք ճամփա էինք ընկնում նրա հորանց տուն: Այնտեղ ապրում էր մեր մեծ՝ Սանդուխտ նանը:

ՄԱՀՎԱՆ ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՆՑՈՒՄ

Բանանցում մեծ պատասխանատվությամբ էին վերաբերում թաղման արարողությանը: Որևէ մեկի մահը վերաբերում էր բոլորին: Հավաքվում էր ողջ գյուղը:

Լացի ծիսակարգը պահպանվում էր հնուց եկած սովորույթով: Կանայք, աղջիկները բարձրաձայն պատմում էին հանգուցյալի կյանքի, կենսագրության կարևոր դրվագները, գովում էին նրան, թվարկում նրա բնավորության դրական գծերը, բարեմասնությունները և այլն: Որքան սահուն էր խոսքը և մանավանդ մեղեդային, այնքան բարձր էր գնահատվում լացը և լաց լինողը: Կանայք հետագայում բարի խոսքերով կամ հիացմունքով հիշում էին լաց լինողին, գովում նրան, նախանձում հանգուցյալին և ցանկություն հայտնում այդպիսի լացող ունենալ իրենց թաղմանը: Ջուսպ, լուռ սգո արարողությունը ամոթալի էր համարվում: Այս դեպքում խոսք ու գրուցի առարկա էին դառնում հանգուցյալների հարազատ կանայք՝ որպես ապաշնորհ, անսիրտ, անհոգի. «Այախ, մի թամամ լաց իջող չկար, բա իմ զանքաչը տրան էր արժան... Թըրվըհակ մեռել էր»:

Քանի որ լալկան կանանց հինավուրց մասնագիտությունը խիստ կապված է շնորհի հետ, ոմանք այդ արվեստին ավելի լավ էին տիրապետում՝ «շնորհքով» էին. Բանանցում լավագույն լաց լինողներն էին Ղրի Վարթին ու Լկանի Սապետը. նրանք միշտ ասելիք ու բարի խոսքեր էին գտնում նույնիսկ ամենահեռավոր հանգուցյալի համար: Գյուղացիներն ասում էին. «Ղրի Վարթին եկավ, մեռելը շնորհքն ինձավ»: Ողջ գյուղը մասնակցում էր թաղման արարողությանը: Բայց կանանց համար սահմանափակում կար. նրանք հասնում էին հանգստարանի աղբյուրի մոտ, լվացվում ու վերադառնում. ընդունված չէր նրանց ներկայությունը հանգուցյալին հողին հանձնելու արարողությանը: Հոգեհացին մասնակցում էին տարիքով մարդիկ և ծերերը: Երիտասարդները խումբ-խումբ հավաքվում էին առանձին տներում և հիշում ու պատվում հանգուցյալին՝ օղորմաթաս խմելով: Էքնահողին գերեզմանոց գնում էին հիմնականում կանայք և ամենամոտ տղամարդիկ՝ խունկ վառելու և հանկարծահաս խնդիրներին լուծում տալու համար: Կանայք նվեր էին տանում հանգուցյալի հարազատներին. ընդունված նվերներն էին հալվա, օճառ, շաքար, բրինձ:

Թաղման վեցերորդ օրը մտերիմները հավաքվում էին հանգուցյալի տանը, մաքրում, կարգի բերում, լվացք անում, փոում, չորացնում, արդուկում:

Յոթերորդ օրը կրկին գերեզմանոց էին գնում կանայք՝ մի քանի տղամարդու ուղեկցությամբ: Քառասունքին և տարուն հանգուցյալի հարազատները հրավիրվածների ցուցակ էին կազմում, տալիս երեխաներին և ուղարկում՝ հրավիրյալներին տեղեկացնելու: Երեխաները, ցուցակը ձեռքներին, շրջում էին տնետուն և հրավիրվածներին հայտնում քառասունքի և տարվա օրն ու ժամը՝ այդ մասին տեսրերում նշումներ անելով:

Թաղմանը և հաջորդող հետագա արարողությունների ժամանակ հոգեհացի սեղան էին զգում, որտեղ մատուցում էին պանիր, կանաչի, թթու, լոբու յախնի,

խաշամա, հետագայում նաև Երևանից բերված բաստուրմա, սուջուխ և այլն: Հոգեհացին նախ մի-մի բաժակ օղի էին խմում, հետո՝ գինի:

Մահվան օրվանից սկսած քառասուն օր տղամարդիկ չէին սափրվում: Ձախ թևին կապում էին սև ժապավեն, իսկ կրծքին ամրացնում հանգուցյալի լուսանկարը, որը հետո որպես հիշատակ, հանգրվանում էր ընտանեկան ալբոմի մի անկյունում:

Վալերի Գրիգորյան

Բանանցը տարածաշրջանում հայտնի էր նաև իր երգիչներով, պարողներով ու հատկապես երաժիշտներով: Ներկայացնում ենք Գրիգոր Ղևոնդյանի բասսետեղծությունը՝ նվիրված երաժիշտ, մի քանի երաժշտական գործիքների (գլուխա, դուդուկ, քյամանչա) վարպետ Ուստա Մեխակին (Սըհակի Մեխակին), որն ունեցել է բազմաթիվ աշակերտներ:

Ուստա Մեխակին

(Սըհակի Մեխակը)

Պատվով, հյուրասեր և ժողովրդական,
Դուն մարդ էիր հավերժ պետքական,
Երաժշտասեր, բոլորին պետքական,
Բոլորիս վարպետ Մեխակ Մկրտչյան:
Ջուռնայիդ ղողանջները զվարթ,
Քյամանչա, դուդուկներդ քաղցր,
Մեր ժամանակի դուն իսկական մարդ,
Եղել ես, կմնաս, հավերժ ու բարձր:
Անման երեխաներդ են սիրելի,
Իրենց գործերով հավերժ գովելի,
Գովել եմ, կգովեմ ես ձեզ դեռ էլի,
Հարգարժան մեծ վարպետ, ուստա Մեխակ դայի:
Քո կյանքընկերդ միշտ աղ ու հացով,
Կորցրիք Հովաննեսին կսկիծ ու լացով,
Վառվում է ամբոխը մեծ կրակի բոցով,
Դաղված սուր թրի, թունավոր խոցով:
Մեկ-մեկ հավաքվում ընկերներով էլի,
Հիշում ենք ձեր նվագն ու գործը սիրելի,
Ջուռնան, դուդուկն, քյամանչան գովելի,
Աստված օղորմի, ուստա Մեխակին հարգելի:
Դատաստանդ քաղցր լինի հավիտյան,
Ուստա Մեխակ դայի, անման,
Ձեզ չենք մոռանա մինչ մահ գերեզման,
Ձեզ հարգող ու աշակերտ՝ Գրիգոր Ղևոնդյան:

30.04.1981թ.

ԱՎՈՒՄԲԻ ՇԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Հետպատերազմյան տարիներին որոշ աշխուժություն է նկատվում գյուղում 1950-ական թվականների կեսերին (1956 թ.) գյուղի կենտրոնում՝ Փողոսկում հասարակության ուժերով Մուսունց Մնացական Հայի ու Մաթևոսյան Պողոսի (Գյուլունց) հին տների տեղում կառուցվել է 400 տեղով ակումբի շենքը: Հետաքրքիր է, որ շենքի հիմքը գցելիս հայտնաբերվել է մի քանի կարաս: Նորակառույց ակումբում անց էին կացվում կոլտնտեսության ընդհանուր ժողովները, ամեն օր երեկոյան ցուցադրվում էր կինոնկար մեծերի, իսկ շաբաթ ու կիրակի օրերին՝ նաև դպրոցականների համար: Համերգներով հանդես էին գալիս Բաքվից եկած մենակատարներ, Արցախի երգի-պարի պետական անսամբլը, մենակատարներ՝ Նաիրուհի Ալավերդյանը, Արև Բաղդասարյանը և ուրիշներ:



Ակումբի շենքի շինարարությունը



Ակումբի շենքը

Հատկապես հիշարժան է եղել Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնի կոլեկտիվի այցը Բանանց 1962 թ.: Թատրոնի կոլեկտիվը շրջագայում էր Ադրբեջանի հայկական գյուղերով և հայերեն ներկայացումներ տալիս: Ակումբի հարմարավետ դահլիճում ներկայացվում են Գ. Սունդուկյանի «Էլի մեկ գոհ» և Շվարցի «Ուրիշի երեխան» պիեսները, որոնք բացառիկ ջերմությամբ են ընդունվում բանանցեցիների կողմից: Ժողովուրդը մեծ ոգևորությամբ է ընդունում հայտնի դերասաններ Ավետ Ավետիսյանին, Մետաքսյա Սիմոնյանին, Վոլոդյա Աբաջյանին, Դավիթ Մայանին և մյուս մեծերին: Ավետ Ավետիսյանը բանանցեցիներին ուղղված իր խոսքում նշում է, որ շատ գոհ են ջերմ ընդունելությունից և ուրախ կլինեն նորից հյուրախաղերով լինել Բանանցում: Սունդուկյանցիները տեղավորվել էին Կիրովաբադի հյուրանոցներից մեկում, սակայն ներկայացումը երբ ուշ էր ավարտվում, բանանցեցիները մեծ սիրով իրենց տներում հյուրընկալում էին դերասաններին՝ չթողնելով, որ ուշ ժամի նրանք ճանապարհ գնան:

Նախքան ներկայացումը բանանցեցիները հյուրընկալում էին դերասաններին: Իրենց տանը այդպիսի մի հյուրընկալության մասին հիշում է Վալերի Գրիգորյանը: Նա հիշում է, որ դերասանները հրաժարվել են ճաշից, բայց վայելել են իր մայրիկի պատրաստած բանանցյան մուրաբաները թեյի սեղանի շուրջ: Իսկ Արմեն Խոստիկյանը երեխաների հետ հանդիպման ժամանակ ասել է, ինչ մասնագիտություններ էլ ընտրեն, անգամ էշաբույծի՝ պետք է լավ մասնագետ դառնան:

ԲԱՆԱՆՑԻ ՏՈՒՄԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ

Ա

- Աբրունց – Ավետիքյան⁵¹
- Ագրանոմունց – Հովհաննիսյան
- Ագունց – Այգունց, Այվազյան, Դանիելյան, Նիկողոսյան
- Աթրունց – Հարությունյան
- Ակտանաբիունց – Բաղայան, Ավազյան
- Աղալովունց – Տոնյան
- Անաստասանց – Հարությունյան
- Անյանց – Անանյան
- Աշկավտովոզանց – Գրիգորյան
- Աղբանանց – Օհանյան
- Ասրունց – Գևորգյան, Հարությունյան
- Արթունանց – Բաղայան
- Արյուսակազունց – Գրիգորյան
- Արչունց – Բայան

Բ

- Բագունց – Բեգյան, Հովհաննիսյան
- Բալունց – Բայան, Փոքր Բանանցից, Տնրլաձոր
- Բաղդասարյան – Իվանանց, եկել են Ավետարանոցից
- Բաղդունց – Գուլյան
- Բարատովունց – Գևորգյան
- Բբանց – Բաբայան, Մարտակերտի շրջանի Մեծշենից 19-րդ դարի սկզբին
- Բիբրոզունց – Պողոսյան
- Բիդալանց – Բաղայան, Բարսումից և Վերի Բալի-Բլամի շենից
- Բիգիզնարանց – Բեկնազարյան, Արցախ, գյուղ Խաչեն, Առաջածոր:
Բեգ Նազարը Արցախից գալիս է Բանանց, ամուսնանում Մկրտչյան ազգից մի աղջկա հետ, աներոջից այդ թաղում ստանում է հողամաս և տուն սարքում:
- Բնչունց-Ջոջունց – Ավազյան, բլբուլա կողմերից-բինա դնող
- Բոբունց – Աթանեսյան
- Բոզունց – Բեգյան, եկել են Շատախից
- Բղիրանց – Նալբանդյան
- Բոնդունց – Դադյան
- Բոջիխանումանց – Պողոսյան
- Բոբոռունց – Մեյրանյան
- Բտրակունց – Դանիելյան, Ներքին Քարհատից
- Բրսումունց – Բաղայան
- Բուզունց – Մելիքյան

⁵¹ Տեղեկություններն ըստ Թ. Ղևոնդյանի և Մ. Չալումյանի:

Գ

Գաղունց – Վանյան
 Գլազունց – Բարսեղյան
 Գյոդակունց – Գաբրիելյան
 Գյուլունց – Գուլյան, Գյուլիստանից
 Գյուրջունց – Գյուրջյան, եկել են Անի մայրաքաղաքից 14-րդ դարում

Դ

Դագունց
 Դարակոնանց – Աղաջանյան
 Դացխունց – Տերյան
 Դդոնանց – Իսրայելյան
 Դլլաքանց – Շահմուրադյան, Իրանից, 18-րդ դար
 Դոլունց – Մելիքյան
 Դոնդիկունց – Ավագյան
 Դըխանանց – Ադիխանյան, Ադիխան անունից, Արցախից, Բարսումից
 Դըղլարունց – Մկրտչյան
 Դընգսարունց – Դանիելյան
 Դրկոնանց – Աղաջանյան
 Դույունց – Խաչատրյան

Ե

Եղունց – Բադալյան
 Եթիմունց – Բադալյան

Զ

Զլալանց – Զալալյան
 Զվուրունց – Ավագյան
 Զքրանց – Զաքարյան

Է

Էրգանվանունց – Պողոսյան

Ը

Ըղունց – Մովսիսյան
 Ընատունց – Խաչատրյան
 Ընդամանց – Նալբանդյան
 Ըջալանց
 Ըոնետանց – Ավագյան
 Ըոքելանց – Առաքելյան, Մարտակերտի Ջրաբերդ գյուղից
 Ըստղավանց – Մելիքյան

Թ

Թաթունց – Օհանյան
 Թափալունց – Դադյան
 Թբլունց – Գրիգորյան
 Թելունց – Թելյան, Խաչենի Առաջածոր գյուղից
 Թիվունց – Պողոսյան
 Թլաշունց – Նալբանդյան
 Թմասունց – Վարդապետյան
 Թնիսանց – Աթանեսյան, Քրթվունց
 Թոլոնունց – Եպիսկոպոսյան
 Թրոսանց – Թորոսյան
 Թփալունց – Տերյան

Ժ

Ժեռուկունց – Ճաճյան

Ի

Իծրածունց – Պողոսյան
 Իվետանց – Բադալյան
 Իրիցանց, Շշանունց – Եպիսկոպոսյան, Խաչենի Վանք գյուղից, նաև Խաչակապից (Կուլջի)

Լ

Լալունց – Հարությունյան
 Լաճիրակունց – Ղավալյան
 Լդորունց – Դանիելյան
 Լկանունց – Հարությունյան
 Լղարանց – Մկրտչյան
 Լոժի – Մկրտչյան
 Լոշտունց – Ադիխանյան
 Լոկունց – Մելիքյան
 Լչինունց – Ավագյան

Խ

Խլփանց – Բեգյան, Հովհաննիսյան
 Խնչալունց – Զաքարյան

Ծ

Ծանունց – Մկրտչյան
 Ծիպլունց – Հակոբյան
 Ծովունց – Բաղդասարյան
 Ծպովունց – Ծապովյան, հիշատակվում են մոտ. 1700 թ.
 Ծտուրանց – Նալբանդյան

Կ

Կատարունց – Հայրապետյան
 Կեշանունց – Բաղայան
 Կիչունց – Նալբանդյան
 Կիվերքանց – Գևորգյան
 Կնդուզունց – Բաղայան
 Կոճունց – Զալլադյան
 Կստանդունց – Հարությունյան
 Կրնցեցունց – Տոնյան
 Կուծունց – Միքայելյան, Ղևոնդյան
 Կումշունց – Մկրտչյան
 Կուրունց – Մաթևոսյան

Հ

Հակունց – Օհանյան
 Հաթամունց – Առաքելյան
 Հայրսուրբունց – Շահմուրադյան
 Հաջունց – Բաղայան
 Հատտադվունց – Աղաջանյան
 Հկրոակունց – Մելիքյան
 Հմբովունց – Ավագյան
 Հնարունց – Հարությունյան
 Հջալունց – Գաբրիելյան
 Հոպունց – Բալյան
 Հունձանողունց – Ղուլյան
 Հուսունց – Մկրտչյան

Ղ

Ղալբունց
 Ղբուզանց – Ղաբուզյան
 Ղեչունց – Ղալեչյան
 Ղոռվանց – Աղաջանյան
 Ղվալունց – Ղավալյան
 Ղվանդունց – Ղևոնդյան, Միքայելյան, Սյունիքից
 Ղրունց – Նադիրյան
 Ղուլունց – Եղունց, Ղուլյան

Ճ

Ճաճունց – Ճաճյան
 Ճինգունց – Դադյան
 Ճղարունց – Ճաղարյան
 Ճնջըպահունց – Հովհաննիսյան

Մ

Մաձնունց – Բաղայան
 Մաշտի Թիվունց – Պողոսյան
 Մակունց – Ծապովյան
 Մեծունց – Գրիգորյան
 Մելիքսեթունց – Տոնյան
 Մրիդվարունց – Հակոբյան
 Մինիշականց – Մանուշակյան
 Մինասանց – Շահբազյան
 Մխիթարյան – հետո Զալլադյան
 Մկովանց – Դալլաքյան
 Մկծեռունց – Օհանյան
 Մղոսունց – Հովսեփյան, Բլամի շենից
 Մոնթունց – Սարգսյան
 Մջառանց – Մկրտչյան
 Մրզանց – Միրզայան, Մելիք Մաթևոսյան (նույն ցեղը),
 Խաչքուլաղից (Խաչատրյուր)
 Մրդաշունց – Բալյան
 Մրկոսունց – Դադյան
 Մուսունց – Մովսեսյան

Յ

Յեթիմունց – Բաղայան

Ն

Նազունց – Նազյան
 Նախրչունց – Խաչատրյան
 Նաստունց – Դանիելյան
 Նրկրարանց – Շահումյան, Հարությունյան

Շ

Շալունց – Մանուշակյան
 Շամիսաքունց – Հակոբյան
 Շաքարդունց – Տերյան
 Շշանունց – Եպիսկոպոսյան
 Շիումանց – Շահում Շահումյան

Չ

Չանունց – Բաղայան
 Չատիսհակունց – Մկրտչյան
 Չարչունց – Ադիխանյան
 Չլումանց – Դվինց, Կարին (Էրզրում) քաղաքից
 Չղալունց – Գրիգորյան
 Չնթունց – Տերյան
 Չովունց – Մանուշակյան
 Չորսվտնանունց – Շահմուրադյան
 Չվուշանց – Մելիքյան
 Չորուկունց – Բաղայան
 Չփոտանց – Քարվաճառի շրջան, գյուղ Չփոտուլու

Պ

Պըտիմկիչունց – Մկրտչյան
 Պըկուրունց – Քոստյան
 Պկուրիհինիսանց – Քոստյան
 Պիզունց – Բաղդասարյան
 Պիծանունց – Մկրտչյան
 Պիճիլըլիքունց – Ավագյան
 Պրսեղանց – Բարսեղյան
 Պրիստավունց – Դավաթյան

Ջ

Ջավունց – Մանուշակյան
 Ջըլլադանց – Ջալադյան, Շամշադինից
 Ջոջունց, Բնիչանց – Բանուցյան, Ավագյան
 Ջղերթանց – Ջաղերթյան

Ռ

Ռըսանանց – Մկրտչյան
 Ռհանանց – Օհանյան
 Ռումբունց – Առաքելյան
 Ռքելունց – Գյուրջյան

Ս

Սամսունց – Գևորգյան
 Սայունց – Օհանյան
 Սանթրունց – Մկրտչյան
 Սգանանց – Հակոբյան, Սահակյան
 Սիպտակունց – Պողոսյան
 Սըհարունց – Տոնյան
 Սընթովունց – Մոնթունց
 Սպեցունց – Դադյան
 Սրմիսանունց – Դավաթյան
 Սրքածունց – Մաթևոսյան
 Սրնանանց – Տեր Խաչատրյան, Էրբեջ գյուղից, 1840 թ.
 Սքըզովունց – Աթանեսյան
 Սամըկիչունց – Պողոսյան

Վ

Վազգունց – Ավետիքյան, Տվրտիսանց, Եղեցի հողերից:
 Մկրտչյանները ևս Եղեցի հողերից են:
 Վանունց – նաև Պետրոսյան, Վանից
 Վառունց – Հայրապետյան
 Վրթազարունց – Նալբանդյան
 Վրցակունց – Բանուցյան

Տ

Տերունց – Տերյան Եղեցի ձոր (Քիլիսդարա)
 Տերկուփանց – Հակոբյան
 Տինելանց – Դանիելյան
 Տկանունց – Բաղդասարյան
 Տնըշինունց – Շահմուրադյան
 Տոնունց – Տոնյան, Մարտակերտի Տոնաշեն գյուղից, 1770 թ.
 Տոկլունց – Վանյան
 Տոտոշունց – Շահմուրադյան, Մկրտչյան
 Տվիթունց – Հովսեփյան
 Տվրտիսանց – Ավետիքյան
 Տրսելանց – Իսրայելյան
 Տրսեփանց – Հովսեփյան
 Տուտուլանց – Գևորգյան

Ց

Ցկանանց – Աթանեսյան
 Ցոտունց – Հովսեփյան

ՈՒ

Ոստրեկունց – Տեր Իսրայելյան (Մելիք Իսրայելյան) Հովսեփ-Ուսեփ,
Մարտակերտի Մոխրաթաղ գյուղից

Փ

Փափախսունց – Շահբազյան

Փոլաթունց – Մկրտչյան

Փոկուսնիկունց – Դանիելյան

Փոցոլակունց – Ղափալյան

Ք

Քափուրունց – Բաղալյան

Քաքիմրտիրոսունց – (հազար ներողություն), Մկրտչյան

Քեփանողունց – Ղուլյան

Քըլերծունց – Պողոսյան

Քրամունց – Ավագյան

Քիքունց – Գրիգորյան

Քոթկունց – Բաղդասարյան

Քոստունց – Քոստյան, նաև Աղաջանյան

Քոսունց – Պողոսյան

Քչալունց – Զալլադյան

Քրթվունց – Աթանեսյան

Քուրդունց – Քուրդյան, եկել են Մազրից, նեղվելով զիլունա քրդերից

Օ

Օքրուզունց – Մկրտչյան

* * *

Ինչպես նկատում ենք, գյուղի բնակիչները կրում են **ունց** վերջավորությամբ (տոհմանուններ) ազգանուններ, որն օգտագործվում է առօրյա խոսակցության ժամանակ:

Հայտնի է, որ շատ վաղ ժամանակներում, հազարամյակներ առաջ հայերը ունեցել են **ունց** և **ունի** վերջավորությամբ տոհմանուններ (ազգանուններ): Հայկական ազգանունների **յան** կամ **եան** վերջավորությունը ավելի ուշ շրջանի (վաղ միջնադար, 4-5-րդ դդ.) պարսկական ազդեցության հետևանք է: Այս հանգամանքը նույնպես վկայում է Բանանցի (նաև Գարդման-Ուտիքի) բնակչության տեղաբնիկ և հնագույն լինելու մասին: Այս առումով խրախուսելի է, երբ մարդիկ շարունակում են կրել **ունց** և **ունի** վերջավորությամբ հայեցի հնագույն ազգանունները:

ԶՐՈՒՅՑՆԵՐ ՄԻ ՇԱՐՔ ՏՈՀՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Զալլադյան տոհմի մասին կա մի գրույց: 18-րդ դարի վերջին քույր ու եղբայր Մրդոշանց հողերում այլ տալիս են լինում⁵²: Կեսօրին քույրը գնումա Նշիավի աղբյուրից կժով ջուր բերի: Եղբայրը տեսնումա, որ քույրը շատ է ուշանում, հետևից գնումա, տեսնում երկու լազգի աղբյուրի մոտ քրոջը քաշքշում են: Մեկը ասումա, աղջիկը իմնա, մյուսը՝ թե իմնա: Վեճի ժամանակ լազգիներից մեկը դաշույնով սպանում է աղջկան: Եղբայրը լինելով անզեն, չի մոտենում, բայց դեմքերը լավ մտապահում է: Վերադառնում է Բանանց, հաջորդ օրը վերցնում է խանջալը և գնում Գանձակի Զավադ խանին բողոքում: Խանը գորքը շարումա ու էս տղեն շարքերը նայելով ճանաչում է 2 լեզգիներին: Խանը ասումա՝ երկուսին էլ տալիս եմ քեզ, տար ինչ ուզում ես արա: Ես սրանց հարցը էստեղ կլուծեմ, ասումա տղէն, հանում խանջալը և մի հարվածով կտրում երկուսի գլուխը: Դա տեսնելով խանը ասումա «դողրը դողրնան, սան ջալլադ սան» (ճիշտ և ճիշտ՝ դու դահիճ ես): Այս դեպքից հետո այդ տոհմը դարձավ Զալլադյան:

Վանյան տոհմի մասին պատմում են, որ 18-րդ դարում Արևմտյան Հայաստանի Վան քաղաքից մի եթիմ տղա, ուղքի մեկը կարճ, Վան քաղաքից հասնում է Բանանց: Տուրտ օր է լինում, սա մտնում է դարբնոց և դարբին Մկրտչյանին ասումա՝ դայ կթողես քուրի մոտ մի քիչ տաքանամ: Էս դարբինը հյուրասիրում է էս տղային, իմանում գլխին եկածը և վերցնում իր մոտ աշակերտ: Էս տղուն պահում մեծացնումա ու իր աղջկան հետը պսակում: Այսպես առաջանում է Վանյան տոհմը (պատմել է Մկրտչյան Ավագը՝ Անդոնի Ավագը, 1986 թ.):

Գուլյանների մասին: Գյուլիստանում ապրող մի կին Գուլի անունով սպանում է իր ամուսնուն, սպանած մարդու երկու երեխային: Դատարանում հարցնում են, ինչի ես սպանել երեխան, պատասխանում է. «Երեխաներն եմ սպանել, որ մինչև կյանքի վերջ մղկտա»: Նրան վտարում են գյուղից: Նա գալիս բնակվում է Բանանցին մոտ մի տախտում, որից հետո այդ տեղը կոչվում է Գյուլունց տախտ: Ազգանունն էլ անցնում է սերունդներին:

⁵² Տեղեկություններն ըստ Մ. Չալումյանի:

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԲԱՆԱՆՑԵՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Բանանցեցիները կարողացել են մարդկանց համար օգտագործել դիպուկ **մականուններ** (փուտեր): Ներկայացնենք դրանք:

Աստախով – Մելիքյան Մակիչ
Աբու – Քոստյան Մարտիրոս
Ահույս – Մաթևոսյան Գրիշա
Աննյուբ – Նալբանդյան Գրիգոր
Աշրափ – Տոնյան Գրիգոր
Աոյուծ Վանիկ – Տերյան

Բարատով – Գևորգյան Արմենակ
Բաղիր – Նալբանդյան Մակիչ
Բատրակ – Դանիելյան Մակիչ
Բալասան – Ադիխանյան Սերոժ
Բոգրո – Սեյրանյան Հովհաննես
Բուդի – Մելիքյան Մակիչ
Բուլի – Մելիքյան Հանես
Բոբլի – Աթանեսյան Մակիչ
Բաշկո – Մելիքյան Արտուշ
Բխախ – Բաղայան Մուքել

Գոգալ – Մկրտչյան Սաշիկ
Գահի Ջիրի – Ադիխանյան
Գլազ – Բարսեղյան Սիմոն
Գրդոն – Մաթևոսյան Վանիկ
Գոդակ Լեվան – Գաբրիելյան

Դաբրավոլնի – Մելիքյան Օսիկ
Դոգի – Զալլադյան Մուխի
Դուգի – Աղաջանյան Վալոդ
Դացխի – Տերյան Համբարձում
Դալի Մակիչ – Չալումյան
Դույի – Խաչատրյան Գրիգոր (Քոքոր)
Դյեգի Մակի – Զաղեթյան

Երգան Սուրեն – Մելիքյան

Էշ Ռուբեն – Գևորգյան Ռուբեն
Թաբլա – Գրիգորյան Ստեփան
Թաթօղի – Օհանյան Գրիգոր
Թաքարան – Սեյրանյան Ստեփան
Թուշիկ – Չալումյան Մաթևոս

Լաշոո Ռուբեն – Կարո Գյուրջյան
Լական – Հարությունյան Սարգիս
Լոժի – Մկրտչյան Մակիչ
Լղարունց – Մկրտչյան Գուրգեն

Ծանի – Մկրտչյան Սուրեն
Ծիպլի – Հակոբյան Հակոբ
Ծորի Բեդի – Պողոսյան

Կափ – Չոփուռյան Արշալույս
Կոճի – Զալլադյան Սիմոն
Կուճի – Միքայելյան Հանես
Կոթ – Ծապովյան Սուրի
Կիտայ – Տերյան Գրիգոր
Կխտար – Տերյան Թամար
Կլխպաց – Բաղայան Սերոժ
Կաճան – Դալլաքյան Միշիկ

Հայիոյ – Ավետիքյան Միշա
Հկառակ – Մելիքյան Սարգիս
Հոպլի – Ղափալյան Համբարձում
Հակլի – Աթանեսյան Հայկանուշ

Ղվանդի Չատի – Ղևոնդյան
Ղվանդի Քոքոր – Ղևոնդյան
Ղոչաղ Վանիկ – Տերյան
Ղուրդի Ռոզիկ – Գևորգյան
Ղրի Վարթի – Նադիրյան

Ճոպան – Գևորգյան Միքայել
Ճինգի – Դադյան Սիմոն

Մոթալ – Եպիսկոպոսյան Լևոն
Մալո – Հայրապետյան Անդրո
Մաճուն – Բաղայան Գրիգոր
Մկճեռ – Օհանյան Մակիչ

Շամի Սաքի – Հակոբյան
Շալի – Մանուշակյան Արմենակ

Չարչի Գրիշիկ – Ադիխանյան
Չեմպիոն Գագոի – Մկրտչյան Սիմոն
Չորուկ Սաքի – Տոնյան
Չանթա – Տերյան Արմենակ
Չալիկ – Գյուրջյան Մեխակ

Չավուշ – Մելիքյան Չատի
 Չախկալ Մակիչ – Մկրտչյան
 Չորնի – Գյուրջյան Հայկո
 Պալունդրա – Քոստյան Գուրգեն
 Պինակալ – Ղափալյան
 Պիծան – Մկրտչյան Համբարձում
 Պահիպահի – Գևորգյան Ավետիս
 Պատիկ Սուրեն – Խաչատրյան
 Պիճո Ալիք – Ավագյան
 Պարյոր – Քոստյան Սուրեն
 Պարիլիս – Դանիելյան
 Պոժոժ – Աղաջանյան Սերոժ
 Զիբի – Գյուրջյան Ռուբեն
 Զոջ – Ավագյան Վանիկ
 Սապիճ – Ղափալյան Ռուբեն
 Սարաղզ – Մկրտչյան Ավետիս
 Վեսյոլի – Լալունց Միշիկ
 Վըսկի Հովիկ – Տերյան
 Տյուտուկ – Գևորգյան Համբարձում
 Տոկան – Բաղդասարյան Ավետիս
 Տուկի – Միրզոյան Ռուբեն
 Շախսավարով – Գուլյան Հրանտիկ
 Իժի պոզ – Դադյան Հրանտիկ
 Փոցուլուկի Լուսի – Աթանեսյան
 Փեչատ – Թեյան Ստեփան
 Փիս Մուխի – Մկրտչյան
 Փոլաթ – Մկրտչյան Սուրեն
 Փահլեվան – Շահբազյան Համբարձում
 Փահլեվան Մուխի – Աթանեսյան
 Քալբա – Ծապուլյան Պողոս
 Քըրժի Բեդի – Պողոսյան
 Քեռոլլի – Գյուրջյան Սերգեյ
 Քեշիշոլլի – Տերյան Արտեմ
 Քաչալ – Պողոսյան Պողոս
 Քյափուր – Բաղալյան Համբարձում
 Քիքոս – Մկրտչյան Գրիգոր

Մականուններով բանանցեցիների ցուցակ է կազմել նաև Գրիգոր Ղևոնդյանը (Ղվանդի Քոբոր): Այն այսպիսին է.

Ըոբսանանց Սաքի
 Աշրափ (հայտնի զուռնաչի, քամանչահար, դուդուկ և սրինգ նվագող)
 Բնչանց Անդրի
 Թնիսանց Մակիչ (Բորլին)
 Մալո՝ Վառունց Անդրանիկը
 Թումանյանասեր Ասրունց Համբարձի
 Բրնչանց Ալիքը
 Ըսկանապատից մեր գյուղը եկած Քաչալ Մուխտար
 Թմասի Վասի
 Մրտրոսի Ռուբեն
 Քիքունց Ավետիսը
 Մրզանց Հանես և Արտեմ
 Հուսի Մուխի
 Տվիթի Սաքի
 Էրզան Լևանի Սաշի
 Թմամի Մուրել
 Բբանց Բաբի
 Վիրաբի Սերգի
 Բբանց Ակուսի
 Զաուր
 Զղալի Մակիչ
 Քիքունց Նիկոլ
 Գուրջի Ռուբեն և Գուրջունց Մակիչ
 Ճնջրպահանց Ռաֆայել
 Դլլաքի Ալիքսան
 Հաթամ (Առաքելունց)
 Պղոսի Գոլի ու իրա տղա Վանիկ
 Բարատով
 Զլլադանց Ավագիմ
 Ղվանդանց Կուժի և Ղևոնդ

Թող ինձ ներեն իմ գյուղացիները, ում անունները չեմ գրել, էղբանը անհնար էր հիշել:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 1960-70-ԱԿԱՆ ԹԹ.:
ԱՐԾԻՎ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՎԵՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ
ԴՐԱ ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1960-ական թվականներից Բանանցից ևս սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով մարդիկ սկսել են արտագաղթել: Այն ավելի է ուժեղացել 1969 թ. հուլիսի 27-ի գիշերը տեղի ունեցած մի իրողության հետևանքով: Այդ օրը պետք է բացվեր Հայրենական պատերազմում զոհված ավելի քան 600 բանանցեցի զոհված զինվորների հիշատակը հավերժացնող «Արծիվ» հուշարձան-կոթողը (հեղինակ՝ Ռաֆայել Իսրայելյան, քանդակագործ՝ Արա Հարությունյան), որը գտնվում էր գյուղի դիմաց գտնվող «Դիմաց տեղ» կոչվող բարձունքի վրա: Հուշարձանը բաղկացած էր վեր հառնող սյունից և պատվանդանի վրա գտնվող արծվի արձանից, որի քաշը մոտ ութ տոննա էր: Սյունը խորհրդանշում էր վեր հառնող հայ ժողովուրդը, իսկ արծիվը՝ որ իրենց զավակները «արծվաբնից»՝ Բանանցից արծվի պես թռան ու հաղթանակ ապահովեցին: Սյան վրա գրված էին հայ պատմիչ Եղիշեի խոսքերը՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»: Նշենք, որ Բանանցից պատերազմին մասնակցել է 1200 մարդ, որից, ինչպես նշվեց, զոհվել է ավելի քան 600 զինվորագրված բանանցեցի:



Մեծ ոգևորությամբ դրվում է հուշարձանի հիմքը, 1968 թ.

Պահպանվել է հաջիկ Միքայելյանի ելույթի խոսքը հուշարձանի բացման ժամանակ: Ներկայացվում է ելույթի տեքստը քիչ կրճատումներով:

– Այսօր լրանում է գերմանական ֆաշիզմի ջախջախման սովետական բանակի հաղթանակի 26-րդ տարեդարձը: Թույլ տվեք այդ պատմական հաղթանակի առթիվ ողջունել ձեզ և ցանկանալ հաջողություններ աշխատանքում և ամենուր:

Աշխարհի պրոգրեսիվ մարդկությունը չի մոռանում այն օրը, երբ Գերմանիան ուխտադրուժ կերպով հարձակվեց Սովետական Միության վրա, չի մոռացվի

այն օրը, երբ ոմբակոծեց սովետական քաղաքները և բնաջնջեց սահմանամերձ քաղաքների և գյուղերի բնակչությանը:

Ընկերներ, 2-րդ համաշխարհային պատերազմի ընթացքում ոչնչացավ 50 միլիոն մարդ: Այդ հաղթանակը ձեռք բերվեց մեր հայրերի, եղբայրների և փեսացուների արյան գնով: Հայրենական պատերազմից հետո չվերադարձան մեր լավագույն պարտիական ընկերները: Մենք չենք մոռանում մեր խիզախ այն կոմերիտականներին, որոնք հերոսաբար ընկան պատերազմում: Մենք միշտ մեր հիշողության մեջ վառ կպահենք պատերազմում զոհված լավագույն կուտնտեսականներին:

շինարար Գևորգ Հարությունյանի,
 շարքային Արտեմ Հովսեփյանի,
 մաճկալ Մեխակ Շահմուրադյանի,
 բրիգադիր Հովհաննես Դանիելյանի,
 սայլապան Համբարձում Ավագյանի և Գուրգեն Սեյրանյանի,
 հնձվոր Համբարձում Աղիխանյանի,
 չարվադար Խաչատուր Բալյանի և մյուսների անթառամ հիշատակը:

Մեր հիշողության մեջ մինչև հիմա վառ է համալսարանավարտներ՝ Ստեփան Բալյանի, Հովհաննես Բաղալյանի, Արամայիս Ծապովյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Մակիչ Չոփոտյանի, Նիկոլայ Տոնյանի, Սիմոն Հարությունյանի, Մեխակ Աղիխանյանի անմոռաց հիշատակը:

Ընկերներ, թվարկել բոլոր զոհվածների անունները հնարավոր չէ, նրանց բուրբին հիշելու ու հարգելու համար խնդրում եմ ոտքի կանգնել և պահել մեկ րոպե լռություն: Անցել են տասնամյակներ, կանցնեն նաև դարեր, բայց Հայրենական պատերազմում զոհված մեր եղբայրների հիշատակը հավերժ կմնա հետագա սերնդի հիշողության մեջ: Փառք ու պատիվ Հայրենական պատերազմում զոհված մարտիկներին: Մենք երախտապարտ ենք նաև Հայրենական պատերազմի հաշմանդամներին, բոլորին:

ԿՈՐՉԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ԿԵՅՑԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ:

Սակայն երբ արդեն պատրաստ էր հուշարձանը, Բաքվից տրված հրահանգի համաձայն գիշերը այն քանդվում է թուրքերի կողմից պատճառաբանությամբ, որ այն հիշեցնում է գորավար Անդրանիկին, և որ գիշերը արծվի աչքերը լույս են արձակում: Հուշարձանի արծիվը կառուցված էր այնպես, որ «երբ նայում էիր նրան, նա էլ քեզ էր նայում, իսկ երբ հեռանում էիր, նայում էր հետևիցդ ու ճանապարհում», վկայում է հուշարձանի կառուցման հանձնաժողովի նախագահ Սերգեյ Տերյանը: Առավոտյան տազնապով արթնացած բանանցեցիները միայն հուշարձանի սյունն են տեսնում: Իսկ արծիվը չկար:

1969 թ. հուշարձանը աղբրեջանցիների կողմից քանդվելուց հետո Սերգեյ Տերյանը և Փառանձեմ Ավետիսյանը մեծ ջանքեր են գործադրել արձանը նույնությամբ վերականգնելու համար: Այդ նպատակով նրանք հանդիպումներ են

ունեցել ՀԿԿ առաջին քարտուղար Ա. Քոչինյանի, մարշալ Հ. Բաղրամյանի, անգամ Ադրբեջանի նոր նշանակված ղեկավար Հ. Ալիևի հետ, սակայն ոչինչ այլևս չի հաջողվում: Հ. Ալիևը նրանց հասկացնում է, որ Մոսկվան ավելի շատ ադրբեջանցիների կողմն է, քան հայերի: Ալիևը նաև նշում է, որ իրենց ժողովրդի մեջ տարածվել է այն կարծիքը, որ հուշարձանը Անդրանիկի սիմվոլն է, իսկ նա եղել է դաշնակցական և սովետական կառավարությունը նրան համարում է թշնամի: Հետևաբար արձանը հնարավոր չէ նույնությամբ վերականգնել, քանի որ «մի օր, մի ադրբեջանցի գաղտնի կպայթեցնի արձանը, որի հետևանքով կխախտվի ԽՍՀՄ-ի ազգային քաղաքականությունը: Դրա համար Մոսկվան չի ների մեզ» – եզրափակում է Հ. Ալիևը (Ս. Տերյանի հուշերից): «Արծիվ» հուշարձանի փոխարեն դրվում է խորհրդային ոգով կառուցված դրոշներով մի արձան, որը չի ընդունվում բանանցեցիների կողմից: Նշենք, որ երկար դադարից հետո սա առաջին հայ-թուրքական առճակատումն էր:

Ինչպես տեսնում ենք, Բանանցը թուրքերի ու Բաքվի դեմ պայքարում մնաց մենակ: Օգնություն չստանալով ո՛չ Երևանից, ո՛չ Մոսկվայից, ժողովուրդը բարոյապես ու հոգեպես ընկճվեց: Իսկ դա ունեցավ իր բացասական հետևանքները: Գյուղը աստիճանաբար սկսեց դատարկվել:



Հուշարձանի նախագիծը



Կառուցված հուշարձանը



Սևազգեստ այրի կանայք ավերված հուշարձանի մոտ

«Արծիվ» հուշարձանի ավերումը խոր, անասելի ցավ է պատճառել բանանցեցիներին, որոնք իրենց վիշտն արտահայտել են բանաստեղծություններով ու հոդվածներով: Ներկայացնում ենք այդ թեմայով գրված մի քանի գործ:

Հուշարձանը

Բանանցեցիները սիրում էին պատմություններ պատմել Անդրանիկի ու նրա զինակիցների քաջագործություններից՝ հատկապես բանանցեցի գնդապետ Եգորի, նրա զինվորների ու թուրքական՝ պոչը կտրած ցեղական նծույգի մասին⁵³: Սկզբում պատմում էին թաքուն ու վախվորած, հետո կամաց-կամաց՝ համարձակ ու բարձրաձայն՝ անթաքույց հպարտանալով ազգային հերոսներով: Մի օր էլ՝ քաղաքական ջերմացումի տարիներին, հավաքվում են ու որոշում գյուղովի մի հուշարձան կանգնեցնել՝ բոլոր հին ու նոր հերոսների պատվին: Գյուղը հանգանակություն է անում, քար են գնում, վարպետ կանչում, ճարտարապետ ու քանդակագործ ու... Երկար քննարկում են, թե ինչպես իրականացնեն իրենց մտահղացումը: Ոմանք առաջարկում են կերտել Անդրանիկի արձանը, ավելի իրատեսները զգուշավոր դեմ են կանգնում. «Թույլատրություն չեն տա, հազար ու մի թուղթ է պետք, չեն տա. ավելի լավ է՝ Հայրենականի հերոսներից մեկի արձանը կանգնեցնել». ու թվարկում են անուն առ անուն... Վերջապես որոշում են քարե արծիվ կանգնեցնել՝ բազալտե պատվանդանին՝ գյուղի ծայրով անցնող մայրուղու եզրին: Այստեղ՝ գետի հանդիպակաց ափին՝ դպրոցի մոտ, մի երկու տասնյակ տնտեսություն կար՝ այգիների խորքում՝ կանաչի մեջ թաղված տներով: Նրանք էլ հենց պիտի խնամեին ու հսկեին հուշարձանը:

Բացմանը նույնիսկ Երևանից ու Բաքվից են հյուրեր լինում: Ճառեր ու կոչեր են հնչում, զուռնա-դիուլով երգ ու պար է լինում, մի մեծ ուրախություն: Երբ ճերմակ սավանը ցած է սահում, հայտնվում է հսկա արծիվը. թևերը հովանու պես տարածած՝ թռիչքի էր պատրաստվում ու հարմար պահի էր սպասում՝ այդպես քարացած, իսկ հայացքը ներքևում տարածված գյուղի վրա էր: Պատվանդանին եղիչեի անմահ խոսքերն էին. «Մահ ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն»: Արծվի թիկունքում երկինք էր մխրճվում քարե սյունը, իսկ ոտքերի տակ աղբյուր էր, ջուր էր բխում, լեռնային սառնորակ ջուր:

Շյուրերը հեռանում են, գյուղը մնում է՝ ինքն իրենով հիացած ու իր նվաճումից գոհ: Բայց «Հուշարձանն» այդպես էլ չի հասցնում առօրյա հոգսերի մեջ մի պահ մոռանալու չափ սովորական դառնալ: Այն հատուկ ճակատագիր պիտի ունենար՝ ուրիշ հուշարձանների ճակատագրից տարբեր. «Հուշարձան» բառը խորհրդանիշ պիտի դառնար բանանցեցիների մի քանի սերունդների համար ու խորհրդանշեր մի բան, որի մասին «փախի-փախ»-ի տարիներից հետո, երբ հայկական հարյուրավոր բնակավայրերի հետ միասին մի օր արթնացան Ադրբեջանական կոչվող ԽՍՀ կազմում, կամա, թե ակամա, լռում էին՝ երկու բառով ասած՝ «մի կերպ համատեղված անհամատեղելիության»: Դրա զգացողությունը տարիներով խմորվում էր հոգիների խորքում, որ մի օր դուրս հորդեր՝ որպես բողոքի հեղեղ, ու իր ճամփին քշեր տաներ հոգու թռիչքի առաջն առնող բոլոր պատնեշները, մտքի թևերը կտրող բոլոր պայմանականությունները:

⁵³ Հոդվածի հեղինակ՝ Վարդուհի Բաղայան, 29 մայիսի, 2015 թ.:

Մի առավոտ Բանանցն արթնանում է խոլ աղմուկից, որի միջից, հարայից ու հասեքից բացի, մի բառ էր պարզորոշ լսվում՝ քանդել են: Գյուղը վազում է՝ Վերի թաղից մի շնչում հասնում Դիմաց տեղ, ու տեսնում բազալտե արծիվը՝ երկու կես եղած, պատվանդանից հեռու ընկած: Տղամարդիկ կատաղած գոռոռում են, կանայք իրենց հնարավոր ու անհնար վարկածներն ու գիշերվա երազն են պատմում, երեխաները, աղմուկ-աղաղակից վախեցած, սկսում են լաց լինել, մինչև շրջկենտրոնից ժամանում է թուրք ոստիկանապետը ու հանդարտեցնում բոլորին:

– Ինչ է պատահել, այ ժողովուրդ, ինչի եք կանչել, մարդ են սպանել, թե՛ խանութ են կտրել... – չքմեղանում է նա: Հետո, երբ կոլխոզի այգիներում գառան խորոված է ուտում ու գինի խմում, մի կողմ է քաշում գյուղխորհրդի նախագահին և գինու տակառը մեքենայի մեջ տեղավորելով ու հին բարեկամի սրտացավությամբ խոսքերին մի առանձին խորհրդավորություն տալով՝ կիսաթուրքերեն-կիսառուսերեն շնչում:

– Բա էդպես բան կանեն, բերել եք ազգային հերոսների արձան եք կանգնեցրել ճամփի վրա՝ գնացող-եկողի աչքի առաջ, ասում եք՝ Հայաստան, Անդրանիկ...

– Ինչ Անդրանիկ, մենք արծվի արձան ենք կանգնեցրել՝ պատերազմում զոհված մեր համագյուղացիների հիշատակին, – կիսահայերեն-կիսառուսերեն արդարանում է գյուղխորհրդի նախագահ Թյունին:

– Ո՞վ չգիտի, որ դուք արծիվ ասելիս Անդրանիկ եք հասկանում, – սրամտում է ոստիկանը: – Իսկ ճիշտ է, որ էդ արծիվը գիշերները կենդանանում էր, պատվանդանից իջնում ու Անդրանիկի կերպարանքով շրջում էր գյուղերում, – լուրջ-լուրջ հարցնում է նա:

Նախագահ Հարությունը ապշած նրան է նայում: Ոստիկանը ժպտում է:

– Ես կոմունիստ մարդ եմ, բայց որ կոմունիստ չլինեի, ես էլ կհավատայի, – հեգնախառն շարունակում է նա. – ասում են՝ տեսնող է եղել, վկաներ կան:

Օրեր անց, երբ ոստիկանը «Հուշարձանի» գործով նորից գյուղ է գալիս, պատմում է, թե, իբր, մոտակա ադրբեջանական գյուղի մի բնակիչ մի երեկո շրջկենտրոնից իրենց գյուղ վերադառնալիս հեռվից տեսել է, թե արծվի աչքերն ինչպես են բոցավառվել կապույտ լույսով, ու նա, ցած թռչելով պատվանդանից, մարդկային կերպարանք է առել: Խեղճ մարդը լեղապատառ իրենց գյուղ է հասել ու պատմել եղելությունը: Իբր՝ նրանք կռունկ են վարձել, գիշերհանա (լույսը չբացված) եկել, որ արծիվը ցած բերեն, բայց պարանը չի դիմացել հսկա քանդակի ծանրությանը, կտրվել է... Թե որ գյուղից է եղել գյուղացին, ու որտեղից այդ տասը-քսան տուն ունեցող գյուղականներից որևէ մեկին վերամբարձ կռունկ, այդպես էլ գաղտնիք է մնում Բանանցի համար: Բայց նա գերադասում է անտեղի հարցեր չտալ. թուրքական ձեռագիրն էլ էր ծանոթ, իշխանություն ներկայացնող ոստիկանի անթաքույց հեգնանքն էլ. միայն պահանջում է, որ արձանը վերականգնեն, թե չէ գործը կհասնի Մոսկվա. Մեծ հայրենականի զոհերի հուշարձան է անարգվել: Գյուղի իշխանությունն ու մտավորականությունը գործի են դնում բոլոր օրինական

ու ապօրինի միջոցները... Բողոքի նամակները Մոսկվայից հետ են ուղարկվում Բաքու՝ իբր հարցն իրենց գործառույթից դուրս է, իսկ Բաքուն...

– Բաքուն՝ ինչ, – ձեռքները հուսահատ տարածում են գյուղացիները, – գելը հոտին դատավոր են կարգել:

Հայ գործիչները կամաց-կամաց հեռացվել էին կարևոր պաշտոններից, կամ էլ, որ ավելի վատ էր, ծագումով էին միայն հայ մնացել. ոմանք ոչ միայն թուրքական՝ գաղտնի ու բացահայտ տարվող հայահալած քաղաքականության գործիք էին դարձել, այլև նույնիսկ ազգանուն էին փոխել՝ դարձել Կետրքով ու չգիտեմ՝ էլ ինչով: «Հուշարձանն» այնուամենայնիվ վերականգնում են: Բացմանը նորից կարևոր մարդիկ են գալիս, նոր ճառեր են հնչում՝ հերոսների ու հաղթանակների, հավասարության ու եղբայրության մասին՝ այս անգամ թուրքերեն: Գյուղացիները հավաքվում են՝ աշխատանքից, աշխօրից, խոտհարքից ու հանդից զրկվելու տխուր հեռանկարից մտահոգ. գյուղը հազար ու մի թելով կապված ու կախված էր իշխանությունից, ու պարանի օղակը սպառնալի կերպով ձգվում էր. ուզած-չուզած ծափահարում են ու իրար բոթում՝ թե էդ ինչ են ասում:

«Ասում են՝ ձերն էս է, դուք աշխատավոր ժողովուրդ եք. ինչ արծիվ, ինչ բան», – «թարգմանում են» քիչ թե շատ հասկացողները: Պատվանդանը բարձր էր, ու «ակնարկը» հեռվից էլ պարզորոշ երևում էր: Վերևում արծվի փոխարեն ծվարել էին մի խեղճ ու կրակ մուրճ ու մի մանգաղ՝ հավասարության ու եղբայրության սովետների խորհրդանիշը: Իսկ պատվանդանից քիչ այն կողմ շարունակում էր ընկած մնալ թևերից մեկը հիմքից կտորված վիրավոր արծիվը:

Ամեն անգամ նորոգված հուշարձանը տեսնելիս, չգիտես ինչու, հիշում էի՝ ոնց է պապս հատակ սարքելիս մուրճով մեկ-մեկ խփում այն մեխերի գլուխներին, որ տախտակից բարձր են մնացած լինում, որպեսզի ոանդայի սայրը չջարդվի հարթեցնելիս, ու մեկ էլ հիշում էի, թե ցորենը մանգաղով քաղելիս խոզանն ինչ հավասար է: Մուրճ ու մանգաղ բոլորն էլ ունեին: Պապիս դազգահի վերևում դրանցից մի քանի հատ կախված էր պատից: Իսկ արծիվ հազվադեպ էր պատահում Բանանցա երկնքում: Մենք, իրար ձայն տալով, դուրս էինք վազում տներից ու երկար դիտում էինք նրա ճախրանքը՝ հիացմունքով ու ակնածանքով, որովհետև տատա ասում էր, թե արծիվը ճուտ չի տանում, արծիվը ուրուր չէ: Արծիվը հետո տարան գյուղի քարհատները, իսկ մուրճ ու մանգաղն այդպես էլ մնաց պատվանդանին, մինչև այն օրը, երբ հուշարձանի հրապարակից վերջին բանանցեցին հեռացավ հարազատ գյուղից: Այդ օրը նրանք՝ Ադրբեջանի թուրք իշխանությունները, խնամքով նախապատրաստվում էին տասնյակ տարիներ՝ թաքուն խնդմնդալով ու ձեռքները շփելով: Բայց ուրբաթն ավելի շուտ պիտի գար, քան շաբաթը...:

Նվեր Հուշարձանին

Հազար ինը հարյուր քառասունմեկին, Հայրենական Մեծ կռվով,
Կովի մտան թշնամու դեմ քաջ զավակներ հուր սրով,
Արյուն թափիք դուք մեզ համար, ազատ կյանքի այս օրվա,
Խաղաղ կյանքի, փառք ու պատվի, ապագա երջանկության:

Կրկներգ

Մայրս լացով ասավ, քոռանամ ես,
Հազար բերնից նույնը լավեց, ախր ո՞նց մոռանանք ձեզ:
Գերմանացիք դաժան էին, չէին խնայում ոչ ոքի,
Ոչ մինումար մոր բալիկին, ոչ մոր գրկած մանուկին,
Ավերեցին խաղաղ աշխարհի, եկան հասան մինչ Մոսկվա,
Թեժ մարտի մեջ ես էլ ընկա, արնաշաղախ կծկվա:
Ֆաշիստներին հետ նետեցիք, ազատեցիք մեր սահման,
Եվ Բեռլինում դրոշ դրիք, ուրախացանք անսահման,
Ամեն տեղից Բանանցեցիք, միահամուտ, միաձայն,
Դիմաց տեղում, Ձեր Մեծ պատվին, կառուցեցին Հուշարձան:
Արծվի պես ոնց կովել եք, ամեն դաժան մարտերում,
Արծիվ դրիք հպարտ, կանգուն, կարոտ իղձը աչքերում,
Պիղծ թշնամիք քանդին տարան, ժողովուրդը խոր քնում,
Չի մոռացվի դա հավիտյան, կմնա մեր սրտերում:
Ձեզ գովք գրեմ քաջ ու արծիվ Բանանց գյուղի զավակներ,
Այս իմ երգը Ձեզ համար է, հուշարձանին միշտ նվեր,
Ես գուսանս Բանանցեցի, **Գրիգորս Ղևոնդյան:**
Արտասվում եմ ու լացեցի, կհիշեմ քեզ հավիտյան:

1970 թ.

ՇԵՐՈՍԱԿԱՆ ԲԱՆԱՆՑԻ ԱԿԵԼԻ ՔԱՆ 100-ԱՄՅԱ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԴԵՍ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԲԱՆԱՆՑՈՒՄ 1918 Թ.

1980-ական թվականների վերջերին թուլացած Բանանցը, ինչպես նաև ողջ զարդմանահայությունը թողնվում են բախտի քմահաճույքին: Մինչդեռ 1905-1906 թվականների հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Բանանցի տղամարդիկ կարողացել են զինվել ու պաշտպանել գյուղը: Գյուղը պաշտպանվել է նաև 1918-1920 թթ.: Բանանցի և Գարդմանի շատ գյուղերի պաշտպանությունը գրագետ ձևով կազմակերպել է ցարական բանակի սպա, Բանանցի նշանավոր գերդաստաններից մեկի զավակ Եգոր Տեր-Ավետիքյանը:



Եգոր Տեր-Ավետիքյան (1873-1968)

Եգոր Տեր-Ավետիքյանը ծնվել է Բանանցում, գյուղի հայտնի Տեր-Ավետիքյան տոհմի՝ Խաչատուր Տեր-Ավետիքյանի ընտանիքում:

Սովորել է Բանանցի տարրական, այնուհետև Խաչակապի ծխական դպրոցում: Հոր մահվանից հետո հորեղբայրների օժանդակությամբ ուսումը շարունակել է Ելիզավետպոլի ռուսական ուսումնարանում, ապա՝ Պյատիգորսկի միջնակարգ դպրոցում: Շարունակելով ուսումը Եգորը ընդունվել է Թիֆլիսի ռազմական ուսումնարան, որն ավարտելով, 1899 թ. ստացել է ցարական բանակի սպայի կոչում: Մասնակցել է 1904 թ. ռուս-ճապոնական պատերազմին (Մուկդենի ճակատամարտին), վիրավորվել է, պարգևատրվել շքանշաններով ու անվանական Ոսկե սրով: Արժանացել է նաև գնդապետի կոչման: Պատերազմից հետո մեկնել է Ժնև և նոր մասնագիտություն ձեռք բերել (իրավաբան կամ լեռնային ինժեներ): 1908 թ. այդտեղ հանդիպում է Դրոյին:

1914 թ. սկսվում է 1-ին համաշխարհային պատերազմը, որի ժամանակ վտանգի մեջ է հայտնվում հայ բնակչությունը: 1915 թ. Եգորը Համազասպի 3-րդ գնդի հրամանատարական կազմում, որպես շտաբս կապիտան մեկնել է Արևմտյան Հայաստան, կռիվներով հասել Վան ու Ոստան, մասնակցել Վասպուրականի

կոիվներին: 1918–20 թթ. վտանգի մեջ է հայտնվում նաև Գարդմանի հայ բնակչությունը: Եգորը վերադառնում է հայրենի գյուղ և ձեռնամուխ լինում տարածաշրջանի հայկական գյուղերի պաշտպանության կազմակերպմանը: Նրա հսկողության ու պաշտպանության տակ էին Բանանց, Մուռուտ, Ոսկանապատ, Միրզիկ, Բրաջուր, Ներքին Քարհատ, Վերին Քարհատ, Կիրանց, Խաչակապ, Փիփ, Հարցհանգիստ (Չովդառ), Ղոթուլ, ինչպես նաև Շամխորի շրջանի 12 հայկական գյուղեր (Չարդախլու, Ջագիր...): Խաչակապի և Կիրանցի մարտիկներին տեղավորում է Միրզիկ գյուղի դպրոցում⁵⁴: Նրանց հանձնարարված էր Միրզիկից մինչև Ոսկանապատ գյուղի պաշտպանությունը: Նրանք նաև պետք է թույլ չտային, որ կապ լինի հարթավայրի և սարի թուրքերի միջև: Բանանցեցիները, շուրջ 230 հոգի Եգորի գլխավորությամբ, զբաղեցրել էին Բրաջուրից մինչև Ներքին հանդի Մեծ ու Փոքր Թավրեն ընկած տեղամասը: Ամեն տեղ նշանակվեցին պահակներ: Եգորի հրամանով ամեն սարի ու բարձունքի վրա սայլեր էին կանգնեցրել տիշիթը վեր ցցած, ծածկել կարպետով, որ թշնամին կարծի, թե դրանք քողարկված հրանոթներ են: Դա ունեցել է իր նշանակությունը: 1918–1920 թթ. Գարդմանի հայությունը փրկվում է կոտորածից ու ոչնչացումից, չարժանանալով 1918 թ. ոչնչացված Նուխի գավառի հայության ճակատագրին: Տուժում է միայն Սուլուք գյուղը, որի բնակիչներին դաժանաբար սպանում են: Եգորը օգնության է հասնում, բայց ուշ է լինում:



Գնդապետ Եգոր Տեր-Ավետիսյանը (կենտրոնում) իր զինյալներով 3-րդ շարքում ձախից 3-րդը՝ Սահակյան Մուխի, 5-րդը բանանցեցի հարյուրապետ Մարտիրոս Հակոբի Բարսեղյան: 2-րդ շարքում 3-րդը՝ Գևորգյան Համբարձում (Տյուտյու): 1-ին շարքում 2-րդը Վարդանյան Հովհաննես (Գյունաշ օղի), Բրաջուրից, 4-րդը՝ Եգոր Տեր-Ավետիսյան: Ներքևի կիսապատկածներից՝ աջից Գրիգոր Օհանյանն է (Թաթթուլի): Էջմիածին, 1916 թ.:

⁵⁴ Ներկայացվում է 1902 թ. ծնված Մելիքյան Մակիչի (Բուդի) հուշերը, որոնք գրի է առել Մ.Չալումյանը:

Գյուղերի բնակչությունը օգնում է կոլոդներին ինչով կարող էր: Հասցնում են սնունդ, հագուստ և այլ անհրաժեշտ իրեր: Կանայք ու աղջիկները գործում են տաք գուլպաներ, տղամարդիկ՝ տրեխներ և ուղարկում դիրքերը:

Թուրքերը փորձում են խորամանկությամբ հասնել հաջողության: Մի օր թուրքերի կողմից մի քանի ձիավոր դեսպան է գալիս Բրաջուր, որտեղ գտնվում էր Գլխավոր շտաբը: Եգորը ընդունում է նրանց և հարցնում գալու նպատակը: Նրանք խնդրում են Եգորին, որ Նովդանի աղբյուրի ճամփով մի փոքր քարավան հացահատիկ տանեն սարի թուրքերին, որ սովից չմեռնեն: Եգորը թույլատրում է, պայմանավորվելով օրն ու ժամը: Դեսպանների ձի հեծնելու պահին, նրանցից մեկը՝ Իմամ Ղուլին, որի մայրը հայ էր, հասցնում է Եգորի ականջին հայերեն ասել. – «ասեղ են տանում»: Եգորը հասկանում է ականարկը, որ խոսքը գենքի մասին է: Պայմանավորված օրը մերոնք նկատում են, որ մի քարավան է գալիս, սայլեր, մոտ 300 եզ ու 300 ձի բարձված պարկերով ու 2000 զինվոր: Եգորը հրամայում է կրակ չբացեն, մինչև չհասնեն Նովդանը, որտեղ ճանապարհի աջ ու ձախ կողմերը զբաղեցրել էին հայ զինվորները: Թուրքերի Նովդան հասնելուն պես հայերը կտրում են նրանց հետդարձի ճանապարհը և բոլորին կոտորում: Ջավթված քարավանում կար ցորեն, կորեկ և պահված գենք ու զինամթերք: Այդ պաշարը մերոնց հերիքեց մեկ ամիս:

Մի կերպ դիմանալով սովին ու ցրտին, ժողովուրդը կարողացավ հասնել 1920թ.: Նույն թվի մայիսին ռուսական կարմիր բանակը հարձակվեց Բաղմանլարի վրա, որտեղ դիրքավորվել էին դենիկինցիները և մուսավթականները: Կռիվը տևեց 6 օր: Բուլնիկները հաղթեցին, իսկ այնուհետև շարժվեցին դեպի հայկական գյուղեր: 1920 թ. մայիսի 28-ին նրանք մտան Բանանց: Բոլորած ջրի թաղակապ կամուրջի վրա Եգորը արտասովորից աչքերով, աղ ու հացով ընդունեց կարմիր բանակի հրամանատարին: Սակայն Եգորը հասկանում է, որ իր դեմ մուսավթականներից հետո թշնամաբար են տրամադրված նաև բուլնիկները և որոշում է հեռանալ հարազատ գյուղից: Նույն գիշերը համապոլազիներ Գևորգյան Համբարձումը (Տյուտուլ) և Միրզանց Հանեսը նրան ուղեկցում են մինչև Սյունիք: Սյունիքում ևս Եգորը մասնակցում է Ջանգեզուրի ինքնապաշտպանական կոիվների, իսկ այնտեղ կարմիրների հաստատվելուց հետո անցնում է Պարսկաստան և հաստատվում Թավրիզում, որտեղ նա զբաղվում է հասարակական, քաղաքական գործունեությամբ, ինչպես նաև մանկավարժական աշխատանքով՝ դասավանդելով ֆրանսերեն:

Այդ կոիվների մասին բանանցեցիները շատ հուշեր ու երգեր են պահպանել: Ներկայացնենք Գրիգորյան (Քիքունց) Թագուհու (աչքով տվող) կողմից պահպանված մի երգ.

*Խաչի սեռիցը արևը բարձրացավ,
Բանանցա գորքը Բրաջուրն անցկացավ,
Եգորի խումբը Թավրեն բարձրացավ,
Իսկույն Գրիգորի հրացան բացվեցավ,*

*Արշավենք եղբայր, մտնենք Բաղմանլար,
Ջարդենք թուրքերին, փրկենք հայերին,
Նայթընում խեղճ Աթանեսյանցը միևնույն
Խփվելուն պես էլ փոխվեցավ գույնը:*

Իրանում ապաստանած Եգոր Տեր-Ավետիքյանը ավելի ուշ գրած նամակներից մեկում իր ուրախությունն էր հայտնել, որ Բանանցը մնաց հայկական ու չհայաթափվեց: Այսօր ցավով փաստում ենք, որ Բանանցը Գարդմանի այլ հայկական գյուղերի նման գրկվել է իր բնիկ հայ բնակիչներից: Մեծ հայրենասեր Եգոր Տեր-Ավետիքյանը մահացել է 1968 թ. և թաղվել Թեհրանի հայկական գերեզմանատանը:

Ներկայացնում ենք Կուշչի գյուղի բնակիչ Ավագ Ղազարի Պռագյանի հուշերը Եգոր Տեր-Ավետիքյանի և մյուս հայորդիների՝ Գանձակի տարածաշրջանի ինքնապաշտպանության կազմակերպման մասին մի դրվագ:

**Դաշքեսանի (Քարհատի) ինքնապաշտպանությունը, 1920 թ.
(հարված Ավագ Պռագյանի հուշերից, 1970 թ.)**

...1920 թվի մարտ ամսում մեզ մոտ, Կուշչի գյուղն եկավ մեր Դաշքեսանի շրջանի Բանանց գյուղացի, Դաշնակցական կուսակցության խմբի ղեկավար Եգոր Ավետիքյանը⁵⁵: Նա շատ կուլտուրական մարդ էր...

Երբ նա եկավ Կուշչի գյուղը, շրջանի կենտրոնական գյուղը, այդտեղ հավաքվեցին շրջակա գյուղերից՝ Ջազիկից, Բանանցից, Չովդարից, Կիրանցից, Քարհատից շատ ներկայացուցիչներ: Մի շատ լավ արև օր էր, երկնականարը լրիվ պարզ, օրը տաք: Բազմամարդ ժողովուրդ հավաքվեց գյուղի եկեղեցու պատի տակ: Ժողովը Եգորի կարգադրությամբ գումարվեց բացօթյա:

Մեր Կուշչի գյուղից մեծամարդիկ ամբողջովին հավաքվել էին: Եկեղեցու պատերի շուրջը կանգնելու տեղ չկար: Մեկը մյուսին հրելով բարձրանում էին քարերի, պատերի վերև, որպեսզի այնտեղից նայեին դաշնակների բյուրոյի կազմին, նրա անդամներին, որոնք նստած էին պատի տակ դրված մեծ սեղանի շուրջը՝ աթոռների վրա: Դաշնակներից այդտեղ էին՝ Եգոր Ավետիքյանը (Բանանց գյուղից), Ավետիս Թավաքալյանը (Ջազիկ գյուղից), Ավետիս Բոյախյանը (Վ. Քարհատ գյուղից), Գրիգոր Կարապետի Եղիազարյանը, Մաթևոս Արարատյանը (Կուշչի գյուղից): Եգորը, հավաքը նա էր կազմակերպել և ժողովին ղեկավարում էր, հավաքվածներին ուշադրության հրավիրեց և սկսեց իր հրապուրիչ ճառը: Հավաքված 300-400 մարդիկ մի պահ քարացան: Ժողովականների կողմից ոչ մի ձայն, ոչ շշուկ չէր լսվում, բոլորն էլ աչքները հառած նայում էին ճառասուսին, որը ճգնում էր իր բառերով ոտքի կանգնեցնել շրջանի գյուղերի բոլոր գյուղացիներին մուսավաթական թուրքերի դեմ: Նա ասաց, «Ես ստույգ տեղեկություններ եմ ստացել Գյանջայի (այժմ Կիրովաբադ) Դաշ-

նակցական կուսակցության կողմից, որ քաղաքի թուրքերը, որտեղ հավաքվել էին նաև տափաստանային շրջաններից, մեծ բազմությամբ, մուսավաթների անմիջական ղեկավարությամբ, այս գարնանը, ճիշտ ժամկետը հայտնի չէ, հարձակվելու են մեր լեռնային հայ գյուղերի վրա: Նրանք իրենց ձեռքի տակ ունեն և՛ թնդանոթներ, և՛ գնդացիներ: Նրանց զորքը մինչ ատամները զինված է: Սակայն մեզ հարկավոր չէ դրանից վախենալ, միայն հարկավոր է շատ զգույշ լինել: Ձենք բռնող մարդիկ, այսինքն՝ ով զենք ունի (հրացան), տնից դուրս գա: Մենք պետք է միացյալ ուժերով դուրս գանք պաշտպանվելու համար, մեր գյուղերը վտանգից փրկելու համար: Մեր գյուղարանքներում գտնվող բոլոր հրացանները, փամփուշտները պետք է երևան հանենք: Ում տան զենք բռնող չկա, բայց զենք ունի, պետք է նրանից վերցնենք այդ զենքը, տանք այն մարդուն, որը զենք չունի, բայց կարող է հրացան բռնել և կռվել: Մենք մի ընդհանուր ռազմաճակատ ենք կազմելու, որը լինելու է մեր շրջանի Ջուռնաբադ գյուղի տակ, մեծ ճանապարհից մինչև Բրաջյուր գյուղի տակի Գյանջա գնացող մեծ ճանապարհը: Մեր զորքերի շտաբը նստելու է Բրաջյուր գյուղում: Հրամանատարական կազմի մի մասը կլինի Միրզիկ գյուղի դպրոցի շենքում: Ջազիկ գյուղից ոչ մի մարդ չպետք է լինի նշված ռազմաճակատում: Ջազիկի ռազմիկները Ա. Թավաքալյանի ղեկավարությամբ կպաշտպանեն Ջազիկ գյուղից դեպի լեռնային կողմերի թուրքերի սահմանները, իրենց գյուղի սահմանները: Վ. Քարհատ գյուղի բոլոր զենքի տակ գտնվողները կպաշտպանեն իրենց գյուղի սահմանները (նրանց կղեկավարի Ա. Բոյախյանը) խիստ ու սերտ կապ պաշտպանելով Ջազիկի սահմանի սահմանապահների հետ, Ա. Թավաքալյանի ցուցումներով: Չովդառ գյուղի զինվորներն էլ Ավետ Դալլաքյանի ղեկավարությամբ կպաշտպանեն Չովդառի սահմանները տափաստանային թուրքերի հարձակումից: Վերևում նշված գլխավոր ռազմաճակատում պետք է ներկայանան՝ Բանանցի, Կուշչի, Կիրանցի, Միրզիկի, Ջուռնաբադի, Բրաջյուր գյուղի բոլոր տղամարդիկ, որոնք զենքի տակ են: Այս գյուղերի զինվորներին, նշված ռազմաճակատ ուղարկելու համար, պարտավորեցվում է Գրիգոր Եղիազարյանին՝ հայտնել այս գյուղերի բոլոր գյուղացիներին որպեսզի ռազմաճակատի զինվորների համար չխնայեն ուղարկելու ունեցած հացը, կարտոֆիլը կամ այլ ուտելիքը»:

Այս հավաքը վերջացավ ուշ գիշեր, ճրագավառոցին: Ժողովականները տխուրտրտում, սգվորի պես, իրար ականջի շնչալով՝ «Ախ, Աստված, այս ինչ պիտի անենք, տներում գոնե հաց էլ չկա, որ հետներս վերցնենք: Ինչ արած, պիտի ենթարկվենք»: Գ. Եղիազարյանի հրամանով բոլորը ցրվեցին իրենց տները, որպեսզի երեք օրից հետո, շարք կազմած ճանապարհվեն նշանակված ռազմաճակատը: Շատ արագ կերպով անցավ այդ երեք օրը: Մարդկանց տխրությունը սաստկանում էր: Վերջապես եկավ ճանապարհվելու ժամը: Բոլոր գնացողները արագ հավաքվեցին գյուղամեջ, եկեղեցու պատի տակ, նրա շուրջը: Հրամանատարության կողմից նշանակված հավաքված տղաներին և հասակավոր մարդկանց, որոնք զենքի տակ էին, հրացան ունեին, բաժանեցին

⁵⁵ ՀԱԱ Հնագ. և ազգագր. ինստ., բանահյուս. արխիվ, FF IV: 4813: Հրատ. «Ուրբաթ» թերթում, 6 օգոստոսի, 1993:

տասնյակների, բոլոր գնացողները իմացան իրենց տեղերը: Հրաման տրվեց, որպեսզի յուրաքանչյուրը գնա, իրենց տնից վերցնի ունեցած ուտելիքը՝ հաց, կարտոֆիլ և այլն: Տնից վերցնի նաև փափուկ հագուստ, ափսե, ջուր և թեյ խմելու աման, գդալ և կես ժամից հետո պատրաստ լինի իր տեղը՝ տասնապետի ցույց տված տեղը: Զինվորները բոլորը ցրվեցին և որոշված ժամին կանգնեցին իրենց տեղերը: Նրանք վերցրել էին այն ամենը, ինչ պատվիրված էր: Մեկը ներկայացավ մի քանի հատ հաց շալակին, մյուսը՝ մի կտոր հաց, այնպիսի մարդ էլ կար, որ ոչ մի կտոր հաց չէր բերել, որտեղից բերեր խեղճ ու կրակը. եթե տանը հացի կտոր չկար: Շարասյունը կազմված էր ութ տասնյակից: Եկավ ճանապարհվելու ռուպեն: Բոլոր գնացողների հարազատները հավաքվել էին այդտեղ. մեկի հայրը, մյուսի մայրը, եղբայրները, քույրերը, երրորդի երեխաները, երիտասարդներ, ծերեր, բոլորն էլ շրջապատել էին ռազմաճակատ գնացողներին՝ նրանց հրաժեշտ տալու համար: Նրանց բոլորի աչքերից արցունքների հեղեղ էր թափվում: Նրանց ապրումները, հուզումները, նրանց դեմքերի տխրալից արտահայտությունները մարդկանց սրտեր էին ճնլեցնում: Յուրաքանչյուրի բերանից լսվում էր ախ բառը: Բոլորն էլ անիծում էին ժամանակի դրությունը, նման պայմաններ ստեղծողին: Ընդհանուր հրամանատար Գ. Եղիազարյանը հրամանատարությունը հանձնեց Վաղարշ (՝) Մելիքյանին, որը դրանց պետք է շարքով տաներ հասցներ Միրզիկ գյուղը: Նրանք բոլորն առավոտյան ժամը 9-ից գյուղից շարժվեցին շարասյուն կազմած: Ռազմաճակատ գնացողների հավաքված հարազատները նրանց հետևից գնացին ճանապարհելու մինչև այն ժամանակ, երբ հրաման տրվեց հետ դառնալ: Այդ պահին ժողովրդի լացի ընթացքն ավելի ուժեղացավ, վերածվեց ժվվոցի, հարայ-հրոցի: Ամեն մեկը մտածում էր իր մտերիմի ու հարազատի մասին: Ո՞վ է իմանում աշխարհի բանը, գուցե գնացին ու էլ հետ չդարձան: ԶԷ որ ամեն մեկի հարազատը կռիվ էր գնում, գնդակի առաջ էր գնում: Կովից, պատերազմից երբեք լավ բան սպասել չի լինի, բացի մարդասպանությունից և ավերածությունից: Երեկոյան մթնաշաղին Կուչչու ռազմական խումբը հասավ Միրզիկ գյուղը: Այդ գյուղացի մի քանի մարդկանց միջոցով, որոնց նախօրոք պատվիրված էր, ռազմական խումբը տեղավորվեց գյուղից ներքև գտնվող դարոցի շենքում, ինչպես Եգորն էր հրամայել: Դարոցի շենքը դարձավ զորանոց: Նրա կողքին հրամանատարական կազմի համար մի հատ սենյակ հատկացվեց, որտեղ գիշեր ու ցերեկ բնակվում էր այդտեղի հրամանատար Գ. Եղիազարյանը: Նա երբեմն խորհրդակցության էր հրավիրում ենթահրամակազմին, տասնապետներին և դասակի հրամատարներին: Միրզիկ գյուղացի զինվորներն ապրում էին իրենց սեփական տներում, սակայն ընդհանուր հրամանատարության տակ: Այս նույն ձևով էր դասավորված նաև Բրաջյուր գյուղի զորախումբը: Այնտեղ բոլոր 230 հոգի զինվորները Բանանցի գյուղացիներ էին Եգոր Ավետիքյանի հրամանի տակ: Զուտնաբաղի զինված ուժը սերտ կապի մեջ էր Միրզիկ գյուղի զորախմբի հետ: Մի քանի տասնյակ զինվորներ գիշեր-ցերեկ հերթով կանգնած էին լինում «Նովիան» կոչյալ դիրքում, որպես պահակ, հսկում

էին, որպեսզի լեռնամասային գյուղերի թուրքերը այդտեղով չանցնեին դեպի տափաստան՝ իրենց երեխաների գոյությունը պաշտպանելու համար մի կտոր հաց ճարելու: Միրզիկում և Բրաջյուրում գտնվող զորախմբերը մոտ մի ամիս շարունակ զինված այդտեղ դեսուդեն ման էին գալիս: Հրամանատարական կազմը բոլոր զինվորներին երբեմն հավաքում էր մի տեղ, բոլորի գլուխներն էլ փալասներով փաթաթել էր տալիս, նրանց հայկական զորքի տեսք տալիս, որպեսզի մուսավաթները հեռվից նկատելով կարծեն, թե հայկական զորք է եկել և վախենան՝ հարձակման չանցնեն: Այս «ռազմաճակատի» ամենամասնականի դրությունը հացի պակասությունն էր: Տներից հաց ուղարկելու հնարավորություն չկար, որտեղից ուղարկեին, եթե չկար: Զինվորներից երկու մարդու՝ Մակար Զոմարոյանին և Շապուրի (՝) Եպիսկոպոսյանին նշանակել էին, որպեսզի նրանք գնան գյուղից ոտելիք ճարեն այդտեղի զինվորների համար, ծիերով տեղափոխեն Միրզիկ գյուղ:...

Սահմանապահ ռազմաճակատների գլխավոր հրամանատար Եգոր Ավետիքյանը Բրաջյուրի զինվորների ժողով հրավիրեց, որպեսզի մի քանի զինվոր կամավոր կերպով ուղարկի Գյանջա, այնտեղի դաշնակցական բյուրոյի կողմից գրավոր տեղեկություն բերելու կովի ընթացքի մասին: Բայց այդ զինվորներից ոչ մեկը չէր համաձայնվել, որովհետև Գյանջա գնացող բոլոր ճանապարհները փակված էին մուսավաթական զինվորներով: Նեմեցական գյուղ Ելենդորֆի (այժմ Խանլար) վերևի մասից մինչև Գյանջայի մոտ, զույգ չինարի ծառերի մոտ, մուսավաթական զինվորներով ամրացված էր: Քաղաք մտնելու հնարավորություն չկար: Եգորը Բրաջյուրից անցավ Միրզիկ այդ նույն հարցի առթիվ: Այստեղ կուչչեցի Մաթևոս Պոռազյանը համաձայնվեց Եգորի պատվերը կատարելու: Եգորը հենց այդ ռուպենի Մաթևոսին նախօրոք պատրաստած մի հատ փակետ տվեց գնուտով կնքված: Ինչ-որ խորհրդատու պատվեր հանձնարարեց և ինքն անցավ իր տեղը: Այդ օրը երեկոյան Մաթևոսը իսկական զինվորի հագուստով ու գլխարկով ճանապարհվեց: Բոլորը զարմացան, թե այդ մարդը ինչ ձևով է գնալու քաղաք հասնի: Դրանից երեք օր անց, դեռ առավոտյան լույսը չբացված, Զուտնաբաղ գնացող ճանապարհի «Մեծ» ձորի վրայից երևաց Մաթևոսի զինվորական գլխարկը: Նա գալիս էր կորացած: Լույսը բացվելուն պես Մաթևոսը մեզ մոտ էր: Նա պատմեց այն դժվարությունները, թե ինչպես է հասել քաղաք և վերադարձել... Եգորը իմացել էր Մաթևոսի վերադարձը և եկավ Միրզիկ, երբ մենք բոլորս հավաքվել էինք զինանոցի շուրջը: Մեր բոլորի ներկայությամբ Մաթևոսը նամակը հանձնեց Եգորին: Բոլորը Եգորի երեսին էին մոտիկ անում. նամակի առթիվ: Կարդալուն պես նա խիստ տխրեց: Նրան նայելով տխրեցին Գրիգորը և Արարատը:

Շեղագրություն:

Ավագ Պոռազյանի հուշերի շարունակությունը չկա, բայց հայտնի է, որ Եգոր Տեր-Ավետիքյանի և մյուս հերոս հայորդիների հերոսական ջանքերի գնով հաջողվել է պաշտպանել Գանձակի տարածաշրջանի հայկական գյուղերը թուրքերի հարձակումներից:



ԳՐԻԳՈՐ ՕՃԱՆՅԱՆ (ԹԱԹՕՂԼԻ)
1882-1960

Ծնվել է Բանանց գյուղում: Թուրքերի դեմ մղված ինքնապաշտպանական մարտերի հայտնի մասնակից: Գրիգոր Օհանյանը դարձել էր թուրքերի սարսափը:

Իր զինակիցներ՝ Եփրեմի, Մելքոնի, Արարատ Մելքումյանի և ծննդով Գանձակից Օղուկի հետ կազմակերպել է Գանձակի նահանգի գուբերնատոր Լոլաձեի սպանությունը: Գրիգորը Թաթոլլի անունը ձեռք է բերել Գանձակում մի թաթի սպանելով, որը պարծեցել էր, թե Գանձակի հայոց եկեղեցու տեղում մզկիթ է կառուցելու: Գրիգորը նրան սպանել է հայոց թաղամասի տակ գտնվող բաղնիքի մոտ, իսկ դիակը Գանձակ գետն է գցել թուրքաց մասում: Թաթոլլին մասնակցել է Արևմտյան Հայաստանում թուրքերի դեմ մղվող մեծ ու փոքր այլ ճակատամարտերի և ընդհարումների, ինչպես նաև՝ Սարդարապատի ճակատամարտին: Նա Արևմտյան Հայաստանում ականատես է եղել հայկական կոտորածներին, անձամբ է տեսել թուրքերի դաժանությունները անմեղ հայերի հանդեպ: Անկասկած այդ է եղել պատճառը, որ նա թուրք տեսնելիս սպանել է նրան, այդպես վրեժ լուծելով անմեղ զոհերի համար: Ներկայացնենք մի քանի դրվագ նրա կյանքից:

Առաջին սխրագործությունը: Բանանցից 4 տարեց մարդ՝ Ջալլադանց Ղուգասը, Ջհանը, Սայունց Ռափայելը և Ստեփանը ուզում են գնան պեքի (բոխի) հավաքելու: Դեռ պատանի Գրիգորը նրանց խնդրում է, որ իրեն էլ տանեն հետները: Սրանք չեն համաձայնվում, ասելով, որ դեռ երիտասարդ ես, որտեղ գնում ես մի խաթա, մի օյին ես սարքում: Գրիգորը նորից է խնդրում, աղաչում ու սրանք համաձայնվում են, պայմանով, որ մաուզերը չվերցնի: Գրիգորը թաքուն մաուզերը դնում է ձիու փալանի տակ ու ճամփա են ընկնում: Հասնում են Շամխոր գետի ափին գտնվող Չարեքավանքի մոտերքի Քուբուրտտու կոչվող հանդը: Պեքին քաղում են, լցնում մեշոկները և բռնում հետդարձի ճանապարհը: 3 զինված թուրք կտրում են նրանց ճանապարհը, զենքը դեմ տալիս ու հրամայում հանել

շորերը, ուշադրություն չդարձնելով անբեղ, անմորուք պատանու վրա: Գրիգորը պահը չկորցնելով, փալանի տակից հանում է մաուզերը և 3 թուրքին էլ սպանում: Փրկված մեծերը ասում են՝ «Գրիգոր, լավա քեզ հետներս վերցրինք, թե չէ մերոնք դիակներիս տեղն էլ չէին ճարի»:

Արևմտյան Հայաստան, 1914-1918 թթ.: Անդրանիկի զորախումբը մի տեղամասում դեմ է առնում թուրքերի ուժեղ դիմադրության: Դա մի քարքարոտ լեռ էր, որի գագաթին կար մոտ 10 սպառազինված թուրք: Միակ ճանապարհը անցնում էր այդ լեռան ստորոտով ու առանց այդ դիրքը գրավելու, անհնար էր այդտեղով անցնել: Մի քանի անգամ ապարդյուն գրոհելուց և զոհ տալուց հետո Անդրանիկը իր մոտ է կանչում օգնականներին և խորհուրդ հարցնում, թե ինչպես քիչ զոհ տալով գրավեն այդ դիրքը: Լուրը հասնում է զինվորներին: Նրանց միջից դուրս է գալիս Թաթոլլին, որը Անդրանիկին ներկայացնում է իր պլանը, որը հավանական է համարում: Իր հետ վերցնելով 2 մաուզեր, Թաթոլլին գիշերը մեծ զգուշությամբ ժայռով բարձրանում է և թաքնվում մի մեծ քարի հետևում: Առավոտ վաղ 2 թուրք զինվոր դուրս գալով դիրքից ցանկանում են նայել շրջապատը: Հենց այդ միջոցին Գրիգորը երկու կրակոցով տապալում է նրանց: Մյուս թուրք զինվորները դուրս են գալիս դիրքից ու սկսում կրակել: Գրիգորը իրեն խփված ձևացնելով, ընկնում է և մի քիչ զլորվում ներքև: Թուրքերը համոզվելով, որ շրջակայքում ուրիշ թշնամի չկա, ազատ կանգնում են դիրքում, իսկ մի քանիսը մոտենում են Գրիգորին, որ վերցնեն զենքերը: Երբ մոտենում են, նա ակնթարթորեն երկու մաուզերով կրակում է մոտեցողներին ու դիրքում մնացածներին: Այս քաջագործության համար Գրիգորը Անդրանիկից ստանում է ավագի (ստարշինա) կոչում⁵⁶:

Սարդարապատի ճակատամարտից հետո 16 հեծյալներ Գանձակի նահանգից, որոնցից 6-ը Բանանցից էին. Թաթոլլի, Պողոսունց Արշակը, Բորլի, Ազունց Մակիչ, Դադյան Արմենակ (6-րդի անունն անհայտ է), մնացածը Վերին Քարիատ ու Խաչակապ գյուղերից, Վարդենիսի կողմերով վերադառնում էին տուն: Փառիսոսի (Քարվաճառ) մոտերքում, ճանապարհի մի նեղ հատվածում, որը երկու կողմից շրջապատված էր բարձր ժայռերով, դեմքերը փակած, լավ զինված թուրքական մի զորախումբ, որին օգնում էին նաև ժայռերի վրա տեղակայված զինված թուրքեր, հայտնվում է նրանց դիմաց: Հայերը նույնպես լավ զինված էին, բայց ամեն ինչ կատարվում է շատ անսպասելի՝ նրանք հայտնվում են շրջապատման մեջ: Ջոկատի առաջնորդ Թաթոլլին խմբից առաջ անցնելով, ձին հետևի ոտքերի վրա խաղացնելով մոտենում է թուրքերին և հրամայում ճանապարհ տան անցնելու, բայց թուրքերից մեկը շատ արագ խանչալը ցցում է Թաթոլլու աջ ազդրի մեջ, որից հետո պարզ է դառնում, որ շտկել իրավիճակը այլևս հնարավոր չէ:

⁵⁶ Այս մասին Թաթոլլին պատմել է Հովհաննիսյան (Ճնջպահանց) Հովհաննեսին: Իսկ 1976 թվականին պատմությունը Մ. Չալումյանը լսել է Փողոսկում, Ժամի պատի տակ Ռաֆայել Հովհաննեսի Հովհաննիսյանից:

Թուրքերը վերցնում են նրանց գեները, ձիերը, անգամ հագուստը և բաց թողնում: Մի կերպ խումբը հասնում է Վերին Քարհատ, այնուհետև գնում են իրենց գյուղերը: Դրանից հետո Թաթոլլին, որն այդ դեպքից հետո թեթևակի կաղում էր, շատ անգամներ է վրեժ լուծում թուրքերից⁵⁷:

Չորս թուրք դաշաղների սպանությունը: Մի օր Թաթը 2 համագյուղացու հետ գնում է Ղարաբաղ, իր ընկերոջը հյուր: Գյուղում նրան լավ դիմավորում են, ոտքերի տակ ոչխար մորթում: Խոսակցության ժամանակ գյուղացիները պատմում են, որ մոտակա սարերում 4 ավազակ թուրք կա, որոնք անընդհատ թալանում են մոտակա գյուղերի անասունները: Թաթը կոնկրետ դաշաղների որջի տեղը հարցնելով ասում է. «Դուք խորովածը արեք, ես որդե որի կիկամ» ու ձին հեծնում գնում է: Չանցած մեկ ժամ՝ սարի կողմից կրակոցներ են լսվում ու քիչ հետո հայտնվում է Թաթը: Մոտենալով գյուղացիներին, խուրջինից հանում է 4 բուխարա փափախ ու 4 աջ ձեռքի դաստակ և գցում գյուղացիների ոտքերի տակ: Այնուհետև սկսվում է քեֆը, որը շարունակվում է մինչև կեսգիշեր, իսկ գյուղացիների ուրախությանը չափ չկար:

Բաղմանլարի թալանի մասին: Բանանցեցիները շատ էին խոսում նաև Բաղմանլարի թալանի մասին, որը տեղի է ունեցել 1918 կամ 1920 թ.: Երբ նորից սրվում են հայ-թուրքական հարաբերությունները, Գանձակի նահանգի հայկական գյուղերի մեծամեծները հավաքվում են Միրզիկ գյուղում, որպեսզի որոշեն, ինչպես պաշտպանվել: Լինում են տարբեր առաջարկություններ: Թաթոլլին առաջարկում է առաջինը հարձակվել Բաղմանլարի վրա, որովհետև առաջին վտանգը սպասվում է այդտեղից: Ժողովականները հակաճառում են, որ այդքան ուժ իրենք չունեն, որ հարձակվեն: Թաթոլլին պնդում է, որ եթե իրեն միանա 10 քաջ մարդ, ինքը կարող է հաջողությամբ գործել: Նրա ծրագիրը այնքան համոզիչ է լինում, որ նրան միանում են Բաղի Համբոն Խաչակապից, Անաստասանց Մակիչը, Բարսեղանց Մարտիրոսը Բանանցից, Ղաչաղ Աղաջանը Ոսկանապատից (Չուռնաբաղ), միրզիկեցի Գաբրիելը, մեկ հոգի Գետաշենից, մեկ հոգի Վերին Քարհատից: Բոլորն էլ քաջ, հաղթանդամ տղաներ էին: Իրենց հետ վերցնելով նավթ, գիշերը մոտենում են Բաղմանլարին, որը երեք կողմից շրջապատված էր ցաքի փշերով: Ձիերը թողնում են մի ապահով տեղ, իրենք ցրվելով գյուղի երեք կողմը, նավթը լցնում են ցաքի փշերի ու մոտակա տների վրա, պայմանավորված ժամին վառում են, իսկ իրենք օդում անընդհատ կրակում են: Թուրքերը դուրս թափվելով տներից, իրենք էլ են սկսում այս ու այն կողմ կրակել, չիմանալով ինչ է կատարվում ու դիմում են փախուստի: Այս իրավիճակում հայերը մտնում են Բաղմանլար ու սկսում կոտորածը: Միայն Բաղի Համբոն սպանում է 70 հոգի, մնացածներն էլ ետ չեն մնում նրանից: Հաջորդ օրը սկսվում է թալանը: Նույնիսկ հեռավոր հայկական գյուղերը անմասն չմնացին դրանից: Սայլերով, ձիերով,

տանում էին, ով ինչ կարող էր, ով ինչ ուզում էր: Այդ թալանի ժամանակ մի քանի հայեր սպանվեցին, որովհետև կային թուրքեր, որ չէին փախել, թաքնվել էին տներում, որտեղ էլ եղան սպանությունները և հայերի կողմից, և թուրքերի: Այդ հարձակումը և Բաղմանլարի թալանը մեծ ազդեցություն թողեց թուրքերի վրա: Նրանք հասկացան, որ հայն էլ կարող է սպանել ու թալանել: Դա անջնջելի, մեծ սարսափ թողեց թուրքերի սրտում⁵⁸:

1920 թ. իմանալով Շուշիի կոտորածի մասին, մի քանի կովոդ բանանցեցի տղաների հետ շտապում է օգնության, բայց ուշանում է մեկ օրով: Սակայն Շոշ գյուղի մոտ դարանակալում և Աղդամից Շուշի տեղափոխվող ասկյարներին կամրջի մեջտեղում լավ ջարդ է տալիս:

1921 թ. խորհրդային իշխանության հաստատումից հետո Բանանցա սարերում Գրիգորը նկատում է մի կասկածելի թուրք ձիավորի և սպանում նրան: Սպանվածի մոտ կար մի ուսապարկ, որտեղ խնամքով փաթաթված-պահված էին Գանձակի մուսավաթական կառավարության փաստաթղթերը: Գրիգորը դրանք հանձնում է Խանլարի կոմիսարիատ և դրա համար արժանանում նոր իշխանությունների գովասանքին, որից հետո չի հետապնդվում խորհրդային իշխանության կողմից: Այնուամենայնիվ, նա աշխատելով Ներքի հանդում որպես հանդապահ, քիչ էր լինում գյուղում, որ իբրև թուրքասպան իրեն չբռնեին ու չաքսորեին:

Քիրվա թուրքը: 1930 թ. Թաթը մի քանի ծերերի հետ նստած է լինում Ս.Աստվածածին եկեղեցու պատի տակ: Մի ձիավոր գալիս-անցնում է սրանց մոտով ու կորչում տների արանքում: «Էս ո՞վ էր», հարցնում է Թաթը, «թուրքա, էստեղ մի քիրվա ունի», պատասխանում է ծերերից մեկը: Թաթը լսելով դա, սպասում է այնքան ժամանակ, մինչև թուրքը հետ է վերադառնում: Այդ ժամանակ նա իր մոտ է կանչում մի ջահելի և ուղարկում իրենց տուն, որ իր ձին բերի: Ձին բերում են, Թաթը հեծնում է ձին ու շտապում թուրքի հետևից: Խաչի աղբյուրի մոտ հասնում է թուրքին, կրակում և սպանում: Այնուհետև կտրում է աջ ձեռքի դաստակը, վերադառնում գյուղամեջ ու դաստակը շարտում ծերունիների առաջ: «Ապրես Թաթոլլի, ոչ մի թուրք իրավունք չունի մտնելու Բանանց, թեկուզ քիրվա», ասում են ծերերը: Իսկ թուրքի մասին ճիշտ են ասել մեր պապերը. «Թուրքը ոսկի էլ որ դառնա, ջերդ չքցես», «Օձի սև ու սպիտակի տարբերությունը գույնի մեջ է», «Շան (թուրքի) հետ ընկերություն արա, բայց փետը ձեռիդ պինդ պահի»:

Թուրքերի հետ ընդհարումների ժամանակ Թաթոլլին կատարել է շատ այլ հերոսություններ ևս, որոնց մասին բանանցեցիները երկար ժամանակ հիշում ու պատմում էին: Թաթոլլին Կովկասյան ճակատում կովելու համար ստացել է Գեորգևյան 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի խաչեր:

⁵⁷ Այս դեպքի մասին պատմել է Բաբայան Կարաբեդը Մ. Չալունյանին, 1995 թ. Ավանքում: Թաթոլլու մասին տես նաև Բաղամ Գրիգորյանի հոդվածը, «Գարդմանք» (թերթ), 1998 թ., № 6:

⁵⁸ Ի դեպ նյութի հեղինակ Մարտիրոս Չալունյանը նշում է, որ եղել է Գարդմանի համարյա բոլոր հայկական գյուղերում, որտեղ հանդիպել է հայատառ գորգերի ու կարպետների: Իր հարցին՝ թե որտեղից են այդ գորգերը, պատասխանել են. «Բաղմանլարի թալանից»: Փաստորեն հայերը ոչ թե թալանել են, այլ հետ են վերադարձրել իրենցից թալանածն ու գողացածը:

**ՍԵՐԳԵՅ ՏԵՐՅԱՆ (ԱՆԱՐԽԻՍՏ ՍԵՐԳԻ)
ԲԱՆԱՆՏԵՑԻ ՄՈՌԱՑՎԱԾ ՔԱՋԸ
1889-1918**



Սերգի Տերյանը կնոջ հետ: 1916 թ.

Ըստ ականատեսների բանավոր պատմությունների, Սերգի Տերյանը քաջ ու համարձակ երիտասարդ էր, հեղափոխական Մելիք Մելիքյանի-Դեդուշկայի հոգեզավակ: 1917 թ. բոլշևիկյան կուսակցության անդամ Սիմոն Բաղդասարյանը ակնածանքով և մեծ հարգանքով էր պատմում Տերունց Սերգի մասին, որին բնութագրում էր որպես քաջ, անվախ, համարձակ ու արդարացի հայ տղամարդ: (Ի դեպ, բանանցեցի բոլշևիկ Մելիք Մելիքյանը «Իսկրա» թերթի ընդհատակյա տպագրման կազմակերպիչն էր Բաքվում):

Սերգին ընտանիքի փոքր տղան էր, չէր լսում ոչ ոքի, սիրում էր ինքնուրույն գործել, լավ կազմակերպիչ էր, անհնազանդ էր, ոչ ոքի չէր ենթարկվում, անարդարություններ չէր ընդունում և ուներ կյանքի իր չգրված օրենքները, դրա համար նրան անվանում էին **Անարխիստ Սերգի**, հետագայում հիշում էր նրա մեծ եղբայր Ալեքսան Տերյանը (իմ պապը): Նա իր գաղափարակից ընկերներով ստեղծել էր փոքրիկ զինված խումբ, որը պետք է զսպեր թուրք-թաթարների խժոժությունները Գանձակի հայոց մասի և շրջակա գյուղերի հայերի նկատմամբ: Նրա կատարած հերոսություններից մեկը Գանձակի թուրք փաշայի սպանությունն էր, որը հայտնի էր հայերի հանդեպ կատարած իր դաժանություններով:

Նրա արյունը քաջության էր ձգտում, և նա չէր կարող հանգիստ նստել իր նորապսակ կնոջ հետ ու երեխա մեծացնել իր հայրենի Բանանց գյուղում: Սերգի Տերյանը իր խմբով Գանձակի և Բաքվի մեծահարուստներից ու բանկերից բռնագրավում էր մեծ փողեր և ոսկիներ: Բայց իրեն ոչինչ չէր պահում: Բոլշևիկներին սուտ լոգունգներով հաջողվում է իրենց կողմը գրավել քաջ ու անվախ հերոսին: Եվ նա առգրաված փողերը և ոսկիները սկսում է պարկերով ուղարկել Մոսկվա, Կրեմլ, Լենինին՝ հանուն հեղափոխության: Կա մի պատմություն ոսկի հավաքելու մասին: Սերգին մարդ է ուղարկում Մանթաշովի մոտ, որ մեծ քանակով ոսկի տա: Մանթաշովը կապավորի հետ մի քսակ է ուղարկում և նամակ, որի մեջ գրված էր. «Աշխարհում ինչքան հայ կա, մի ոսկի եմ տալու, քո խումբը յոթ հոգի են, ուղարկում եմ յոթ ոսկի: Ես Ձեր պարտքից պրծա»:

Բայց կյանքի օրենքն է, քաջի կյանքը կարճ է լինում: 1918 թ. գարնանը մուսավաթական Ազերբեջանը թուրքերի օգնությամբ պետք է ստեղծեին պետություն: Թուրքերը դարանակալում և հերթական մի հարձակման ժամանակ Սերգիին բռնում են և տանում Բաքվի բանտ: Սիմոն Բաղդասարյանը հիշում է, որ Կրեմլից հրաման է ստացվում, Ստեփան Շահումյանը և Անաստաս Միկոյանը պետք է մի տուպրակ ոսկով կաշառեին բանտապետին ու ազատեին Սերգիին, բայց ինչպես միշտ ուշանում են մի քանի ժամով, և գիշերը նրան թաշկինակով խեղդամահ են անում բանտում:

Քաջ տղամարդը իրեն կին էր ընտրել գեղեցիկ և իրենից ոչ պակաս խիզախ մի կնոջ: Ամուսնու մահից հետո կինը մեկ տարեկան աղջիկ երեխան գրկին Բաքվի հրապարակում բոլշևիկների միտինգի ժամանակ մեղադրում է ղեկավարներին, որ իր ամուսնուն չփրկեցին: Այդ մեղադրանքին ի պատասխան բոլշևիկ Գևորգ Աթարբեկովը ատրճանակով կրակում է երեխան գրկած կնոջ ճակատին: Կինը անշնչացած ընկնում է երեխան գրկում պահած: Երեխայի ճակատագիրն անհայտ է մնում, երևի մանկատուն են հանձնում: Այսպիսին է բանանցեցի այս քաջ երիտասարդի և իր ընտանիքի կարճ ու պայքարով լեցուն կյանքի պատմությունը: Նշենք, որ Տերյան տոհմի շատ տղաներ ի պատիվ հերոսի կրում են Սերգի (Սերգեյ) անունը⁵⁹:

⁵⁹ Հողվածի հեղինակ Միքայել Տերյան, 2016 թ.:



ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱԿՈՒԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
1880–1918 (կամ 1921)

Մարտիրոս Բարսեղյանը Հակոբ Բարսեղյանի և Սուլթան Տոնյանի ութ զավակներից մեկն էր: Նրա 3 եղբայրներն ու 4 քույրերն էին Արտեմը, Հայկազը, Արամը, Մայանը, Սապետը, Անուշը և Դշխուհին (Մարտիրոսի Արտեմ եղբոր թոռնուհու՝ Մարիամ Բարսեղյանի հուշերը, որոնք պահվում են Սարգսրապատի թանգարանում (26.09.2008)):

20-րդ դարի սկզբներին ծանր պայմաններ էին ստեղծվել ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Արևելյան Հայաստանի բնակչության համար: Թուրք բաշիբոզուկները և ադրբեջանական մուսավաթականները ձգտում էին ավարտին հասցնել իրենց արյունոտ գործը հայության հանդեպ: Մարտիրոս Բարսեղյանի մայրը իր հարս Մարիամին պատմել է, որ գյուղի երիտասարդները միշտ հավաքվում էին իրենց տանը՝ վերևի հարկում, ուր մառանն էր: Այդ հավաքների կազմակերպիչը եզոր Տեր-Ավետիքյանն էր, որը ցարական բանակի գնդապետ էր և Մարտիրոսի լավագույն ընկերը: Հաճախակի կազմակերպվող այդ հավաքները անհանգստացնում էր նանին՝ Մարտիրոսի մայրիկին: Իսկ նանի անհանգստությունը տեղին էր: Բանանցի մարտունակ ու հայրենասեր երիտասարդներին չէր կարող չանհանգստացնել երկրի վիճակը: Ստեղծվում է կամավորների խումբ, որը եզոր Տեր-Ավետիքյանի գլխավորությամբ մեկնում է Կովկասյան ճակատ, պաշտպանելու հայ բնակչությանը: Ստույգ հայտնի չէ, թե որ թվին են նրանք դուրս եկել Բանանցից ու հասել ռազմաճակատ: Հարազատներին Մարտիրոսը նամակներ է գրել Խնձորեսկից, Ուրմիայից, Էրզրոմից, Սարիղամիշից: Շուտով հայտնի է դառնում, որ եզոր Տեր-Ավետիքյանը, վստահելով Մ. Բարսեղյանին, նրան շնորհել է հարյուրապետի պաշտոն: 1918 թ. նա մասնակցել է Սարգսրապատի ճակատամարտին:

1916թ. Մարտիրոսը արձակուրդ է գալիս հայրենի գյուղ: Հարազատները մտահոգված նրա ապագայով՝ համոզում են, որ այլևս չմեկնի ճակատ, մնա գյուղում և ընտանիք կազմի: Սակայն նա չլսելով հարազատների հորդորը նորից վերադառնում ու միանում է իր ընկերներին:

Այդ տարիներին Մարտիրոսի եղբայրները նույնպես բանակում էին և կռվում էին ցարական Ռուսաստանի համար: Եղբայրներից Արտեմը ցարական բանակի սպա էր ու կռվում էր Օդեսայում: Երկար ժամանակ ոչ մեկից լուր չկար: Եվ հանկարծ Մարտիրոսը նամակ է գրում ծնողներին: Նամակում գրված էր. «Ես իմ զորքով գալիս եմ գյուղ: Հանկարծ տները վարձով չտաք: Աչառ մորթեք, պատրաստություն քաշեք: Գալիս եմ իմ զորքով մեր տանը քեֆ անենք, նոր իրարից բաժանվենք»: Նամակում գրում է, որ իր հետ բերում է 2 որբ տղաների, որ իրեն եղբայր լինեն:

Բանանցեցիները շատ էին լսել նրա քաջագործությունների մասին ու այժմ բոլորը սպասում էին հերոս համագյուղացուն: Բայց անցնում են օրեր, շաբաթներ, իսկ Մարտիրոսը չկար:

Մի օր Բանանցի Ստանցի թաղում Ղուլունց Վարդին և Վարդազարենց Սապետը նստած են լինում իրենց դարպասի մոտ: Մի երիտասարդ է մոտենում և հարցնում, թե որն է Մարտիրոսենց տունը: Վարդին երիտասարդին ուղեկցում է Մարտիրոսենց տուն, բայց տանը մարդ չի լինում, բոլորը հեռու հողամասում աշխատելիս են լինում: Անձանոթ երիտասարդը ասում է, որ ինքը Հայաստանից է, Մարտիրոսի ջոկատից: Խնդրում է Մարտիրոսի եղբայրներին ասել, որ Մարտիրոսից վատ լուր լսեք, իմացեք, որ նրան իր հետ կռվող համագյուղացի Թաթթոլին է սպանել, նախանձելով նրա անունին ու փառքին: Եվ որ այդ մասին Մարտիրոսի ջոկատի տղաները՝ բանանցեցի, զազիկեցի, զոտնաբադեցի և շրջակա այլ գյուղերից, վախենում են ասել ճշմարտությունը: Լուրը շատ արագ տարածվում է գյուղով մեկ: Տղայի մահվան լուրը լսելով՝ վշտից կուրանում է Մարտիրոսի մայրը:

Այնուհետև պատմում են, որ դրանից հետո գյուղ է գալիս մի երիտասարդ, չոքում նանի առաջ ու ասում, որ այդ ժամանակ ինքը Մարտիրոսի ձիապահն էր ու եղել է նրա հետ: Նա պատմում է, որ սարի վրա հեռադիտակով նայելու ժամանակ Մարտիրոսին մի անհայտ գնդակ է դիպել: Բայց հարազատները չեն հավատում այդ տղայի պատմածին, համոզված լինելով, որ դա իրավիճակը փրկող մի սուտ էր:

Մարտիրոսի շորերը բերում են գյուղ, որը հարազատները հագցնում են նրա ընկերոջը՝ Ղևոնդյան Ղևոնդին և տղայի կարոտը փորձում խեղդել նրա միջոցով: Գյուղում նաև պատմում են, որ անասելի կորստից մեծ ցավ ու վիշտ ապրող մայրը, որ պատրաստվում էր պատերազմից ու ինքնապաշտպանական կռիվներից տուն դարձող որդուն նշանել, երաժիշտներին պատվիրում է սգո եղանակ նվագել ու պարում է «սգո պար»: Ցավոք, ստույգ հայտնի չէ, թե որտեղ է նրա գերեզմանը: Տարեց հարազատներիցս մեկը հիշում է, որ իբր նա թաղված է Ծաղկաձորում և որ նա ունեցել է հարսնացու Երևանում:

Մարտիրոսի թուրը, որի պատյանը արծաթից էր, այդ խառը տարիներին վախենում են պահեն և որպեսզի այն հավերժ մնա բոլորի հետ, հալեցնում են, թեյի գդալներ պատրաստում և բաժանում նրա եղբայրների և քույրերի մեջ: Անցնում է որոշ ժամանակ և որպեսզի գյուղում թշնամությունը չշարունակվի, Մարտիրոսի եղբորը՝ Արտեմին ամուսնացնում են Թաթոյլու մորաքրոջ աղջկա՝ Մարիամի հետ:

Մարտիրոս Բարսեղյանի սպանության մասին մեկ այլ տարբերակ ևս կար գյուղում: Պատմում են, որ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նա հայտնվել է բուլնիկների ուշադրության կենտրոնում և համարվել վտանգավոր նրանց համար: Հենց բուլնիկներն էլ կազմակերպում են նրա սպանությունը՝ համագյուղացու միջոցով՝ խոստանալով՝ չձերբակալել ու ներել նրա նախկին բոլոր «հանցանքները», այն է՝ թուրքերի սպանությունները:

Մարտիրոս Բարսեղյանին պատկանող մի քանի անձնական իրեր (ապակե բաժակ, մոր գլխաշորը) պահվում են Սարգարապատի թանգարանում:



Հարյուրապետ Մարտիրոս Բարսեղյանը իր զինյալներով

ԵՓՐԵՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ


Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին շատ բանանցեցին են մասնակցել պատերազմին: Դրանցից մեկն էլ **Եփրեմ Ասատուրի Բաղդասարյանն** է: Նա ծառայել է ցարական բանակում, որպես հետախույզ: Գերագանց ծառայության համար երկու անգամ պարգևատրվել է Գեորգևյան ոսկե խաչ առաջին աստիճանի մեդալով: Նրա կատարած հերոսություններից մեկը հետևյալն է:

Նա կարողացել է հայտնաբերել գերմանական մի զորամաս, որը գաղտնի պետք է անցներ ռուսական տարածք, թաքնվելով վագոններում եղած խոտերի տակ: Այդ արարքի համար ցարի կողմից պարգևատրվում է Գեորգևյան ոսկե խաչ մեդալով: Հեղափոխությունից հետո հայտնվել է Բաքվում և նշանակվել երկաթգծի հրամանատար:


Մի անգամ նրան հայտնում են, որ ձերբակալել են 80 հեղափոխականի և սպասում են իր հրամանին, որպեսզի գնդակահարեն: Նա գնում է ձերբակալվածների մոտ: Նրանցից մեկը ճանաչում է Եփրեմին: Պարզվում է, որ բոլոր ձերբակալվածները հայեր են, որոնք մեկնել են Բաքու առևտրի համար, սակայն ռուսերենին լավ չտիրապետելու պատճառով ձերբակալվել են: Նա բոլորին ազատ է արձակում, տեղավորում վագոններում ու վագոնների վրա գրում՝ **Եփրեմ**, ինչը նշանակում էր, որ նրանց չպետք է ձեռք տան: Շուտով Բանանցից լուր է ստանում, որ իր 95 տարեկան հորը ձերբակալել են և պահում են եկեղեցում, իբրև հեղափոխականներին զինաթափելու համար: Սակայն մինչև նա տեղ է հասնում, հայրը մահանում է: Հուղարկավորելով հորը, նա այլևս չի վերադառնում Բաքու⁶⁰:

⁶⁰ Նյութը տրամադրել է Տատյանա Մինայանը:


**ՁԵՆՔԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
(Մարտիրոս Չալումյանի անձնական հավաքածու)**




Մարտիրոս Չալումյանի պապի՝ Մակիչ Չալումյանի (Դավի Մակիչ) դաշույնը վարպետի նշանով, 1882 թ.



Դաշույն, երկաթ, ոսկոր, 18-19-րդ դդ, Շահբազյան հասցատուր (Փափախչունց)



Հրացան, 19-րդ դարի սկիզբ



Հրացանի սվին, 1907 թ., պատկանել է 1-ին համաշխարհային պատերազմի մասնակից Զալադյան Սիմոնին (Կյոճի Սիմոն):

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ (ՌՈՒՍԱԿԱՆ) ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԴՎԱԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՆԱՆՑԻ ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ**

1988–1989 թթ. օգնություն չստանալով Հայաստանից, Բանանցը մյուս հայկական բնակավայրերի նման ի վիճակի չեղավ դիմակայելու դարավոր թշնամուն: Ինչպես 1918–20-ական թթ., այդ ժամանակահատվածում նույնպես հայության դեմ էր գործում ռուսական (խորհրդային) կառավարությունն ու բանակը, որն ամեն կերպ օգնում էր թուրքերին հայաթափելու Գարդման-Ուտիքը: 1989 թ. հուլիսին հազարամյակների պատմություն ունեցող Բանանցը հայաթափվեց:

Վերջին բնակիչը դուրս եկավ 1989 թ. հուլիսի 27-ին: Բնակիչները հիմնականում տեղավորվում են Վարդենիսի և Մեղրու (Ալդարա, այժմ Ալվանք գյուղում) շրջաններում:

Արցախը օգտվելով ինքնավարություն ունենալու իր կարգավիճակից, կարողացավ հաղթել իրեն պարտադրված պատերազմում և ազատագրվեց թուրքական տիրապետությունից: Սակայն հաղթանակը լիակատար չէ, քանի որ հայոց Աղվանից աշխարհի մեծ մասը, այդ թվում՝ Գարդմանը հայոց այլ աշխարհների նման դեռևս գերության մեջ է: Հպարտ ու հերոս գարդմանցին չի կարող հաշտվել այսօր գոյություն ունեցող իրողության հետ: Հավատացած ենք, կգա օրը և Գարդման աշխարհը, նաև Բանանցը նորից կազատագրվեն:

Ներկայացնում ենք Գրիգոր Ղևոնդյանի հուշերը Մոսկվայի թողտվությամբ ԲԱՆԱՆՑԸ (նաև մյուս հայկական գյուղերը) հայաթափելու Ադրբեջանի կառավարության վարած քաղաքականության մասին⁶¹:

ԲԱՆԱՆՑ: Հնուց եկած գյուղ է Բանանցը, քար ու քերծի վրա, իրար գլխի շարված տներով: Դժվարություններ շատ են քաշել մեր գյուղացիները, բայց տարիների ընթացքում կառուցել են նորը ու վերանորոգել հինը: Բանանցեցիները ապահովել են իրենց ընտանիքները բնության տվածով և իրենց ստեղծածով: Հին ժամանակներում երեխաներ շատ են ունեցել, պահելը դժվար է եղել, չնայած բոլոր ժամանակներում էլ դժվարություն եղել է: Ասում են Տոնունց Ավագ ամին, երբ հարսանիքի զուռնա-ղավալի ձեն է լսել, ասել է. «Հո, հո, հո, էն օվա՛ էն անխելքը, որ շալվարը քշտած, վըտները թոնրի մեջա մտցնում», այսինքն՝ իր ազատ կյանքը թողած, պսակվումա:

Հազվագյուտ հաջողակ գյուղացի կլիներ, որ ամեն բանով ապահովված լիներ, շատերը պակաս-պռատ, տարեցները տրեխներով, կարկատած գուլպաներով և շորերով, որոնց սկզբնական տեսքը կարկատանների տակից հագիվ էր ջոկվում: Ահա այսպես են ապրել մեր նախապապերը՝ աղոտ լույսի տակ, ծխով լցված մութ ու խոնավ տներում: Փողոցները քարքարոտ էին ու ցեխոտ, ամեն տան մոտ գոմաղբի կոյտ էր, սպասում էին գարնանը, որ տանեն այգիներում շաղ տան:

⁶¹ Նյութը տրամադրել է Թագուհի Ղևոնդյանը:

Այսքան նեղ ու անտանելի դրությանը հակառակ, ժողովուրդը շատ աշխատասեր էր, սկսած գարնանացանից, ամբողջ իրենց տարվա հոգսն էին քաշում, թե արտերի, թե քաղհանի, թե այգիների, դրանց հետ միասին անասունների կերակրման ու պահպանման պայմաններն էին ապահովում: Ամառն էլ հալալ հաց ու ջուր չեն ունեցել, այնքան են աշխատել, որ ամբողջ ձմեռ ոչ մի բանի կարիք չունենան: Արտերը հնձել են, կալերը կալսել, ցորենն ու գարին աղացել և տեղավորել ամբարներում: Կարտոֆիլը հանել են, տեղավորել, խաղողը քաղել են, ջուկել պահելունը, գինի-արաղ քաշելունը ճզմել, նաև չրեր և չինչլոխ են սարքել, թթու դրել, յուղի, պանրի կարասները լցրել, խոզի բդերը ծուխ տվել, բիչինալ, սալ ու խուզուզու սարքել, իսկ խոզի գլխից՝ սալոխտն: Կային մարդիկ տավարի մսից դավուրմա էին սարքում, չորաթան, խնոցի կարագ և այլ գյուղական անարատ ուտեստներ պատրաստում՝ առանց քիմիայի և այլն:

Շատ օրենքով և ադաթով մեծ հարսանիքներ էին անում: Անպակաս էին քեֆով և կատակասեր մարդկանց ուրախ կատակներն ու հանաքները: Նամուս ու դեյրաթով մարդիկ էին ԲԱՆԱՆՏԵՏԻՆԵՐԸ, որոնք լավ էին ճանաչում իրենց գյուղի սահմանները ու սրբությանը էին պահում այն: Եթե մի արագավազ յորդա ծի մեկը առավոտից մինչև իրիկուն քշի մեր գյուղի սահմաններով, ապա նա հազիվ թե կարողանա կեսին հասնել: Դրանք պահպանվել են դեռ հայ-թուրքական կոիվների ժամանակներից: Միայն Սովետի օրոք էր, որ ադրբեջանցիները սկսեցին ազատ մտնել գյուղ: Իսկ վերջերս էլ կոլխոզը դարձրել են ադրբեջանական սովխոզ, դա էլ էն պատճառով, որ գյուղում աշխատող ձեռք չմնաց, մի մասը պատերազմում զոհվեց, մի մասը թողեց դուրս եկավ գյուղից, ոմանք էլ շրջանի ղեկավարության երեսից հեռացան, որոնց 99% ադրբեջանցիներ էին: Օրը ցերեկով թուրքը ժողովրդի աչքի առաջ խանչալը հանեց և սպանեց անմեղ հային ու այդպես էլ չպատժվեց:

Լուցկու տուփը դրել էին հարմար տեղ և ատրճանակով նշան բռնելով կրակում էին: Մոտենում է իրենց հետ աշխատող Ղոթուլեցի Հարությունը ու խնդրում իրեն էլ տան փորձելու, նրանք մերժում են ասելով. «Գյավուր, մենք սովորում ենք, որ հայ սպանենք, իսկ քո ինչին է պետք, դե հայդա ստեղից չքվի, քանի քեզ էլ չենք նշան բռնել»: Խեղճ Հարությունը մինչև երևացող բլրակն անցնում է, կես մարդ է դառնում: Եթե մի հայի ձեռքին մատիտ սրելու դանակ էին նկատում, իսկույն բանտ էին ուղարկում: Այս պետությունը նրանց համար եկավ, որ պաշտոններ գրավեն: Փչացրին արտ, արոտավայրեր, խաղողի այգիներ, բաղ ու բաղչա: Գյուղի բոլոր ղեկավար պաշտոններում իրենց ազգից են նշանակում: Գյուղից դուրս տներ են կառուցում, նրանք անգամ գերեզմանները կքանդեն ինչ-որ բան կառուցելու համար, կքանդեն՝ միայն թե չհիշվի, որ հայկական է ու հայ է ապրել:

Բանանցը հին հայկական գյուղ է, որն ունեցել է հազար տարեկան եկեղեցի և 120 տարեկան նորը՝ Թարգմանչանց վանքը, և խելոք ու կիրթ մարդիկ: Այս ամենի մասին մտածող չկա, եթե Մոսկվային դիմեն, կասեն «պետական հող է, պետական

մարդիկ, դուք չեք օգտագործում, նրանք են օգտագործում»: Նրանք էլ գիտեն ինչ են անում: Ներքի հանդին բաղեր գցեցին, հավերի ֆերմա, անասնագույն, հոսանքի կայան սարքեցին, բնակելի տներ կառուցեցին, մի խոսքով եկան Բանանցին տեր կանգնեցին: Ահա թե երբվանից է սկսվել մեր հայկական գյուղերին տեր կանգնելու ծրագիրը, և մենք անգոր ենք այդ անիծվածների հանդեպ: Եթե լիներ հին ժամանակները, ապա հավատացած եղեք, որ ոչ մի թիզ հող չէին կարող վերցնել մեզանից: Ես շատ եմ ափսոսում մեր տատեր-պապերի չարչարանքը և նրանց գերեզմանները: ԱՆԻ, ԱՆԻ, ԱՆԻ, ՔԱՆԴՈՂԻԴ ՏՈՒՆԸ ՔԱՆԴՎԻ, ՔԵԶ ՈՐ ԱԶԳԸ ՉՊԱՇԵՑ, ՄԵԿ ՍՈՒԳ ԱՆՈՂՆ ԻՆՉ ԱՆԻ:

Մի խոսքով, մեր էն շեն-շնորհքով գյուղից էլ բան չի մնացել, կանաչել են ոտնաճամփեքը, անտառներ գնացող քարքարոտ կաճանները ու լեռնային ճանապարհներին մարդու ոտնահետք չկա: Չգիտեմ ո՞վ է ասել, բայց ես մեր ժողովրդից եմ լսել այս անեծքը. «Քո տան տեղը խոտ բուսնի»: Հիմա մեր տան տեղը վաղուց խոտ է աճել...

Գրիգոր Ղևոնդյան, ԲԱՆԱՆՏ
29.12.1980 թ.

ԲԱՆԱՆՑԱ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Բանանցում պահպանվել ու մեծերի կողմից մշտապես ավանդաբար պատմվել են գրույցներ գյուղում կատարված դեպքերի մասին: Ներկայացնենք պահպանված մի շարք գրույցներ, կարճ պատումներ, ասացվածքներ, առածներ և հիշողություններ⁶²:

Ավարառու լազգիների (լեզգիներ) մասին

1796–1797 թթ. լազգիները և նրանց միացած վրաց լազգի ավարառուները 12000 զորքով հարձակվում են Գարդման-Ուտիքի հայկական գյուղերի վրա: Առաջին գյուղը Պրաճուրն էր (ղարա–Քեշիշ), որն ավերվեց ու թալանվեց: Այնուհետև շարժվում են դեպի Բանանց: Այդ հարձակման մասին նախօրոք լուր առնելով, բանանցեցիները պատսպարվում են Շինի հանդի մոտ՝ այրելով և անտառներում: Երբ վերջանում են գյուղացիների ուտեստի պաշարները, և երեխաները սովից սկսում են իրենց լացուկոծը, երկու կին անճարացած ու ահը մոռացած իջնում են գյուղ հաց թխելու ու պարենը անտառ բերելու: Խմորը հունցելուց հետո, երբ կանանցից մեկը սկսում է թոնրի կրակը հավաքել, հանկարծ երկու լազգի գալիս ու կանգնում են նրա աջ ու ձախ կողմերում: Այս կինը իրեն չկորցնելով գրկում ու լազգիներին գլխիվայր գցում է թոնրի մեջ: Այնուհետև իրենք շտապ հեռանում են գյուղից, տանելով մի քիչ սննդամթերք երեխաների համար: Համագյուղացիները լսում են, բայց միայն լեզգիների հեռանալուց և իրենց գյուղ վերադառնալուց հետո են հավատում, տեսնելով դիակներն ու զենքերը թոնրի մեջ:

«Փրկարար» ագռավը

Հին ժամանակներում Բանանացա սր Աստվածածին հին եկեղեցում աչառը մատաղ անելու ժամանակ ժողովուրդը նկատում է, որ մի ագռավ կոկոսով պտտվում է եկեղեցու վերևում: Երբ կաթսայի կափարիչը բացում են, որ խաշվաման խառնեն, հանկարծ ագռավը իրեն գցում է կաթսայի մեջ: Մարդիկ մատաղը հարամ են համարում ու միայն այն գետնին թափելուց հետո տեսնում են, որ ագռավից բացի, մի մեծ օձ կա խաշված: Պարզվում է, որ նախքան կաթսան կրակին դնելը, կափարիչը կիսախուփ ժամանակ օձը մտել էր նրա մեջ, որն էլ ագռավը նկատելով չէր հեռանում: Փաստորեն ագռավը մատաղին մասնակից մարդկանց փրկել էր թունավորումից: Դազաղ են շինում, ագռավին թաղում Հին գերեզմանում: *Պապմել է Պողոսանց Համբարցը (Կարաբեղի):*

⁶² Զրույցները, առածները, ասացվածքները և այլ պատմություններ մեծերից լսել ու գրի են առել Մարտիրոս Զալումյանը, Անուշ Աղիխանյանը, Հակոբ Մելիքյանը, Օֆելիա Զաղեթյանը, Սոֆյա Օհանյանը, Մազդա Մանուչակյանը, Ռոզա ու Ելենա Տոնյանները, Սիրանուշ Դադյանը, Միքայել Տեղյանը, Թագուհի Անոնյանը, Սառա Սեյրանյանը, Գրիգոր Միքայելյանը, Գուրգեն Հովսեփյանը և այլ բանանցեցիներ:

Տղամարդ ես, պահի

18-րդ դարի սկզբին Բանանցի դարբիններից մեկը սիրուն կնիկա ունենում: Նրա սիրունության մասին լուրը տարածված էր նաև հարևան գյուղերում: Մի օր երեք զինված լազգի գալիս են դարբնի տուն և բռնի ուժով տանում կնոջը, բանի տեղ չդնելով ամուսնու թախանձանքները: Նա դուրս է գալիս տնից և օգնություն կանչում ձորի մյուս կողմում ապրող հանոր տղերքին: Տանից դուրս է գալիս հաները ու ասում,– աղջիկ ենք տվել, տղամարդ ես, պահի: Դարբինը գազազած վերցնում է աքցանը, մուրճը և լազգունց հետևից իջնում ձորը, որտեղ նրանք թողել էին իրենց ձիերը: Այդ պահին լազգիք կնոջը կապում էին ձիու վրա: Դարբինը պահը չկորցնելով արագ հարձակվում է սրանց վրա և մուրճի հարվածներով գետնին տապալում, ոտք ու ձեռք կապում, աքցանով հանում ատամները ու մի քանի հարված հասցնելով ազատ արձակում: Ինքը վերադառնում է տուն՝ բերելով կնոջը, լազգիների զենքերն ու ձիերը:

Կարտոֆիլի դաշտի մասին

19-րդ դարի սկզբին Բանանց և Վիրի Քարհատ գյուղերի միջև վեճ էր սկսվել Սարին գտնվող Եկեղեցահողերի (Քիլիսդարի) պատճառով, որոնք հիմնականում կարտոֆիլի դաշտեր էին: Երկու կողմն էլ պնդում էր, որ այդ հողն իրենցն է: Որպեսզի երկու հայկական գյուղերի միջև վեճը չշարունակվի, երկու գյուղերի յուզբաշիների (հարյուրապետ) համաձայնությամբ որոշում են, որ ամեն գյուղից մի ուժեղ տղամարդ դուրս գա ու կռվեն, ով որ հաղթի, հողերը ընդմիշտ կլինի հաղթող կողմինը: Կռիվը տեղի է ունենում Սարին՝ Քիլիսդարի մոտ: Կողմերը կանգնում են 50 քայլ հեռավորության վրա: Բանանցից դուրս է գալիս Թնիսանց Աթանեսը, Վերին Քարհատից՝ Քլանց Սարգիսը: Կռիվի բռնվելով Սարգիսը հակառակորդին գցում է տակը, քարհատեցիք սկսում են ծափահարել, բայց քիչ հետո տեսնում են Աթանեսը ելավ ու կանգնեց, գետնին թողնելով Սարգիսի խեղդամահ դիակը: Այսպես կարգավորվում է վեճը: Պատմել է 89 տարեկան Ընդոնի Ավաքը 1986 թ.: Ի դեպ, մեծերը պատմում են, որ պատերազմի ծանր տարիներին հենց այդ դաշտի կարտոֆիլն է սովից փրկել Բանանցի բնակիչներին:



Կարտոֆիլի դաշտերում՝ Սարին

Քաշ Ավաքը

18-րդ դարի վերջին Գանձակի Ջավադ խանը, որի մայրը հայուհի էր, իր մոտ է կանչում գավառի գյուղապետներին, որպեսզի իմանա գյուղացիները ինչ վիճակում են: Բանանցից գնում է Քաշ Ավաքը, որը կարճահասակ ու սրամիտ մարդ էր: Խանի պալատում գյուղապետները հերթով մոտենում և խանին հայտնում են գյուղի դրության մասին: Իր հերթին մոտենում է Քաշ Ավաքը և ներկայանում որպես Բանանցի ներկայացուցիչ: Տեսնելով նրան՝ խանը բացականչում է, - Էդ մեծ Բանանց գյուղում էլ կարգին մարդ չկար, որ քեզ են ուղարկել: Ավաքը ասումա, - Խանն ապրած կենա, մարդուն մարդի մոտ են ուղարկել, ինձ էլ՝ քեզ մոտ: Խանին դուր է գալիս Ավաքի հանդուգն պատասխանը և նրան կանչում է հացկերույթի, նվեր տալիս, մտերմանում հետը և ուղարկում գյուղ:

Հին պատմություն

Ղլեչի Մաթին Նիկոլայ թագավորի ժամանակ մեղադրվում է որպես կեղծ փող տպող: Դատի ժամանակ չեն կարողանում ապացուցեն, բայց միևնույն է 20 տարով բանտարկում են: Մաթին բանտապետի հետ պայմանավորվում է, որ տանից իր համար տարբեր գույների թելեր բերեն և ինքը մի այնպիսի խալի գործի, որի վրա լինեն աշխարհի բոլոր տեսակի թռչունները ու նվեր ուղարկի ցարին: Բանտապետը համաձայնվում է մտածելով, որ իր պաշտոնը կբարձրացնեն: Մաթին խալին գործում պրծնում ա և ուղարկում Նիկոլային: Գալիս է պատասխան նամակ այսպիսի բովանդակությամբ. «Եթե դու կարողանում ես այսպիսի գեղեցիկ խալի գործել, ուրեմն դու հաստատ կեղծ փող տպող ես» և կալանքը ավելացնում են հինգ տարով:

Բանանցի հայտնի պողի մասին

Կապիտան Վազգեն Հովսեփյանը (Տրսեփանց Վազգենը) պատմում է, որ 1945թ. ծանր մարտերից հետո մտնում են Բեռլին⁶³: Ռեյխստագն արդեն գրավվել էր, բայց քաղաքում մի մեծ շենք ուժեղ դիմադրություն էր ցույց տալիս: Հրամայեցի մի հրանոթ մոտեցրին, մի քանի արկ խփեցինք ուղիղ այդ շենքի մեջ ու ժամանակ չկորցնելով կրակոցներով մտանք ներս ու ողջ մնացածներին գնդակահարեցինք: Շենքի մեջ մտա մի մեծ սենյակ, որի դիմացի պատը ծածկված էր մեծ խալիով, որի վրա հին գենքեր էին կախված, իսկ կենտրոնում՝ մի մեծ պոզ: Էդ պոզը, որ տեսա, միանգամից Բարատովին հիշեցի, ասի՝ էս պոզով մենակ նա կարա գինի խմի: Պոզը վերցրի, որի բերանի մասը 10 սմ լայնությամբ արծաթապատ էր, իսկ հետո պարզվեց, որ տարողությունը 4,5 լիտր է: Կովից հետո էս պոզը դրի չամադանում, որը հազիվ տեղավորվեց ու եկա հասա Բանանցի բաղերը: Տեսա մի 10 հոգի գինու պահեստի մոտ նստած քեֆ են անում: Չամադանից պոզը հանեցի ու

⁶³ Պատմել է Վազգեն Հովսեփյանը 1975 թ., որը գրի է առել Մ. Չալոմյանը:

ատեցի, տղեք, ով կարա միանգամից էս պոզով խմի, ուրեմն իրեն նվեր եմ տալի: Ոչ մեկը չկարաց մինչև վերջ խմի ու լոխ ասին, մենակ Բարատովը կարա խմի ու այդպես էլ եղավ: Պոզը տվի Բարատովին (Արմենակ Գևորգյան) նվեր, որից հետո այն կոչվեց «Բարատովի պոզ»: Այդ պոզը մի հատկություն ուներ, խմելու ժամանակ պետք է պտտեիր, թե չէ գինին գալիս էր երեսիդ ու լցվում ծոցդ:



Բարատովի հայտնի պոզը

Սպիտակ ջորու հավատարմությունը...

Ալեքսան պապս շատ էր սիրում ուտել-խմել իր ընկերների և բարեկամների հետ, ինչպես բանանցեցի շատ տղամարդիկ⁶⁴: Հենց քեֆը լավանում էր, միացնում էր հին գրամոֆոնը, որը բերել էր Բաքվից և լսում էր իր սիրած դաշնակցական երգերը, այդ թվում՝ «Մեր հայրենիք, թշվառ, անտեր» և այլն: Նա շատ էր սիրում հատկապես այսպիսի մի մոռացված երգ. «Ի ՁԵՆ ՀԱՅԵՐ», որի կրկներգը ինքն էլ էր երգում: Այդ մասին հիշում են Ալեքսան պապիս մեծ թոռները՝ Պետրոսյան Հովիկը, Տերյան Սաշիկը Պյատիգորսկից և այլն:

Ի ՁԵՆ ՀԱՅԵՐ

*Ի զեն հայեր, ի սուր, և ի հրացան,
Տաճկահայաստանից կոչում է մի ձայն,
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թոնք հայեր, թոնք դեպի Հայաստան:*

Կրկներգի ժամանակ ինքը բեղի տակ ձայնակցում էր...Թոնք հայեր, թոնք դրա Հայաստան:

Բաքվում նա հաճախ էր լինում գործերով, նույնիսկ հասցրել էր 1904-1905թթ. անդամագրվել Կաղետական կուսակցությանը: Կրտսեր եղբայրը Անարխիստ Սերգին էր: Ծնողները՝ Հարությունն ու Հայկանուշը, շուտ են մահանում և լինելով ավագ որդին, իր վրա է վերցնում քույրերի և եղբայրների հոգսը՝ ծնողական պարտականությունը: Ալեքսան պապիս իր զավակները ասում էին՝ Հայրիկ, թոռները՝ Մեծ պապ, իսկ Խանում տատիս՝ Մայրիկ:

⁶⁴ Հողվածի հեղինակ Միքայել Տերյան:

Ալեքսան պապս ուներ մի սպիտակ ջորի, որն իր ասելով հետը ախպերություն էր արել՝ 3 հարկանի տուն էր կառուցել Տերունց թաղում՝ Չանթա-Արմենակի և Տերունց Գրիգորի-Թովալի տների հարևանությամբ: Այդ ջորին էր եղել իր օգնականը, որի մեջքով բոլոր ծանր բեռները տեղափոխել էր:

Պապս իր ջորուն շատ էր սիրում և կյանքի մայրամուտին, երբ երկուսն էլ ծերացել էին, ջորուն չէր բանեցնում, միայն խնամում էր՝ տալով կեր և ջուր, ասելով՝ շատ են աշխատել, հիմա հանգստացիր:

1957 թ. Ալեքսան պապս մահանում է: Հարազատները կատարում են թաղման բոլոր արարողությունները, իսկ այնուհետև՝ թաղում Բանանցի գերեզմանատանը, ողորմի տալով: Հաջորդ օրը, երբ գնում են քնհողի-ինքնահողի, տեսնում են գերեզմանաթմբին պատկած և անշնչացած սատկած սպիտակ ջորուն: Հավատարիմ ջորին զգացել էր տիրոջ մահանալը ու որոշել էր, որ ինքն ևս պիտի հրաժեշտ տա կյանքին: Հաջորդ օրը ինքնահողին, ջորին առավուտ շուտ գոմից դուրս է եկել, միայնակ գնացել և հոտառությամբ գտել իր տիրոջ թարմ գերեզմանաթումբը, թախծել, երկի նաև արտասվել, պառկել գերեզմանաթմբի վրա ու սատկել: Այս իրական պատմությունը կենդանու և մարդու հավատարմության ու երախտագիտության վառ օրինակ է:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՆԴԱՎԱՅՐ ԲԱՆԱՆՑԻ ՄԱՍԻՆ

Ավելի քան երեսուն տարվա հեռավորությունից⁶⁵ հաճախ եմ հանձնվում հուշերիս, համարյա ամեն օր մտովի լինում Գարդմանաց աշխարհում, որի գողտրիկ անկյուններից մեկն էլ իմ հայրենի գյուղն էր՝ Բանանցը, լեռը լեռանը հենված, անտառը՝ անտառին, տունը՝ տանը: Հեովից թվում էր՝ բակ ու փողոց չկա: Մինչդեռ բակեր էլ կային, և փողոցներ կային՝ խաչվող ու արծակվող:

Մանկությունս ու երիտասարդությունս, որ հայրենի գյուղում են մնացել, երնեկ հետ գային ու շուրջս լցնեին խինդ ու բերկրանքով: Հեովից, շատ հեովից՝ գուցե Դիմաց տեղից, զիլ զրնգար Աշրափի զուռնան կամ լուսաբացին ծտերի դայլայլին խառնվեր Արմենի կլառնետի՝ «Ծիծեռնակի» գեղգեղանքը՝ դայլայլը դայլայլին խառնված...

Գյուղս սկսվում էր **Ճղոպրուտից**: Պատմում էին, որ դարեր առաջ՝ Պարսից խանը շրջագայելիս, Ճղոպրուտի հսկա ընկուզենիները տեսնելով, ասել էր. «Էս ինչ հիվանդոտ տեղա», իսկ երբ հասել էր **Հոնուտին**, եզրահանգել էր. «Դարմանը հետնա»: Ճղոպրուտում գինու գործարանն ու պահեստն էր՝ զաճաճ ու հսկա տակառներով: Գանձակից շրջկենտրոն տանող ճանապարհի աջ ու ձախ կողմերին խաղողի այգիներն էին՝ գյուղից կիլոմետրերով հեռու:

Դարեր առաջ աշխատասեր բանանցեցիները լեռների լանջերին դարավանդներ էին սարքել ու դրանց վրա խաղողի այգիներ տնկել, եղանակը բարենպաստ էր այդտեղ, և խաղողի որթը լավ բերք կտար ու կբաղցրանար: Եվ դրանց մեջ լավագույններից մեկն էլ **ԲԱՆԱՆՑ** տեսակն էր, որից Խանլարում շամպայն էին պատրաստում: Թեպետ կոլխոզատեղծման տարիներին այդ այգիները հանրայնացրել էին, այնուամենայնիվ պահպանվում էին հին տերերի անունները՝ Վագուց բաղեր, Վանունց թալա, Ջլլադանց ծմակուտ, Մուսունց բաղեր, Ավագանց բաղեր և այսպես կարելի է երկար թվել: Ոլորապտույտ ճանապարհը, ժայռեր ճեղքելով, երկաթգծին զուգահեռ, մտնում էր գյուղ: Աջ թևի վրա՝ սալաքարերով հատուկ հղկված պատին, գրված էր. «ՇՏ. ԵԱԿԻ» (աղբյուրեղանցիները Բանանցի փոխարեն Բայան էին անվանում՝ փորձելով թաքցնել նրա հայկական ծագումը՝ Բանանց-«աշխատանց»): Գյուղում դարերով երկաթագործությամբ էին զբաղվել և շատ դարբնոցներ էին եղել:

Երկաթգիծն անցնում էր մի քանի հրաշագեղ կամուրջներով: Ասում էին՝ այդ կամուրջները գերմանացի գերիներն էին կառուցել: Ապա գալիս էր Մելի Յանցը, ուր յոթ-ութ ընտանիք էր ապրում՝ տները գեղատեսիլ ծառաստանների մեջ: Եվս մի կամուրջ, ու սկսվում էր բուն գյուղը՝ սկզբում միայն գետի ուղղությամբ, որ **Պիմբիկատախտ** էր կոչվում, ապա տարածվում-փռվում էր գետի աջ ու ձախ թևերին՝ ընդհուպ Դոլարունց Մակիչի տուն և նրա թթաստան: Բայց գյուղապատկան այգիները շարունակում էին ձգվել Մակիչի տան կողքով անցնող կամրջից էլ շատ այն կողմ, ինչ հսկա կեռասենիներ կային այդ տարածքներում...


⁶⁵ Անուշ Ադիխանյանի հուշերը:


Գյուղի սկզբներում՝ ձախ թևի վրա, **Բոլորանց ջուրը** խառնվում էր Կոշկարա (Արթունաջուր) գետին, և ձորից եկող քամին չէր թողնում, որ դպրոցի վառարանները վառվեն:

Բանանցեցի երեխան ամռանը գնում էր **Հոնուտի ձոր**, որ Բոլորանց ջրերի մեջ զովանան: Սարերից էր իջնում գետակը՝ ջինջ ու զուլալ, և ջրվեժում էր մի քանի տեղ՝ ներքևում լճակներ առաջացնելով, որ բանանցեցին ծով էր անվանում՝ **Ղազան ծով, Մթին ծով, Գորտան ծով, Մաշին ծով...**: Դպրոցը բարձունքի վրա էր՝ Դիմաց տեղի սկզբին: Այն լուսավոր, երկար միջանցք ուներ՝ ծայրին Մեծ հայրենականում զոհված 600 բանանցեցիների՝ կանաչ թավիշին փակցված լուսանկարները: Ելքի դռների մոտ մեր համագյուղացի բուշևիկ Մելիք Մելիքյանի կիսանդրին էր: Դպրոցի բոլոր տնօրենները փորձել էին կրթօջախը կոչել նրա անունով, բայց Ադրբեջանի ղեկավարությունը այդպես էլ չէր համոզվել: Մուտքի պատին գրված էր. «Կառուցվել է 1928–32թթ. հասարակության ուժերով»:

Նշեմ, որ գյուղի կարևոր կառույցները՝ ակումբը, հանրախանութը, Հայրենականում զոհված բանանցեցիների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողը, որ թևածալ արծիվ էր, բայց բռնությամբ դրոշակներ դարձավ, կառուցվել էին գյուղացիների հանգանակությամբ: Երկար տևեց արծվի համար պայքարը (մոտ երեք ամիս)՝ ցույցերի վերածված: Ադրբեջանի Կենտկոմը այդպես էլ թքածը հետ չլիզեց: Իբր արծվի աչքերը Անդրանիկի աչքերն են հիշեցնում, իսկ ներքևում փորագրված «Մահ ոչ իմացեալ մահ, մահ իմացեալ անմահություն. Եղիշե» տողերը Եղիշե Չարենցի տողերն են, որը Ստալինի ժամանակ ժողովրդի թշնամի էր համարվել, կրկնակի աղավաղում, որը ձեռնտու էր իրենց: Դրանից հետո գյուղը համարյա կիսադատարկվեց, հավատը կորցրեց իշխանությունների նկատմամբ: Շրջանում հայտնի գյուղի հիվանդանոցն էլ նվեր էր համագյուղացի մեծահարուստ ինժեներ **Տեր-Միքայելյանի** կողմից, ուր երկար տարիներ գլխավոր բժիշկն էր **Ավետիքյան Հովհաննեսը (Աբրի Հանեսը)**, որին, որպես լավագույն բժշկի, հավատ էին ընծայում ոչ միայն համագյուղացիները, այլև շրջակա հայկական գյուղերի բնակիչները:

Հուշերիս մեծ մասը դպրոցն է՝ ավելի քան քսաներեք տարվա կյանքով՝ տասնմեկը դպրոցական, տասներկուսը՝ մանկավարժական: Նա իմ դարբնոցն էր, հոգուս ծուլարանը: Քանի սերունդ էր կյանք ճանապարհել, քանի-քանի առողջ միտք էր տվել աշխարհին: Յուրաքանչյուր սերնդից դուրս էր եկել սերուցքը և այլևս չէր վերադարձել, միտքը բանեցնելու, աշխատեցնելու ասպարեզ չէր եղել: Սերունդները գնացել են, իրենց հիշողության մեջ տարել բարձունքի վրա կանգնած այդ լուսավոր շենքը՝ նրա մեջ դարձյալ լուսավոր դեմքեր՝ Բադալյան Արարատ, Բաղդասարյան Գուրգեն, Ավանիսյան Վարդան, Միրզոյան Միմոն (իմ քսաներեք տարվա տնօրենները), Տոնյան Սառա, Սեյրանյան Սիրանուշ, Ադի-խանյան Գոհար, Պողոսյան Ալեքսան, Գևորգյան Ժենյա, Հակոբյան Արարատ, Բաբայան Բաբի, Ապրեսյան Վարյա, Գրիգորյան Ռուբեն և էլի ուրիշներ:







Բանանգ, հայատառ գորգ, 1202 թ., Վիեննա

ԲԱՆԱՆՑ

Գարդման գավառի հիասքանչ լեռների փեշերին թևերը փռած հայկական գյուղ⁶⁶, շրջապատված բերքատու անտառներով, գետերով ու ջրվեժներով, խաղողի այգիներով, թթենիներով, յուրահատուկ զարդանախշերով քանդակած հուշարձան կոթողներով, նույնքան գեղեցիկ հուշարձան աղբյուրներով, որոնցից ամեն մեկն ունի իր անունը և անկրկնելի ճարտարապետական կառուցվածքը: Եկեղեցիների հպարտ ու խորունկ տեսքը, կամուրջների գեղեցկությունը մի յուրահատուկ հմայք են տալիս գյուղին՝ Բանանց գյուղին: Յոթ տարեկան էի, երբ մեր ընտանիքը տեղափոխվեց Արովյան, բայց ես ոչ մի օր չեմ մոռանում մեր գյուղը: Հիշում եմ նրա ամեն մի քարը, բակը բակին, պատը պատին կպած տները, ոտնատեղերից հարթացած քար ճանապարհները՝ դեպի աղբյուր, դեպի դպրոց, դեպի փոտ ու այգի, դեպի տատիկի տուն, դեպի մոտակա լեռը՝ **Համբոյի կալը**: Գյուղացիների այգիները գտնվում են գյուղից դուրս: Այգի գնալու համար շատ երկար ու քարքարոտ ճանապարհ պետք է գնալ: Տարածքին ծանոթ ամեն մի անցորդ գիտի, որ այս ոլորանից կամ կածանից հետո, լեռան լանջից կամ ձորի բերանի քարի տակից կամ ահա այն թփի տակից ջուր է գալիս, մաքուր ցինջ սառը խմելու ջուր, իսկ անցորդը ծարավ է: Ջուրը անընդհատ հոսելով իր համար մի փոքր ավազան է կառուցել. երկու ափի չափ: Բնությունն է կառուցել անցորդի համար: Ավազանից օգտվելու համար անցորդն էլ իր հերթին մի լայն տերև է հարմարեցրել, մի այլ տեղ էլ փոքրիկ թիթեղ է դրել, ահա մեկ ուրիշ տեղ էլ մի քանի փոքրիկ քարերի հարմար դասավորությունից ջրից հեշտ օգտվելու հնարավորություն է ստեղծել: Մի հրաշալի տեսարան է: Ծանապարհից հոգնած ծարավ անցորդը խոնարհվում է, ափերի մեջ առնելով տերևից կաթող ջուրը և հագեցնում ծարավը: Ու համոզված եմ, ով խմել է այդ աղբյուրից, հաստատ օրհնել է տերևից ծորակ պատրաստողին, հաստատ բարիացել է, ժպտացել ու ինքն էլ է ուզել մի լավ գործ անի: Քաղաքում ամենաթանկ և ամենաշքեղ ծորակից հոսող ջուրը այդ համն ու հոտը ու վայելքը չունի, չէ, չունի: Այգին ու հանդ գնացող գյուղացիները հաճախ մեկը մյուսին հուշում է. «Հասնենք այն աղբյուրին, նստենք մի քիչ հանգստանանք, ջուր խմենք, սրտներս հովացնենք ու շարունակենք ճանապարհը»: Ինքնաշեն աղբյուրների մոտ նստելու համար հատուկ հարմարեցված քար նստարաններ կան: Ով է բերել, երբ են բերել, ոչ ոք չգիտի: Այսպես պարզ ու հասարակ խմում են քարերի շերտի տակից դուրս եկող պաղ ջուրը, հանգստանում են ու շարունակում ճանապարհը: Աղբյուրի շուրջը նստած մարդկանց զրույցն էլ է պարզ ու հասարակ: Բնության հետ ապրող մարդն ուրիշ է, ուրիշ: Հիմա Բանանցը շատ ու շատ գյուղերի նման գտնվում է քոչվոր ցեղերի տիրապետության տակ, ու նրանք են վայելում հայ շինականի ստեղծած ու կառուցած բարիքները: Բայց կգա այն օրը և ամեն ինչ իր տեղը կընկնի, և հայը կկարողանա ապրել իր ծննդավայրում, իր պապերի հողում:

⁶⁶ Հեղինակ՝ Արշալույս Պողոսյան, 2012 թ.:

«ԾԱԿ ՔԱՐԻ» ՄԱՍԻՆ

Ամեն անգամ Ծակ քար⁶⁷ կոչվող սարի ստորոտով անցնելիս կանչում էինք.

– Ծակ քար, ես եմ լավը, թա տու...

– Տու-ու-ու-ու-ու, – արձագանքում էր սարը՝ երկար կրկնելով ֆրանսերենին հատուկ մեր քմային ու-ն:

– Տու ես լավը, թա ես...

– Ե-ե-ե-ե... – պատասխանում էր նա՝ այս անգամ երկարաձգելով է-ն:

Ու մեզ թվում էր, թե սարը խոռոչներ ունի, դրա համար է մեր ձայնին արձագանք տալիս հսկայական դատարկ տակառի պես:

Իսկ մի ամառային օր որոշեցինք «գիտարշավ» կազմակերպել դեպի Ծակ քար: «Արշավախումբ» հավաքեցինք՝ նոր-նոր աշխարհագրության այբուբենը սերտած մի քանի դպրոցականներով ու արշավեցինք դեպի Ծակ քար: Այդ սարը քարքարոտ ու զառիթափ լանջեր ուներ. վերելքը շատ դժվար էր. մանր սուր-սուր քարերը փախչում էին ոտքի տակից, մեծ քարերը գլորվում էին՝ սպառնալով մեզ իրենց հետ տանել: Մի կերպ հասանք գագաթին, որը սուր ժայռերից կազմված շեղք էր հիշեցնում՝ տասնյակ մետրերով ձգվող մեկ ոտքի տեղ... Ոչ մի անցք չհայտնաբերեցինք: Բայց սարի մյուս կողմը հնարավոր չէր չափ ուսումնասիրել, քանի որ դժվարին վերելքը հոգնեցրել էր մեր «գիտական արշավախումբի» անդամներին: Դա թողեցինք հաջորդ անգամվան, բայց հաջորդ անգամն այդպես էլ չեկավ...

«ՈՍԿԵԹԵԼ» ԿԱՄ «ՎՐՍԿԱԹԵԼ» ՊԱՀԱՊԱՆ ՄԵՐ ԽԱՁԸ (Ավանդված պատմություն)

Օրը կիրակի էր⁶⁸: Ամառային առավոտյան կիրակիներից մեկը: Ծեզը ձեգին արևի ծիծաղկոտ շողերը ծիկրակելով, մեր բակի թթի ծառի ճյուղերի արանքից, ներս էին թափանցում պատուհանից, որտեղ գտնվում էր մահճակալս, խոտոտ տալով աչքերիս, կամաց-կամաց ստիպելով բացել:

Այն, ինչ պետք է պատմեմ, սիրելի ընթերցող, մի քիչ առեղծվածային է, գուցե անհավատալի, բայց իրական: Ուզում եմ ձեզ այսօր տանել իմ վառ հիշողության կաճաններով, համոզված լինելով, որ չեմ ձանձրացնի ձեզ:

Արևի ճառագայթների հետ միասին, ինձ արթնացրեց մորս անուշ, մեղմիկ ձայնը.

– Վերկաց բալես, մատաղացու աքլոր եմ առել, պետք է տանենք «Վրսկաթել» մատաղ անելու, առավոտ շուտ գնանք, քանի շոգը չի ընկել, – ասաց մայրս ու գնաց հավաքելու որոշ իրեր, հետներս տանելու համար:

Սուրբ խաչը, որտեղ պետք է գնայինք, շատ հեռու էր մեր տնից, մայրս նախօրոք պատրաստել էր այն բոլոր պարագաները, որոնք անհրաժեշտ էին մատաղը մորթելու և սեղան պատրաստելու համար: Մատաղացու աքլորն ընտրել էր նախօրոք, գյուղացիներից մեկին համոզել էր, որ ծախի: Աքլոր մի ասա, մի գեղեցիկ, հպարտ, կանաչ-կարմիր բաշով ու մեծ քաշով: Մայրս հրավիրել էր նաև հորեղբորս կնոջը՝ Սաթիկ տոտային, նա ավելի սրտապինդ էր աքլորը մորթելու համար: Ու չորս հոգով ճանապարհ ընկանք՝ ես, քույրս՝ Ամալյան, հորեղբորս կինը և մայրս:

Տեղանքը, որտեղ գնում էինք, կոչվում էր «Խաչի աղբյուր», չորս բոլորը գեղեցիկ, առատ, բոլոր տեսակի մրգերով հարուստ այգիներ էին: Գյուղի մարդկանցից կառուցել էին այդտեղ մի գեղեցիկ աղբյուր երկու ակով, կենդանիներին ջրելու համար, երկու երկար, մեծ «նով», այսպես էր ասում ժողովուրդը, ջուրն էլ սառնորակ, անմահական: Քիչ հեռու վեր էր խոյանում դարավոր, ահռելի մի մեծ ծառ: Նրա փարթամ ճյուղերի ներքո դրված էր խաչքար, որը սրբատեղի էր բանանցեցիների համար և կոչվում էր սուրբ «Վրսկաթել»: Ծառի ճյուղերին բյուր, գույնզգույն ժապավեններ էին կախված, վկայելով սրբատեղի հին լինելը, դարերից եկած, իսկ քարի վրայի վառված, հավված, կույ եկած մոմերը կարծես բյուրեղացած արցունքներ լինեին: Խաչի պատվին էլ աղբյուրը կոչվել էր Խաչի աղբյուր:

Ճանապարհը կարճելու համար տեղատարափ հարցեր էի տալիս՝ փոքրիկիս շատ հետաքրքիր էր այն բոլորը, որոնք կապված էին Սուրբ խաչի հետ: Մորս դիմելով հարցրի.

– Մամ, բա ինչու են այս խաչին ասում Վրսկաթել:

– Բալես, հիմա կփորձեմ քեզ պատմել այն, ինչ ինձ հասել է բերանից բերան:

«Վրսկաթելը» քույր ու եղբայր են եղել, երեսու իրենց ոտքի տակը: Քույրը շատ գեղեցիկ աղջնակ է եղել, մազերը շեկ, երկար, գեղեցիկ հյուսած, դրա համար էլ ստացել է Ոսկեթել անունը, իսկ Բանանցի բարբառով՝ Վրսկաթել: Այստեղ մայրս թեթև շունչ քաշեց, հոգոց հանեց և շարունակեց.

– Շատ հին ժամանակներում անտառներում հայտնվում էին այլ ազգի բաշի-բոզուկներ, որոնց «ղաչաղ» էին ասում, հարմար պահ էին ընտրում, հարձակվում գյուղերի վրա, թալանում, իսկ գեղեցիկ աղջիկներին փախցնում, տանում կնություն: Այդպիսի մի թալանի ժամանակ նրանց գլխավորը նկատում է գեղեցիկ Ոսկեթելին և ուզում է առևանգել նրան: Ոսկեթելը չի ենթարկվում, անհավասար պայքար է գնում քնքուշ, նուրբ աղջկա և վավաշոտ աժդահայի միջև: Որտեղից որտեղ եղբայրը լուր է առնում ու հասնում է այն պահին, երբ քույրը արյունլիկ դիմադրում է խրտվիլակին: Եղբայրը հանում է դաշույնը, սրախողխող անում հրեշին ու ձիու վրա դնելով քրոջը, սլանում դեպի ապահով վայր, որտեղ հիմա այս խաչքարն է դրված: Բաշիբոզուկները տեսնելով իրենց գլխավորի ընկնելը, հետապնդում են քրոջն ու եղբորը, շրջապատում նրանց և ցանկանում կենդանի բռնել: Նրանք դիմադրում են, կռիվը անհավասար էր՝ խումբը երկուսի դեմ: Չցանկանալով հանձնվել, քույր ու եղբայր գրկախառնված, գլորվում են մոտակա

⁶⁷ Հեղինակ Վարդուհի Բաղայան:

⁶⁸ Հեղինակ Գրետա Հովսեփյան, 25.06.2020 թ.:

ժայռից ցած և նահատակվում: Ասում են, որ պատվի համար նահատակված քույր ու եղբայր դասվում են սրբերի դասին: Եվ այդ վայրում ժողովուրդը խաչքար է դնում, այցի են գալիս, ծնկաչոք մոմեր վառում, որպես սրբատեղի: Սրբավայրն այդ Բանանցի հասարակությունը Ոսկեթելի պատվին անվանել է «Վըսկաթել»:

Մորս պատմությունը վրաս շատ էր ազդել, մանկական հոգիս ալեկոծվել էր: Բնականաբար հույզերն ու հարցերը խեղդում էին կոկորդս: Ճանապարհն երկար էր, դեռևս կեսն էինք անցել, շատ կար, որ հասնեինք տեղ: Կրկին սկսվեց հարցերի հեղեղը.

– Մամ, բա դու ինչո՞ւ ես այսքան հեռու գալիս, որ մատաղ անես, չէ՞ որ մոտիկ տեղ էլ կա խաչ, ինչո՞ւ այնտեղ չարինք:

– Աղջիկս, որովհետև Վըսկաթելը իմ սուրբն է, նա ինձ շատ է փրկել, խոստացել եմ, որ պիտի իր ոտքը գնամ ու աքլոր մատաղ անեմ, իմ խոստումը չեմ կարող դրժել:

– Մայրդ ճիշտ է ասում,– միջամտեց Սաթիկ տոտան,– շատ-շատ անգամներ եմ իր հետ եկել մոմ վառելու, մորդ հոգին հանգստանում է, երբ գալիս է սրբին այցելության:

– Բա ամենաառաջինն ո՞վ է քեզ ասել, որ դու գաս այստեղ, կասե՞ս:

– Ասեմ, տեսնում եմ քո ձեռքից չեմ պրծնելու,– ասաց մայրս և շարունակեց, – Տարիներ առաջ, մի գիշեր երազ տեսա, մի չար դեմքով մարդ շատ ուժեղ հարվածեց երեսիս, ուզում էր երկրորդ անգամ էլ հարվածել, կողքից երկու հոգի՝ տղա ու աղջիկ, ձեռքից բռնեցին, չթողեցին, որ հարվածի՝ ասելով, երեսիսներ ունի, մեք է, իրեն հանգիստ թող: Աչքերս ցավից բացեցի, շատ ծանր զգացողության տակ էի, իրոք երեսս կարմրած էր, աչքս լցված արյունով, այդ կարող են հաստատել իմ շրջապատի մարդիկ: Բնականաբար բժշկի գնացի, աչքի կաթիլներ նշանակեցին, ամեն ինչ անում էի, բայց օր-օրի վատանում էի, ընդհուպ միջև աչքի կուրացում: Ես պատմել էի ինձ մոտ մարդկանց երազիս մասին, նրանք խորհուրդ տվեցին, որ գնամ հենց այս սրբի մոտ մոմավառության, որովհետև տղա և աղջիկը՝ հենց Վըսկաթելն է իր եղբոր հետ: Դե գիտեք, աթեիզմի ժամանակներն էին, ոչ մեկս չէինք հավատում սրբերին, նույնիսկ ծաղրում էին մոմ վառողներին: Բայց ուրիշ ելք չէր մնում ինձ, պետք է գնայի Վըսկաթելի ոտքը: Դե ինչ գլուխներդ ցավացնեմ, մի քանի անգամ գնացի մոմ վառելու, հետն էլ խնդրում էի, որ ապաքինի: Այդպես էլ եղավ, աչքս լավացավ ու դրանից հետո մինչև այսօր, գալիս եմ իր ոտքը մեծ սիրով:

Ես բավարարված էի հարցերիս պատասխանից: Հոգնել էինք երկար քայլելուց, բայց առույգ էինք, մանավանդ արդեն երևում էր մեծ կաղնի ծառի երկնաքեր ճյուղերը: Վերջապես հասանք, մայրս անմիջապես օջախում կրակ վառեց, կաթսան ջրով լի դրեց՝ մորթած աքլորին փիտրահան անելու համար եռման ջուր էր պետք: Մարդիկ այդ նպատակով էլ գեղեցիկ օջախ էին պատրաստել: Երբ ամեն ինչ ավարտված էր և արդեն մատաղը կաթսայի մեջ եռում էր, համաձայն որոշ կանոնների, շարքով իրար հետևից յոթ անգամ պտտվե-

ցինք խաչքարի շուրջը, կամաց մրմնջալով սրտից բխած խոսքեր, քանի որ ոչ մի աղոթք չգիտեինք: Մայրս մատաղի կտորերը դրեց հացի մեջ, որ յոթը տեղ բաժաներ: Տեսանք խոտ բարձած ձիերով մարդիկ են անցնում, մայրս բաժանեց մատաղը նրանց, ասելով, որ աշխատավորին տվածը ավելի վարսկ է և ընդունելի, հետն էլ մի-մի բաժակ մատաղի արգանակ: Քույր ու եղբոր ներկայությունը և օգնությունը հետագայում էլ է զգացվել մեր ընտանիքում...

Է, ժողովուրդ ջան, էլ ինչպե՞ս չմտածես շան բերանին մնացած քո սուրբ մասունքների մասին, որ մնացել են անտեր, անտիրական...:

ՍՈՆԱ-ՄԱՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Սոնան և Մայանը (Մարիամ) վանեցի գաղթականներ էին⁶⁹: 1915 թ. Վանի հերոսական պաշտպանությունից հետո, մայիսին քաղաք են մտնում ռուսական զորքը և հայ կամավորական ջոկատները: Վանի բնակչությունը ցնծության մեջ էր: Սակայն կարճ է տևում ուրախությունը: Նույն թվականի հունիսին ռուսները շատ անսպասելի հրաման են ստանում՝ թողնել Վանը: Հայերը որոշում են շարունակել պայքարը, սակայն զենք ու զինամթերքի պակասություն ունեին: Վանի ինքնապաշտպանության ղեկավարները խնդրում են ռուսներին, որ ռուսական բանակը իրենց թողնի այն զենքն ու զինամթերքը, որ Վանում ունեն նրանք: Սակայն մերժում են ստանում: Հասկանալի է դառնում, որ բնակչությունը պետք է լքի Վանը, որովհետև այլևս հնարավոր չէր պաշտպանվել: Հունիսի վերջերին սկսվում է վանեցիների գաղթը:

Սոնան (Սոնա աքիրը) պատմում էր, որ իրենք հարուստ են եղել, ունեցել են շատ անասուններ: Գաղթի ժամանակ մահացել են հայրն ու մայրը: Սոնան, եղբայրը՝ Ալբերտը և քույրը՝ Մայանը գաղթողների հետ շարունակել են ճանապարհը: Սոնան եղել է մոտավորապես 15-16 տարեկան, եղբայրը՝ 13-14 տարեկան, իսկ Մայանը՝ երկի 8-9 տարեկան: Եղել են թուրքերի ու քրդերի հարձակումներ գաղթողների քարավանի վրա: Իբրև ապագա զինվորներ, վտանգավոր է եղել հատկապես պատանիների համար, որոնց ուղղակի սպանել են բոլորի աչքի առջև: Սոնան եղբորը աղջկա հագուստ է հագցրել, որ պաշտպանի: Սակայն ինչ-որ մեկը մատնում է, և եղբորը թուրքերը տանում են: Այլևս ոչ մի լուր չի լինում եղբորից: Երկու քույրերով հասնում են Երևան, բայց այնտեղ սով էր ու բազմահազար փախստականներ կային: Քույրերը շարունակում են ճանապարհը և Սևանի ափերով հասնում Փիփ գյուղ: Այստեղ Սոնան ամուսնանում է տեղացիներից մեկի հետ, ունենում է աղջիկ, որին կոչում է Արևիկ: Սակայն չեմ հիշում, շուտով ամուսինն է մահանում, թե բաժանվում են: Արդեն երեքով Փիփում դժվար էր ապրելը, և նրանք տեղափոխվում են ավելի հարուստ գյուղ՝ Բանանց: Բանանցում նրանց հատկացնում են կանտորի առաջին հարկի սենյակներից մեկը, ուր և նրանք ապրում են բանանցեցիների օգնությամբ: Կանտորի բակում խաղալու ժամանակ,

⁶⁹ Ներկայացնում եմ իմ հուշերը Սոնա-Մայան քույրերի մասին:

երբ նրանց դուռը բաց էր լինում, տեսնում էինք սենյակի ներքո: Այնտեղ կար մեկ հին մահճակալ, մեկ թախտ ու շատ փոքր պահարան (տումբոչկա), իսկ ունեցած հագուստը, անգամ հացը կապոցների մեջ էին պահում: Այդ սենյակում նաև մեկ ոչխար էին պահում: Արևիկը քիչ մեծանալով, ամաչում է իրենց վիճակից և տեղափոխվում է Կիրովաբադ, որտեղ սկսում է աշխատել վաղ տարիքից: Մի քանի տարի անց Արևիկը տղա է ունենում, բայց քանի որ մենակ էր, չէր կարող պահել երեխային, որոշում է նրան հանձնել Սոնային ու Մայանին: Տղային կոչում են Ալբերտ (իրենք Ալբուրտ էին ասում), սպանված եղբոր անունով: Բայց քույրերի դժբախտությունների շարքը չի ավարտվում: Բանանցեցիներից մեկի տանը (Տվիթունց) ինչ-որ առիթով խնջույք է լինում: Ալբերտը, որ երևի 10-11 տարեկան էր, աստիճանների վրա կանգնած թամաշա էր անում: Երևի շատ էր առաջ գնացել, պարողներին տեսնելու համար ու խանգարում էր: Ինչ-որ մեկը նրան քիչ հրելով ասում է՝ հետ գնա: Հետ գնալուց երեխան աստիճաններից ընկնում է, քներակով դիպչում է քարին ու անմիջապես մահանում: Այդ դեպքից հետո Արևիկը այլևս գյուղ չի գալիս: Իսկ Սոնան և Մայանը, իրենց նոր, ծանր վիշտը սրտներում մինչև կյանքի վերջ շարունակում են ապրել Բանանցում:

Ցավոք, պատմությունը կրկնվեց Բանանցում: Նույն ուսման օգնությամբ իր հայ բնակչությունից գրկվեց նաև Բանանցը:

Շատ տխուր այս պատմությունը լսել եմ Սոնայից, երբ նա այդ մասին պատմում էր մորս՝ Գոհար Ադիխանյանին: Իմանալով այս պատմությունը, շատ ծանր էի տանում, երբ թաղի չարածճի երեխաները նեղացնում էին նրանց: Իմ մանկության հուշերում դաջվել է այս պատմությունը ու այսօր շատ մեծ ցանկությունս է, որ այսպիսի պատմություն այլևս չկրկնվի ոչ մի հայի հետ:

Անժելա Տերյան



Նկարում ծախից, բաց գույնի հագուստով, իլիկը ձեռքին կինը Սոնան է (երևի միակ նկարը), կողքը իմ Սանդուխտ նանն է (Միպտակունց Սանդի), մյուսը՝ Ղուզունց նանը: 1959 (կամ 1960) թ.

ԲԱՆԱՆՑԱ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ, ԱՌԱՇՆԵՐ, ԽՐԱՏՆԵՐ, ՕՐՀՆԱՆՔՆԵՐ...

Դարեր շարունակ հնարամիտ բանանցեցիները օգտագործվել են իմաստուն ասացվածքներ, առածներ, խրատներ, գրույցներ ու օրինանքներ, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ: Ներկայացնենք դրանք:

– Բանանցում հարսանիքից հետո եթե կոփվ չէր լինում, ասում էին գինու հետ ջուր էր խառնած⁷⁰:

– Քոքոր դայի (Աշրափ) էն սովի տարին հիշում ես:

– Քեզ մատաղ, մենք միշտ սոված ենք իլել, դժ տարվա հետ ես:

– Կնոջդ փող տու ու հետ ուզի, ոնց որ ձեռդ կոխես մեղվի փեթակը: Տոնունց Փանցի:

– Իմ ասածը արեք, իմ արածը անիլ միք (էն վաղի տերտեր), Բարատով:

– Էշին ինչքան թակես, ջորի չի դառնա:

– Եթե դոնաղ գնաս, երեսիդ չնայեն, թող հեռացի:

– Եթե երկու մարդ գրուցելուց լինեն, չեն խանգարի:

– Ապրիամ (Վրցակունց), տան կտուրը կաթումա, ինչ անեմ, – ասումա Սիմոնը (Ճինգին), – տան մեջ մի չարդախ շինի, – խորհուրդ է տալիս Ապրիամը:

– Տրսեփանց Ստեփանը սարին խոտ հարելիս լինում, երբ ուզումա ընդմիջում անի, գալիս տեսնում, որ տոպրակից պանրի կեսը չկա: Ասումա, – Տոկան էս ուրա պանրի կեսը, Տոկանը թե՛ ագռավնա տարել, – խի ագռավը դանակ ունի, որ կեսը կտրի տանի:

– Շալին (Մանուշակյան Արմենակ) և Մալոն (Հայրապետյան Անդրանիկ), մի օր ընկեր Ավետիս Շիրվանյանի հետ հարբած, կեսգիշերին մտնում են տուն, Ավետիսը կնոջը հանում է քնատեղից ու ասում, – պարի: Խեղճ կինը սկսում է կամաց, ալարկոտ պարել: Ընկեր Շիրվանյանը մի հատ խփում է կնոջը ու ասում, – վեսյոլի պարի:

– Իրիցանց Արմոն գնումա աղջիկ ուզելու, աղջկա ծնողները ասում են, – Մեր աղջկան դեռ կարդալ ենք տալու»: Արմոն ասումա՝ «Մեր տանը շատ գրքեր կան, թող գա կարդա»:

– Թաքարանի Անդրոն եղբորը տանումա, որ մի աղջիկ հավան կենան, ախպերը ասումա «Անդո ամեն ինչ լավնա, մենակ ոտքերը բարակա», – «դե չես գնալու Հուրի ծորեն ցորեն, փետ բարձես բերես», սրամտում է Անդրոն:

– Ըոսանանց Մակիչը շատ պարտքեր է ունենում: Հարցնում են, – ինչու պարտքերդ չես տալի: Սա թե՛, – որ մեռնեմ, գոնե իրենց պարտքի համար պարտքատերերը հետևիցս կլացեն:

– Թնիսանց Պետրոսին հարցնում են, – կարո՞ւ ես տունը մտով-բանով պահես, սա թե՛, – մարդ ու կին սաղ օրը իրար միս ենք ուտում, միսը առնեմ ինչ անեմ:

⁷⁰ Բանանցում շատ տարածված ասացվածքները, որոնք գիտեր ու օգտագործում էր յուրաքանչյուր բանանցեցի, գրի է առել է Մ. Չալոյանը:

- Աները Պետրոսին ասումա,- Պետրոս, գիտես, որ փեսան հանոր էշնա Պետրոսը թէ,- դու էլ քո հանոր էշն ես:- Ինձ հաներ չունեմ, մահացել է, պատասխանում է հաները:- Ուրեմն դու էլ անտեր էշ ես,- վրա է բերում Պետրոսը:
- Շուրի Հայկոն Կրատեղում մի բեռնատար ավտոյի հետևից վազում է, որ կախվի ու նստի: Վարորդը նկատում է, կանգնում ու ասում,- ինչի ես վազում Հայկոն թէ,- ես մինչև մեր տուն վազելով գնալու եմ, քո ինչ գործն ա:
- Կինին թան չի, ամեն մարդու բան չի:
- Կինին կտան խմողին, ոչ թե հարբեցողին:
- Կեր, ոչ թե լափի:
- Խմի, ոչ թե լակի, որ քնես, ոչ թե մրափես:
- Ինչ ես անում կրմնջումը, որ փթաթեն յափնջումը:
- Ծնողը արև է, թեկուզ հանգչող հողի տակ:
- Ամեն պան վախտինա յաշում, ամա վախտը մի պանիելա յաշում չի:
- Է՞ծը է՞ծի համար լավա, քան մի սուրու ոչխարը:
- Նամուսը շանը տվին, չկերավ:
- Համ նալին ես խփում, համ մեխին:
- Գեյի անուննա դուրս եկել, ամմա աղվեսնա աշխարհը քանդում:
- Անունը կա, ամանում չկա:
- Քարի միջին արին կա:
- Ղորմի մեռելներին, ապրեն ապրողները:
- Որ տեսնում ես սովում ես, կպի հողին:
- Ձին ծախելիս, նոխտեն էլ հետն են ծախում:
- Պարապությունը կամավոր խելագարություն է:
- Գետին չհասած, ոտնամանները չեն հանի:
- Առվի վրով մինչև չլոքեն, հոպ չեն ասի:
- Էշը պիրի, էշը ուտի, բա իշատերը ինչ ուտի:
- Թամամ խոսքը էշին կասեն:
- Թանը քոնը չի, թանամանն էլ քոնը չի:
- Կետը մտնողը առվից վախիլ չի:
- Մի քարը, որ կոշտ լինի, մյուսը կակող կլինի:
- Քունլածը վերա կենում, զարթունին վխծնում:
- Մի տարեկան դանեն գնումա առվից ջուր խմում:
- Դե հմի եկ ու էշը ցեխից (փխակեն) հանի:
- Փուշ պեռնած բարա չես հու, անցի:
- Ինչը ուրիշի հողի վրա է, քոնը չի:
- Գեյի բնից ոսկոր չի պակասի:
- Ախպերը ախպոր միսը կուտի, բայց ոսկորը դեն չի գցի:
- Թաց փայտը չորի հետ խառնված, այրվում է:
- Թուրքը ոսկի էլ դառնա, ջերդ չդնես:
- Թուրքի քանդիրով (պարանով) քահրիզ չեն իջնի:

- Ուտեն մինչև կեսօր սոված կմնա:
- Էշը որ ցեխում մնաց, հաջորդ անգամ, որ սպանես էլ, էդ տեղով չի գնա:
- Շունը սպանողին են քարշ տալիս:
- Մենակ մեռածին ճար չկա:
- Ուխտը որ սատկումա, կաշին էլի մի իշաբեռա:
- Չվանը ինչքան երկար լինի, մեկա գալիսա կյափովը անցնում:
- Փնթի մարդկանց տանը եփած ձու ու ճղպար էլ չեն ուտի:
- Կանոխ արա կյողին փոնի, քանի ինքը քեզ չի փոնել:
- Աներես մարդու երեսը պաղոշա:
- Տերովին տերնա տարել, անտերին՝ գելը:
- Ճուտը ծվումնա մալում անում:
- Մուկը կարում չի հաքին քաշ տա, ճխեմիլն էլ հաքվից կապում են:
- Քաղցրալեզու մարդկանցից հեռու մնա:
- Մեկին մի բան խոսք տվիր, անպայման կատարի:
- Մեծին լսողի ոտքը քարին դեմ չի առնի:
- Հայրենիքի դավաճանությունը սկսվում է լեզուն մոռանալուց:
- Շունը հաշալով կսատկի:
- Ուրիշի ձին նստողը կանոխա իջնում:
- Ձու գողացողը, ձի էլ կգողանա:
- Աման վախտ գետը գերան չի բերի:
- Ջրի բերած, ջրի տարած:
- Ջուրն իր ճամփեն կգտնի:
- Արինը ջրով կլվան, ոչ թե արյունով:
- Դուռդ փակ պահի, հարևանիտ գող մի բռնի:
- Ավելի լավա խելոք թշնամի ունենաս, քան հիմար բարեկամ:
- Շնից մազ պոկելն օգուտա:
- Ուզողի մի երեսնա սև, չտվողի՝ երկու երեսը:
- Քու մերը չմեռնի տեխնիկա (ասում էին մեծերը նոր տեխնիկայի մասին):
- Շղոմքոր գառը օխտը մոր ծիծա ուտում:
- Փորձը փորձանք չի:
- Տերը իրա թանին թթու չի ասի:
- Էտ վաղ էր, որ էշը կաղ էր:
- Էշին ասին քեզ տանում ենք հարսանիք, ասաց, ջուր կրելու:
- Համբալը որտեղ էլ լինի, համբալա:
- Շունը շան ոտը կոխիլ չի:
- Փետը որ վերցնում ես, գող շունը փախչումա:
- Կատվի վազելը մինչև մարագնա:
- Գողի ու բոզի թաքուն մնալը քառասուն օրա:
- Փիս մարդուն ասում են, հարամ ծիծ կերած, կամ շան կաթը կերած:
- Քրդի տանը հաց կեր, հայի տանը քուն իլի:

- Թուրքին ուժտ ցույց տուր, որ քեզ հարգի:
- Վախեցիր էն կետից, որ ոչ թշուամ, ոչ վշում:
- Լավ ընկերին նեղն ընկած վախտն են ճանաչում:
- Թամամ խոսքը էշին կասեն:
- Նամարդին երես տվիր, աստառելա ուզում:
- Ճպատդ քոյիցդ կտրի:
- Օձը տաքացնողինա կծում:
- Օձի կլոխը որ ցավումա, տուսա կյալի, ճամփին պառկում:
- Գյադից բեզ չի լինի:
- Աղվեսին հարցնում են, կուզես առաջինը դու տեսնես որսորդին, թե նա քեզ,- պատասխանում է.- ավելի լավա ոչ ես տեսնեմ իրեն, ոչ նա ինձ:
- Գետը ջրաղացը տարելա, չախչախի մասին ես մտածում:
- Քարի պուճուրը չի մեծանում, մնացածը մեծանում են:
- Եթե չես կարում մարդուն լավություն անես, գոնե վատություն մի արա:
- Ընկեր եղի լացի, ոչ՝ հացի:
- Խելառի աղունը աստված ա աղում:
- Սարում հունձ անողը, դաշտում էլ հունձ կանի:
- Կկվից փխս հոտա գալի, կարծում ա բնիցա:
- Շունն էլ չպառավի, ասում էին ծերերը:
- Ագռավին ասում են, գնա աշխարհի ամենասիրուն թռչունը բեր: Գնումա իր ճուտին բերում:
- Խելքը մինչև մտածումա գետը ոնց անցնի, խելառը արդեն էն ափինա:
- Խնկն խրատն ինչ անի, սևին սապոնն ինչ անի:
- Մի խելառ քարը քցեց ձորը, յոթ խելք չկարացին հանեն:
- Մի կնգա քանդածը տաս տղամարդ չեն կարում սարքեն:
- Կին կա տղամարդա, տղամարդ էլ կա կինա:
- Ամեն ինչի թագենա լավը, ընկերոջ հինը:
- Խելառին տարան հարսանիք, ասեց՝ ըստեղ լավա քան մեր տանը:
- Քոռի տեղը՝ շիլդոն լավա:
- Քոռն ինչա ուզում, երկու աչք:
- Լղար մարդուն ասում են,- վրեդ մի շամփուր միս չկա:
- Մի իմաստունի հարցրել են, աշխարհում տղամարդիկ են շատ, թե կնանիք, պատասխանելա,- կնանիք, որովհետև հենց տղամարդ կա, նաեղա կնիկ:
- Հենցա սարի ծաղիկ ըլի:
- Հենցա Ակնի ծորի մնիշակ իլի:
- Հենցա ծաղկած գիլասի ծառ իլի:
- Մարդ իլի, ոչ թե նամարդ:
- Քյասիբը իրա խելքից ա քյասիբ իլում:
- Կուշտը սովածին չի հասկանում:
- Ջյուրը կուճուրիննա, խոսքը՝ մեծինը:

- Իսկական տղամարդ տղեն բեղ կպահի, կատուն էլ բեղեր ունի, բայց մարդ չի:
- Տղամարդ տղու խոսքը մինը կիլի:
- Սուտասողի տունը նիկցավ, չիվատացին:
- Էշի բեռը, որ ծանրա իլում, կանոխա քինում:
- Մարդ կա, սատկած էշիա ման գալի, որ նալերը հանի:
- Գողը, որ տանիցա իլում, եզը երթիկով է հանում:
- Բոյը կուճուր մարդը ինչքան տափի երեսինա, էնքան էլ տափի տակինա:
- Ձուկը կերար, գինին խմիր, վայ ձկան կլխին, ճյուկը կերար ջուր խմիր, վայ քու գլխին:
- Էն ինչը չի մարսվում, ուտողինա ուտում:
- Ամեն մարդ իրա յորդանն իգյորա պիտի վըտը մեզնի:
- Իգիթ տղի սահմանը իրա թուրնա:
- Ծիտը երազում կորեկա տենում, աչքերը բացումա, տենում ցեխում վեր ընգած:
- Հասկացողին մին ասա, չհասկացողին՝ հազար ու մին:
- Բոզի աղջիկը ուզի, աղջիկդ հարս մի տուր:
- Ուստա շանը «Քուչի-քուչի» չեն անում⁷¹:
- Խոսկ կա տունա շինում, խոսկ կա տունա քանդում:
- Ասիլ էլ կա, ասիլ էլ. ասիլ կա՝ տունա պիրում, ասիլ էլ կա՝ տունա քցում:
- Հանդը լիզը խոտա, ամմա պախրըքը մինը մինի թավազա են անում:
- Շան կրկաժին շավթի կորիզ:
- Ում վիրա շունա հաչում, ինձ վիրա կատույա մլավում:
- Ապրանքը տըրը կլխին, ռախըն հերը կլխին:
- Չվանը կափավնա անց կենում:
- Կարկուտը թակած տըղնա թակում:
- Ջիլինց էշը տավարն արածա:
- Ճոթ իլած հացը նիստա չի կընալ:
- Խոսկը շիքարավըմ կըտրում:
- Ատա կը հըրը լիս տառնա...
- Մի ճուղի նստած հազար ճուղա թափ տալի:
- Բիզի ողխին հափռավը տալ չըն:
- Եզը վըրա կըցնում, տակըն հորթ ուզում:
- Կանանչ խոտի էլ քինա, թուշ չրանումա:
- Դուզն ասողին մի ծիա պըտկը, վըր թուշ նիիլի, փախճի:
- Կիճուճը թոլ իլավ, խըփին քիթավ:
- Կուշտը սովածի դադըր գիդալ չի:
- Ատա տու մահի մտըն ինգինես:

⁷¹ Գրի է առել Անուշ Աղիխանյանը:

- Աջալը վըր կալիսա, մաջալ չի տալի:
 - Մահը մեծ ու կուճուր չի ճնանչում:
 - Տարտակ փըտին շուն չի հաչում:
 - Ինչ ես կոնտակին ծիմերուկ տինում:
 - Շունը շան կշտին վըր կապըս, յա հաչալը կսվըրի, յա կծիլը:
 - Կրակի վիրա եղա լցնում:
 - Երկու վախը մի մահա:
 - Հացը՝ հցրարին, պուրթը՝ կիզրարին:
 - Կիլի կլիսին ավետարան կըրթացին, ասըց վըջխարը սըռը կտրումա:
 - Պըտկըն ծաղկածա:
 - Քոսուտ էձը ակնընա ճուր խմում:
 - Մըր ճիրերը մի առվավ չըն քինում:
 - Հաստ ու պարակ մի կինա:
 - Մի սանդրի կտավըն:
 - Ստի մանգգիլը կարճա (հորս խոսքերից):
 - Ծեռը ծեռա լիվանում, էրկու ծեռը՝ իրես:
 - Վչխարը կիլին պահա տվել:
 - Էջի ընջակումը քունլած:
 - Կարկուտը թակած տըղնա թակում:
- Զիզի շորեր, սև-սև օրեր⁷²:
 - Բուզունը մի կում ջուր, ուավըտը՝ մի կուժ ջուր...
 - Ինչքան մեծանում ես, քզանա կուճուրից պյան ես սըվերում:
 - Արա ինձ հետի, սվըրի քըզ հետի:

ԲԱՆԱՆՑԱ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

* * *

Մըր թագա տարին շնհավըր իլի⁷³,
 Ինչքան ապրընք ուրախ ապրընք,
 Շառ ու փըրցանքա հեռու իլենք,
 Կոիվ-ղլմղալի մեջ էլ չինգինենք:

* * *

Սաղ իլենք, սաղսալամաթ իլենք,
 Մըր ծեռին ու վըտին իլենք,
 Մըր ըշխադանքը մըզ հալալ իլի,
 Ուրիշինի վիրա աշկ չիտինենք:

* * *

Քեփ-ըրխությունից անպակաս իլենք,
 Մեծերի դադըրը գիդացող իլենք,
 Հալալը հըրամըն ճոկող իլենք:

* * *

Ինչ փիս պան կա թուրքին իլի,
 Մըր պարլիսը միշտ պարի իլի,
 Ամբարնըրումս միշտ հաց իլի,
 Ուջաղի կրակն ըլ թեժ իլի:

* * *

Տիոներըս միշտ պաց իլեն,
 Սուփրա-սեղանը քիցած իլի,
 Քացող-եկողը շատ իլեն,
 Համա վըտնատակ չտան, մոտառըն:

* * *

Արըվը կլխնըրիս հաստաղ իլի,
 Երգիր-աշխարին հաղաղութին իլի,
 Մընք ըլ դաթումը ապրընք,
 Իվիլնանանք, պակաս չիլենք,
 Քըռըփուչ չիլենք, պրծընընք...

⁷² Բանանցում տարածված ասացվածքներ:

⁷³ Գրի է առել Անուշ Աղիխանյանը:

ՔԱՆԱՆՑԱ ԽՐԱՏՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Խանում տատիս (Մոնթունց Խանում) խրատներից ու խորհուրդներից²⁴

- Տան կինը պետք է հոթաթով (հոգեպահուստով) լինի, անսպասելի հյուրի համար, սեղանին բան ունենա դնելու:
- Պետք է մարդու ունքամեջ նայես, տրամադրությանը նայես, նոր խոսաս:
- Մարդը մեր կողքին է, նույնիսկ մահից հետո, եթե նրա ասած լավ խոսքը և արած բարի գործը հիշվում է:
- Մեր հիշողությունը մենք ինքներս ենք:
- Երբեմն օգտակար է հիշել անցյալը, ներկան ավելի արժևորելու համար:
- Ոչ մեկի մասին վատ մի խոսիր, բայց լավի մասին շատ պատմիր:

Սանդուխտ տատիս (նանի) խրատներից ու մտքերից.

- Պառավը գիտկան չի, բայց գլուխը եկածա:
- Լավ բանը մենակ չեն ուտի, պետք է հյուրին էլ տաս, որ իմանա դու էլ ես լավ բան ուտում:
- Լավ է հոտի, քան թե հատի:
- Ա լեզու լակ-լակ, ա գլուխ թակ-թակ:
- Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է:
- Լավ մարդու ղադրը պետք է իմանալ:
- Մարդ պետք է դիմացինի ունքամեջը նայի (տրամադրությանը նայի):
- Ուներ իր Աղոթքը, իր Մեծ տատից ստացած, հավատն առ Աստված, որ չար աչքից և հիվանդությունից փրկում էր: Իսկ քնելուց առաջ շշուկով աղոթում էր, Աստված իմ ճղները ինձ բախշի, անփորձանք լինեն:
- Տան մեջ միշտ մի բան պակաս թող, որ չար աչքը չկանի:
- Թու չար աչքին, չար սհաթին, չար նյաթին:
- Տկլորը բարձրացավ սարը, սարի անունը բեղնամ արեց (զգեց):
- Բեղասիլ գատ ես (երեխա ես):
- Տաք հագի, որ չմրսես:
- Կետը որ վրարումա, կողքերն էլ ա թրջում:
- Թրի պտկեն արինա կաթում (ծաղրանքով ասված խոսք):
- Կոնումը կա, գլխումը չկա:
- Մահի մտքից ընկնես:
- Տնազ տնազ ուր էս գնում, տնազ անելու:
- Աշխարհում կա 3 սոսկալի բան՝ մահ, բաժանում և աղքատություն:

Շորս՝ **Ավետիս Տերյանի** մտքերից: Նրա մեկ հայացքում ավելի խորը իմաստ կար, քան 1000 բառի մեջ:

- Մի գնա այնտեղ, որտեղ քեզ չեն սպասում (ամեն տեղ հյուր կամ ծննդի չէր սիրում գնալ):
- Տղամարդը քարից կակող ամեն ինչ կուտի (հայրս՝ Ավետիս Տերյանը ինձ էր ասում):
- Երբեք ընտանիքի անդամից ոչինչ մի թաքցրու, հատկապես՝ փողը:
- Ավելի լավ է լռել, քան խոսել:

Մորս՝ **Գոհար Աղիխանյանի** մտքերից: Մայրս բարեպաշտ կին էր և այդ կյանքով ապրեց մինչև մահ: Մայրական աղոթքը ամենազորեղն է աշխարհում, դրա համար էլ մայրս աղոթել սովորեց, որ գրի էի առել ես, մեր Սանդուխտ նանից, և մեզ ու հարազատներին աղոթում էր հիվանդության, գլխացավի և գործերի հաջողության համար: Եվ օգնում էր Աստծուն ուղղված Մայրական այդ աղոթքը: Սանդուխտ նանին այդ աղոթքը սովորեցրել էր իր մայրը, նրան՝ իր մայրը...

- Հավատքը այն է, որ դիմացինիդ վատ չես ցանկանում և անում:
- Ծնողի ամենամեծ արժանիքը, որ իր երեխաներին անփորձանք մեծացնի:
- Ծնողի համար մեծ երջանկություն է, իր զավակներին և թոռներին պահել և մեծացնել:
- Ծնողի ամենամեծ քննադատը իր զավակներն են և հակառակը:
- Իսկական մեծ հարստությունը այն վսեմ արժեքներն են, որ ծնողը ներարկում է իր զավակներին:
- Ես լռությամբ հաղթում եմ:
- Տան կնոջից շատ բան է կախված:
- Ճուտը ձվում է երևում:
- Չափդ ճանաչիր, երբ մարդ ճանաչում է իր չափը, նա ամեն ինչ գիտի:
- Հյուր գնալիս, սպասիր երկրորդ անգամ ասեն, նոր հյուրասիրությունից օգտվիր (պահելով էթիկայի կանոնները, հաճախ սոված էինք տուն գալիս):
- Նգյարան եմ (անհանգիստ էր), երբ ուշանում էինք:
- Վերջին խոսքը երբեք առաջինը մի ասա:
- Լավ մարդիկ շատ կան, բայց քո հարազատը քո քույրն ու եղբայրն են:
- Մայրը միշտ մայր է, զավակներն են տարբեր:
- Խոսք կա, աշխարհ արժե:
- Գետը որ վարարում է, կողքերն էլ է թրջում, այսինքն՝ շատ ունեցիր, որ կողքիդ բարեկամներին օգնես:
- Տված հաջողությունը բաց մի թող:
- Լավ մարդու ղադրը պետք է իմանալ:
- Հափռումս աղ չկա: (Մայրս՝ Գ. Աղիխանյան, երբ իր լավ արած գործը անտեսում էին և չէին գնահատում):
- Մարդուն հարգում են նաև, տեղից վեր կենալով:
- Դարդ էլ կա, դարդի ճուտ էլ:

²⁴ Իր հարազատներից լսած խրատներն ու խորհուրդները գրի է առել Միքայել Տերյանը:

ՓՈՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասանի Մուխին (Դադյան) բանակից տուն է գալիս: Գյուղամեջին մեքենայից իջնելով գյուղացիներից հարցնումա.

- Նեուժելի վ Բայանե համբալ նետու:
- Բըլն նո ումեր,- պատասխանում է մի գյուղացի:
- Կտո՞:
- Տվոյ ատեց,- պատասխանում է նույն գյուղացին:

Գյուղսովետի նախագահը՝ Թմասունց Քոքորը, Բբանց Մանին (Ջաղեթյան Կարապետի կինը) հափշտակություն կատարելու համար կանչում է գյուղսովետ և ասում,- ինչի ես գողություն արել,

- Գողությունը քեզնից եմ սովորել,- պատասխանում է Մանին:

Մի օր Թնիսանց Արշակը դուրս է գալիս փողոց ու բարձր գոռում,- Այ ժողովուրդ, Տերունց Համբարձումը (Դացխի) եկելա բախ գողացել: Հարևանները հավաքվում են ու հարցնում.- Արշակ դայի, յանի Դացխին ոնց կարա գյուղի մի ծայրից գա էս դրադը քո բաիը գողանա:- Ես էլ էտ եմ ասում էլի, հարևաններս են տարել, հու Դացխին չի տարել:

Թնիսանց Արշակը Հրաչիկի հետ տանը քնած է լինում: Մյուս տղեն՝ Մուխին գիշերվա կեսին խնամ մտնումա տուն ու սեղանի վրայից մի քանի ափսե խփում է գետնին ու ջարդում: Արշակն ասումա,- Ա Հրաչ, վեր կաց Մուխին քոմագ արա, Մուխին կբեզարի:

Թնիսանց Արշակը բաղերում դուրուլչի (պահակ) է լինում: Մի օր այգին գողեր են մտնում, սա ընկնում է գողերի հետևից, բայց չի կարողանում բռնի ու հետևներից ձեն է տալիս.- Մեր Հրաչին ասեք ռավուտը շուտ էշը վերցնի գա: Հաջորդ օրը Հրաչիկը էշը բերում է, տալիս հորը: Դրանից էլ իմանում են, ով էր գողը:

Մի օր հարսը մտնում է տուն, տեսնում Արշակ հայը կաթսայի կափարիչը բացում է,- Դու մարդ ես, թե՛ կնիկ,- վրա է բերում հարսը:- Մի հետի մարդ եմ իլել, համա հիմի գիդում չեմ:

Արշակը փողոցում նստած իր թոռանը գրկին պահելուց է լինում:- Պարի օր, Արշակ դայի,- անցնելով բարևում է մի գյուղացի:- Էլ Արշակ դայի չեմ, Արշակ աքիր եմ:

Թնիսանց Արշակ դայի տղան՝ Աթանեսը Երևանից գալիս է գյուղ հարսանիքի: Մի օր, երբ տղան տունը չի լինում, հարսին հըրցընումա, «Ա քոմատաղ Ռոզիկ, յանի վըր Աթանեսը մի 10 մանեթ դարկի ինձ, կնեղանաս»:- Չէ հայրիկ,- ասումա հարսը: Երբ տղըն գործից կյալիսա տուն, առանձին հըրցընումա,- Աթանես, քոմատաղ, վըր մի 10 մանեթ դարկես, Ռոզիկը կնեղանա:- Չէ Հայրիկ:- Բա յուզողը ես եմ, էդ խիչեք դարկում:

Միրզանց Արտեմը գյուղամիջին՝ Փողոսկումը ասումա,- Արշակ, մի տաս մանեթ կլինի մոտդ, պարտքով տաս: Արշակն ասումա,- Խի համամումն եմ, որ չլինի:

Ղուզի հողի ձորումը աբեշիկը (անտառապահ) Թնիսանց Արշակին բռնումա թաց ծառ կտրելու համար: Հարցնումա,- Խի ես թաց ծառ կտրել:- Վըչինչ, փուռի մեջ կդնեմ, կչորանա,- պատասխանում է Արշակը:

Մի ձմեռ առավուտը քամին բազմանդամ Տոնունց Ավագի տան դուռը բացումա, ցուրտը ձնախառը լցվումա տուն: Ոչ մեկը չի վեր կենում, որ դուռը փակի, բոլորն էլ զլուփները մտցնում են վերմակի տակը: Ավագն ասումա,- Հայ մի իգիթ տղա իլեր, վեր կենար, դուռը փակեր:

Որ մեր հարսին տանես Տիրքի գյաիը (գագաթ) սրոկ տաս, ոչ մեկը չի քինա սրոկը փոխի (փիս բնավորությամբ կին էր):

Տոնունց Ավագը Ղմշկուտում ցախը բարձումա էշին ու կրակից մի ածխակոթ վերցնելով չիբուխը վառումա ու ածխակոթը դնում բեռի մեջ, որպեսզի կայծքար չփչացնի ճանապարհին ու մի անգամ էլ չիբուխը վառի: Էշն առաջնա անում ու գնում տուն: Ճանապարհին մի գյուղացի է հանդիպում, մի քիչ զրուցում են, հետո քայլերը արագացնում է, որ հասնի էշին: Գալիս հասնումա տուն, տեսնում բեռն էլ վառված, էշն էլ:

* * *

Տոնունց Ավագի երեխեքից մեկն ասումա,- Ապա էսքան ծյունը ալիբ պիտուր
Հերն ասումա,- Եթե ալիբ իլեր, հիմի Բոլեցիք պատուհանի տակերից լոխ հա-
վաքել, տարելին:

* * *

Տոնունց Ավաքը գնումա Խանլար, մի գերմանացու համար հունձ անում: Գոր-
ծը վերջացնելուց հետո գնում է գյուղ, որ ուլախ (ծի, էշ) բերի, հնդավարձը բեռնի
տանի և որպեսզի չշփոթի գերմանացու տան տեղը, քանի որ բոլոր տները իրար
նման էին, վերցնում է մի տակառի օղակ և կախում այդ տան դիմացի ծառից:
Մինչև հետ վերադառնալը երեխեքը օղը վերցնում են, որ խաղան: Ավաքը հետ
է գալիս Խանլար, չի գտնում գերմանացու տունը ու քոռ-փոշման վերադառնում է
գյուղ: Գյուղում հարցնում են,- Ո՞նց թե տան տեղը ճարեցիր ոչ:- Թե կաչաղակի էք
ու որձը կջոկես, ուրեմն Խանլարի տներն էլ կջոկես,- պատասխանում է Ավաքը:

* * *

Բարատովը (Արմենակ Գևորգյան) հիվանդ վիճակում թաղում գնացած ա լի-
նում, հարցնում են,- Վոնց ես, Արմենակ դայի: Դեպի մեռելի կողմը նայելով ասու-
մա,- Տիրա մոտ ես լավ եմ: Ես վրը մըռնեմ, ինձ կանգնած կթաղեք: Հարցնում
են,- ինչի,- Վըր թոռ (անձրև) կյա, կարողա նորից տիլարեմ:

* * *

Թնիսանց Արշակը Միրզանց Արտեմին ասումա,- Ցակատդ տուր, քինամ
փուշ կտրեմ,- խի քեզ չունես:- Իմը քարին նի կունի:

* * *

Տոնունց Գալուստը մտնում է տուն, տեսնում փոքր եղբայր Սիմոնը իր կնոց
հետ տեղաշորում..., ասումա,- Ես չեմ սիրում, որ ամեն մարդ իրա հետի կնիկ
չի պահում:

* * *

Բարատովը կոլխոզի նախագահ եղած ժամանակ միշտ նորապսակներին
օգնել է՝ տալով ցորեն, գարի, յուղ, գինի: Շուղի Հայկոն ամուսնանալու ժամանակ
գալիս է օգնություն խնդրում: Բարատովը հարցնումա,- Ում ես ուզում,

- Մրզկեցիա:
- Խի մեր գյուղացի չես ուզում:
- Մեր գյուղում հարմար աղջիկ չկա:
- Ա շան տղա վընց չկա, մերս՝ մին, կինս՝ երկու, 3 աղջիկս՝ հինգ:

* * *

Բանանցում մեկ Թաթունց Նիկոլին են գյուղսովետի նախագահ դրել, իսկ
Թմասունց Քոքորին՝ կոլխոզի նախագահ, և հակառակը: Այդ փոփոխությունները
կրկնվել են և Ճղարունց Մյադին ասելա,- որց որ մեր տան շկափի ու շփաներկի
տեղերը փոխես:

* * *

Մկրտչյան Գուրգենի և Սուրենի հայրը մահանումա: Եղբայրները որոշում
են տունը բաժանել, որը երկհարկանի էր, երկու սենյակ ներքևում, երկուսը՝
վերևում: Փոքր եղբայրը՝ Սուրենը խեղճ էր: Մեծը ասումա,- Սուրեն վերի տները
ինձ, տակինը՝ քեզ:- Լավ համաձայնվում է Սուրենը,- ես իմ փայ տները քանդում
եմ: Էս պատասխանից Գուրգենը վերցնում է մի սենյակ վերևում, մի սենյակ
ներքևում: Նույնը բաժին է հասնում Սուրենին:

* * *

Թմասունց Քոքորը ինչ-որ հարցով գյուղխորհուրդ է կանչում խեղճ Սուրենին
ու անտեղի հայիոյում: Սուրենը ձեռքով թփթփացնելով նախագահի սեղանին
ասումա,- Էս սեղանը մեղավոր չի, որ դու ես հետևը նստած:

* * *

Հայրի Մայանը անուս հեքիմա լինում: Որսի ժամանակ վիրավոր արջը Տե-
րունց Բեգլարին գրկում ու ջարդում ա չափարները: Մայանը բուժումա: Մի կնոց
կովը հարուստ տալի, պոզը մտնումա փորը: Մայանը տաք ջրով լվանումա փորը,
կարում ու փափուկ յուղուծու անում դնում վրեն: Բուժվումա: Բատրականց Մե-
խակի ձեռը պիտի կտրեին, բուժումա: Մուրդի Արմենակը վերա ընկնում, գլխի
կաշին ընկնումա վիզը, էլի Մայանը բուժումա: Բանանցի բժիշկը գնում է Խանլար
ու բողոքում Մայանից: Կանչում են Մայանին ու տուգանում 50 ոուրլի: Մայանը
ասումա,- որ սղքածին 50 ոուրլի եք շտրաֆ անում, բա մեռածի համար ինչքան
վեր կունեք:

* * *

Մյուրդի Արմենակը մահացած է լինում: Սգո թափորը կամաց շարժվում էր
առաջ: Հանգուցյալի որդի Մադոսի ձեռքից պողրուկ արած (թևանցուկ) գնում էր
իրենց բարեկամ մի միլիցիոներ: Գուլյան Հրանտը ասումա,- Մադոսը հոր վրա
չի գնում, միլիցով են տանում:

* * *

Յոտունց Մակիչը խմած ժամանակ շատ կովարար մարդ էր: Մի օր կովի
ընկեր չի ճարում, իր պենջակը հանում, կախումա ծառից ու լավ ծեծում:

* * *

Չանունց (Բաղայան) Հաները՝ Ջրպը գողանումա Առաքելանց Վասիլի (կրոն) խաղողը, բարձում ձիուն ու տանում Վերին Քարհատ (Դաշքեսան) ծախելու: Խաբարը հասնում է Վասիլին ու սա ժամանակ չկորցնելով գնում և գողին բռնում ա շուկայում:– Փչացած շուն, խի ես գողացել խաղողս: Սա թե,– Ռխիտ լայիղ խաղող ես պահել, թթույա, չի ծախվում, խոսումել ես:

* * *

Դղոնանց քարերը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ սովի տարիներ էին: Իսրայելյան Սապետի ձեռքին էին նայում ութ անչափահաս երեխա: Որպեսզի կարողանա քնեցնել սոված երեխաներին, որոնք ուտել էին ուզում, քարերը ցնումա ջրով լի կաթսան ու դնում կրակին: Քանի երեխեքը հարցնում են, մամա ճաշը չեփեց, ասումա,– մի քիչ էլ համբերեք: Եվ այսպես այնքան է կրկնում, մինչև երեխեքը քնում են: Այս դեպքից հետո, երբ գյուղում մի բան ուշանում էր, ասում էին «դղոնանց քարերը չեն հու»:

* * *

Ամառային արձակուրդի օրերին բանանցեցիների երեխաներն ու թոռները քաղաքից գալիս էին գյուղ, հանգստանալու: Մի քեփի ժամանակ Դղոնանց (Իսրայելյան) Թյունին ասումա,– Ես էս բաժակով խմում եմ օգոստոսի 31-ի գենացը, որ արձակուրդները պրծնեն, խիզանը (երեխեքը) գնան դպրոց, մեր գլուխները հանգստանան:

* * *

Տոնունց Ավաքի հազարաշեն տան օճորքը (առաստաղը) պահող հաստ սյունը ճաքճաքված էր ու մեջը լիքը փայտոջիլը խշշում էր: Չգիտեին ոնց պրծնեն դրանցից: Մի երեկո Ավազը իր որդի Աշրափին պատվիրումա, որ զուռնեն փչի: Ջուռնի գիլ ձայնից գյուղի ջահելները, հարևանները և սարից հենց նոր իջած մարդիկ ծլլաշար մտնում են Տոնունց տուն, մի քիչ հանգստանալու: Հյուրերին տեղավորում են սյան շուրջը: Իսկ զուռնաչին, տան անկյունից թուշերը ուղքած մեկը մյուսի հետևից նոր նվագներ էր փչում: Եկվորները դատարկ գալիս էին, բեռնված գնում: Այսպես Տոնունք ազատվեցին ոչիլներից:

* * *

Տոնունց Ավագի որդիները շատ ծուլ էին: Երբ գնում էին անտառ վառելափայտ բերելու, ծուլանում էին փայտը կտրեն: Ամբողջ մեծ գերանները բերում էին տուն, գերանի մի ծայրը դնում փեչի մեջ, իսկ մյուս ծայրը թողնում սենյակում: Էսպես գերանը մի կողմից վառվում էր, իսկ մյուս կողմից առաջ էին տալիս:

* * *

Տոնունց Ավագի որդիները այնքան ալարկոտ էին, որ տանից դուրս չէին գալիս, տեսնեն դրսում ինչ եղանակ է: Նրանք մի շուն ունեին Թագի անունով, ևս շանը կանչում էին տուն ու ձեռքը դնում շան վրա, որ թաց էր լինում, ուրեմն դրսում անձրև է գալիս:

* * *

Տոնունց շավարը: Տոնունք շատ աղքատ են եղել, բայց բազմամարդ: Սրանք ունեցել են տղամարդու մի շավար: Ով առավոտը շատ վերա կացել, շավարը հագելա ու տանից դուրս եկել: Մնացածները ամբողջ օրը մնացել են տանը կառած:

* * *

Սովի տարիներին ուստա Մակիչը (բաննահ-որմնադիր) աշխատում էր Գանձակում: Մի փուտ ցորենը շալակին գալիսա հասնում Բանանց, որը 25 կմ հեռու էր Գանձակից: Հոգնած ու տանջված շալակը թողնումա Անյանց ճաղացում ու գալի տուն, կնջը ասում,– ա կնիկ 10 փուտ ցորեն եմ բերել, հենա Անյանց ճաղացում, գնա աղա: Կինը գնումա, ցորենը աղում, բերում տուն ու ասում,– Այ մարդ բա ասում էիր 10 փուտ ցորենա, ըստեղ մի փուտա:– Դու քինա Գանձակից մի փուտ ցորենը շալակիդ մինչև գյուղ պեր, տես ինչքան կտանա:

* * *

Չաթի Սհակի Գոգալը (Մկրտչյան Սաշա Մեխակի), որ կապիտան էր, Գանձակից գնացքով գնում է Ռոստով: Կայարանում իջնելով, մի համբալի կանչումա ու ասում,– Գնա կայարանում ինչքան համբալ կա, կանչի բեր էստեղ: Էս համբալը կարծում է, որ կապիտանը շատ վեշ ունի, գնումա բոլորին կանչում: Սաշիկը ասումա,– սաղոտ էք եկել, սրանք թե,– հա: Սաշիկը ասումա,– Кировабадский амбалам вам привез передали (Գանձակի համբալները սաղիտ բարև են դրկել): Ու թողնում-հեռանում է: Ռուսները մնում են հետևից նայելիս:

* * *

Սաշիկը Վուգոգրադում ռոտի հրամանատար է լինում: Հրաման է տալիս ռոտին.– ռոտա ավսար, զգաստ, իսկ հետո ասում,– ազատ: Այս դեպքի համար կոչումից մի աստղ իջեցնում են:

* * *

Բանանցում ցրտից մեռնող շատ է եղել, բայց տաքից՝ միայն մեկ հոգի, էն էլ Տոնունց Սողին: Սողին մրսածա լինում, բժիշկը խորհուրդ է տալիս, որ մի լավ քրտնի, կանցնի: Սա գալիսա մտնում տաք փուտը, երկար մնում ու խաշվում: Դուրս է գալիս փոփից ու մի քանի օր հետո մեռնում:

* * *

Չորավար Անդրանիկի հրամանով Տյուտյուլը (Գևորգյան Համբարձում) գնում է, որ մի թուրք խփի: Երեկոյան գաղտագողի անցնում է պարսպի վրայով ու մոտենում տան պատուհանին: Ներս է նայում, տեսնում, որ թուրքը խաղում է երեխաների հետ: Էլ չի խփում, տասնոցը դնում է գոտկատեղին, հետ դառնում ու զորավարին զեկուցում, որ երեխեքի պատճառով չի կատարել հրամանը: Անդրանիկը գովում է նրա մարդկայնությունը: Հետագայում Տյուտյուլը կատարում է հրամանը, սպանելով թուրքին:

* * *

Երբ Անդրանիկ զորավարը զենքերը հանձնեց Էջմիածնին և ազատ արձակեց զորքը, Գևորգյան Համբարձումը (Տյուտյուլ) վերադարձավ հայրենի Բանանց գեները ձեռքին: Ճանապարհին մի թուրքաբնակ գյուղում աղբյուրից ջուր է խմում: Այդ ժամանակ պղնձե կուժը ձեռքին աղբյուրին է մոտենում նաև մի թրքուհի: Հասկանալով, որ ջուր խմողը հայ զինվոր է, թրքուհին ավագ է վերցնում և սկսում զզվանքով մաքրել աղբյուրի գունգը (խողովակը) և հետո լցնում կուժը: Համբարձումը նկատելով, որ թրքուհին իրեն պիղծ է համարում, զայրույթից հանում է թուրքը, սատկացնում նրան:

* * *

Տյուտյուլի էջը սատկում է: Էջի ոտքերից պարանով կապած քարշ տալով տանելիս ա լինում, որ գցի գետը: Գյուղսովետի մոտով անցնելուց, որտեղ ինչ-որ պարտիական ժողով է լինում էդ ժամանակ, հավաքվածներից մեկը հարցնում ա, - Համփարց, բա էջդ խի ես առանց տերտերի թաղում: Տյուտյուլը պատասխանում է, - Իմ էջը քո նման պարտիական ա, տերտերին չի հավատում:

* * *

Տյուտյուլը կոյխոզում ռաբաչի էր աշխատում: Մի օր Ներքի հանդին սայլը խրվում է ցեխի մեջ ու ձիերը կանգ են առնում: Տյուտյուլը սկսումա մտրակել ձիերին, հետն էլ դահյե՛ գոռալով: Կողքին նստած ընկերը նույնպես սկսում է դահյե՛ գոռալ: Տյուտյուլը ասումա, - Ձենդ կտրի, շոֆերը մեկը կլինի:

* * *

Տյուտյուլը ներկարար էր: Մի օր Կուլչից (Խաչակապ) հրավիրում են ակումբը ներկելու: Կուլչին Բանանցից հեռու էր 7-8 կմ: Նա Կուլչի է գնում էշով: Էջը կապելով ակումբի սյունից, սկսում է աշխատել: Կուլչեցիները որոշում են խաղ խաղալ նրա գլխին ու էջը գողանալով, տանում կապում են մեկ այլ տեղ: Աշխատանքից հետո, տեսնելով էջը չկա, գյուղխորհրդի նախագահին բողոքում է, որ էջը գողացել են: Նախագահը գործին տեղյակ լինելով, ասումա, - Համբարց դայի, կարողա էսօր էջը չես բերել, - Տյուտյուլը ասումա, - Բա Բանանցից մինչև Կուլչի քեզ եմ նիհլած եկել: Բոլորն էլ ծիծաղում են ու էջը բերում տալիս տիրոջը:

* * *

Տյուտյուլը Բանանցի հիվանդանոցում պառկած է լինում: Մի մահամերձ թուրք են բերում, դնում կողքի մահճակալին: Ասումա, - Ես Անդրանիկի զինվորն եմ իլել, սրան տարեք, քանի չեմ մորթել:

* * *

Հիվանդանոցում պառկած ժամանակ մի օր հացի կապոցը ձեռքին, հոնքերը կիտած ներս է մտնում կինը: - Էտ ինչա իլել ա կնիկ: - Է ա մարթ, բա ապիլ չես, վարենին (մուրաբա) եփել եմ դրել տափին, որ սառչի, խոզը եկել կերելա: - Ոչինչ քեփդ փիսիցնիլ մի, բա խոզը միշտ պիտի լակ ուտի, թող մի հետ էլ վարենի ուտի:

* * *

Տյուտյուլը իրանց բալկոնչիկում կաղնած քահ-քահ ծիծաղում ա ու ծափ տալի, կանչում ա իմ հորը, որը գործով տեղ ա գնալուց լինում, - Վազգեն քրմմատաղ (թանձր էր խոսում) յե մմի սատը, Չովդառիցը մի խոզի ճուտ ըմ առըլ ամմա հազ-զում ա հազզում ա, ասում ըմ խոզի յեղ տամ, քյոմակ կանիլ ինչ կասըս:

Գուրգեն Հովսեփյան

* * *

Դավաքանց Սարգիսը նոքարի հետ մի թումբի վրա նստած հաց ուտելուց, գոռով փափախը թոլ է տալիս, որ մինչև նոքարը գնա փափախը բերի, ինքը շատ հաց ուտի:

* * *

Բանանցեցի հայր ու տղա նավակ նստած Քուռ գետում ծուկ են որսում: Հանկարծ նավակը սկսում է սուզվել: Խորասուզման պահին տղան հարցնումա, - Ապա յանի աշխարհում մեզնից նեղ տեղը մարդ կա: - Բա ոնց չկա, այ բալա: - Էդ ովքեր են: - Նրանք, ովքեր խորովածը զցած պատրաստ, սպասում են, որ զինին պիրեն:

* * *

Տոնունց Ավաքին նշան դնելու ժամանակ ցույց են տալիս սիրուն աղջիկ, իսկ պսակին տալիս գեշ աղջիկ՝ Ջադային: Սա սև, տգեղ ու անճոռնի աղջիկ էր: Հարսին բերում են տուն, 6 օր հետո հարսի երեսը բացում են, որ Ավաքը տեսնի ու հարցնում են, - Հը ոնցա: - Դա էլ է աստճո ստեղծած:

Ավաքը ասում էր, - Խալիխի կանանց ոտքերին եմ նայում, ոնց որ Բորժոմի շիշ լինի թարս դրած, մերինն եմ նայում, ոնց որ օջախին դրած կաթնավի տակի ընձղակոթեր լինի: Հետագայում սրանց որդի Աշրափը ասում էր, - Մինչև Բեռլին գնացել եմ, բայց իմ մոր նման գեշը ոչ մի տեղ չեմ տեսել:

* * *

Տոնունց Ավաքին մի անպետք էշա լինում: Որոշումա տանի Գանձակ ծախի Որպես գովաբանող միջնորդ հետը տանումա Մելիքյան Սիմոնին: Շուկայում Քիթ Սիմոնը այնքան է գովում էշին, որ էշի տերը փոշմանումա,- Սիմոն, դե որ էդքան լավ էշա, ինչի ենք ծախում, ու վերադառնում են գյուղ:

* * *

Տոնունց Ավաքի ընտանիքը չունևոր լինելով, երեկոները միշտ գունա-դիոլ էին նվագում, որպեսզի սոված երեխաները զբաղվեն ու քնով անցնեն: Այսպիսի «քեֆերը» տևում էին մինչև ուշ գիշեր: Իսկ հարևան Բաղալանք շուտ պառկում էին ու առավուտը շուտ վեր կենում: Մի օր Բաղալանց Մուքեղը 10 ո է տալիս Ավաքին, որ հաց առնեն ուտեն, միայն թե գիշերները չնվագեն ու իրենց քնահարած չանեն: Ավաքը փողը վերցնումա ու կնկան ասում,- Գնանք ցորեն, գարի առնենք, գոնե մի քանի ժամանակ հաց կունենանք: Կինը ասումա,- Չէ պիտի յորդանի երես առնենք, հազար ու մի բան ունենք պակաս: 4 օր մարդ ու կնիկ իրար ունեն կրծում, ի մի չգալով ինչի վրա ծախսեն փողը: Վերջը Ավաքը փողը բերում տալիսա Մուքեղին ու ասում,- Առ, քո 10 ո քեզ, մեր գունա-դիոլը մեզ:

* * *

Ձմռան մի ցուրտ օր 2-րդ համաշխարհային պատերազմի մասնակից Տոնունց Համբարցին ինչ-որ գործով գալիս է Աղաջանանց Վարդի տուն: Սալյարկի փեչի մոտ կանգնած տաքանալիս է լինում ու հանկարծ փեչը պայթում է, կափարիչը շարտում և ծովսն ու մուրը լցվում է տուն: Համբարցին վախեցած ասումա,- Եթե 1941 թ. Սովետին էսպիսի տեխնիկա լիներ, Հիտլերը չէր համարձակվի հարձակվել:

* * *

Բաղալանց Քոքորը ջահել ժամանակ հացի համար միշտ կոփվ էր սարքում, իբր իր համար ճաշը քիչ են լցնում, տանը չեղած ժամանակ քիչ ճաշ են պահում և այլն: Մի օր մայրը մի լիքը կաթսա ճաշա եփում և սպասում են, մինչև Քոքորը անտառից գա ու բոլորը միասին հաց կուտեն: Քոքորը գալիսա տուն ու հարցնում,- Իմ փայ ճաշը պահել եք: Մայրը թե,- Հա իրեն դազանի մեջա: Սա գնում բացումա կաթսայի կափարիչը, տեսնում բերնեբերան լիքը ու ասումա,- Դուք, որ իմ փայը էսքան եք պահել, բա դուք ինչքան եք կերել:

* * *

Պրսեղանց Օվանեսը առավուտը սպանաղ է ուտում և կնոջ հետ գնում այգի: Կինը այգում բանջար ու փիփերթ է քաղում: Ճաշին բանջարը եփում է այգում և ուտում են: Երեկոյան գալիս են տուն՝ կինը փիփերթն է եփում, ուտում են: Օվանեսը դուրս է գալիս բալկոն ու էշի նման խոանչում: Կինը ասումա,- Այ մարդ, դու հո էշ չես: Օվանեսը ասումա,- Սաղ օրը խոտ են կերել, էշից ինչով են պակաս:

* * *

Ժամի պահեստում կոլխոզնիկների օրականին գինի են տալիս լինում: Տոնունց ուստա Չորուկ Սաքին մտնումա Եթիմի՝ Բդալանց Քոքորի տուն ու ասում,- Քոքոր քո կպրոնը (տիկը) տուր, իմ փայ գինին ժամի պահեստից ստանամ, տանեմ տուն ու կպրոնդ հետ բերեմ: Քոքորը տալիսա ու ասում,- Կպրոնը շուտ կբերես համ, չմոռանաս: Սաքին կպրոնը վերցնումա, գինին ստանում ու գնում տուն: Ճանապարհին Քոքորը դեմը կտրումա ու նորից ասում,- Սաքի կպրոնը շուտ բեր համ: Սաքին ջղայնանալով գինին թափումա ու կպրոնը շարտում Քոքորի կողմը, ասելով,- Առ կպրոնդ, սրանից շուտ չեմ կարա բերեմ:

* * *

Բդալանց Ապրիամի կինը բակը ավելուցա լինում: Ապրիամը ասումա,- Ավելու ուտեմ: Կինը թե,- Իսի դու էշ ես: Ապրիամը բռնում, կնոջը լավ ծեծումա:

* * *

Տոնունց դալլաք Սիմոնը 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ռուսիայում գերի է ընկնում: Պատմում է, որ սովից մի դիվիզիա զորք կոտորվեց, մենակ ես սաղ մնացի, որովհետև սովին սովոր էի:

* * *

Թնիսանց Սիմոնը հացի տոպրակը տալիսա նոքյարի ձեռքը (Տոնունց դալլաք Սիմոնը), որը այժերը պիտի պահեր ու պատվիրում,- Չոլի հացը համովա իլում, հետ կբերես, իրար հետ կուտենք:

* * *

Բաղալյան Եղիշի Թյունիկը սիրահարական նամակ է գրում Սիգանանց Մայանին,- Ձեր դռանը հաչամ ես, Ձեր հավերի հետ կուտ ուտեմ ես...:

* * *

Գյուղում տիկին Գոհարը մի անգամ գնում է դեկավարի մոտ, սա նրան ընդունում է անտարբեր ու համարյա չէր լսում նրա ասածը: Գոհարը նայում-նայում ու սպանալից տոնով ասում է,- Գիտե՞ս, որ Լենինին սպանողը կին է եղել...: Ղեկավարն իսկույն զգաստանում է:

* * *

19-րդ դարի 2-րդ կեսին բաղմանլարեցի քաչալ Յուսուփը Բանանցի այգիներից Գյուրջունց ազգից մի աղջիկ է փախցնում: Նրանք ունենում են վեց տղա, որոնց չեն թալաստում: 1905-1906 թթ. թուրքերը մի երկու անգամ փորձ են անում հարձակվել Բանանցի վրա, բայց այս վեց եղբայրները իրենց մոտ ընկերների հետ Ներքի հանդի տակ կտրում են թուրքերի ճանապարհը, մի քանիսին սպանում, մնացածներին հետ դարձնում, ասելով, որ մեր տատունց գյուղը չպետք է մտնեք:

* * *

Մանուշակյան Միքայելը (Մուքելը) Բանանցա սարում՝ Զանգի գահում լուր է առնում, որ Գանձակի խանը իր կառքով քիչ առաջ Ահմատտուխից եկավ անցավ դեպի Գանձակ: Նա իր ծին սրընթաց քշելով խանի հետևից, ավելի կարճ ճանապարհով հասնում է Ներքի հանդի ընդհանուր ճանապարհին, դիրքավորվում և սպասում խանի կառքի երևալուն: Քիչ հետո երևում է խանի կառքը, որին ուղեկցում էին թիկնապահները: Մուքելը դիպուկ մի կրակոցով սպանում է խանին, խփելով ճակատին: Թիկնապահները խուճապահար, չեն հասկանում ինչ կատարվեց, իսկ Մուքելին հաջողվում է փախչել:

* * *

Մի անգամ Մուքելը Խանլար գնալու ճանապարհին անցնում է թուրքական Թոփալիասանլու գյուղի միջով: Մի թուրք քար է շարտում վրան և Մուքելը թուրք հանում ու կտրում է թուրքի վիզը, բայց շրջապատվում է թուրքերով, որոնք կրակելով սպանում են նրան: Մուքելը քաջագործություններ շատ է կատարել, բայց քիչ բան է հասել մեր օրերը:

* * *

Ծերունի թուրքը: 20-րդ դար սկզբին բաննահ (պատշար) Գյուրջունց Հանեսը ընկերոջ հետ Դաստափյուր (Դաշտափոր) թուրքի գյուղում մի թուրքի համար տուն է շինում: Գյուղը գտնվում էր համանուն գետի ձախ ափին, իսկ աջ ափին, գյուղի դեմ-դիմաց կար հայկական եկեղեցի և մեծ հանգստարան: Ուստերը աշխատում են, միաժամանակ անընդհատ հայիոյում թուրք տանտիրոջը, որը լավ չէր կերակրում նրանց: Էս տան ախսախկալը՝ մի ծերունի նստում էր պատի տակ ու հետևում ուստեքին: Մի օր կուշտ հայիոյանքներ լսելուց հետո ծերունին մոտենում է նրանց ու վատ հայերենով հարցնում, - Իսի եք ուշունց տալի: - Բա դու որտեղից ես գիղում հայերեն, - հարցնում են ուստեքը: - Ես հայ եմ, դեռ փոքր էի, որ ամբողջ գյուղով բռնի ուժով թուրքացանք, - արտասովալից աչքերով պատասխանում է թուրքը:

* * *

Վանունց Աբգարը հաղթանդամ մարդ էր: ուներ մոտ երկու մետր բոյ ու որ էշին նստած գնում էր, ոտքի մատները գետնին քարշ էր տալիս: Հագնում էր միայն ձեռքի կարած չուստեր: Տարիքն առած ժամանակ նստած է լինում Ստանցի գինետան մոտի նստարանին: Զահեղներից մեկը ասումա, - Աբգար դայի, որ մի հինգ հոգով վրա գանք, կարան մեզ յախտես: Աբգար դային ասումա, - Կարալ չեմ վեր կենամ կոփվ անեմ, բայց նստած տեղս որիդ գլուխը ճանկս ընկնի, հուպ կտամ, պլաստինկա կսարքեմ:

* * *

Գարնանային մի օր մարդ ու կին իրենց երկու տարեկան երեխայի հետ գնում են այգին մշակելու: Երեխային նստացնում են մի ծառի տակ, գավաթը մածունով լցնում, տալիս ձեռքը, իսկ իրենք անցնում գործի: Մի առ ժամանակ հետո նկատում են, որ երեխան օձի վզից բռնած օձի գլուխը թաթախում է մածունի մեջ, տանում բերանը ու լիզում: Մայրը ուզումա գոռա, բայց մարդը ձեռքով փակումա բերանը, հասկացնելով, որ օձը վախից կարողա կծի երեխային: Երեխայից 7-8 մետր հեռավորության վրա էս կինը բացում է կուրծքը և ցույց տալիս երեխային: Նկատելով դա երեխան օձին բաց է թողնում և չորեքթաթ մոտենում մորը՝ փրկվելով մեծ վտանգից:

* * *

2-րդ համաշխարհային պատերազմից առաջ Փողոսկում 10-ից մինչև 100 կգ քարեր էին թափված, որտեղ ջահելները մրցում էին, թե ով ինչ ծանրություն կարող է բարձրացնել: Փոցուկի Լուսին ամեն անգամ էդտեղից անցնելիս, ասում էին, - Լուսի արի մի էս մեծ քարը բարձրացրու, բայց նա հրաժարվում էր, թե հետո: Լուսին դեռ 18 տարին չլրացած հերկուլեսյան արտաքինով հաղթանդամ տղա էր: Մի օր, պատմում է Լուսի մեծ ախպերը, գիշերվա կեսին տեսա Լուսին տանից դուրս եկավ, հետևեցի: Հեովից հետևելով, տեսա, որ գնում է Փողոսկի կողմը: Հասնելով թափած քարերին, ջուկեց ամենամեծ քարը ու երկու ձեռքով բարձրացրեց գլխից վեր, ոնց որ փետուր: Հաջորդ օրը տղերքը նորից Լուսին կանչում են, որ քար բարձրացնի: Լուսին մոտենումա, երկու ձեռքով վերցնում ամենամեծ քարը ու բարձրացնում գլխից վեր ու թափով գետնովը տալիս: Քարը կիսով չափ խրվում է հողի մեջ: Երկու ջահել չեն կարողանում քարը հողից հանեն, բայց Լուսին մենակ քարը հանում ու շարտում է մի կողմ: Ցավոք Լուսին զոհվում է պատերազմի ժամանակ:

* * *

Ղավալանց Պինակալը գյուղում ճանաչված էր որպես հավագոդ: Նա լավ գիտեր գյուղի բոլոր հավաքների տեղը: Պնակալը այն միակ ծուն էր, որ միշտ լինում էր հավաքնում: Ծնջպահանց Ռաֆայելի գյուղխորհուրդ եղած ժամանակ նրան հավագողության համար նստացնում են էշին, հավի քարճիկները թելի վրա շարած որպես ուլունք, կախում վզից ու ման տալի գյուղի փողոցներով, որին հետևում են երեխաները և մեծերը հարայիրոցով: Ռաֆայելը հարցնում է Պնակալին, - Դու չամաչեցիր ժողովրդից: - Չէ, միայն քեզանից ամաչեցի:

* * *

Շատ հաճախ մեր գյուղի մեծերը իրենց ծննդյան օրը կապում էին տարվա եղանակի կամ ժամանակի հետ, օրինակ ասում էին՝ բղաքաղին եմ ծնվել կամ խոտհարքի ժամանակ: Կամ էլ հարցին պատասխանում էին կատակով, թե ծնվել են էշի գատկին:

* * *

Դաշկեսանի շրջանի թե հայերը, թե թուրքերը ասում էին, որ բանանցեցոց գլուխներնա ճղված, զագլիզեցոնց՝ մատների արանքներնա ուռած: Հարցին, թե ինչի, պատասխանում էին, որովհետև երբ մարդիկ իրար չեն հասկանում, բանանցեցիք կոխվ են անում, որի ժամանակ մեկի գլուխը անպայման պետք է ճղվի, իսկ զագլիզեցիք էնքան են բողոք գրել, որ գրիչը սեղմելուց մատների արանքը ուռչում էր:

* * *

Շալի կնիկը մարթին ասումա,- այ մարթ էս սաղ հրեվաննին իրանց կնանունց կըոքինին քցեցին տու իմը մի անդեր կըոքա ուզում չես քցես: Շալին հրցնումա քանիսա էտ կեոիքը,- 20 մանէթ, պատասխանումա կինը,- բա տա ինչք ա, վեր ոխումըտ չտնեմ՝ ասում ա Շալին:

* * *

Ամառային արձակուրդների ժամանակ էր, Փողոսկում, Շահումյանի արձանի տակ մի խումբ ջահելներով նըստած, Ըղի Հովիկի գըլխավորությամբ կատակներ էինք անում: Այդ նույն օրը Պըրսեղանց Հովանեսի հայաթում հարսանիք էր, մի քիչ հետո մեր խմբին մոտեցավ Քիքունց Վալերիկը մի վեֆ ոադիոպրիյումնիկ ձեռը: Հովիկը Վալերիկին հարցրեց,- Վալերիկ էտ ոադիոն ամեն տեղնեվ փըռնումա,- հա Հովիկ ջան,- պատասխանեց Վալերիկը,- դե մի քըցի Պըրսեղանց հայաթը, տենանք ինչ հավանն ածում:

Հակոբ Մելիքյան

* * *

Լկանի Սապետը ծախումա իրենց էշը: Գնորդը գինա հարցնում, նորից նայում էշին ու ասում,- էշը փոքրա:- Ավելի լավ, հեշտ կնստես, պատասխանում է Սապետը:- Ականջներն էլ փոքր են, շարունակում է գնորդը:- Ինչա, կինդերտես կախ տալ, վախում ես սագի վեչ,- զայրանում է Սապետը:

* * *

Գյուղում ինչպես գյուղացիներն էին ասում մեկը վետ, մյուսը փետ Մամեդ անունով, ազգությամբ թաթար մի մարդ կար, որը հայերեն լավ չէր խոսում: Ամուսնացած էր Բոբի աղջըկա հետ: Ամուսնանալուց առաջ Բոբին խոսք էր տվել, որ փետու համար լավ գործ կճարի, ասելով,- Մամեդ յա տեբե լոխկի ոաբոտ նայդու,- ու Մամեդին նշանակում են գյուղի տավարած: Հենց առաջին օրը ամառվա շոգ օրա լինում, Մամեդը կովերը տանումա դաշտ անտառի փեշին արածացնելու: Կեսօրին, որ շոգը վրայա տալի, կովերը սկսում են փախնել մի մասը դեպի անտառ, մի մասն էլ՝ դեպի գյուղ: Մամեդը ինչքան չարչարվումա կովերին հետ պահի, չի ստացվում: Ջղայնացած գալիս ա գյուղ, հենց հասնումա գյուղամեջ սկըսումա գողգողալ,- յոբնի Բոբի, լոխկի րաբոտա նաշուլ, տավար խվոստիկ պլորել, չվա Վըզանա. ջյուր վազ տըվեց:

* * *

Բանանցի մեծերից լաճ պատմություն: Մեկի շալվարի վրա շատ նոր կարկատաններ են լինում, որ գնումա գործի, ընկերներից մեկը ասումա շալվարըտ տեղ-տեղ շնորհավոր ըլի, ընկերը ասումա,- օրումեջ ապրես:

* * *

Քըրթվանց Պետին Երևան ոադիոմաշտ էր ապրում, մի օր ուշ ժամի երեխան վատանումա, Պետին սկորիա կանչում, բժիշկները խնդրում են, որ դիմավորի: Պետին իջնումա շենքի բակ, հենց բժիշկները գալիսեն՝ ասում ա,- շատ եմ խնդրում խալաթների հանեք, թէ-չէ երեխեքը որ ըտեց տեսան էս գիշերվա կեսին մառոժնի են ուզելու:

* * *

Փողոսկում կանգնեցրած Ստալինի արձանը Տյուտյուլն է քանդել: Ձեռքը ու առաջ մեկնած մատը ջարդելուց հայիոյում է ու ասում,- էս մատով քանի մարդ ես սպանել: Իսկ պոկված գլուխը, որը շատ մեծ էր, իսկ մեջը դատարկ, Լկանի Սապետը վերցնում է ասելով- տանեմ մեջը թթու դնեմ:

* * *

Դվունց Քնարիկի պանեխիդին իրա քուր ժենիկը լացումա,- մտա լոբի արիը հիշեցի էս մինը, էն մինը, որ շատ ասումա, կանանցից մեկը՝ Նինոն ասումա -այախ մինը կավըջ ժենին էտ լոբի արխից հանի:

* * *

Էշի Ռուբենը իր ախպոր հետ ցորեն են կիսվում, Արտեմը ասումա,- Ռուբեն տու նստի ես հալալ փայ անեմ,- էս ինձ, էս քեզ, էս էլ ինձ, էս ինձ, էս քեզ, էս էլ ինձ: Արանքում ասումա,- դուզա չէ,- հա հա հո չես խաբելու ախպերությունա, պատասխանում ա Ռուբենը: Որ բաժանում պրծնումա ասումա, Արտեմ բա հենցա քունը իմից շատա:- Աչքիտա երեվում, լավա քո դեմը բաժանեցի, ասում ա Արտեմը:

* * *

Այլ տարբերակով Ռուբենը և Արտեմը գինի են բաժանում տըկերով (էժի կաշվից տոպրակ),- էս ինձ, էս քեզ, էս էլ ինձ, դուզա: Վերջում, երբ տարբերությունը մեծ է լինում, վիրավորված Ռուբենը դանակը հանումա, երկու տիկը պատռում ու ասում,- հիմա հավասարվեց:

* * *

Թնիսանց Պետին մի անգամ ավտոբուսով Երևան գնալուց մի զագլիզեցու հետ կոխվա անում, լավ թակվումա, որ տենումա չի կարում պաշպանվի, ասումա,- մի լավ տվեք, էսա տուն կիսնեմ մեր տանել մի զագլիզեցի կա, մուտս նիրա կինեմ:

* * *

Գյուղի ակումբում համերգ է լինում: Միրզանց Արտեմը մոտենումա Թնխանց Արշակին ու ասում,- Տոմսդ տուր մտնեմ կլուք, մեր Հանեսին կանչեմ ու գամ: Սա տոմսը տալիսա, սպասում մի կես ժամ ու հասկանալով ամեն ինչ, նորից տոմս է առնում ու մտնում դահլիճ:

* * *

Թնխանց Արշակը ու Միրզանց Արտեմը գնում են հիվանդատես: Բալունց Հանեսի խանութից բան ման են առնում, տոպրակը Արշակնա վերցնում: Հենց հասնում են հիվանդի տուն, Արտեմն ասումա,- Արշակ բզարած կլես, տոպրակը տուր ես փոնեմ (որ հիվանդի տերը իմանա թե ամեն ինչը Արտեմնա առել):

* * *

Բանանցի գյուղսովետում դատ ա լինում: Հարևանի անասունը վնասումա մյուս հարևանի բախչեն: Դատավորը, որի մի աչքը շաշ ա լինում, որոշումա, որ պետք ա հատուցվի վնասը: Էս մարդը կանգնումա և ասում,- Տու տիը ախոր-ախլոր որոշի, տվողն ովա:

* * *

Հակլին (Հայկանուշ, լկանի Սապետի քույրը) էրզան դուզումը կանգնած, Բանանց գալուց ա եղել: Մի բեռնատար մեքենա է անցել, Հակլին ձեռքը բարձրացրել է, որ մեքենան կանգնացնի ու հետն էլ գոռացել.- Шофёр стой, я (о)адной, шалак нету, я балной.

* * *

Մի օր Հակլին մի մեշուկա վերցնում գնում Կիրովաբադի մեյդանը ու խափում, որ ինքը Բարատովի կնիկնա: Թուրքերը ետ մեշուկը ուտելիքով լցնում են ու ճանփու դնում: Խաբարը հասնումա Բարատովին: Նա Հակլին կանչումա մի լավ ուշունց տալի ու ասումա,- տու իմ կնիկն ես, որ գնացել ես ինձ խտռակել,- բա խիզանս ոնց պահեմ, պատասխանումա Հակլին:

* * *

Մի օր Բաղդունց Մուխին գնումա Ծորի Բեդի Արշակի հայաթից կանչում,- հե Արշակ դայի, հե Արշակ դայի, հե Արշակ դայի,- ասումա գահրիմար, դե սուս արա, որ ասեմ հեյ:

* * *

Լկանի Սապետը գյուղից գալիս է Աբովյան տղային տեսության, որն ապրում էր 9-րդ հարկում: Լիֆտ են նստում ու բարձրանում: Սապետը հարցնումա,- Աղչի էս ինչա, ասում են,- Լիֆտա:- Աղչի իսկականից որ լիրփա:

* * *

Մայիսի 2-ին՝ գերեզմանների օրը ամեն գերեզմանատեր ուզում էր, որ մի բան նվագել տա իր հարազատի գերեզմանին: Նվագողների պակասության պատճառով երբեմն լինում էին քաջքշուկներ: Մի գերեզմանի վրա Աշրափի Արմենը նվագելիս, Սապետը ախպոր ձեռքից քաշում ա, որ իրենց նանի վրա էլ նվագի, որն անմիջապես կողքին կպած շիրիմ էր: Եղբայրը ասումա,- Դե քառ չի էլի, նաելա լսում:

* * *

Ընկեր Միշիկը քեֆը լավ Փողոսկում նստածա լինում ու Թակուշ տոտան և էլի գյուղացիք համոզում են, որ տանեն տուն: Մեկել Քչանը գալիս է ավտոյով: Թակուշ տոտան գիտեր, որ ընկեր Միշան սիրում էր Քչանին, ասումա,- Հովիկ ջան քեզ կլսի, ասա գա տուն: Քչանը մոտենումա ասում,- Պարի ռուզուն ընկեր Միշա, տանը լավ կինի ունեմ, գնանք խմենք:- Վայ ես քու ցավը տանեմ, քինանք խմենք ու գնում են: Էդ օրն էլ Հաջալին մեռածա լինում, իրանց տան մոտով անցնելուց ընկեր Միշիկն ասումա,- Հովիկ ես պիտի մտնեմ, Հաջալի վրա լաց լինեմ, նոր քինանք մեր տուն: Քչանն ասումա,- ընկեր Միշիկ քինանք Ձեր տուն, ես կգամ Հաջալին կբերեմ Ձեր տուն, լաց կիլես, էլի կտանեմ իրանց տուն:

* * *

Կուշչի մուստի խանութը հայելի է ստանում, Արմենակը վազում է Գարոյի (Մանուշակյան) մոտ ու հարցնում,- Գարո հիլին ինչ են ասում,- ինչերեն: Արմենակը էլ չի սպասում, գնում է խանութ ու ասում՝ Հասրաթ, ինչերենը քանիսմ:

* * *

Ալիք դային ու աղջիկը Աբովյանում լիֆտ են նստում: Ալիք դային ջղայնանում է աղջկա վրա ու ասում՝ զանգը տալիս ես ու կլխիդ վրա նի ընգնում, մի յաշի հալա տանը մարդ կա-չկա, դուրս են գալիս էլի է ջղայնանում՝ գոնե մի երկու կոպեկ կտիր մինչև ըստե պիրան:

* * *

Բանանցի հիվանդանոցի հայտնի բժիշկ Աբրի Հանեսը (Հովհաննես Ավետիքյան) ուտող-խմող մարդ էր: Նրան հաճախ էին հյուրասիրում, սեղան բացում, որից անպակաս էր գինին: Նրա սիրելի կենացներից էին.

- Աստված շընհավեր անի, տարին էլ պարի անի:
- Ինչքան ապրեք, ուրախ ապրեք, շառից փորձանքից հեռու մնաք:
- Խըմում եմ քու, հու քու շըղըթաթախ նըշընածի գենացը:
- Ով չըխըմի էս գենացը, թող մըտեն քըցի մեր Բանանցը, հարամ իլի նրա կերած հացը:

* * *

Բաղայան Յուրիկի պատմածներից (Եթիմունց) «Փողոսկում Ստեփան Շա հուսմանի արձանը տեղադրելիս Թնիսանց Արշակ դային ասում է.

– Էդ տեղը անյուղուր տեղ ա, ումբրը չի ունենալ, կքանդեն: Իմ հերը ստեղ կտորի խանութ ուներ: Քանդեցին, Ստալինի արձանը դրեցին: Հետո էլ Ստալինի արձանը քանդեցին...»:

* * *

«Արշակ դային, գալով Արուսյան, ապրում է իր տղա Հրաչիկի տանը: Նույն շենքի մյուս մուտքում ապրում է մյուս որդին՝ Մուսիկ: Մուսիկն, զբաղված լինելով, մի քանի օր չի այցելում հորը: Արշակ դային նամակ է գրում նրան. «Գիտեմ, որ ճամպեքը սառած են, չես կարում գաս ինձ տեսնես: Գոնե մի նամակ գրի, տեսնեմ ինչ կա-չկա, երեխեքը ոնց են»: Նամակը տանում գցում է նրանց փոստարկղը»:

* * *

«Արշակ դային երեկոյան բախճից գալիս է հոգնած, անտրամադիր. տեսնում է՝ Մուսիկն ընկերների հետ իրենց տանը ուտում-խմում է: Ընկերները ուրախանում են, հրավիրում են Արշակ դայուն, որ մասնակցի քեֆին: Արշակ դային ասում է.

– Մի հարց տամ, եթե ճիշտ պատասխանեցիք, կմասնակցեմ: Երեք ռուբլի ունեի, հիմա չունեմ. ինչ եղած կլինի:

Տղաները պատասխանում են. մեկն ասում է՝ կորցրել ես, մյուսը՝ պարտք ես տվել, ետ չեն տվել, երրորդը՝ երկի գրպանիցդ գողացել են: Արշակ դային ասում է.

– Չիմացաք. իրեք մանեթի կանաչու սերմ էի առել, ցանել Կյումերի ծորի թխճում, գնացել եմ տեսել՝ սոլովը տարել ա, մի հատ էլ ա ծլած կանաչի չկա»:

* * *

«Լկանի Սապետը, գալով Արուսյան, աշխատանքի է ընդունվում խանութում՝ որպես հավաքարար: Մի անձրևտո օր նստած նայելիս է լինում մտնող-ելնողներին: Հարցնում են՝ ինչու չի աշխատում: Ասում է.

– Էս խանութը հենց ա մոլատուն իյի. մինը քինում ա, մինը կալիս ա: Սպասում եմ՝ լոխ քինան, որ մաքրեմ»:

* * *

«Դպրոցի ուսուցչանոցում դասատուները բողոքում են չար աշակերտներից: Ընկեր Սրբուհին դժգոհում է Թեյլան Ստեփանից (Թեյունց Թունի տղայից). «Չի սովորում, դասերը խանգարում է, դասերից փախչում է»:

Այդ խոսակցությանը խառնվում է ընկեր Մուքեղը՝ ասելով.

– Դուք ձերն եք ասում. իմ դասարանի Սարգսյան Ստեփանին ով տանի իր դասարան, երկու մեշոկ սարի ճոկած կարտոշկա կտամ: Նրա գրքերը որ բացում ես, իրենց-իրենց էլի փակվում են: Ոչ մի անգամ չի բացել, որ մի դաս սովորի»:

Հիշում է Վալերի Գրիգորյանը

ՓՈՔԻ ԶԱՎԵՇՏԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բղայանց Ավագը Բանանցի անասնաբույժն էր ու ուտող-խմող մարդ էր, և լավ երգում էր, և լավ պարում: Մի օր հոգնած Ներքի հանդից տուն է գալիս, մամաս ասում ա,– Ավագ, կլուրը լավ կինոյա եկըլ, թաղի հըրսնըրավ ուզումընք քրնանք: Հերըս ասումա,

– Ես ըրխանցը կյաշեմ, տյու քինա: Կինոյից տուն գալուց, որ Տոնունց Տոնի տան մոտ են հասնում կլառնետի ձայն են լսում, մի քիչ, որ առաջանում են Սոֆիկ տոտան ասումա,

– Գեղեցիկ էս կլառնետի սյասը վընց վըր ծեր տանընա կյալի:

– Չե հա Ավաքը բըզարած ըրխերանց հետա: Որ դարբասի դուռը բացում է, տեսնում է բալկոնում սեղանը բացած, գինին պաչոնկով սեղանին, Բանանցա կարմիր թթուն ու խորովածն էլ հետը, Աշրափի Արմենի կլառնետի նվագի տակ Ավագը ու իր ընկերները քեֆ են անում: Մտնումա կուխնի, տեսնում չորս երեխեն էլ կուխնի թախտին պլաց-պըղհար էտ ձենի տակ քնած են: Կուխնցը տյուս կյալիս Սամսի Գուջին դեմնա տյուս կյալի, ասումա.

– Տյու ըստե ինչ գործ ունես: Սամսի Գուջին էլ թե,– էսքան մարթի մեչ աշկըտ ինձ տըսավ:

Աստղիկ Բաղայան

Քափուրի կնիկը կյալիս ա ջրի: Ջրի հերթի կնանիքը խնդրում են, որ նվագի: Սանրի վրա մի ճղած թերթի պատառ էր դնում ու բերանով «սեզահ տարան հա» պարեղանակ նվագում: Շատ լավ էր նվագում. թղթի թղթոցը սանրի վրա բազմագործիք երաժշտության տպավորություն էր թողնում: Հետո էլ ասում էր՝ իմ նորաթը(հերթը) առաջ քցեք, հեսա Քափուրը սոված կլա, փին տալով հանդից կրգա: Էս խոսքի վրա պայթում էր ջրի հերթի կանանց ծիծաղը:

* * *

Իմ հորեղբայրը 5-րդ հարկից վերա ինգնում, վնասվացքներով տեղափոխում են հիվանդանոց, հարազատներով գնում են հիվանդատես, իմ տատ Չանին էլա իլում հետները, տեսնումա պալատում մի 6 հոգի կա պառկած, ասումա՝ Ամիշ, էսքանը 5-րդ հարկից են վեր ինգել:

* * *

Բանանցի դպրոցում 5-րդ դասարանում ընկեր Ադիխանյան Գոհարիկը դասի ժամանակ ասում է,

– Հարությունյան Վարդանուշ (Լկանունց), մի անշունչ առարկա ասա:

Վարդանուշը ոչ տանում, ոչ բերում ա ասումա,– սատկած այծ:

Հիշում է Օֆելիա Զաղեթյանը

* * *

Մի անգամ մեր Թաթունց Քոքորը (Մացագարովը) ու Կուծի Համոյի Հովիկը (Քչանը) մեր տուն են մտնում, որ մի-մի բաժակ Հայկի ամի գինուց խմեն: Տանը մարդ չի լինում, կուխնու պատուհանին տեսնում են չեթվեռը գինով լիքը դրված: Սեղան են բացում ու էդ չեթվեռը համարյա դատարկում: Պապաս գալիսա տուն, տեսնում վոտ գլուխ քնած ու ՔԱՅԱԽԻ չեթվեռը համարյա դատարկ: Հայրս մնումա դրանց պահակ: Մայրս աշխատանքից գալիսա, չեն կարողանում արթնացնեն, մի կերպ դզում են, ծածկում, կուծի Մաթաղին խաբար ուղարկում, որ չանհանգստանա ու մինչև առավոտ պահակ նստում, որ հանկարծ չվատանան:

* * *

Միրզանց Հանեսը՝ պապս, արբեշիկ էր, ամեն գյուղում ղնըղատուն է ունեցել: Խեղճ մարդը, ում տանը եղել է, ասել են էդ տան կնգա սիրածն է: Տատս՝ մի օր մի քանի հատ հավի ձու է ներկում տարբեր գույների, պապս ուտումա վերջացնում, տատս հարցնումա.– Հանըս, էդ ձվերի մեջ տարբերություն կամր, Հանըսը չէէէ, լոխ մի համի էր, ոանգն էր ուրիշ: Հոռոմսիմն ասումա, բաա կնանիքնել են էլի նույնը, մընակ ոանգնինա տարբեր:

* * *

Բանանցը բարձր տեղ ա, օդը՝ հիվանդի դեղ ա,– երզում էին բանանցեցիները: Կամ Բանանցը մի վարդա, ով որ պոկի մարդա:

* * *

Մի անգամ հայրս՝ Թաթունց Հայկին Արշակ դայի ձին խնդրելա, որ անտառից լոբու սարի բերի: Արշակ դային չի մերժել: Հաջորդ օրը, փողոսկում հարցրել են,– Արշակ, բաա խի վրտավրս: Ասելա.– Տազ ըրըք, սուս, սուս, ես՝ Դաղյան Մարտիրոսս, միհել Թաթունց Հայկին ծի տամ, չէ, չէ, չէ տա իլող պան չի: Համմա իրան խաբար չի տաք, երկու սուտկայա ծիս օյամիշ չիլում:

Մի անգամ էլ է հայրս դիմում ծիու համար: Արշակ դային ասումա,– բաաա Հայկի քրմատաղ քը փեշքաշա, համմա ասա իրուզունը էփ պիտես պիրիլ, վըր վետվրաչ կանչըմ:

Սոֆյա Օհանյան

* * *

Գյուղում, որ մեկը մի ճիշտ բան էր ասում, պատասխանում էին, դուզը տյու ես, մեկ էլ Մրզանց Արտեմը:

Հիշում եմ, որ փոքր ժամանակ մի լուրջ կամ խելոք միտք էինք ասում, տատիկս ասում էր՝ Հաթամ-Հաթամ խոսում ես...

Խանդութ Տերյան

* * *

Քրթվունց Պըտին գնումա քաղաք վըր ընդե ապրի, մի օր էլ կյալիս ա Բալանց, ասում են,– հը՝ Ապըտ քաղաքում լավ ա, ասում ա,

– Աղաք-աղաք մտնում եմ տուն, քամակ-քամակ տյուս կալի (հանրակացարանում է մնալուց լինում):

Հայրս՝ Տոնունց Գոլին, Ստանցի իր վարսավիրանոցում Դարակոնոանց Կարապետի մագերը խուզելուց մեկը մտնում թե՛ Գոլի դայի ինձ իրեք մանրթ պարք տու էլի, հայրս խորհրդանշակն հայացքով նայում է Կարապետին ու պատասխանում է՝ «իրեք մանեթի համար շուն եմ խուզում» բոլորը փոթկացնում են, իսկ Կարապետը ասում է «սրանից ետը էլ քը փող չեմ տալու իրեսըս ծրի վըրկանըս»:

Ռոզա Տոնյան

* * *

Տոնունց Գալուատը սիրուն թմբիկ կնիկ ուներ, անունը՝ Նուշի, իսկ մականունը՝ Կոտալ: Կեշանը ասում ա իրա կնոջը՝ Մայանին՝ ինչ ասես կտամ, որ սրան տկլոր տընամ: Կինը շոր կարող ա իլում, ասում ա,– 10 մանեթ կտաս– կտընաս: Համա-ձայնվում են: Ամեն ինչից անտըղյակ Կոտալը կյալիսա շորի պրիմերկին, իսկ էտ Արտեմը հարմար թաքնվումա: Կոտալը, որ հանվումա պրիմերկի շորը հագնի մա-դիսկեն ասումա,– Կոտալ շուտ տուր (պտտվիր) տասանոցը կյալիսա: «Տասանոցը կյալիսա» արտահայտությունը դարձավ բանանցեցիների թևավոր խոսքը:

* * *

Գյուղացիներից մեկը Փողոսկիցը քըշընալիս տընում ա Բարատովը իրանց տան պատի տակի շրանդին նստած.

- Պարյոր Արմենակ դայի, վընց ըս
- Ասու պարին, էտ օվ ըս մըտկացի, աշկըս լավ չի տընում
- Չե կարալ չըմ վըռագում ըմ (էդ օրն ըլ դըրմըծըհուքի Միրզյանց Արտեմի թաղումն ա, կլաոնետի սյասը լիսվում ա)
- Ասում ըս վընց ըմ,– Արտեմի կըշտին ես ահագին լավ ըմ:

* * *

Գյուղում ով ամուսնացելա, Բարատովը հարսանիքի ծախսին օգնելա: Մեկը մոտենումա, Արմենակ դայի, նշանվել եմ, հարսանիք եմ անում: Բա լավ ես անում, շնհավըր իլի, ոմ աղջիկնա, բաա դարիբա: Բաա խի դարիբ.– Դեեե մըր շինումը հարմարը կարվըջ: Բարատովը ասումա, արա վընց չի կա, մըր տանը չորսը կա, իմ մըրը, իմ կնիկը, Հասմիկը, Լյուփին:

Թելունց Թյունին իր կենդանության օրոք սարքել էր իր գերեզմանը, քար քաշել, ամեն ինչ արել էր...: Ամենահետաքրքիրն այն էր, որ նրա գերեզմանը հանգիստում չէր, այլ գյուղի մյուս կողմում՝ Դիմաց տեղում՝ բլրի պտկին: Թելունց Թյունին մեռելներից վախենում էր... դրա համար իր գերեզմանը նախօրոք հանգիստից շատ հեռու՝ մի բարձրադիր վայրում էր սարքել տվել...: Քարը հիմքում մի քիչ լայն, վերևում՝ նեղացող հաղթական սյուն հիշեցնող, սպիտակ հուշաքար էր: Սակայն ասում են, որ ռայիոնից արգելել են, որ իրա պատրաստած տեղը թաղեն, պատճառաբանելով, որ հո հերոս չի:

Փանցի ամին Յանցի խանութնուֆում առևտուր ասում: Տարբեր կանսերվեր, խտացրած կաթ, կուլոկով կոնֆետ և այլն առնում աս, բայց մոտը սետկա չի լինում, լցնում աս շավարի գրպանները, մին էլ ինքնիրան նայում աս ու ասում՝ «աբալամ պրյամոյ շավարս գալիփե տառավ»:

Կոլորիտային արտահայտություններ⁷⁵. տիգի վավա, քրսունքը վեր կոխել, դըվըրի-դիվերի, մակալօրին, մակալտարի, տնցտանա, կըէծակը տանի, շիվանավ ինգես ("), կիտատար, կսկըծացած, հորթնունք, հորթնուտ, հորթ անիլ, կըչըկալած, ներքի տուն, կրմիդի տակին, իրեքնակ, լսնիրակ, թըռըթաց, հերու, էքսի (ած.), էքսը (մակ.), ուշեփ, բրչիմ, վեր հնցնիլ, վեր քաղված, վըտուն իլիլ, հոտն իլիլ, թյուգունքը թաղեն, խորակ, հուքումը տինիլ, ըրչեփը վըեր կոխած ("):

Պահի-պահի, Պարյոր, Փշտրիկ ("), Վոսեմսիպատ, Մեծ պասպ (խաչ), Խաչի սըէո, Կարմիր սըէո, Ծակ քար, Դիմաց տեղ, Փոփոս սըէո, Դոնանց քարեր (կա պատմություն), Տոնունց շավար (կա պատմություն), կապրատիվ, Վըզանա ճուր, Պադուշկա Ջիրին (կա պատմություն), Կոտալը, Մադիսկա Ջիրին"....:

Ձավեշտալի պատմություն

Սիպտակի Սուլթան աքիրը Փղոսկի թաղին էր ապրում⁷⁶: Երևի կիիշեք, որ նրա տղան՝ Պողոսը (Սիպտակունց Պողին), խելացի, ծանրաբարո, արդարամիտ մի մարդ, տասնյակ տարիներ ի վեր կոլխոգի հաշվապահն էր: Անթերի աշխատող էր, կյանքի մեծ մասը լինում էր կանտորում: Նա Բանանցի վաստակաշատ, արժանավոր մարդկանցից մեկն էր, հիշատակվելու ենթակա: Բայց իմ պատմելիքը Սուլթան աքոր մասին է: Փղոսկի թաղի հարսանիքներին բոլորը սրտատրոփ սպասում էին նրա պարին:

Սուլթան աքիրը մի ուղիղ փայտ էր (իր ասելով լանգաո) ձեռքերով բռնում հորիզոնական և լարախաղացի (քյանդիրբագ) շարժումներով սկսում էր իր ինքնամոռաց պարը, իսկ հանդիսատեսը ուրախ ծափահարում էր նրա պարի ընթացքը, ոգևորում նրան ու ինքն էլ ոգևորվում...:

Պատմում էին, որ Սուլթան աքոր ամուսինը մահացած է լինում: Թաղումին, երբ հասնում են գերեզման, կինը երբ տեսնում է գերեզմանափոսը, չգիտես սիրտը բարակած, թե՛ ի տես թաղման մասնակիցների, իրեն նետում է փոսի մեջ.

- Էլ իմ ապրիլը հմա պըտկը, ինձ էլ թըղըցըք հետը...

- Հիլ ըրըք, հիլ ըրըք միջին, վըր տըրը սըրտավ ուզումա, ուրանըլ թըղըցըք...,- ասում է տղամարդկանցից մեկը:

- Վըր էս խոսկը լիսեցի վըչ, իմը ինձ հըսավ, լըղիս ճուր կըտըրըց «Էս ինչ փըրցանքա եկա,- հետագայում պատմում էր նա,- Ասուլթ, քունն ըլ ըստը պըծավ», - մըտըծըցի: Ղորմի ձեր ընցըվըրանց, իմն ըլ հետը, իոչի ձեռը միգնողի ձեռեն փըռնըցի, հու քանի փիշմանել չին, փոսըն տուս թոա... Բա սըրը պան անցկըցավ իմ կըլխավը: Էն քանդիրբագի պարն ըլ իմ կիրիզմանի փոսից ըզըտվիլի ըրիսընալի պարն աս...

⁷⁵ Ըստ Վարդուհի Բաղալյանի:

⁷⁶ Զրույցը գրի է առել Անուշ Աղիխանյանը:

Պատում Բանանցի բարբառով

- Ախճի՛ Լուսիկ, մըր հուլնըրը տըսըլ չըս⁷⁷:
- Մի կըս սըհաթ աղաթ էրկու հուլնին դետդիվեր քնում:
- Վընցնի՛ն, դարավուրդ չըրի՛ր:
- Վընց վըր մինը սիպտակըր, մինը չըլտըպուրիկ:
- Վոյ քու բըլուտըըն ապըըն, էտա վըր կա:
Քիչ էտով.
- Ախճի, բա քիթա վըչ, յորիշնին դիբա դորնին:
- Հուլան յորիշը վըրնա... ավարա պաներ են. էնա տըրը դուզյախա ծորնիվեր քնում ին: Քիչ էլ էտով.
- Ալուա, դուզգունի մի տըկըրկըհանա սըցիը վըչ՝ վընց տըսար:
- Դե վընց տըսըլ ըմ, նըհըլել սըցի, էլ ասիլը պոզավ-պոչավամ իլում,-
իվիլնիցինումա:
- Ացութ, Ծըկըրի Ծորը տըս:
- Վույ, աստըված հեռու տանի, ո՛վա նրանց ընդըղա հանողը,- ու քնումա:
Լուսիկը ետնեն՝ ինքն ուրան հետ. «Բա միհի վըչ մանվումըս, վըչ կիզվում, իմ էշ խըթին ասա, վըր սըցի՝ հա, մի գոզալ չէ.- են ինչ էր, վըր սըցի վըչ, անցավ կիլոխս ցավի մեջ տիրա»:

⁷⁷ Գրի է առել Անուշ Ադիխանյանը:

ԲԱՆԱՆՑՅԱՆ ՅՈՒՐԱՏԵՍԱԿ ԽՐԱՏԱՆԻ

«Բանանցապատում»

Հինգ աղջիկ էինք

Հինգ աղջիկ էինք՝ մեկս մյուսից զուսպ⁷⁸,
Միմյանցից համեստ, տարբեր իրարից,
Ո՛վ էր զբաղվում դաստիարակությամբ մեր,
Եվ բարեկրթության դասեր տալիս մեզ:

Հայրս ու մայրս զբաղված անվերջ,
Տատս մեզանից անպակաս, պարկեշտ,
Ծնողներիս ներկայացուցիչը հար,
Ու նրա խոսքը՝ օրենք մեզ համար:

Ուրիշ էր, սակայն, հոր-մոր ասածը,
Որ իջնում էր մեր հոգու հատակը,
Մայրս ասում էր. «Ձեր հայրը մեղք է,
Մայր չի տեսել նա, որք է ապրածը:

Աշխատեք լցնել հոգու դատարկը,
Ձեր հոգսն է հոգում, դրսում է գործը,
Եվ չի իմանում մեր կերած-թափածը,
Նրան պիտի թողնենք համեղ պատառը:

Սխալ էլ լինի, մի՛ հակաճանտեք.
Տղամարդու սիրտը փխրուն է, իմացեք,
Երբ ձեր հոր տեղը հանգիստ նստած եք,
Ներս մտնելուն պես իսկույն վեր թոռեք:

Մարդ պիտի ունենա իր կայուն տեղը՝
Դրսում լինի դա, թե սեփական տանը,
Ձեր հոր պատիվը միշտ բարձր պահեք,
Գլխարկը երբեք գետնով մի՛ տվեք:

Ուրիշների հետ վարվեցեք այնպես,
Ինչպես կվարվեք հարազատի հետ,
Վատություն անեք՝ ինքներդ ձեզ կանեք,
Ճիպտորը երկծայր է, միշտ էլ դա հիշեք:

⁷⁸ Հեղինակ Անուշ Ադիխանյան:

Լեզվի կծածը երբեք չի բուժվում,
Կտրված հացն էլ բնավ չի կպչում,
Երես չթեքեք ձեր բարեկամից՝
Ի վերջո նա է ձեզ միշտ սրտակից:

Տունը մարդ եկավ՝ հացով ընդունեք,
Անկեղծ ժպիտն էլ անպակաս պահեք,
Կյանք է՝ մի օր էլ ոսստ կգաք նրան,
Լավիությունների՞ ձեր դեմը կգան:

Աշխատել սիրեք, չասեք՝ հոգնած եմ,
Նստել-պառկելը չափազանց հեշտ է,
Գործը մի՛ թողեք ուրիշի վզին՝
Ոչ շարժուն կյանքը մահվան սկիզբ է...»:

Հայրս քթի տակ ժպտում էր հանգիստ,
Հաստատում մորս խրատները միշտ,
Ինքն էլ իր հերթին իրենն էր ասում,
Ու մենք նրան էլ սիրով էինք լսում:

«Ձեր մայրը ճիշտ է, թե լսեք նրան,
Ձեր ոտքը երբեք չի դիպչի քարին,
Ես պատշար մարդ եմ, և փորձս վկա՝
Տաշած քարը երբեք չի մնա գետնին:

Երբեք ու երբեք սուտ չասեք կյանքում,
Ստի մանգզիլը շատ կարճ է լինում,
Անբարո կյանքի հանկարծ չդիմեք,
Ձեր վարկանիշը միշտ բարձր պահեք:

Ձեր ծնողներն ենք, շատ բան կներենք,
Բայց այլակրոնի հետ պսակը՝ երբեք,
Դեհ, աղջիկներ եք, ուրիշի բաժին,
Ուր էլ ընկնեք, միմյանց մտերիմ եղեք:

Ձեր ամուսիններին ենթակա եղեք,
Թե լավ տղա են, տասն աղջիկ արժեն,
Ամեն դատարկ բան՝ ձեր տանը եղած,
Մեր տուն չբերեք՝ լուն ուղտ դարձրած»:

Տաստ ասում էր. «Ամուսնուդ տունը
Քո տունն է արդեն, էլ հետ չնայեք,
Թե վեճ է լինում, դուրս չթռչեք իսկույն,
Դեպի պուճախը գնացեք կայուն:

Այրի եմ եղել, դժվար եմ ապրել,
Ամեն չարժեցող ակնարկ է արել,
Թե կայուն չեղաք ու տատանվեցիք,
Իմացած եղեք՝ մի տուն քանդեցիք:

Մենակ չմնաք, անտեր չմնաք,
Միայնակ փայտին շուն էլ չի հաչում,
Սկիզբը միշտ էլ դժվար է լինում,
Մի օր կտեսնեք՝ հարթվեց ամեն բան»:

Եվ այսպես անվերջ խրատում էին
Գործի ընթացքում, հանգստի ժամին,
Ճաշի նստելիս և կամ քնելիս,
Որ պահը հանկարծ չկորցնեին:

ՀԱՄՈՎ-ՀՈՏՈՎ՝ ԿՈՆՈՐԻՏԱՅԻՆ ԲԱՆԱՆՑԵՑԻՆԵՐ Առաքելյան Սիմոնի՝ Հաթամի մասին

Սիմոն Առաքելյանը, որին բոլորը Հաթամ էին կոչում, կարդացած մարդու տպավորություն էր թողնում և հայտնի էր իր ասացվածքներով, մարդկանց մասին խաղեր կապելով⁷⁹ և այլն: Նա մեր սերնդի հիշողության մեջ (60-ական թվականներին) մնացել է իբրև խոժոռ և զննող հայացքով, ճերմակած թղամիրուքով, մոտ 80-ամյա (կամ 100-ամյա) ծերունի, ով Փողոսկում քարին նստած լուռ զննում էր բոլորին: Ի դեպ, նա Փողոսկում ուներ իր քարը, որի վրա նստում էր, երբ հայտնվում էր այնտեղ: Նա այն հազվագյուտ մարդկանցից էր, որն այդ ժամանակ Աստվածաշունչ ուներ:

Հաթամը՝ Առաքելյան Սիմոնը չունեւ բարձրագույն կրթություն, երևի լիկկայան էր ավարտել, որ տառաճանաչ դառնա: Հաթամին կարելի էր համարել Բանանցի այն ստեղծագործող մարդկանցից մեկը, ով կարողանում էր տեղում տվյալ մարդու վարքը և արարքը բնութագրել ու բանաստեղծորեն հանգավորված խաղեր կապել:

Նա ուներ բնածին, իմաստուն ու սուր մտքեր, և քառատող հանգերով խաղեր էր կապում. գլուխգովաններին, ծախորդ մարդկանց, հիմարներին, անբաններին, անբարոներին և գողերին իրենց տեղն էր ցուցանում այս արևի տակ:

Նրա սուր աչքից չէր վրիպում գյուղում ոչ մեկը՝ կոլխոզի նախագահից սկսած, գյուղսովետի և դպրոցի դիրեկտորից վերջացրած, որովհետև ոչ մեկից կախում չունեւ: Շատերը նույնիսկ հատուկ գնում էին Հաթամի մոտ և խնդրում, որ իրենց մասին խաղ չկապի, և նա չէր մերժում: Հաթամը իր խաղերի միջոցով քննադատում և բնութագրում էր բանանցեցիների մտածողությունը, աշխարհայացքը, արժեհամակարգը և մշակույթը: Ես շատերին եմ տեսել 1960-ականներին Բարատովի Փողոսկի գինետանը, բայց նրան՝ երբեք: Նա երբ Աստվածաշունչ ուներ, պետք է ունենար նաև իր գրած խաղերի նոթատետրը: Ցավոք, շատ քիչ բան է պահպանվել նրա ասացվածքներից ու խաղերից:

Մայրս, տատս, հարևաններն ու բարեկամները հաճախ էին հիշատակում նրա խաղերի խոսքերը, ես լսել եմ, բայց հիմա չեմ կարողանում հիշել: Սանդուխտ տատս, երբ իր թոռներից մեկը մեծախոսում էր, ասում էր,– Հաթամ-Հաթամ խոսալ մի:

Հաթամենց հարևան Թագուհի Դադյանը հիշում է Հաթամի ասացվածքներից մեկը.– Եթե ինչ որ ապրանք ես կորցրել, ուշադիր եղիր, ով որ շատա անիծում, ուրեմն ինքնա գողը:

Իսկ Անուշ Աղիխանյանը պատմում է այսպիսի դեպք.– Մեր հարևանների ճղարունց բակում կանանցով քեֆ են կազմակերպած լինում, մեկը նրանց խաղամայի լիքը կաթսան գողանում է: Հաթամը խաղ կապելու միջոցով մատնացույց է անում գողին (ցավոք, խաղի տողերը չի հիշում):

Նա Փողոսկի աղբյուրի խողովակից շղթայով կապել էր պղնձե փարչ, որից միայն ինքն էր ջուր խմում:



ԳՐԻԳՈՐ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Գրիգոր Ղևոնդյանը՝ Ղվանդի Քոքորը Բանանցում հայտնի էր իր համուկ-կոտով կատակներով, ասացվածքներով ու սրամիտ պատմություններով: Նա ցանկացած սեղանի զարդ էր, լավ թամադա ու կազմակերպիչ: Ներկայացնում ենք Գրիգոր Ղևոնդյանի սրամիտ պատմություններից մի քանիսը Բանանցի թարրատով և գրական տարբերակով:

ՊԱՏՈՒՄՆԵՐ ԲԱՆԱՆՑԻ ԲԱՐԲԱՌՈՎ

Տեղեղ տըմբըհան ըլի, վեր կաց քնանք մեր տուն մի -մի ստաքան պարլիս անենք, մեր հարսին էլ կասեմ մի լավ ըշտըռանգի կանի, մի քշըռհանա կարանք կողքը քորենք, ղըլեղը առնենք հու ամաքս մի մի չարեք էլ կինի խմենք, թա թունավ վենց կլի, էտ էլ աստված կգիդա:

Տճ ւ հըլե գոռ ես անում, մեր տունը ծեր տանեն մոտիկա, հրե մեր պառավն էլ կոնչուլա արել, մնել Չատի խորակա եփել, քնանք մեր ղոլը, հու գընզլխտանա նստենք չվա ըրուգու էլ վեր նի ածենք հերիք կանի, մգամ վենց կինի ունեմ, վեր քոհնա հինգխտումը շաղ տաս, էն քոհնա մըրըլինի վեր կկենան, հու հետտ խրտտակոխ կանեն: Բա մենակ մենք ու մենք քնանք, թա մի երկուսի էլ հտոնխս վեր ունենք: Բալամ գլեջան էրգարանունա, հու նրանց ուջաղն էլ ենք քնալի տանուն: Դե լավ, քնում ենք Քիքի ամի տուն⁸⁰:

⁷⁹ Միքայել Տերյանի հիշողություններից, 2 հուլիսի, 2020 թ.:

⁸⁰ Ըստ Գրիգոր Ղևոնդյանի:

ՇԱԽԻ ՍՈՒԳԸ

(հատված)

Արլիքանց Չատին բոյը երկար, սև մարդ էր, պիտի ծիծաղեր, որ երկու սպիտակ ատամ ուներ ցուց տար, որ նոր իմանաիր, թե երեսը որ կողմն է⁸¹:

Նա գյուղում չորանություն էր անում: Երեխաներին բոլորին էլ ամուսնացրել էր, ամենքն էլ իրենց համար էին ապրում, իրենք էլ մարդ ու կին դեռ հին տանն էին ապրում: Տունը հին տուն էր, բուխարիկով, մոտն էլ մի հին թախտ դրած, իրենց յորդան դռանն էլ թախտի մի ծերին դարսած ու մի շորով ծածկած: Բուխարիկի մեջ մի երկու անոթակոթ էր դրված, որն էլ իր հերթին կամաց կամաց մխում էր:

Օրերից մի օր այս Չատի դային հիվանդանում է և մահանում: Որպեսզի համագյուղացիք իմանան, որ էս տանը մարդ կա մահացած, Շախի ազին պատուհանները բացում է ու բարձր ձայնով սկսում է լացել: Գյուղացիք, որոնք որ առավոտ գիշերով ամենքն իրենց անասուններն են քշում արոտ կամ հովվի առաջ, կամ էլ ջուր խմացնելու են դուրս բերել, լսում են Շախի աքոր ձենն է գալիս: Մոտենում են իրար հավաքվում և գյուղացունց սովորության համաձայն, մի մարդու պես, բոլորն էլ պետք է գան ու տանեն իր հավերժական հանգստի տուն: Երկրորդ օրն է լինում, թաղման օրը, մեռլի վրա հիմնականում լացում է միայն կինը ու մեկ մեկ էլ աղջիկն է օգնում մորը:

Շախին լացում է. «պատ ըրկըշարտի օրն էր, Պղղոսանց Արկիչի կանչյալ հըրսանիքի նստած օրն էր, նանը քե մատաղ Արմենակ, 7 շրպտական ըրախա իր, մեր հայն ասեց, - Ա՛շախ, թավգըս նի հլի հղի ըլենք քնանք բաղերը, թավգըս նի հլա, քնացինք Վազգունց բաղի տակին խնամքը եկավ, վեր Թելունց հարսին թուրքերը տարել են, մարթիք թըրգընգըվերված հըղի ըլան քնացին, գիդում չեմ ինչ տանով, ինչ չըտանով, կողքինները ասում են՝ ախճի քո մարդից խոսա, ուրիշի հետ ինչ կործ ունես:

Սկսումա իր մարթիցը՝ մգամ վենց մարթ, վենց մարթ, վենց մարթ, մեր հայը վեր հանդեն կալիսա, մի ջիբը գլեռա ըլում, մի ջիբն էլ մամուխ, տոպրակը փիփերթը լիքը, սոկոնները հետը ուվայ: Ախճի պատառ ճուր տըվեք մի իրեսավըս տամ, իբրև ուշքից քնումա:

Հնիրակ էր էն վախտը ա հայ, վեր բոզ (սարու, շեկ) էշն աղաքը ըրիր վեր քնաս Փլեն ճախ պիրես, ցակատդ աղաքդ իր կոխում, կացինը՝ քամակդ, հենց ճախի կակնի իր պիրում, վեր կարում չի թա տանեմ, Վանունց Մեծի տոանն էր թորոնը, թոռնի դրաղը, ուվայ, ախչի պատառ ճուր տըվեք մի իրեսովս տամ: Այստեղ աղջիկն է մորը օգնում՝ «հա՛՛, անան, մեր տունը հենցա պահել թա համամ ըլի, խզրուզու փետը մի դոլին սանքած, կեճ փետը՝ մի դոլի, ու վայ:

Նորից կինն է սկսում՝ տոյանը թորը շուռ են տալի, քու կըպըլնետրովն են ընգնում, էն էլ քու կոպալն ա էն քունջումը ցից կցած, աղճի, ինձ տըվեք մի պաչեմ, ու՛ վայ:

⁸¹ Գր. Ղևոնդյանի կատարմամբ այս պատումը պահպանվել է 1987 թ. ապրիլի 19-ին կատարած իմ ձայնագրության շնորհիվ: Վալերի Գրիգորյան: Այն ձայնագրման սկավառակից գրի է առել Թագուհի Ղևոնդյանը:

Հնիրակ էր էն վախտը, ա հայ, վեր սարի ճամպեն ընի քնում ինք, ասումի հիլա մի աղաքը ընգնեմ էդ դըրըղուշ ըշկերիդ յաշեմ, բալամ կշտանամ (վեր էլ չի կըշտանում), վազի տալի էս թըփի տակը պրծնում, վազի տալի էն թփի տակը պրծնում, վեր կալիսիր մտկանում ասումի՝ բո՛, ասում իր անջան ու վա՛՛յ: Աղճի պատառ ճուր տըվեք մի իրեսովս տամ:

Սարի ճամպեն ընի վեր քնում ես, ճմպի տըկըկլոխ լոխ բուբուն քու կոցրած կյափերն են ու կոընդանկերնա ա հայ ու վայ: Հնիրակ էն վախտը ա հայ, չըզ կովի դովրն էր, Քլտղումը բենն վեր թողած փիփիսալի կթում ինք ուտում, մնել էն տեսանք Պղոսանց Մուքեղ յեկավ, ասեց, - ա Շախ մի յըղըշոր արա ուտենք, ըսեցի մեր հայը փղունձով խաշիլնա սիրում, փղունձով խաշիլը ըրի՛ յեղը պըռտուպոունգ վեր էր տառնում, թանն էլ վրեն ածած ու վայ, ախճի մի պատառ ճուր ըծեցեք մի իրեսովս տամ:

Խըզանունց տետրակի դաթումը փող իր տնում, խիզանը քնում ին շկուում պանում ըրխանում ա հայ, բա վեր քնում ես էլ դաթում տնող չի ըլլական ու վոյ: Ինել մեր Մարդիրոսի ծինա ընդե օրուկ տված, քնացեք մի օրուկը փխեցեք այ վայ: Հանդից իրիկունը տուն գալուց՝ տեսնում է իր հարևան սև Կափոելի դանը խոզի խորոված են անում, Բարատովը, Տվիթի Արտեմը, Ընատի Մեխակը և այլը: Կափոել դային ասում է, - պահ Չատի դայի, համեցեք, համեցեք, եկ մի կտոր խորոված կեր, գինի խմի: Չատի դային ասում է շնորհակալ եմ, - քե մատաղ, շնորհակալ եմ, Կափոել դային երկու թիքա դուրսա քաշում, ասում դե տար տանը կուտես: Չատի դային բերում է, կնիկը թախտի վրա յորդանը կլխին քաշած քնած է լինում, ասում է, - ա Շախ քել էս խրովածի թիքեն Կափոելնա տվել: Շախի աքիրը նստում է, դե նրա նանը լիս տառնա, օղորմի նրա հորը, պրիննիքս թթախվեց: Հիմա Շախի աքիրը հիշել է ու այս մեռլի վրա պատմում է լացելով: Պրանիդ թիքեն հետս կես ես արել ա հայ ու վայ: Հնիրակ էր էն քշերը ու հա՛, վեր եկար վեր կցրիր հու մի տաք տաք զատ հափոունս տրա՛ր, հազար հնիրակ, ա հա՛ ու վայ: Ախճի պատառ ճուր տըվեք մի իրեսովես տամ⁸²:

⁸² 1991 թ. հունիսի 25-ին, ուղիղ 70 տարեկան հասակում մահացավ հայրս: Շատ բանանցեցիներ եկան թաղման արարողությանը մասնակցելու: Հիշում եմ՝ մասնակցում էր Սապետը (Լականի) և նա որպես հարգանքի տուրք պետք է լացեր: Ծիշտն ասած, մի քիչ լացելուց հետո խնդրեցի էլ չլացի, ինքն ինձ ասաց. «Աղջիկ ջան, դուք ծեր համար լացեք, բայց ես ԲԱՆԱՆՑԻ համար եմ լացում, իսկ Քոքորը հենց ԲԱՆԱՆՑԻ է որ կա: Չունայի տխուր երաժշտության տակ հորս դուրս բերին տնից, մեր շենքի ընդարձակ բակը ասեղ գցելու տեղ չկար, զուռնայի դովրանին հաջորդեց դուդուկը, որի հուզիչ մեղեդին հայրիկիս հետ միասին ողբում էր կորցրած գյուղի կորուստը: Էլ ավելի ազդեցիկ դարձավ Աշրափի Արմենի կլառնետով սուգը իր համագյուղացու, իր գործընկերոջ մահվան համար: Թագուհի Ղևոնդյան



ԹԱԿՈՒՇԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՔԻՔՈՒՆՑ ԹԱԿՈՒՇԻ)
1904-1993

Քիքունց Թակուհին գյուղում՝ հատկապես Փողոսկի թաղում՝ հայտնի էր որպես ակտիվ, հին աղաթներն ու սովորույթները պահպանող, համով-հոտով կին: Նա հայտնի էր նաև որպես աչքով սովող կին: Ինքը աչքով էր տալիս մարդկանց, ինքն էլ իր աղոթքով բուժում: Ես հիշում եմ այսպիսի դեպք: Մորս բարեկամները հյուր էին եկել Բաքվից: Մեր տուն գալու ժամանակ, իսկ մեր և նրանց տները դեմ-դիմաց էին, հյուրերից մեկը՝ մի տղամարդ խոնարհվելով բարևում է Քիքունց Թակուհուն, որը նստած է լինում իր տան աստիճանների վրա: Խոնարհվելով բարևելը շատ է դուր գալիս նրան և իր ասելով աչքը կպնում է: Մեր տուն հասնելուց 5-10 րոպե հետո այդ մարդը վատ է զգում: Գնալով վիճակը ծանրանում է: Որոշում են բժիշկ կանչել: Մայրս հանկարծ նկատում է, որ Թակուհին հագած-կապած, նոր շորեր հագած կանգնած է մեր տան դիմաց գտնվող փոքր կամրջի վրա ու անհանգիստ նայում է մեր տան ուղղությամբ: Մայրս անմիջապես հասկանում է իրավիճակը և հարցնում է, - Թակուհի տյոտյա դու կապ ունեն սրա հետ, էս մարդը շատ վատ է:

- Բա ինչա, հագած-կապած սպասում եմ, որ կանչեք: Անմիջապես գալիս է, աղոթում, և մարդը լավանում է:

Քիքունց Թակուհու հետ կապված այսպիսի պատմություններ շատ կան: Դրանցից մեկն էլ կապված է Քիքունց Թակուհու կատարած մեկ այլ տեսակի «բժշկելու» կարողության հետ: Ժամանակ առ ժամանակ մեր տատերն ու մայրերը որոշում էին, որ ինչ-որ բանից վախեցել ենք, որի պատճառով լավ չենք քնում, ախորժակ չունենք, թոյլ ենք զգում մեզ և այլն: Ու որոշում էին, որ Թակուհին պետք է մեզ տանի գերեզմաններ և 3 կամ 7 ոչ իր բնական մահով մահացած մարդու գերեզմանի վրա ջուր խմացնի, որ մեր վախերը անցնեն: Դա արդեն արարողություն էր դառնում: Հավաքվում էին թաղի երեխաները (20-30 երեխա) և

Թակուհու գլխավորությամբ գնում էինք հանգստարան: Ճանապարհին Թակուհի տյոտյան իր հետ վերցրած թեյնիկը լցնում էր գերեզմանների մոտ գտնվող աղբյուրի ջրից: Երբ տեղ էինք հասնում, գերեզմանի վրա, հողի մեջ Թակուհի տյոտյան փոս էր փորում, թեյնիկից փոսի մեջ ջուր լցնում և ստիպում, որ մի կում խմենք: Ու այդպես 3 կամ 7 անգամ: Գերեզմանների ճանապարհին նաև ծաղիկներ էինք հավաքում և դնում որևէ մեկի գերեզմանին: Չեմ հիշում, այդպիսի «բժշկությունը» օգնում էր, թե ոչ, բայց արարողությունը խիստ տպավորիչ էր:

Հայրենի Բանանցի կորուստը նաև բանաստեղծ է դարձրել 85 տարեկանում իր բնօրրանից կտրված Քիքունց Թակուհուն: Ներկայացնում ենք նրա գրած բանաստեղծություններից, որտեղ մեծ ցավ ու կարոտ կա Բանանցի հանդեպ:

* * *

*Մեր տունը փայլում է,
Թուրքը մեջին քայլում է,
Մեր տան քարը տաշած է,
Մեր տան նկարը քաշած է,
Մեր տան քարը կամար է,
Մի տեսք ում համար է,
Մեր տան անունը բարձրնա,
Մեր անցյալը քաղցրնա...*

* * *

*Մաքաղ լինեմ էն օրին,
Որ կգնամ իմ տունը,
Կպաչեմ առաջին սյունը,
Կլիզեմ փալաքանի քարերը,
Կկանգնեմ բալկոնումը,
Ականջ կդնեմ երգողին,
Մտիկ կանեմ անցնողին,
Երեկոյան կմտնեմ անկողին:*

* * *

*Մեր Բանանցը բարձր տեղա,
Ջուրը հիվանդի դեղա,
Միրածը սիրածին չեն տա,
Էս ինչ անօրեն տեղա:
Մեր յանցի ջուրը սառնա,
Մեր բերանը դառնա,
Էս ում տրված ցավնա,
Որ մեր գլուխը խառնա:*

Բանանցեցի 93-ամյա **Տոնի Տոնյանի** հուշերը 1988 թ. նոյեմբերին Գանձակում կատարված դեպքերի մասին⁸³:

Շատ վատ ամիս էր 1988-ի նոյեմբերը...

Մարդիկ չկարողացան քնեն գիշերը,
Շատացել է մարդկանց հոգսերը,
Սրանից հետո ո՞վ կլինի հայերի տերը:
Համ լավ է, համ շատ է վատ հիմիկվա դարը,
Ժողովրդի հետ է խաղում անիրավ չարը:
Մեկն ունևոր է, կտրում է սահմանն ու սարը,
Մեկին ճար չունի, ուզում է գտնի իրեն հավասարը:
Կիրովաբադ, որ հայերին նեղեցին,
Թակված, կտրատված, եկան դառան եկեղեցին,
Այստեղից, այնտեղից մթերք բերեցին,
Մեր սուրբ Սահակ տերտերին էլ օրհնեցին:
Ապրի, շատ ապրի մեր Սահակ տերտերը,
Էն վատ օրերին նա էր հայերի տերը:
Ասաց, - փողով հարբած են էդ շները,
Միայն հանգիստ մնացեք, կանի՞ծենք դրանց հեր ու մերը:
Ինչ ասես, որ չարին Կիրովաբադի գողերը,
Լացս գալիս է, որ գրում են էս տողերը,
Բաց թողեցինք մեր հայկական հողերը,
Ճանապարհին ծախսեցինք մեր վերջին փողերը:
Պետք է փառք տանք մեր հին զորավարին,
Որ պահեց մեր գյուղերն ու բուրդին:
Չի թողել, որ հայերը հասնեն այդպիսի օրին,
Պետք է միշտ օղորմի տանք Վազգունց եգորին:

**ԿԱՐՈՏԻ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆՎԻՐՎԱԾ ԲԱՆԱՆՑԻՆ**

Գրիգոր Ղևոնդյանի արխիվում պահպանվել է իբրև հիշատակ իրեն ուղարկված **Ավետիք Տեր-Ավետիքյանի** Բանանցի կարոտով լեցուն գեղեցիկ բանաստեղծությունը, գրված 1937 թ. բանակում ծառայելու ժամանակ:


Բարի հիշատակ, իմ շատ սիրելի ընկեր Քոքորին
Ավետիք Տեր-Ավետիքյան
Նմանակություն Չարենցին

ԲԱՆԱՆՑԻՆ

Իմ սիրելի Բանանց գյուղի
հով սարերի կյանքն են սիրում,
Պտղաբեր Գյուրջի տեղի,
այգիների հովն են սիրում,
Ծաղկազուգված Յուդաշ սարի
հով հանդերի բույրն են սիրում,
Ակնի ձորի աղբյուրների
առողջարար ջուրն են սիրում,
Ծաղկածիձաղ Դիմաց տեղի
անուշահոտ վարդն են սիրում,
Ինձ միշտ գերող Կոշկար գետի
ալիքների հովն են սիրում,
Ես բույրալից լայն հանդերի
խոտհարն են գարնան սիրում,
Եվ գերանդվի զոնգզոնգոցը
իմ հարազատ հանդերի:
Ես իմ ծաղկուն Բանանց գյուղի
ջրվեժների հովն են սիրում,
Ձորնավերի չինարների
ստվերների տակ քեֆն են սիրում,
Վանքածորի անտառների
մեխակների բույրն են սիրում,
Խաչ աղբյուրի հով ձորերի
անուշահամ մոշն են սիրում,
Ախ, սիրում, բայց ինչ արած,
որ հեռու են այդ տեղերից,
Միշտ հիշելով սրտիս խորքում
վառ կարոտն են նրանց քաշում:

*Ավետիք Տեր-Ավետիքյան,
1937 թ. Մակենկա, Դոնբաս*

⁸³ Ըստ Մագդա Մանուշակյանի:



ՐԱՐԱՅԱՆ ՐԱԲԻ ՄԻՔԱՅԵԼԻ
1914-1998

Տասնամյակներ շարունակ, ավելի քան 56 տարի, շատ բանանցեցիների առաջին ուսուցիչ Բ. Բարայանը ազնվորեն ու աշակերտների հանդեպ մեծ հոգատարությամբ աշխատել է Բանանցի միջնակարգ դպրոցում: Եղել է դպրոցի սիրված ուսուցիչներից մեկը:

Դե սիրելի բանակց.
Քրքե եմ շաք քեզեր.
Ճայնիս եկա տրտուսեան.
Բայց զի համե ու հոսե.
Ոչ մի քեզի էի նման
Բայց մի պատեղ շարիմ քեզեկի
Խաչի սեռն ու քոչորի սեռն քեզեկի.
Կարեամ խաչի սեռն ու քոչորի սեռն
Կարեամ խաչի սեռն ու քոչորի սեռն:
Այսպե՛ս ստորանս լեռնի,
Բունտե՛ք է ասին քոչորի.
Երբեք սպասում է սրբորի Զեմուն
Ինչ երբեք քոչորի քեզեր էլ չուն:
Բարան եմ զի կարեամ ծերայան,
Խաչի առջիկ քոչորի է ծոցու.
Խոյ քո առջիկան մի լայն խաչի
Մեք բանակցե՛ք մեք քեզերիմ կրթի:
հեշիւակ Բարայանն Բարայան
Էր Բարայանն Բարայանն էլ Բարայանն
ՅԿԵ. Կասալ. Յեռաքիլն ուն արջապրիլն է
Իր կի՛ն Արիւնի Լաւիտի Կրթիչայանն
Էլ Կարեամ արխաւարիլն մեքայան ԿԵ. Ս. Կարե
Վար. Կարեամ արխաւարիլն արխաւարիլն Կարեամ ԿԵ

19/2 - 99/2

Կարոտի արդէք

Ճրանի ջեգ յեր, սիրելի ծնողներ ու պապեր.
Որ չփակե՛ք հիւնք եկամ զարեանք յեր,
Բշտակի բարեկեց եկամ զյու-յուսե՛ն չալ-եց.
Եթե՛ ճեճեղով զյառից դարս վաճարեց:

Ին ծողովարդա լայ ու կոճով վախաւար,
Բանեց զախարի ծախման ցրտաւար,
Ոճա՛մի դեպի ցորթս Եւստուպու՛ն,
Ոճա՛մի էլ աշխարհ կայսարու՛ն:

Նորից քուն ու օջախ սարկեցի՛ն,
Մե՛ն ու փոքր յեր է կամախի/ն-չ/ի՛ն,
Կով պաւեցի՛ն, եղ յըսեցի՛ն,
Լեյրպետ մի կերպ քանչւնձով ապրեցի՛ն:


Բայց, որ զախարիւն է անեղ ծոցու.
Քրքերնե՛րն անխայնամե՛ն կանգաք զձում
Ճրքե՛ք չի ծոցայլի մի՛նչ քերեց ծոցու,
Կայրե՛նի՛ք զայլիմ ու երև անձա՛ն:

Բարայան Բ. Բարայան 19/2

Արրոստիկոս

- Բ Բանանց իմ սիրասուն,
- Ա Անուն ունես շատ սիրուն,
- Բ Բազում դարերի կյանք ունես,
- Ա Անմար հիշատակ, պատիվ ունես:
- Բ Բանանց են կոչել պապերը մեր,
- Ա Անունը հետո Բանանց են դրել պապերը մեր,
- Ն Նրանց գերեզմանը թող աստված օրհնի,
- Ա Անմար անունը երբեք չմարի,
- Ն Նորից քեզ եմ սիրով հիշում,
- Յ Տմահ երբեք չեմ մոռանում:

Դարձյալ դու ես իմ հոգում ու սրտում,
Իմ սիրելի հայրենիք, տխուր ու տրտում,
Հրածեշտի մրմուռը սրտներս, քեզ թողեցինք
Եվ ցրտաշունչ Արուվանում հանգրվանեցինք:
Տենչանքս է՝ գալ քեզ տեսնելու,
Վերջին անգամ քեզ համբուրելու,
Թեկուզ ծածուկ Պիլոր հողից կամ Թեկունց թաղից
Նայեմ-նայեմ, մի լավ կշտանամ,
Այն աշխարհում հանգստանամ:



ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱԼՅ (ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ)

Պատմաբան-ազգագրագետ, բանաստեղծ, երգահան

Ծնվել է 1960 թ. Բանանցում: 1981-86 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Աշխատել է Սարգսրապատի ազգագրության թանգարանում, այնուհետև՝ Մեղրիի Ավան գյուղում որպես միջնակարգ դպրոցի տնօրեն: 1993 թ. տեղափոխվել է Գերմանիա, 1999 թ.՝ Կանադայի Տորոնտո քաղաք: Երգեր գրել է հասուն տարիքում: Գրել է Բանանցի նվիրված կարոտի երգեր: Ունեցել է երկու համերգ՝ Երևանում և Մոնրեալում:

ԻՄ ԲԱԼԱԼՅ

Ուտիք աշխարհի սիրտն ես դու եղել:
Հայրենյաց փառքի զարդն ես դու եղել:
Չքնաղ իմ Բանանց, կանչիր քո որդոց
Տունդ հայրենյաց:

Կրկներգ

Ելիր, ելիր, ելիր, ելիր նորից հայացիր,
Արցախի ձեռքը բռնած՝

Հայաստանին միացիր:

Գաղթական որդիքդ դարձի՞ր ըսպատում են
Եվ կարոտը սրտում միշտ աղոթում են:

Դու պիտի մնաս սերը մեր սրտի,
Ու պիտի լինես դուռը մեր հույսի:
Հրաշք իմ Բանանց, կանչիր քո որդոց
Տունդ հայրենյաց:

Կրկներգ

ԻՄ ԲԱԼԱԼՅ

ԷՆ ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԵՄ

Էն սարերի հովին մեռնեմ:
Աղբյուրների ջրին մեռնեմ:
Արշալույսին շաղերի մեջ
Արտույտների ձայնին մեռնեմ:

Կրկներգ

Այս երանի մեկ էլ նորից
Սիրով փարվեմ լանջերին:
Այս երանի մեկ էլ նորից
Սերս խառնեմ լանջերին:
Բարձր սարեր, սիրտս առեք
Ձեր լանջերին սիրասուն:

Էն սարերի մովն եմ հիշում:
Ամռան անուշ զովն եմ հիշում:
Ծաղկած լանջի ծաղիկների
Անուշահոտ բույրն է կանչում:
Հով սարեր, մով սարեր, հայրենի ծով սարեր:
Հով սարեր, մով սարեր, հայրենի ծով սարեր:

Հեյ ջան սարեր, հով-զով սարեր
Ձեզ եմ կանչում կարոտով:
Էյ ջան սարեր, մով-ծով սարեր,
Ձեզ եմ տենչում կարոտով:
Բարձր սարեր սիրտս առեք
Ձեր լանջերին սիրասուն:

Ո՛վ է ասել՝ թե չեն հնչում ու լուռ են
Այն զանգերը տաճարների:
Նրանք միշտ կան ու զնգում են
Մի անկյունում մեր սրտերի:
Գրիգոր Բանանց

ԷՆ ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԵՄ

ԲԱՆԱՆՅԵՑԻՆ

Թե Բանանցում դու չես եղել,
Բանանցուն հյուր չես եղել,
Ոչ աշխարհ ես կարգին տեսել,
Ոչ էլ հային լավ ճանաչել:

Հյուրի համար հոգի տվող,
Հացով մարդ էր բանանցեցին,
Նեղության մեջ ընկած մարդուն
Թև-թիկունք էր բանանցեցին:

Ապավինած իր լեռներին,
Միշտ ջարդել է նա թուրքերին,
Ջավակների արյան գնով
Պաշտպանելով հող-հայրենին:

Ըմբոստ ու քաջ բանանցեցին
Այսօր որք է ու տարագիր,
Ջրկված հողից, տնից, տեղից,
Դեգերում է երկրե երկիր:

Երազ ունի բանանցեցին,
Մի մեծ երազ, խորն ու անանց,
Կգամ օրը, որ միասին
Վերադառնան նորից Բանանց:

ԿԱՐՈՏԻ ԵՐԳ

Ախ մի օր նորից քո գիրկը կգամ,
Քո չքնաղ տեսքով արբեմ, հիանամ,
Կարոտս առնեմ ու նոր մահանամ,
Իմ Բանանց, ախր քեզ ո՞նց մոռանամ:

Քո Դիմաց տեղից վերև բարձրանամ,
Թարգմանչաց վանքը տեսնելու գնամ,
Մամոտս քարերին համբույրներս տամ,
Իմ Բանանց, ախր քեզ ո՞նց մոռանամ:

Ծմակով շրջեմ, Ձեռնավեր գնամ,
Քո պաղ ջրերից խմեմ, հագեանամ,
Ծառ ու ծաղկունքի հոտից արբենամ,
Իմ Բանանց, ախր քեզ ո՞նց մոռանամ:

Ոլորանց ջրի ծովերում լողամ,
Կոշկարա գետը մտնեմ, լողանամ,
Երկնքիդ գույների խաղով զարմանամ,
Իմ Բանանց, ախր քեզ ո՞նց մոռանամ:

Ներքին հանդ գնամ, սարը բարձրանամ,
Բնության զրկում նորից մանկանամ,
Այնպես կախարդվեմ, ետ գալ չուզեմ,
Իմ Բանանց, ախր քեզ ո՞նց մոռանամ:

Խոր անտառների միջով կուսական
Մատաղի համար Մաճաբերդ գնամ,
Մատաղ բաժանեմ, քո անունը տամ,
Իմ Բանանց, ախր քեզ ո՞նց մոռանամ:

ԳՅՈՒՂ ԻՄ ՀԱՅՐԵՆԻ՝ ԲԱՆԱՆՑ-ԲԱՆԱՆՈՑ

Լեռներ բարձրադիր, անտառներ թավուտ,
Գետակներ խոսուն, ջրվեժներ ցոլուն,
Աստղաշատ երկինք ու խոշոր լուսին,
Ո՛չ կիզիչ արև ու կենարար օդ:

Ու նրանց ներքո, ու նրանց գրկում՝
Բանանցը տարեց, գյուղս դարավոր,
Ոսխից պատվար ժայռակոփ տներ՝
Կղմինդրով ծածկված, հենված մեկմեկու:

Նրանց մեջ մարդիկ՝ քաջասիրտ, անվախ
Եվ շատ ժրաջան ու խիստ հնավանդ,
Ծորուն բարբառով ու հումորաշատ,
Ու հյուրամեծար, ու գյուղամեծար:

Աղջիկները՝ հայուհիներ նազենի,
Տղաները՝ պատվախնդիր, արծվենի,
Տարեցները՝ այգեգործներ կորովի
Ու վարպետներ հոյժ կարևոր արհեստի:

Իբրև դարերի զավակ այդ հողի՝
Խաղաղ, անխռով ապրում էին գյուղովի,
Իսկ թշնամին՝ քաղաքակիրթ այդ դարի,
Որոճում էր լուծել հարցը տեղաբնակ հայերի,

Ու մի օր էլ, ի հեճուկս ինքնորոշման Արցախի,
Տեղահանեց, տարագրեց բնիկներին վաղեմի,
Նախանձախնդիր, արդ ամոթահար բանանցեցին
Բռնեց ճամփան այլուրեքի, անորոշի:

Ուրիշ է, սակայն, բույրը մայր հողի,
Քաղցր ու հյութեղ է պտուղը ծառի,
Սյլ այգիներում ծառ տնկեց նորից,
Հիբրիդ ստացվեց՝ նոր համ ու հոտի:

Հիմա երազ ունի բանանցեցին՝
Երբ է գալու օրն այն բաղձալի,
Որ բռնի ճամփան տունդարձի,
Ամուր հենվի արմատներին մայր հողի:

Իմ քաղցր Բանանց՝
Դառնահամ դարձած,
Դու իմ հայր ու մայր,
Դու իմ մանկություն ու...
Զահեղություն:

Իմ երազների, իմ կարոտների,
Թանձր ու ծորուն իմ թախիծների
Հորդարնիս ակունք,
Հոգնա խառնարան, մխացող
Ակութ:

Դու իմ հրդ ու ջրդ,
Կենարար աղբյուր,
Ափսոսանք իմ մեծ,
Վիշտ իմ անսփոփ և...
Զմարմանդող:

Դու իմ սրբություն,
Իմ ազնվություն,
Հոգնա դարբնոց,
Աչքիս քուն բերող միակ
Օրորոց:

Դու իմ հինավուրց,
Իմ վաղնջական,
Դու իմ քարակրկ
Եվ իմ կարծրատիպ՝ հեռվում
Մնացած:

Հայրենի՛ Բանանց,
Քո սերը անանց՝
Կրքոտ ու անսանձ,
Զավակներին քո դուռդ կբերի մի օր...
Անկասկած:

2018 թ.

**ԳՐԵՏԱ ՀՈՎԱԵՓՅԱՆ
ԴԱՐԱՎՈՐ ԸՆԿՈՒՋԵՆԻՆ
(Մեծ ճղոպրին)**

Բանանց գյուղում, Դիմաց տեղում,
Ճամփի եզրին՝ հարմար տեղում,
Ուր անցուդարձն էր եռում, մի
Հաստաբուն ծառ էր վեր խոյանում:

Դարավոր, սաղարթախիտ **Մեծ ճղոպրին**,
Դարձել էր մատուտ՝ սրբատեղի,
Գիրկն էին գալիս անելու ոտնակախի,
Երդում տալիս՝ զորակոչիկները գյուղի,
Եվ գնում էին բանակ, առանց երկյուղի:

Ինչպես ուխտյալ զինվոր՝ վեհ ու հպարտ,
Շենի համար կանգնած, խիզախ, անպարտ,
Հսկում էր աչալուրջ՝ պահում անդորրը այդ,
Մարդասեր ընկուզենին, մեր անաղարտ:

Քանի-քանի մարդ էր պատսպարվում
Անձրևից, տանիք դարձած նրա փչակում,
Գալիս՝ հանգստանում սաղարթախիտ ստվերում,
Ապա օրհնում էին ու գորովանքով հեռանում:

Անգամ մահը նրա, չվնասեց և ոչ մեկին,
Տապալվեց աչքերիս առաջ, օր ցերեկին,
Օրհնվի մարդը, որ տնկել էր ժամանակին,
Որքան տարիներ օգտակար եղավ ամենքին:

Նա հեռացավ, իր հետ տանելով
Դարերի փոշին, հազար հողմ տեսած,
Հազար լավ ու վատ, հազար ցավ ու դավ՝
Թողնելով լուկ մասունքներ՝ վառ հիշողության:

Մեր մեջ մնացիր, որպես հավերժության ծառ,
Մեծ ճղոպրի, թողած հուշերդ միշտ կմնան վառ:

2019 թ.

ՍԻՐԱՆՈՒՇ ԴԱԴՅԱՆ

ՈՒՋՈՒՄ ԵՄ

Ես մըր Բնանցա օղն ըմ ուզում,
Մըր սարըրի սարինն ըմ ուզում,
Պիլոր հողի տափն ըմ ուզում,
Պողոտա, ասվալտ, պուրակ չեմ ուզում:
Մըր կրմըրջի աղպրի ճուրն եմ ուզում,
Փռան թխած հացն ըմ ուզում,
Ըռջկենի կինի, թթան արաղ ըմ ուզում,
Ջերմուկ, կոնյակ, բուխանկա չեմ ուզում:
Ալբուխարի, գիլաս, զըկըռ ըմ ուզում,
Տպակած լոթի, փիփերթ ըմ ուզում,
Շուշանի հու պեքի թթու ըմ ուզում,
Սալոր, կեռաս, շաուրմա չեմ ուզում:
Սարի մընիշակ, խլոպոզ ըմ ուզում,
Ջան, ջիգյար ու պաչ ըմ ուզում,
Կլուփի ինդիսկի կինոն ըմ ուզում,
Ջերմոցի ծաղիկ, ժամանցներ չեմ ուզում:
Իմ նանի «Քը մատաղ»-ն ըմ ուզում,
Իրա պատմած նաղլն ըմ ուզում,
Մըր հանգիստում դինջանալ ըմ ուզում,
Ազիզ ջան, մահ ու գերեզման չեմ ուզում:

17. 06. 2020 թ.

Թողած հեռվում գյուղս՝ Բանանց,
Թափառում եմ անօթևան,
Չէ, անտուն չեմ անկասկած,
Բայց օտար են ամեն շեն ու ավան:

ԲԱՆԱՆՑԻՆ

Առնեն ձեռքս թուղթ ու գրիչ,
Պատմեն գովասանքդ, Բանանց,
Գովելի էր քո ամեն ինչ
Օ՛ղդ, ջրորդ, տեղդ, Բանանց:


Շրջանումդ մի հատ էիր
Հոչակավոր դու, իմ Բանանց,
Գովելի էր քո ամեն ինչ՝
Հարսանիքդ, քե՛ֆդ, Բանանց:

Քարերի մեջ վազն ես գցել,
Ջարդել, փշրել ժայռեր՝ Բանանց,
Դու մոր նման մեզ տուն կանչող
Արծիվների բույն՝ իմ Բանանց:

Ամառը քո Դիմաց տեղում
Բարձրանում էր աղմուկ, Բանանց,
Նվագ ու երգերիդ ծայնից
Գալիս էր քե՛ֆս, Բանանց:

Աղջիկներդ՝ աննման են,
Տղաներդ՝ առյուծ քաջեր:
Դու մեր հոգում անմար կանթեղ,
Մեր սրտերում հավերժ ցավ, իմ Բանանց:

Վեց հարյուր նահատակ ու
Առաջին կին օղաչու՝
Թագուհի Վանյան ծնած՝
Հավերժ փառք քե՛զ, չքնաղ Բանանց:



Մուսունց Հայր՝ Մուսունց նահապետ
Մնացական ապերը, 1898 թ.



Մուսունց Հայի կինը՝ Մարիամը
(Մայան աքիրը) թգրեհով, 1904թ.

Բանանցի հայտնի տոհմերից մեկը Մուսունց (Մովսիսյան) տոհմն է: Տոհմի հայտնի մարդկանցից մեկը Մուսունց Մնացական ապերն է: Նա ծնվել է 1801 թ., վախճանվել 1903 թ. հուլիսի 14-ին: Ապրել է մեկ դարից ավելի: Իր երկարամյա կյանքում ոչ մի անգամ չի հիվանդացել, մահացել է առանց անկողին մտնելու: «Մշակ» թերթում կարդում ենք⁸⁴.

«Հանգուցեալ Մնացական ապերը յայտնի էր մեր ու շրջակայ գիւղերում «Մուսունց Հայ» անունով: «Հայ» բառը մի պատուաւոր կոչում է, որը տալիս է ժողովուրդը իր ծերունիներից այնպիսիներին, որոնք իրենց կեանքով, անարատ, առաքինի վարք ու բարքով ու գործունեութեամբ յօգուտ գիւղի ու ժողովրդի առանձնապես այցի են ընկել միշտ: Գիւղ է պատահում, ուր «հայ» տիտղոսը կրող ոչ ոք չի լինում: Տասնեակ տարիների ընթացքում հազիւ է այդ կոչումով հայտնի մինը, երկուսը գտնվում գիւղում: Այդպիսին վայելում է ժողովրդի առանձին յարգանքը, նրան լսում են, նրանից քաշվում ու ամաչում են թե՛ փոքրերը, թե՛ մեծերը, բոլորն էլ յարգանքով լսում են նրա խրատները, նկատողությունները ու լուռ տանում նրա կշտամբանքը: Գյուղի նահապետի «քեֆին դիպչելը», նրան «ջողոք տալը», հակաճառելը մեղք է համարվում:

⁸⁴ «Մշակ», 1903, N 162, էջ 2: Իր նախապապի մասին վերոհիշյալ հոդվածը տրամադրել է Մուսունց Դշխոն (Դշխուհի Մովսիսյանը):

Մուսունց Մնացական ապերը, «հայ» կոչումը կրելով, եղել է իր գիւղի նահապետը, ընդհանրական ապերը: Եթէ մէկը օտարութիւն է գնացել, առանց նրան տեսնելու, նրանից խրատ լսելու ու նրանից օրհնութիւն ստանալու չէ՝ ճանապարհվել գիւղից, եթէ օտարութիւնից պարզերես վերադարձել է, գնացել է Մուսունց Հային տեսել՝ նրանից խրախոս, օրհնութիւն լսելու համար:

Բանանցեցիներից շատերը օտարության մեջ, ուսանողական նստարանների վրա կամ այլ պատասխանատու գործում յաճախակի յիշել են Մնացական ապորը, նրա սրամիտ դարձուածները, նրա կծու, նրա անխնայ լեզուն, նրա խրատները՝ նամուսով կենալ, չմոռանալ գիւղը ու աշխատել միշտ լավ գործերով բարձրացնել նրա անունը:

Ունէր սուր ու կծու լեզու, սիրում էր քննադատել, այն էլ շատ անխնայ գիւղի կառավարիչների ու հոգեւորականների գործունեութիւնը, արարքները: Գիւղի տանուտէրը, դատավորներն, քահանաներն ու իշխանները միշտ քաշվում, վախենում էին «Մուսունց Հայից» ու խուսափում էին նրա հետ պատահելուց, բայց երբ նրա ճանկն էին ընկնում, լուռ կանգնում էին նրա առաջ ու առանց բողոքի տանում նրա նկատողություններն ու դատաւիտումները:

Մնացական ապերը մինչև իր կեանքի վերջը լարված յարաբերութիւնների մէջ էր գտնվում գիւղի հոգեւորականութեան ու... Դաւիթ մարգարէի ու Պօղոս առաքեալի հետ: Հոգևորականութեանը ասում էր նրա շահասիրութեան ու որկրամոլութեան համար: Դաւիթ մարգարէին այն պատճառով, որ նա քառասուն կին է ունեցել, ու վերջինին՝ 40-երորդին, ձեռք է բերել նրա օրինաւոր ամուսնուն սպանելու միջոցով: Պօղոս առաքեալին էլ ասում էր նրա համար, որ իր գրոածքներից մեկում ասում է. «Տնոր, մի քննիր»: Շնորհիվ այդ լարված յարաբերութիւնների նա տարին հազիվ մի կամ երկու անգամ էր եկեղեցի գնում: Չատկին ու Ջրօրհներին, այն էլ միայն Քրիստոսին սիրելուց դրդված:

– Ինչո՞ւ չես ժամ գնում, ապէր, – հարցնում էին նրան:

– Գէշ են թում:

– Ովքեր:

– Տէրտէրները, մին էլ էն Դաւիթն ու Պօղոսը, – ասում էր Մնացական ապերը, – եթէ Քրիստոսը չլիներ, ես իսկի ժամ էլ չէի գնա, միակ արդարը, միակ ճշմարիտը՝ Նա ա, Նա, ես նրան մատաղ, մնացած բոլորն էլ մեղաւոր հողեղէններ են, մեղաց որդիք են, մանավանդ մեր տէրտէրների հավատին կացած Դաւիթն ու Պօղոսը: Եղ առաքեալ Պօղոսն ասում ա «տուր, մի քննիր», լավ լսեցեք հա «տուր, մի քննիր», լավ, բան կգայ, որ եկեղեցին տանք տէրտէրներին ու չքնենք, թէ տեսնենք նրանք ոնց են քահանայութիւն անում, եթէ բոշ անենք, չքնենք, նրանք եկեղեցին իրանց համար դուքան-բազար կդարձնեն, կամ բան կգայ, որ գիւղը տանք տանուտէրին ու իշխաններին ու չքնենք, թէ տեսնենք նրանք ոնց են կառավարում, եթէ նրանք բոշ անենք, գայլերի նման գեղը վեր կկոխեն ու կուտեն: Չէ, թէև Պօղոսն առաքեալ է, բայց ես նրա հետ համաձայն չեմ, էդ բանը նա ծուռ ա ասել:

Մնացական ապորը թաղեցին գիւղի մօտ գտնվող «Տատի-սեռ» անուն կրող սարի գագաթին, այն համոզմամբ, որ նա այն բարձրությունից կպահպանի գիւղը, բարեխօս կլինի գիւղի համար Աստուծո առաջ, և նա յարգելով գիւղի նահապետի յախտենական աղերսը, միշտ կդարձնէ (կհեռացնէ) գիւղից ու ժողովրդից իր ցասումը, կարկուտն ու երաշտը, մուկն ու մորեխը:

Թաղման հետևյալ օրը զուռնա-դավալով այցելութեան գնացին Մնացական ապոր գերեզմանին, որի շուրջը մի քանի ժամ անընդհատ տեղի ունեցան պարեր: Ըստ հնավանդ սովորութեան այդպիսով առնվում էր գիւղի նահապետի, նրա յախտենական բարեխօսի փառաւոր մուտքը երկնային արքայութիւն» (ՄՇԱԿ թերթ, 1903թ., հուլիսի 30):

«Մշակի» հոդվածագիրը չի նշել (երևի տեղյակ չէր) Մուսունց Հայի Մահտեսի լինելու մասին: «Մահտեսի» անունը Քրիստոսի գերեզմանին ուխտի գնացած անձանց է տրվել: Մուսունց Հայի ոտքով ուխտագնացությունը երուսաղեմ տնել է յոթ տարի: Նա ձեռքին կնիք ուներ այդ ուխտագնացությունը հաստատող, և շրջակա գյուղերից անպակաս չէին նրա մոտ այցելուներն ու նրա սուրբ ձեռքը համբուրողները: Մուսունց Արշակի գովասանագիրը, որ ստացել էր ռուս Նիկոլայ ցարից, գրված է Արշակ Մահտեսի Տեր-Մովսեսով ազգանվամբ:

Հենց սա էր նաև պատճառը, որ նրա օրհնությունն էին ստանում օտարություն գնացողները՝ իմանալով՝ նա բարեխօս կլինի Աստուծո առաջ: Զինվորական ծառայության մեկնող տղաները անպայման զուռնա-դիողով այցելում էին Մուսունց Հային, վերադառնալուց հետո էլ՝ բարձրանում էին Տատի-սըռ՝ հայտնելու բարեհաջող ծառայության մասին: Հիմա էլ Տատի-սըռի բարձունքում նա սպասում է օտարության մեջ Բանանցի կարոտով ապրող հարազատների վերադարձին:

Ինչպես նշվեց վերևում, Մուսունց Հայը չլիներով աստվածապաշտ, մեռնելուց առաջ խնդրում է, որ իրեն թաղեն Տատի սըռի գյահին (գագաթին), ընդհանուր հանգստարանից վերև ու առանց տերտերի, որպեսզի ուրիշ մեռել թաղելու ժամանակ այդ հեռավորությունից տերտերի ձայն չլսի: Նա տերտերներին համարում էր խաբերաներ:

Մի անգամ գյուղացիներից մեկը ճանապարհին մի խալի է գտնում և տանում տուն⁸⁵: Տերտերը իմանալով այդ մասին, կանչում է գյուղացուն և ասում, որ խալին պետք է տա իրեն, որպեսզի աստծուց նրա մեղքերի համար թողություն խնդրի: Լսելով այդ մասին՝ Մնացական Հայը (Ցական) գյուղամիջում բռնում է տերտերին, լավ հայիոյում, ասելով՝ թե ինչու է խաբում գյուղացուն: Այնուհետև խալին հետ է վերցնում ու տալիս գյուղացուն:

⁸⁵ Այս դեպքի մասին պատմել է Ալեքսան Ծահմուրադյանը 1984 թ., որը գրի է առել Մ. Չալումյանը:



**ԱՐՇԱԿ ՄԼԻՑԿԱՆԻ ՄԱՀՏԵՍԻ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍՅԱՆՑ
(ՄՈՒՍՈՒՆՑ ԱՐՇԱԿ)**

Նույն տոհմից էր Մուսունց Արշակը, որը ճանաչված, հայրենասեր մարդ էր, սիրում էր իր ազգը, հարազատ գյուղն ու գյուղացիներին, ինքն էլ փոխադարձաբար սիրված էր համապոլագիների կողմից: Ուժերը ներածին չափ օգնում էր հայրենակիցներին թե՛ տնտեսության մեջ, թե՛ օգտակար խորհուրդներով⁸⁶:

Նա շատ է օգնել 1915 թ. Արևմտյան Հայաստանում հայկական ջարդերից հետո Բանանցում հայտնված հայ գաղթականներին: Սատարում էր հայրենիք կորցրած այդ հայերին, տալիս էր աշխատանք, ապաստան, տանիք՝ մեղմացնելով նրանց կյանքը և կորցրած հայրենիքի նկատմամբ կարոտը: Շնորհիվ Մուսունց Արշակի՝ մշեցի գաղթական Խաչատրյան Աբրահամի (Աբրո դայի) ընտանիքը ոչ միայն ապաստան ու տանիք ունեցավ գլխին, այլև նրա զավակները արհեստներ սովորեցին Գանձակում և ընդմիջտ հաստատվեցին Գանձակում: Մինչև հիմա էլ նրա ժառանգները կապ ունեն Մուսունց ընտանիքի հետ: Այդ գաղթականներից էին թառահար Վաղարշը, Արուֆինը, երկուսն էլ գաղթած Վանից: Նրանք մինչև իրենց կյանքի վերջ չմոռացան Մուսունց ընտանիքն ու հարգում էին նրանց հիշատակը:

Մուսունց Արշակը ոչ միայն գյուղական բարերար էր, նա աչքի էր ընկնում իր քաղաքական հայացքներով ու կողմնորոշումներով: Հաշվի առնելով նրա ջիղն ու ընդունակությունները՝ մաթեմատիկոս-պրոֆեսոր Տոնյան Արշակի հետ միասին ընտրվել էր Ռուսաստանի Պետական դումայի Անդրկովկասյան սեյմի պատգամավոր: Թիֆլիսում՝ նիստերից մեկի ժամանակ, նա ելույթ է ունենում և իր արդար ու կրակոտ խոսքով մեղադրում և քննադատում նախագահողին անիրավացի ու կողմնակալ որոշումների համար, չէր հանդուրժում կեղծն ու անարդարը, միշտ ժողովրդի կողքին էր՝ պաշտպանելով նրա շահը:

Ի պատիվ Դումայի մասնակից պատգամավորների՝ հաջորդ օրը մեծ ճաշկերույթ էր կազմակերպված: Մասնակցում էին հայկական նահանգներից ժամանած բոլոր պատգամավորները, և ամեն նահանգից որևէ մեկը պետք է կենաց-ճառ արտասաներ: Երկու Արշակներից մեկը պիտի ելույթ ունենար: Տոնյան Արշակը ոչ մի կերպ չի համաձայնում կենաց խոսք ասել՝ գտնելով, որ Մուսունց Արշակը լավ հոնտոր է, ու ելույթ ունենալու պատիվը պատկանում է նրան: Դժվարությամբ հանձն առնելով կենաց ելույթը՝ Մուսունց Արշակը բարձրացնում է բաժակը.

- Ես խմում եմ աշուղ Ղարիբի կենացը, որ հայ մանուկների բերանից հանեց թուրքերեն ամանն ու աջանը, և հայ բառն ու մեղեդին ընդմիջտ ուղեցույց դարձան հայ մանուկի և հայ մարդու համար: - Նրա կենաց-ճառն ընդունվեց ծափահարությամբ: Պարզվեց, որ ներկաների մեջ էր նաև աշուղ Ղարիբի որդին: Նա մեծ հուզմունքով իր շնորհակալությունը հատնեց Արշակին՝ այդ քաղաքական մեծ հանդեսին իր հոր հիշատակը հարգելու համար:

Մուսունց Արշակը մասնագիտությամբ ատաղձագործ (պլոտնիկ) էր, աշխատում էր Էլենդորֆում (Խանլար) գերմանացիների հետ՝ պատրաստելով նրանց ճաշակին համապատասխան կահույք: Այդ տարիներին Խանլարում գործում էր կարիքավոր երեխաների օգնության ֆոնդ: Իր հեղինակությունն օգտագործելով՝ հաճախ գումար էր բերում գյուղ և բաժանում գյուղի կարիքավոր երեխաների միջև:

Բայց նրա սիրելի զբաղմունքը մնում էր խաղողագործությունն ու գինեգործությունը: Ուներ խաղողի սեփական այգիներ: Աշխատասեր էր, ստեղծագործ իր աշխատանքում: Նրա ստեղծագործ աշխատանքը գնահատվել էր նաև Նիկոլայ ցարի կողմից, և Ռումանովների կայսրության 300-ամյակի (1613-1913) կապակցությամբ նա արժանացել է գովասանագրի և դրամական պարգևի՝ սեփական այգիներում օրինակելի տնտեսություն ստեղծելու և վարելու համար:



Մուսունց Արշակի գովասանագիրը, որը ստացել է իր հողամասում օրինակելի տնտեսություն կազմակերպելու համար, 1914 թ.

⁸⁶ Դշխուհի Մովսիսյանի հուշերը:

Այդ պարզները նա ստացել է անձամբ Նիկոլայ ցարից, Պետերբուրգի Ձմեռային պալատում: Յարից ստացած գովասանագիրը պահպանվում է մինչև հիմա: Նա հարազատների մոտ հաճախ էր անդրադառնում Նիկոլայ ցարի հետ այդ հանդիպման թեմային, պատմում ցարի հանդիպումից հետաքրքիր մանրամասներ և դրվագներ:

1936 թ. շատ հայեր աքսորվեցին Ստալինի հրամանով, աքսորվողների ցուցակում էր հայտնվել նաև Մուսունց Արշակի անունը: Գյուղի ակումբում, երբ կարդացին նրա անունը աքսորվողների ցուցակում, ներկաները բողոքի ալիք բարձրացրին՝ մեկ առ մեկ հիշատակելով նրա մարդասիրական արարքները գյուղի ու գյուղացիների համար, իսկ քվեարկումից հետո պարզվեց՝ բոլորը դեմ էին նրա աքսորվելուն: Արշակը մնաց Բանանցում և մահկանացուն գտավ հարազատ գյուղում:

* * *

Նշենք, որ Բանանցից հայտնի առաջին մահտեսին (մղոսի) եղել է Բբանց Բաբին, որը թաղվել է Երուսաղեմում: Նրա որդի Կարապետը՝ ծնված 1836 թ., գնացել է Երուսաղեմ, այցելել հոր գերեզմանին, հետո միայն վերադարձել ու ամուսնացել:

Բանանցում են ծնվել շատ տաղանդավոր հայորդիներ, որոնք իրենց կատարած աշխատանքով մեծ ներդրում են ունեցել հայկական մշակույթի, գիտության, բժշկության, բնական գիտությունների, մանկավարժության ու շատ այլ բնագավառներում: Ներկայացնում ենք անվանի մի շարք բանանցեցիների գործունեության մասին համառոտ տեղեկություններ⁸⁷:



ՍՍԵՓԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆ
1868-1938

Գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, գյուղագիր-դեմոկրատ Ստեփան Քրիստափորի Տեր-Ավետիքյանը ծնվել է հայոց Գարդման գավառի Բանանց գյուղում (այժմ՝ Ադրբեջանի Դաշքեսանի շրջան): 1889 թ. ավարտել է Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտը, ուսուցչություն և տեսչություն արել Պյատիգորսկում, Ղարաբաղում, Գանձակում, Թիֆլիսի նահանգում: Իր արձակ գործերում («Սամիտարնի», 1897 թ., «Նահատակը», 1898 թ., «Պատմվածքներ», 1912 թ., «Չարաբաստիկ թուղթը», 1913 թ., «Բուտոնը», 1914 թ., «Օրինվի նրա եկած ճամփան», 1921 թ. և այլն) արտահայտել է ազատասիրական մտքեր, պաշտպանել գյուղացիների շահերը, հանգել է շահագործողների վերացման անխուսափելիության գաղափարին: Ուշագրավ են նրա հակակրոնական, աթեիստական բնույթի («Մեր տերը», «Կապ բռնողը» և այլն) և ժողովուրդների բարեկամության վերաբերյալ («Անտառի գյուտը») գործերը, ինչպես նաև գյուղի սոցիալական կյանքն իր զավեշտական ու ողբերգական կողմերով, իր սովորույթներով ներկայացնող պատմվածքները («Ասիստենտը», «Ուղերձը», «Ճակատին էն էր գրած» և այլն): Որոշակի արժեք ունեն նրա «Իռլանդիայի դատը» (1898թ.) և «Հոմրույի պաշտպանը» (1899թ.) քաղաքական-հրապարակախոսական բնույթի գործերը: Տարվելով Դաշնակցություն կուսակցության դեմոկրատական գաղափարներով՝ մտել է այդ կուսակցություն: 1907 թ. ընտրվել է 2-րդ Պետական դումայի պատգամավոր՝ Ելիզավետպոլի նահանգից: Դումայում ունեցած իր ելույթներում քննադատության է ենթարկել ցարիզմը, որի համար քանտարկվել է: Վ.Լենինը «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության ժամանակ» աշխատության «Նացիոնալները» ենթագլխում անդրադարձել է գրողի՝ դումայում ունեցած ելույթին, մեջբերելով նրա խոսքերը. «Հողը համայնական սեփականության

⁸⁷ Ներկայացվում են հանրագիտարանային տեղեկություններ:

սկզբունքներով պետք է պատկանի աշխատավոր ժողովրդին և ուրիշ ոչ ոքի... Ամբողջ Կովկասյան գյուղացիության անունից ես հայտարարում եմ... վճռական պահին ամբողջ կովկասյան գյուղացիությունը ձեռք ձեռքի տված կգնա իր ավագ եղբոր՝ ռուս գյուղացիության հետ և ձեռք կբերի իր համար հող և ազատություն»⁸⁶ Ողջունել է խորհրդային կարգերի հաղթանակը Անդրկովկասում, այնուհետև հեռացել է դաշնակցությունից և զբաղվել ռուսացությամբ: 1923 թ.-ից ռուսացություն է արել հայրենի Բանանցում: Մտերիմ հարաբերություններ է ունեցել հայ անվանի գրողներ Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի և այլ մտավորականների հետ: Դարձել է ստալինյան բռնությունների զոհ: 1937 թ. ձերբակալվել, ապա գնդակահարվել է:

ԼԵՎՈՆ ԱՆԴՐԵՅԻ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
1868-1943

Հայտնի ինժեներ Լ. Տեր Միքայելյանը ծնվել է Բանանց գյուղում 1868 թ.: Ստանալով ինժեների մասնագիտություն, գլխավորել է Սիբիրի և Վոլոգդայի երկաթուղագծերի շինարարությունը: Կյանքի վերջին տարիներին աշխատել է Երևան-Սևան երկաթուղու նախագծի վրա: Հանդիսացել է Անդրկովկասյան երկաթուղային վարչության անդամ: Վախճանվել է 1943 թ.:



ԳՐԻԳՈՐ ԱԼԵԲՍԱՆԻ ԶԱՂԵԹՅԱՆ
1885-1938

Գրիգոր Զաղեթյանը ծնվել է Բանանցից Իջևան տեղափոխված Ալեքսան Զաղեթյանի ընտանիքում, որն այդտեղ ուներ խանութ (խանութը այդպես էլ կոչվում էր. Զղեթանց Ալեքսանի խանութ)⁸⁸: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, այնուհետև Լայպցիգի համալսարանը (1909): Գ. Զաղեթյանը պետական, հասարակական, քաղաքական գործիչ էր: ՀՅԴ անդամ: Մասնագիտությամբ ֆինանսիստ էր և 1919 թ. մայիսի 24-ից մինչև 1919 թ. օգոստոսի 5-ը եղել է ՀՀ առաջին հանրապետության ֆինանսների նախարար: Խորհրդային կարգերի հաստատումից հետո նշանակվել է Կենտրոնական բանկի կառավարիչ:



ՀՀ առաջին հանրապետության դրամը Գ. Զաղեթյանի ստորագրությամբ, 1919 թ.

⁸⁶ Մ. Բարխուդարյան, էջ 341:



ԱՐՇԱԿ ՀՈՎՍԵՓԻ ՏՈՆՅԱՆ
1888-1938

Մաթեմատիկոս, մանկավարժ, թարգմանիչ, բառարանագիր պրոֆեսոր Արշակ Հովսեփի Տոնյանը ծնվել է 1888 թ. Բանանց գյուղում⁸⁹: Նախնական կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Էջմիածնում:

1906 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասարանական բաժինը: Աշխատանքային գործունեությունն սկսել է 1909 թվականին Շուշիի թեմական դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1910-1914 թվականներին սովորել է Հալլեի համալսարանում (Գերմանիա): Եղել է մաթեմատիկայի ուսուցիչ Թիֆլիսի Ներսիսյան և Հովնանյան դպրոցներում (1914-1921 թթ.):

1921-1937 թվականներին աշխատել է Երևանի համալսարանում, եղել է մաթեմատիկայի ամբիոնի վարիչ (1930-1937 թթ.), տեխնիկական ֆակուլտետի (1925-1928 թթ.) և ֆիզմաթ ֆակուլտետի ղեկան (1936-1937 թթ.), դասավանդել է մաթեմատիկական անալիզ և ֆունկցիաների տեսություն:

Տիրապետել է մի քանի լեզուների և իր լեզվական ու մաթեմատիկական գիտելիքներն ի սպաս է դրել մայրենի լեզվով ուսումնական գրականության ստեղծման և հայերեն գիտական տերմինների մշակման գործին: Թարգմանել է դպրոցական և համալսարանական 11 դասագիրք (մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի): Կազմել է տերմինաբանական բառարաններ:

Նրա գործունեությունն ընդհատվել է 1937 թվականին, դարձել է ստալինյան բռնարարքների հերթական զոհը: Վախճանվել է աքսորավայրի ճանապարհին: Արդարացվել է հետմահու:

Գրել է «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների» (Ե., 1928 թ.), «Մաթեմատիկական տերմինների բառարան» (անգլերեն, ռուսերեն, հայերեն, գերմաներեն, ֆրանսերեն, Ե., 1965թ.) աշխատությունները:



ՄԱՐԻԱՄ ԱՐՇԱԿԻ ՏՈՆՅԱՆ
1919-2022


Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի երկարամյա ուսուցչուհի, Արշակ Տոնյանի դուստր Մարիամ Տոնյանը ծնվել է 1919-ին Թիֆլիսում, սակայն վաղ հասակից ապրել է Երևանում: Եղել է Սիլվա Կապուտիկյանի համադասարանցին: Ապրել են երևելի մարդկանց հարևանությամբ՝ Հրաչյա Աճառյան, Մանուկ Աբեղյան, Ստեփան Զորյան, Արսեն Տերտերյան, Լևոն Քալանթար...: Սակայն հայրը՝ Արշակ Տոնյանը դառնում է ստալինյան բռնապետության զոհ: Հորից մի երկտող է հիշատակ մնացել և մի դաշնամուր, որի վրա նվագել է Ռոմանոս Մելիքյանը:

Ստալինյան հալածանքների զոհ է դառնում նաև ամուսինը՝ ֆիլիարմոնիայի ղեկավար Կոնստանտին Մելիք-Վրթանեսյանը: Սակայն կյանքի հարվածները չընկճեցին Մարիամ Տոնյանին: Նա շարունակեց ապրել ու աշխատել: Ունի բազմաթիվ աշակերտներ, որոնցից շատերը անվանի երաժիշտներ են:

Արդեն 80 տարի նրա աշխատանքային երթուղին անփոփոխ է՝ Չայկովսկու անվան քոլեջ: 50 տարի ղեկավարել է երաժշտության տեսության բաժինը: Նրան աշակերտել են անվանի շատ երաժիշտներ՝ Ժան Տեր-Մերկերյանը, Մեդեա Աբրահամյանը, Մարտին Վարդազարյանը... Արդեն 100-ամյակը բոլորած Մարիամ Տոնյանի մուտքը և ներկայությունը ոգևորություն է առաջացնում քոլեջում: Իսկ ինքը ապրում է այն մտքով, որ պետք է ջնջել անցյալի տխուր հիշողությունները և հիշել միայն լավը⁹⁰:

Մարիամ Տոնյանը մահացել է 2022 թվականին:

⁸⁹ Հեղինակ Սուսաննա Մարտիրոսյան, 2019 թ.:



ԱՐՏԱՇԵՍ ԳՐԻԳՈՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ
1910-1982

Հայ խորհրդային բեմադրիչ (ռեժիսոր) Արտաշես Գրիգորի Հովսեփյանը ծնվել է Բանանց գյուղում 1910 թ.⁹¹: 1934-1938 թթ. սովորել է Մոսկվայի թատերական ինստիտուտում: 1928-34 թթ. եղել է Բաքվի հայկական թատրոնի դերասան և ռեժիսորի օգնական, 1938-1949-ին՝ գլխավոր ռեժիսոր:

1951-1960-ին աշխատել է Ստեփանակերտի, Լենինականի և Երևանի Ստանիսլավսկու անվան թատրոններում: 1938-1949 թթ.՝ Բաքվի հայկական թատրոնի գլխավոր ռեժիսորն էր, 1953-1960 թթ.՝ Լենինականի դրամատիկ թատրոնի գլխավոր ռեժիսոր, 1979-1981 թթ.՝ Ստեփանակերտի հայկական թատրոնի գլխավոր ռեժիսոր: Բեմադրել է Ա. Գոպակյանի «Արշալույսին», Ա. Բարսեղյանի «Կամո», Ա. Կապլերի և Տ. Զլատոգորովայի «Լենին», Ա. Յուժին-Սումբատովի «Դավաճանություն», Զ. Զաբարլիի «1905 թվականին», Շիրվանզադեի «Պատվի համար», Մուրացանի «Ռուզան», «Արևելյան ատամնաբույժ», «Անմեղ մեղավորներ», «Երիտասարդ գվարդիա», «Եվգինե», «Քանդած օջախ», «Վասսա Ժելեզնովա», «Փորձադաշտ», «Անձնական գործ» և այլ պիեսներ:

1960-ից Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դերասանի վարպետության ամբիոնի վարիչն էր: 1968 թվականից՝ պրոֆեսոր: Զբաղվել է նաև թարգմանական աշխատանքներով:

Արժանացել է մի շարք պարգևների, մրցանակների, 1940 թ.՝ Ադրբեջանի, 1960 թ.՝ Հայաստանի, 1967 թ.՝ Դաղստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման: Մահացել է Երևանում 1982 թ.:

⁹¹ Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր 3, 1999:



ԱՍՅԱ (ԹԱԳՈՒՀԻ) ՄԻՄՈՆԻ ՎԱՆՅԱՆ
1916-1996

Առաջին հայ կին օդաչու Ասյա Վանյանը ծնվել է 1916 թ. Բանանց գյուղում: Ցնտեսական պայմանների պատճառով Բանանցից Վանյանները տեղափոխվում են Բաքու⁹²: Այս քաղաքում Թագուհի անվան փոխարեն նա վերցնում է Ասյա անունը: Բաքվում Ասյան և սովորում էր, և աշխատում, քանի որ անհրաժեշտ էր օգնել մորը: Սակայն նրան շատ էր հրապուրում երկինքը: Եվ նա հաճախում է Բաքվի աներոակումբի օդաչուական դպրոց:

30-ական թվականներին կոմերիտականները որոշում են նվաճել Սիրիրն ու Պրիմորյեն: Ասյա Վանյանը այդ կոմերիտականների հետ էր: Իսկ երբ ճապոնացիները հարձակվում են, նրանց դեմ կռվողների մեջ էր նաև Ասյա Վանյանը: Ասյայի հերոսությունների մասին գրում են թերթերը: Նա պարգևատրվում է «Կարմիր աստղ» շքանշանով: 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ նա կամավոր մեկնում է ռազմաճակատ: Մասնակցում է մի շարք մարտական թռիչքների:

Մի անգամ ֆաշիստները խփում են Ասյայի ինքնաթիռը: Նա կարող էր օգտվել պարաշյուտից և փրկել կյանքը: Բայց այդ դեպքում նա կարող էր գերի ընկնել ու իր վնասված ինքնաթիռը ուղղում է թշնամական կուտակումների վրա: Ընկերների աչքի առջև Ասյայի ինքնաթիռը քարի նման զարկվում է գետնին և բոցավառվում: Պարաշյուտ չի երևում և ընկերները, ավելի ուշ՝ մայրը և մյուս հարազատները սգում են մահը: Բաքվի «Կոմունիստ» հայկական թերթը 1943 թ. հունիսի 30-ի համարում տպագրում է հոդված «Հայրենիքի դուստրը» վերնագրով:

⁹² Ասյա Վանյանի մասին 1960-ական թվականներից գրվել է նաև հայաստանյան մամուլում: «Պարուն» ամսագիրը «Հայ առաջին աղջիկ օդաչուն», 1968 թ., N 10, «Ավանգարդ» թերթը և այլ տպագիր օրգաններ անդրադառնում են Ասյայի սիրագործություններին:

Նա «հետմահու» պարգևատրվում է Լենինի շքանշանով: Սակայն տեղի էր ունեցել հրաշք: Ինքնաթիռը գետնին զարկվելու ժամանակ Ասյան դուրս էր շարտվել էր մի քանի մետր հեռու, որն էլ փրկել էր նրա կյանքը: Դեպքի վայրում հայտնված սովետական զինվորները նկատում են, որ նրա վերքից արյուն է հոսում, իսկ դա նշանակում է, որ նա ողջ է: Բուժվելով հոսպիտալներում Ասյան նորից հայտնվում է իր գորամասում և շարունակում կռվել: Պատերազմն ավարտում է Գերմանիայում: Այնուհետև բնակություն է հաստատում Լենինգրադում:

Ասյա Վանյանը երբեք չէր մոռանում իր արմատները՝ Բանանց գյուղը: Իր տանը միշտ սիրով հյուրընկալում էր բանանցեցի իր հարազատներին ու համագյուղացիներին, հետաքրքրվում գյուղում կատարված փոփոխություններով ու նորություններով: Մահացել է 1996 թ. ուկրաինական Պանչևո քաղաքում (հայտնի չէ, թե ինչու է նա հայտնվել այդ քաղաքում):



ՓԱՌԱՆԾԵՄ ՎԱՉԳԵՆԻ ԱՎԵՏԻՔՅԱՆ
1913-1990

Փառանծեմ Ավետիքյանը ծնվել է 1913 թ. Բանանցում: Շատ վաղ՝ 1915 թ. կորցրել է հորը՝ Վազգեն Տեր-Ավետիքյանին և հինգ երեխաների խնամքը իր վրա է վերցրել մայրը՝ Հայկանուշը: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորել ու 1930 թ. ավարտել է Գանձակի (Կիրովաբադ) մանկավարժական տեխնիկումը: Չորս տարի որպես ուսուցիչ աշխատել է Չագլիկ և Կուշչի գյուղերում: Սակայն Փառանծեմ Ավետիքյանը որոշել է շարունակել ուսումը Երևանի բժշկական ինստիտուտում: 1940 թ. ավարտելով ինստիտուտը աշխատանքի է անցել Շամշադինի (այժմ Տավուշ) Դրդի գյուղում, սպասարկելով շրջակա այլ գյուղերի հիվանդներին:

1941 թ. սկսվում է 2-րդ համաշխարհային պատերազմը: Նա զորակոչվում է և ծառայության անցնում Հյուսիսկովկասյան ռազմաճակատում: Այնուհետև ծառայել է Բելառուսական, Ուկրաինական ռազմաճակատներում: Մասնակցել է ոչ միայն խորհրդային տարածքների, այլև Արևելյան Եվրոպայի՝ Պրուսիայի, Լեհաստանի և նրա մայրաքաղաք Վարշավայի ազատագրմանը: Պատերազմն ավարտել է Պրահայում: Պարգևատրվել է շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով:

Չորացրվել է 1946 թ., վերադարձել Երևան ու աշխատանքի անցել պրոֆեսոր Գաբրիելյանի անվան 1-ին մանկական հիվանդանոցում, որտեղ տասնամյակներ շարունակ զբաղվել է մանուկների առողջության պահպանման հարցերով:

Փառանծեմ Վազգենովնան այն մարդկանցից էր, ով մեծ ոգևորությամբ մասնակցում էր Բանանցում «Արծիվ» հուշարձանի կառուցման կազմակերպչական աշխատանքներին: Եվ նրա համար շատ ծանր հարված էր արձանի ավերումը Ադրբեջանի իշխանության կողմից: Փառանծեմ Վազգենովնան փորձեց պայքարել, փորձեց արդարություն գտնել Բաքվում ու Մոսկվայում, սակայն ջանքերն իզուր էին, որովհետև Հ. Ալիևը ջերմ հարաբերություններ ունենալով Լ. Բրեժնևի հետ, կարողացավ հարցը լուծել հոգուտ իրենց:

Փառանծեմ Ավետիքյանը մահացել է 1990 թ. Երևանում:



ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1924 թ. Բանանց գյուղում: Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ-էներգետիկի որակավորում: Տեխնիկական գիտությունների թեկնածու է: Հեղինակ է 5 գյուտերի, 29 գիտական աշխատանքների և 3 մենագրությունների: Ս.Տերյանը հեղինակ է նաև 98 նորարարական առաջարկությունների:

Ս. Տերյանի նախաձեռնությամբ և անմիջական ջանքերի շնորհիվ Բանանցում կառուցվել է 2-րդ Համաշխարային պատերազմում զոհված բանանցեցի 600 մարտիկներին նվիրված «Արծիվ» հուշարձանը: Հուշարձանը ադրբեջանցիների կողմից քանդվելուց հետո Ս. Տերյանը Փառանձեմ Ավետիքյանի հետ մեծ ջանքեր է գործադրում այն նորից վերականգնելու համար, սակայն ջանքերն ապարդյուն են անցնում, հանդիպելով խորհրդային կառավարության անտարբերությանը:

Ապրելով համարյա մեկ դար՝ Ս. Տերյանը շարունակում է ստեղծագործել: Նա գրի է առել իր տոհմի ու ընտանիքի պատմությունը, որը մեքենագիր ձևով տարածվել է հարազատների ու բարեկամների շրջանում:



**ՂԱԶԱՐՈՍ ՊԵՏՐՈՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
1920-1999**

Ղազարոս Գրիգորյանը ծնվել է Բանանցում: 1937 թվականին Բանանցի միջնակարգ դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո ընդունվում է Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը, որտեղ սովորում է մի կիսամյակ: Այնուհետև անձնական պատճառներով կիսատ է թողնում ուսումը և մեկնում Մոսկվա: 1939 թ. զորակոչվել է բանակ, այնուհետև սկսվում է պատերազմը:

Ձորացրվելուց հետո՝ 1947 թ. ընդունվում է Մոսկվայի ավտոճանապարհային ինստիտուտը, որը գերազանցությամբ 1952 թ. ավարտելով, պաշտպանում է թեկնածուականը և դասախոսում մինչև կյանքի վերջը: Նրա անունը զարդարում է ինստիտուտի՝ գերազանցիկ ուսանողների պատվո տախտակը: Իսկ թե ինչ զրկանքների գնով ու դժվարություններով է նա կրթություն ստացել և հաջողության հասել հայրենի տնից այդքան հեռու՝ խորհրդային պետության մայրաքաղաքում, հայտնի է միայն նրա հարազատներին ու մտերիմներին: Հետագայում նա իր սեփական միջոցներով ֆինանսավորում էր արդեն իրեն օգնած հարազատների ու նրանց երեխաների կրթությունը:

Բազմաշնորհ մարդ էր Ղազարոսը. շատ լավ գիտեր հայոց պատմություն, հայ գրականություն, առիթը բաց չէր թողնում Թումանյան, Չարենց, Իսահակյան ասմունքելու համար: Նա հնարավորության դեպքում ամառային արձակուրդը հայրենի Բանանցում էր անցկացնում, որը երանություն էր Բանանցի երեխաների համար. կազմակերպում էր ներկայացումներ, հեռու-մոտիկ արշավներ, պատմական էքսկուրս էր կատարում դեպի դարերի խորքերը, հնավայրերն ու ծիսական վայրերն էր ներկայացնում, ծիսական արարողությունների մասին էր պատմում, խաղեր էր սովորեցնում, շախմատի մրցաշար էր կազմակերպում, նաև կարդում էր իր ստեղծագործությունները և այլն: Ահա նրա գրած քառյակներից մեկը.

*Մերն աղջկա սիրաբեր,
Կնոջ սերը անտարբեր,
Թե աղջիկն է դառնում կին,
Ինչու սերերն են տարբեր:*

Նրա հետ անչափ հետաքրքիր էր: Մոսկվայում նրա տան դռները միշտ բաց էին հայրենակիցների համար:

Պահպանվել է Բանանցում նրա նկարահանած առաջին տեսաերիզը, որով ժամանակին մեծ զարմանք ու հիացմունք է առաջացրել Բանանցում:

Անվանի բանանցեցիներ

Մելիք Մելիքյան (ծնվ. 1868, Բանանց, վախճ. 1918, Բաքու). հայտնի հեղափոխական գործիչը հայտնի էր Դեղուշկա ծածկանվամբ: Իր ծննդավայր Բանանցում միջնակարգ դպրոցի միջանցքում կանգնեցված էր նրա կիսանդրին:

Մեխակ Տեր-Միքայելյան, թերապևտ-բժիշկ:

Աշոտ Սարգսի Շահմուրադով (Շամի Սաքի ավագ որդին): 1930-ական թթ. եղել է Ծանր արդյունաբերության նարկոմ Ս. Օրջոնիկիձեի տեղակալը:

Գրիգորի Սարգսի Հակոբյան, գնդապետ, 18-րդ բանակի քաղաքաժնի պետի՝ Լ. Բրեժնևի տեղակալ:

Հովսեփ Գրիգորի Հակոբյան, կոնստրուկտոր (Գրիգորի Սարգսի Հակոբյանի որդին): Լենինյան և Պետական մրցանակների դափնեկիր, ակադեմիկոս:

Արամ Սիմոնի Տերյան, բժիշկ:

Արմեն Ռուբենի Տոնյան. ՀԽՍՀ թեթև արդյունաբերության մինիստր:

Սուրեն Նիկոլայի Ադիխանյան, ինժեներ:

Ալբերտ Պավլիի Մկրտչյան, պատմական գիտությունների թեկնածու:

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ



ՆԵՐՍԵՍ ԳԵՐԱՍԻՄԻ ՇԱԽԼԱՄՅԱՆ
1860-1904

Արվեստագետների, նաև բանանցեցիների շրջանում ոչ այնքան հայտնի երգիչ (տենոր) Ներսես Գերասիմի Շախլամյանը ծնվել է Բանանցում 1860 թ.: Որպես ուսուցիչ աշխատել է Բաքվի հայկական դպրոցներում: 1885-ից Թիֆլիսի Խ.Կարա-Մուրզայի երգչախմբի մենակատարն էր: 1889-1892 թթ. կատարելագործվել է Իտալիայում: Առաջին անգամ նա օպերայի բեմում հայտնվեց որպես Մանրիկո (Տրուբադուր) Մալթա կղզու Թագավորական թատրոնում:

1892-1893 համերգաշրջանում, Իտալիայից վերադառնալուց հետո, Սանկտ Պետերբուրգի Մարինինյան թատրոնի մենակատարն էր, որտեղ նա իր նորամուտը նշեց Էնցոյի դերում (La Gioconda by Ponchielli): Ավելի ուշ նա մի քանի անգամ երգել է Թիֆլիսիի և Բաքվի օպերային թատրոններում: Որպես կամերային երգիչ՝ հանդես է եկել Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, Խարկովում, Ռոստովում, Երևանում, Բաթումում և այլուր: Նրա երգացանկում, արևմտաեվրոպական և ռուս կոմպոզիտորների ստեղծագործությունների հետ մեկտեղ, կային նաև հայկական ժողովրդական երգեր:



ՍԻՄՈՆ ԱՐԱՄԻ ՏԵՐՅԱՆ
1941-2000

1970-ական թթ. հայտնի երգիչ Սիմոն Տերյանը ծնվել է 1941 թ. Բանանց գյուղում⁹³: Հետպատերազմյան շրջանում ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1958 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետ, սակայն շուտով հասկացել է, որ երգն է իր տարերքը: Հանդես է եկել «Պատանեկություն» և «Կոունկ» էստրադային համույթներում: Եղել է Ռոբերտ Ամիրխանյանի երգերի առաջին կատարողներից մեկը: 1968 թվականին Կոնստանտին Օրբելյանի հրավերով միացել է Հայաստանի պետական էստրադային նվագախմբին, որտեղ աշխատել է շուրջ 13 տարի: Համույթի կազմում համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ ողջ տարածքում, Չեխոսլովակիայում, Ֆինլանդիայում, Եգիպտոսում, Լեհաստանում, Գերմանիայում, Լիբանանում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում:


Ունեցել է շուրջ 7 հազար համերգ: Հանդես է եկել Խոսիո Իգլեսիասի, Ջաննի Մորանդիի, Լիլի Իվանովայի, Մարիյա Ռոդոլֆիչի, Ալլա Պուգաչովայի և այլ հայտնի արտիստների հետ: Ճանաչվել է **Շառլ Ազնավուրի** երգերի լավագույն կատարողը:

1982 թվականին անսպասելիորեն հեռացել է թեմից: Չեն պահպանվել նրա 1960-1970-ականների ելույթների ձայնագրությունները: Պահպանվել են միայն համերգների ընթացքում կատարված 10-12 սիրողական ձայնագրությունները և 1994 թվականին ձայնագրված 6 երգեր: 1994 թվականին Երևանի մարզահամերգային համալիրում կայացել է «Վերջին սկիզբ՝ Սիմոն Տերյան» խորագրով համերգ-բենեֆիսը, որի ավարտին սիրված երգիչը վերջին անգամ ելույթ է ունեցել իր հայտնի երգերի կատարումներով: Համերգի կայացմանը մեծ ներդրում է ունեցել սիրված երգչուհի, նրա վաղեմի լավ բարեկամ ու ընկեր Էլվինա Մակարյանը:

Սիմոն Տերյանը մահացել է Երևանում 2000 թ.:


⁹³ Տեղեկություններն ըստ Վիքիպեդիայի և անձնական հիշողությունների:

Կարոտը և հիշողությունը տաղանդավոր բանանցեցիներին ստիպում է գրել ոչ միայն հուշեր ու բանաստեղծություններ, այլև նկարել հարազատ բնակավայրը, պատկերելով նրա յուրահատուկ տեսքն ու դիրքը: Ներկայացվում են հանրությանը հայտնի նկարիչ **Մարտիրոս Բաղալյանի**, նաև **Արշալույս Պողոսյանի** և **Արմինե Գյուրջյանի** բանանցյան թեմաներով նկարները:



ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱԴԱԼՅԱՆ


Նկարիչ Մարտիրոս Բաղալյանը ծնվել է Բանանցում 1952 թ.: Մինչև 5-րդ դասարանը սովորել է Բանանցի միջնակարգ դպրոցում: Այնուհետև տեղափոխվել են Երևան: 1969 թ. դպրոցն ավարտելուց հետո սովորել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: Այնուհետև ընդունվել է Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի նկարչական բաժինը, որն ավարտել է 1981 թ.: Մասնակցել է մի շարք հանրապետական և միութենական ցուցահանդեսների: 1988թ. աշխատում է Երևանի Խամաճիկների թատրոնում՝ որպես գլխավոր նկարիչ: Որպես հրավիրյալ նկարիչ՝ աշխատել է նաև Գ. Սունդուկյանի անվան թատրոնում: 2007 թ. ստացել է ՀՀ Մշակույթի նախարարության Ոսկե մեդալ: 2008 թ. արժանացել է ՀՀ վաստակավոր նկարիչ կոչմանը: Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Երևանում և արտասահմանյան մի շարք քաղաքներում՝ Վիեննայում, Փարիզում, Մարսելում, Նիսում, Բոխումում, Թուրինում և այլուր: Մարտիրոս Բաղալյանը այժմ էլ շարունակում է ստեղծագործել ու դասավանդել Մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետում:



Մ. Բադալյան, «Իմ Բանանցը»




«Բանանցի Տատիկ-Պապիկ»



Մ. Բադալյան, Բանանցը «Դիմաց տեղից»

Բանանցի համայնապատկերը, յուրահատուկ ճարտարապետական տեսքը ներշնչանքի աղբյուր է հանդիսացել երևանցի Մերուժան Խաչատրյանի համար: Օգտվելով Ս. Կարապետյանի Բանանցում կատարած լուսանկարների արխիվից, Մ. Խաչատրյանը վրձնել է «Բանանցի համայնապատկերը» կտավը, որտեղ տանիքները կարմիր (արյան) գույն ունեն, իսկ հեռվում կապույտի մեջ երևացող լեռները կարծես կանչում են սեփական բնակիչներին՝ տեր կանգնելու պապի նական հողերին: Այս իմաստով նկարը պահանջատիրական գործ է, հիշեցնելով մեր պայքարի մասին: Նկարը ցուցադրվել է ՀՀ 100-ամյակին նվիրված Երևանում (2018 թ.) և Մոնրեալում (2019 թ.) կազմակերպված ցուցահանդեսներում⁹⁴:

⁹⁴ ՎԲԷԺ-ԱՐՄԷՆ «Հորիզոն», 2019-07-01 (2087):



Մերուժան Խաչատրյան, «Բանանցի համայնապատկերը»


ԱՐՇԱԼՈՒՅՍ ՊՈՂՈՍՅԱՆ




Մեծ ճղպարին (ենթադրաբար)



Խաղողի այգի



Իր տիրոջը՝ բանանցեցուն սպասող «Տուն գյուղի ծայրին»



Արմինե Գյուրջյան, «Հրաշք տուն» Բանանցում

ԱՐՅԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏ

1991-1994 թթ.

Արցախյան պատերազմին մասնակցել են շատ բանանցեցիներ, որոնք բուս-գաղթից առաջ և հետո հաստատվել էին Հայաստանի տարբեր շրջաններում ու քաղաքներում: Արցախյան պատերազմում և դրանից հետո իրենց կատարած սխրանքով ու հայրենի հողը սիրելու վարակիչ օրինակով մի շարք բանանցեցիներ արժանացել են համընդհանուր հարգանքի: Ներկայացնենք այդպիսի բանանցեցիների մասին պատմող նյութեր ու հրապարակումներ:



ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍԻ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ

1955-1992

Գրող, լրագրող, հասարակական-քաղաքական գործիչ, Արցախյան պատերազմի մասնակից Սամվել Շահմուրադյանը ծնվել է Երևանում 1955 թ. բանանցեցու ընտանիքում⁹⁵: 1980 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1972-1974 թվականներին ծառայել է խորհրդային բանակում: 1980-1990 թվականներին աշխատել է «Լիտերատուրնայա Արմենիա» (ռուսերեն) ամսագրում: Սամվել Շահմուրադյանը Արցախյան շարժման և պատերազմի տարիներին (1988-1992) մամուլում հրապարակել է շարժումը լուսաբանող հրապարակախոսական հոդվածներ և ակնարկներ, ՀՀ ԳԽ նստաշրջաններում պաշտպանել արցախահայության արդարացի պահանջը, դատապարտել Սումգայիթի ցեղասպանությունը և խորհրդային իշխանությունների բռնությունները Ադրբեջանի հայաբնակ շրջաններում: 1990-1992 թվականներին եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր: Բազմաթիվ անգամներ եղել է մարտական գործողությունների թեժ կետերում: «Արժիվ-մահապարտներ» գնդի

կազմում մասնակցել է Մարտակերտի շրջանի բնակավայրերի ազատագրական մարտերին, որտեղ և զոհվել է 1992 թ.: Ս.Շահմուրադյանը պարգևատրվել է «Մարտական խաչ 1-ին աստիճանի», «Մխիթար Գոշ» և «Վազգեն Սարգսյան» շքանշաններով, «Հայաստանի Երկրապահ» հուշամեդալով, «Արիության մեդալով»: Արժանացել է նաև ՀՀ Ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակին:

2005 թ. մարտի 1-ին Հայաստանի գրողների տանը տեղի ունեցավ գրող, լրագրող, հրապարակագիր, Արցախյան պատերազմի հերոս-նահատակ Սամվել Շահմուրադյանի «Մեր քաղցր հողը» հոդվածների և էսսեների ժողովածուի շնորհանդեսը: Սամվել Շահմուրադյանը հեղինակել է «Սումգայիթյան ողբերգություն ականատեսների վկայությամբ» գիրքը, որը լույս է տեսել ռուսերեն, անգլերեն, իրանսերեն և իտալերեն:

Ներկայացնում ենք լրագրողուհի Հրաչուհի Փալանդուզյանի ակնարկը Ս. Շահմուրադյանի մասին:

– Սամվել Շահմուրադյանը 1988-ի փոթորկի մեջ նետվեց իր ջախելության ամբողջ պաշարով և ավաղ՝ չորս տարում այն սպառեց: Չեմ ուզում ասել, թե բնությունն այդքանն էր սահմանել, ընդհակառակը՝ Սամվել Շահմուրադյանն անպատմելի ունակությունների, եռանդի, լավատեսության տեր անհատականություն էր, նրա ծրագրերում բազում չիրականացված կետեր կային, սակայն նա գործի դրեց թե իր գրողական-լրագրողական, թե կազմակերպչական, թե պատգամավորական ու մարդկային բոլոր հնարավորությունները: Դա նրա տաղանդի մի մասն էն համարում, այդուհանդերձ կա մի նուրբ հարց, որ մեր վերջին հանդիպումից ի վեր ինձ հանգիստ չի տալիս: Սամվելի հոգում բույն էր դրել վրեժի ծարավից ծնված թախիժը:

Սումգայիթյան ոճրագործության ցավն անցավ յուրաքանչյուր հայի սրտի մեջ-տեղով, ճիշտ է՝ չկիսեց, չսպանեց, սակայն հավիտյան մնաց այնտեղ: Սամվելն այդ ցավն ապրեց գրեթե ականատեսի զգացողությամբ: Նա մեկն էր այն երիտասարդներից, ովքեր իրենց պարտքը համարեցին աջակցել Հայաստան փախած սումգայիթցիներին, լսել ու գրառել նրանց ողբերգական պատմությունները, դրանք հասու դարձնել ժողովրդին և մոսկվաներին:

Իսկ երբ սկսվեցին Արցախի ազատագրական կոփվները՝ առանց պահ իսկ տատանվելու զինվորագրվեց ու մեկնեց ճակատ, մասնակցեց մի շարք բախտորոշ գործողությունների: Այնտեղ՝ Վաղուհասի մատույցներում էլ ոտխի գնդակի զոհը դարձավ:

Համենայնդեպս այն սուղ օրերին, երբ Հայաստան էր գալիս, ու նրան ծայնագրելու հնարավորություն էր ստեղծվում՝ խոսում էր զուսպ, բառերը կշռելով, հույզ ու զգացմունքից ձերբազատ ձայնով: Սփյուռքահայությանն ուղղված նրա ուղերձը որոշակի էր, ասում էր, որ հաղթանակից բացի այլ բան հնարավոր չէ և հայության միասնությունն է դրա գլխավոր առհավատչյան:

Աշխատում էր արտահայտվել պատշաճությունը չխախտող բառերով: Բայց նրա հետ շփվողները լավ գիտեին, թե հոգում ինչ է կատարվում:

⁹⁵ Հեղինակ Հրաչուհի Փալանդուզյան:

ԳԽ-ի լրատվության հանձնաժողովի քարտուղարն էր, պայմանավորվել էինք երեկոյան հանդիպել և հարցազրույց ծայնագրել: Անմիջապես նկատեցի, որ մտահոգ է ու թեև փորձում էր դա թաքցնել՝ խոսքի հապճեպությունը մատնում էր ներսում բույն դրած մորմոքը:

Սուսգայիթյան ցեղասպանության մասին հարցիս երկար դադար հետևեց ճիշտ է, այդ մասին բոլոր լրագրողներն էին հարցնում ու նա միշտ մանրամասնորեն պատմում էր, բայց այս անգամ կարծես մտքում ուրիշ բան կար: Սպասեցի, որպեսզի ինքն սկսի:

– Դուք եղեռնի թեման լավ գիտեք, չէ՞, – հարցրեց քիչ անց: – Երևի ուսումնասիրել եք նաև բռնությունների ձևերը: Աղբբեջանցիները թուրքերին ոչ մի բանով չեն զիջում, նույն գազանն են, նույն վայրենին: Մեզ թվում էր, թե դարասկզբի արհավիրքն արդեն անցել է պատմության գիրկը, այլևս չի կրկնվի, բայց սխալվել ենք, ոչ միայն կրկնվեց, այլև գերազանցեց: Ակնհայտորեն խուսափում էր ասել, թե ինչը նկատի ունի: Իսկ ես գիտեի՝ կանխբալիզմը՝ մարդակերությունը: Այդ բառն այդպես էլ չարտասանեց, ինձ խնայեց, բայց շարունակեց.

– Թուրքին երբեք չի կարելի հավատալ: Հասարակ մարդկանց հետ նույնիսկ չի կարելի բարեկամություն անել, Թումանյանն էլ է դա հաստատում, բայց թուրքական կոչվող գաղափարախոսությունը երբեք քաղաքակիրթ չի լինելու, միշտ էլ իր հոտին մղելու է գազանային արարքների, սպանության, թալանի, ստի: Դրա համար էլ այն թուրքը, որ գալիս է քեզ քո հայրենիքից քշելու, հարազատների կյանքին վերջ տալու, քո տունը գրավելու՝ ուղղակի պետք է շանսատակ անես: Այլ տարբերակ չի աշխատում:

Այնքան անսպասելի էին Սամվել Շահմուրադյանի եզրակացությունները, զգացմունքային... Հուզմունքից նույնիսկ գրիչը ջարդեց: Դա ինձ ծանոթ հոգեվիճակ էր. երբ առաջին անգամ կարդացի Վերֆելի վեպն ու իմացա, թե թուրքերը մարդ սպանելու գործում ինչ վայրագության են ընդունակ, իմ կյանքում սկսվեց մղձավանջների երկար շրջանը: Դա կարողացա հաղթահարել միայն հարազատ ու գիտակ մարդկանց օգնությամբ: Նույն բանը կատարվում էր այդ նրբագագ, բանաստեղծի ներաշխարհով ծնված երիտասարդի հետ:

– 20-րդ դարավերջին լինել այդքան անգութ, տգետ, հոգուց զուրկ՝ միայն թուրքին է հատուկ: Այդ ինչեր են արել, ինչ անմարդկային ճիվաղություններ... Ու ամենասահմանակցուցիչն այն է, որ Սուսգայիթը կազմակերպել են հենց իշխանությունները: Այսինքն՝ դա ինչ-որ հանցագործների հղացած արյան նախճիր չէր, այլ իսկական ցեղասպանություն: Երբ ես գնում եմ Արցախ կռվելու՝ հարձակումից առաջ ու նաև ընթացքում աչքիցս առաջ նրանք են գալիս՝ այն հոշոտված ծերերը, խոշտանգված երեխաները, անպատվված հայուհիները, այրված, մոխրացած մարմինները...

Ինչքան լավ էի նրան հասկանում: Իմ աչքի առջև էլ Շահումյանից Ծաղկաձոր հասած փախստականներն էին, որոնց լսել ու ծայնագրել էի նույն ապրումներով: Հատկապես հիշում եմ մի շահումյանցի տղամարդու, ում երեխային աչքի առաջ

սպանել էին: Ասում էր՝ ինչի համար ենք Հայաստան եկել, զենք տվեք, գնում եմ Ղարաբաղ, թուրքերի հերն անիծեմ, Շահումյանն ազատագրեմ:

– Ձեզ վրեժն է ուզվածակատ տարել, – խոստովանության մղեցի Սամվել Շահմուրադյանին:

– Այո, – ցատումով պատասխանեց նա, տեսնելով, որ ծայնագրիչն անջատված է: – Հայը չի կարող թուրքի տիրապետությամբ ապրել: Նա արժանի չէ նույնիսկ մեր հարևանը լինելու: Արցախում ես դեռ շատ անելիքներ ունեմ, բայց ասեմ, որ վրեժիս պատասխանը վաղուց տվել եմ: Վերջնականապես հաղթենք՝ ամեն ինչի մասին մանրամասնորեն գրելու եմ, նոր գրքիս վերնագիրն արդեն մտքի մեջ կա...

Կարծես թե տանջող ապրումները մի պահ մոռացել էր, պատմում էր ներշնչանքով, երազելով, սակայն պարզ երևում էր, որ ապոլոնյան դեմքին թախիծն իր մնայուն բույնն է դրել:

Թախիծը վերջինն էր, որ հիշողությանս մեջ մնաց Սամվել Շահմուրադյանի հերոսական, շողարձակ կերպարից:



Սամվել Շահմուրադյան



ՆԻԿՈԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՅԱՆ
1961–1992


Նիկոլ Վանյանը ծնվել է 1961 թվականին Բանանցում: «Արցախ» ջոկատի հրամանատարն էր: Այս ջոկատը ունեցել է այլ անվանումներ ևս. Արովյանի ջոկատ, Դաշուշենսկի ջոկատ, Բյուրեղավանի Սամվելի ջոկատ: Ջոկատի առաջին հրամանատարը բյուրեղավանցի Սամվել Վարդանյանն էր: Դեռևս լայնամասշտաբ պատերազմից առաջ, 1989 թ. ջոկատը մասնակցում էր բազմաթիվ բախումների, հիմնականում սովետական զորքերի, Ադրբեջանի ԽՍՀ ՆԳՆ ստորաբաժանումների և ադրբեջանական ջոկատների հետ՝ պաշտպանելով Ասկերանի, Հադրութի, Մարտունու շրջանների գյուղերը:

1991-ի ամռանը ջոկատի մի մասը օգնության հասավ Շահումյանի շրջանի հայկական գյուղերին: Ազատագրվեցին Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը: Մարտերում զոհվեց հրամանատարը՝ Վարդանյան Սամվելը: Նրա մահից հետո ջոկատը կոչվեց «Արցախի գունդ», որի հրամանատարությունը ստանձնեց Նիկոլայ Վանյանը: Նրա հրամանատարությամբ ջոկատը մասնակցեց մի շարք մարտերի, ազատագրելով Ասկերանի շրջանի մի քանի գյուղ:

Նիկոլայը մահացավ 1991 թվականի դեկտեմբերի 28-ին Կրկժանի վրա կատարված հարձակման ժամանակ: Նիկոլայ Վանյանը հետմահու պարգևատրվեց «Արիության համար» և «Մարտական խաչ» շքանշաններով: Նրա անունն է կրում Արովյան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը:



Ն. Վանյանի «Արիության համար» և «Մարտական խաչ» շքանշանները




ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱԹԵՎՈՍԻ ՉԱԼՈՒՄՅԱՆ

Ծնվել է 1958 թ. Բանանց գյուղում: Սովորել է Բանանցի դպրոցում: 1969թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Արովյան քաղաք: 1978–1988 թթ. աշխատել է շինարարության տարբեր ոլորտներում որպես վարպետ: 1988 թ. Արցախյան շարժման ժամանակ Մարտիրոս Չալումյանը որոշում է Բանանցի պաշտպանության համար զենք հայթայթել: Նա ձեռք է բերում նոնակներ, փամփուշտներ, և երկու ընկերների հետ փորձում են կտրել Սևանի լեռնաշղթան և շրջանցելով թրքաբնակ բազմաթիվ գյուղեր՝ հասնել Բանանց: Սակայն Գետաբեկի շրջանում նկատվում են և բռնվում: Մարտիրոսին հաջողվում է թուրքերին համոզել, որ իր ընկերները վարձով են բեռնակրություն անում և տեղյակ չեն ուսապարկերի պարունակությանը: Ընկերներին ազատում են, իսկ Մարտիրոսին փոխադրում են Գանձակ (Կիրովաբադ): Գանձակի դատարանը Մարտիրոսին դատապարտում է 3 տարվա բանտարկության: Մոտ մեկ տարի Մարտիրոսը բանտում ամենօրյա կտտանքների ենթարկվելուց հետո Իզոր Մուրադյանի ջանքերով տեղափոխվում է Հայաստան: Զարմանալիորեն այդ ժամանակվա Հայաստանի արդարադատության համակարգի պատասխանատուները՝ իմանալով հանդերձ, թե ինչ «հանցանքի» համար են թուրքերը դատապարտել Մարտիրոսին, ոչ միայն նրան ազատ չեն արձակում, այլև փոխադրում են Կոշի գաղութ, որտեղ նա կրում է մնացած 2 տարի պատժաժամկետը: Ազատվելուց հետո, 1991 թ. Մարտիրոսը մեկնում է Մեղրիի Ալվանք գյուղ, որտեղ տեղափոխվել էին նրա ընտանիքը և բանանցեցիների մի մասը: 1992 թ. մասնակցել է Մեղրիի ինքնապաշտպանական կոմիտեին և Լաչինի՝ Բերձորի ազատագրման՝ «մարդասիրական միջանցքի բացման» գործողությանը: 1993 թ. մասնակցել է Զանգեզանի ազատագրման մարտերին: Մ. Չալումյանը պարգևատրվել է Արիության և Երախտագիտության շքանշաններով:


Պատերազմից հետո Մարտիրոսը Ալվանքում կառուցել է բրգաշար պարիսպներով տուն, որն արտաքուստ միջնադարյան բերդ էր հիշեցնում: 1998 թ. նա որոշում է տեղափոխվել Քարվաճառի Վերինշեն գյուղ: Նոր կառուցված տան ճակատին գրված է՝ ԲԱՆԱՆՑ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին՝ Արցախյան 2-րդ պատերազմի ժամանակ Մ. Չալումյանը դարձյալ զենք վերցրեց: Ցավոք, այս պատերազմը անսպասելի, ոչ հաղթական ավարտ ունեցավ: Մ. Չալումյանը և շատ այլ գարդմանահայեր ստիպված եղան նորից բռնագաղթել:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԻՎԱՆԻ ՀԱՎՈՐՅԱՆ
(Զիվանի Թյունիկ)
1951-1993

Հարություն Հակոբյանը ծնվել է 1951 թ. Բանանց գյուղում: 1968 թ. ավարտել է Բանանցի միջնակարգ դպրոցը: Մայրը աշխարհագրության ուսուցչուհի Սաթենիկ Բաբայանն էր, հայրը՝ Զիվան Հակոբյանը Արցախից էր, աշխատում էր խանութում: Հարություն Հակոբյանը դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Իջևան: Արցախյան պատերազմի ժամանակ մասնակցել է սահմանների պաշտպանությանը: 1991 թվականին Վահրամ Պախլավունու ջոկատի մարտիկների հետ մասնակցել է Ճամբարակի շրջանի Զիլ և հարակից այլ գյուղերի հինքնապաշտպանական մարտերին: Զոհվել է 1993 թվականի հունիսի 28-ին Զիլ գյուղի պաշտպանության ժամանակ: Պարգևատրվել է «Արիության համար» շքանշանով:



ՔՅՈՒՐԴՅԱՆ ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈՒԱՅԻ
(Ճուտո Արմեն)
1975-1994

Հայրենասեր ու քաջ հայ երիտասարդ, ում համար շատ թանկ էր հայրենիքը: Զբաղվել է սպորտով. լող, ծիսասպորտ, ծեռնամարտ, պարաշյուտային սպորտ: Սովորել է նաև կապավորի մասնագիտություն: Արմենը նաև լավ ծայն ուներ, երգում էր հայրենասիրական երգեր, որոնք էլ ավելի էին ոգևորում ընկերներին: Արցախյան 1-ին պատերազմի ժամանակ կոչվել է «Ղարս» ջոկատի կազմում: Մարտնչել է Խոջալուում (Իվանյան), Քելբաջարում (Քարվաճառ), Շուշիում, Լաչինում, Կարմիրի շրջանի Վահան գյուղում, Նոյեմբերյանի Կոթի գյուղում և այլ վայրերում: Վիրավորվել է մի քանի անգամ, բայց դեռ լիովին չապաքինված նորից հայտնվում էր մարտական դիրքերում:

Արմենը զոհվել է Հորադիզում 1994 թ. փետրվարի 15-ին: Պարգևատրվել է «Արիության համար» շքանշանով:

Արցախյան պատերազմին մասնակցել են շատ բանանցեցիներ, որոնք բռնագաղթից հետո հաստատվել էին Հայաստանի տարբեր շրջաններում ու քաղաքներում: Ներկայացնում ենք Արցախյան 1-ին պատերազմի մասնակից բանանցեցիների ցուցակը:

Շահմուրադյան Հակոբ Սարգսի (Բախշունց), 1956–2005

Սեյրանյան Սեյրան Սերգեյի 1963

Տոնյան Միքայել Արշալույսի 1951

Մկրտչյան Արամ Սերգեյի 1962

Հովսեփյան Հայկազ Գուրգենի 1958

Նազյան Արտեմ Համբարձումի 1961

Աղաջանյան Ռոբերտ Լևոնի 1965

Բադալյան Պողոս Արմենակի 1948

Օհանյան Թաթուլ Հայկի 1962

Մաթևոսյան Սպարտակ Գրիշայի 1972

Մաթևոսյան Հերակլ Գրիշայի 1966

Տոնյան Ստեփան Հարությունի 1961

Նազյան Հովհաննես Համբարձումի 1958

Բաբայան Մակիչ Կարապետի, ծնվ. 1958 թ.

Չալումյան Մարտիրոս Մաթևոսի, 1958

Վարդապետյան Գրիշա Թովմասի, 1958

Վանյան Արմենակ Սուրենի, 1959

Քոստյան Մելիակ Պողոսի, 1960

Գյուրջյան Ռաֆիկ Սաշիկի, 1964

Տերյան Լևոն Վանիկի, 1966

Գևորգյան Սամվել Ալեքսանի, 1966

Քաղաք Արովյանից մասնակցել են

Ավետիքյան Սերոժ Միշայի, 1946–2016

Չալումյան Արմենակ Մաթևոսի, 1960

Բաբայան Միքայել Հակոբի, 1960

Մնացականյան Սուրիկ Էդուարդի, 1962–1994

(մայրը՝ բանանցեցի Օհանյան Սվետա)

Երևանից մասնակցել են

Շահմուրադյան Սամվել Սարգսի, 1955–1992

Դադյան Վահան Միքայելի (Արջուկ), 1975–1994

Օհանյան Թաթուլ Հայկի, 1960

Ներկայացնում ենք Արցախյան 1-ին և 2-րդ պատերազմների ժամանակ զոհված բանանցեցիների ցուցակը, հուսալով, որ կգրվի նաև նրանց ու այլ մասնակիցների մասին պատմող գրքեր:

Արցախյան 1-ին պատերազմի ժամանակ զոհված բանանցեցիներ

Դադյան Վահան Միքայելի (Արջուկ), 1975–1994

Հակոբյան Սուրեն Նիկոլայի (Ծիպլի Կոլյայի տղան), 1974–1994

Զաղեթյան Կամո Սաշիկի «Ճագոռ», 1975–1994

Մանասյան Խաչատուր Մխիթարի 1977–1997

Մնացականյան Սուրեն Էդուարդի 1963–1994

Վարդապետյան Գրիշա Թովմասի 1958–1993

Տոնյան Վահագ Հրաչիկի 1961–1993

Արցախյան 2-րդ՝ 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված բանանցեցիների զավակներ և թոռներ

Աղասարյան Յուրա Հայկի (Մաժնունց թոռը), 2001–2020.

Յուրան Թաթթուլու 4-րդ սերունդն էր:

Անանյան Սարգիս Լյուվայի, 1995–2020

Բադալյան Ռաֆայել Մնացականի –2020

Բաղդասարյան Սմբատ Միքայելի, Ծովունց (Իվանանց) 1991–2020

Գրիգորյան Վարդան Վանիկի (Չղալունց), 2002–2020

Թորոսյան Հովհաննես Յուրիկի, 2001–2020

Չոփոտյան Մակիչ Հարությունի 2002–2020

Տոնյան Խաչատուր Մակիչի 1994–2020

ԲԱՆԱՆՑԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ



ԱՐՏՅՈՒ ՍԱՐԳՍԻ ՏԵՐՅԱՆ
1930-1970

Արտյոմ (Արտեմ) Սարգսի Տերյան: Դասական ըմբշամարտի աշխարհի առաջին հայ չեմպիոն և օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր⁹⁶:

Արտեմ Տերյանը ծնվել էր 1930 թ. Գանձակում (Կիրովաբադ) բանանցեցու ընտանիքում: Նա Բանանցի հայտնի տոհմերից մեկի՝ Տերունց տոհմից էր: Նրա հայրը Սարգիսը՝ Շաքարղունց Աղամիրի՝ Շաքար աղայի որդին էր, իսկ Աղամիրը իմ պապ Ալեքսանի հոր՝ Հարությունի հարազատ եղբայրը: Սարգիսը զոհվել է 2-րդ համաշխարհային պատերազմում: Առաջին անգամ կիրովաբադցիների և մեր չեմպիոնի մասին լսել եմ 1966 թ. Շաքարղունց Վանիկից (Վանիկ Տերյան): Իսկ չեմպիոնական նկարը մեդալներով ինձ տվել են Խանլարում ապրող հորեղբորս մեծ տղաները 1968 թ., որը հպարտությամբ ցույց էի տալիս Երևանի իմ հասակակից ընկերներին: Ա. Տերյանը պատանի հասակից զբաղվել է ըմբշամարտով, Կիրովաբադի «Դինամոյի» հայտնի մարզիչ Անդրո Դանեյանի մոտ: Դպրոցը ավարտելով նա ընդունվում է Բաքվի Ֆիզկուլտ ինստիտուտը և տեղափոխվում Բաքու:

1950-1954 թթ. նա դառնում է ԽՍՀՄ վեցակի չեմպիոն ըմբշամարտում, որից՝ 1951 թ. դասական և ազատ ոճի ըմբշամարտի չեմպիոն: 1952 թ. նա մասնակցում է Հելսինկիի 15-րդ Օլիմպիական խաղերին, որտեղ ԽՍՀՄ-ը առաջին անգամ էր մասնակցում և անարդարացի մրցավարության պատճառով զրկվում է օլիմպիական ոսկե մեդալից, դառնալով բրոնզե մեդալակիր: Նա խոստանում է արդարությունը վերականգնել: Եվ 1953 թ. Նեապոլի աշխարհի առաջնությունում նա պարտության է մատնում նույն այդ օլիմպիական չեմպիոն, հունգարացի Խորոշին և դառնում աշխարհի չեմպիոն ու ապացուցում, որ ինքն է այդ քաջային կարգում ամենաուժեղը: Նրա մասին տարածվում են լեգենդներ ու հետաքրքիր պատ-

մություններ: Նրան անվանում են «ըմբշամարտի հանճար», այդ տարիներին տարածված «Ձյուղոյի հանճարը» ֆիլմի հերոսի օրինակով: Պատմում են, որ Արտյոմ Տերյանը բարձրահասակ չէր, բայց իր ընդգծված մկանուտ, առնական տեսքով և գեղեցիկ հագուկապով ավելի շատ նման էր մարտարվեստի կինոաստղի և ոչ սովետական մարզիկի:

ԽՍՀՄ հավաքականի մարզիչ Ս. Պրեքրաժինսկու վկայությամբ՝ նա ուներ բարձրակարգ տեխնիկա, կայծակնային արագություն, գերազանց կոորդինացիա և հակառակորդներին հոգեբանորեն կտրելու ընդունակություն: Մարտից առաջ նա իր հակառակորդներին ասում էր, որ գետնին կտապալի մրցագորգի աջ կամ ձախ անկյունում և այդպես էլ անում էր: Մեկ այլ մարզիչ՝ Հ. Խաչատրյանը գրում է. «Նրա նման տաղանդավոր մարզիկ ես չեմ տեսել: Եթե Տերյանը մասնակցում էր ԽՍՀՄ առաջնությանը, նրա քաջային կարգում հանդես եկող մյուս ըմբիշները կարող էին պայքարել միայն երկրորդ ու երրորդ տեղերի համար»: Բայց շուտով նա հիասթափվում է ըմբշամարտում տիրող անարդարություններից և սկսում է հրապարակել մոտոցիկլետային սպորտով, որը լի էր ռիսկերով և մեծ վտանգներով: Այդ սպորտաձևում Արտյոմ Տերյանը գործում էր մահվան օղակաձև պտույտներ: Փորձերից մեկի ժամանակ նա կտրում է ձեռքի անրակը և հեռանում մեծ սպորտից: Բուժվելուց հետո Արտյոմ Տերյանը անցնում է մարզչական աշխատանքի ըմբշամարտում: Միայն ափսոսել կարելի է, որ իր ուսանելի և գեղեցիկ սխրանքներով լի կյանքը նա նվիրաբերում է ազերիներին: Կարծում ենք, մեղավոր են նաև Հայաստանի համապատասխան ղեկավարները, որոնք տեր չեն կանգնում իրենց տաղանդավոր զավակներին և չեն հրավիրում Հայաստան:

1970 թ. հունվարի 25-ին Բաքվում ինչ-որ ազերի, իբրև թե խանդի հողի վրա, անսպասելի դանակահարում է նրան: Եվ արյունահոսությունից մահանում է ըմբշամարտի հանճարը՝ Արտյոմ Տերյանը: Նա թաղվում է Բաքվի հայկական գերեզմանոցում: Այժմ նրա գերեզմանը գետնին է հավասարեցվել: Այսպիսին է երախտամոռ ազերիների հիշողությունը:



Ա. Տերյանի վերջին մրցելույթը Բաքվի սպորտի պալատում, 1955 թ.



Ա. Տերյանի (նաև նրա մայրիկի) գերեզմանը Բաքվում, մինչև ավերվելը

⁹⁶ Հոդվածի հեղինակ Միքայել Տերյան:

Դարձյալ Արտյոմ Տերյանի մասին

Երևանում հանդիպել եմ ՀՀ սպորտ կոմիտեի հունա-հռոմեական ոճի պետական մարզիչ Հարությունյանին, որը Բաքվում մարզվել է Ա. Տերյանի հետ: Նա պատմում է, որ մրցամարտից առաջ Արտյոմը մարզիչին ասում էր. «Մրցամարտի դիրքային, գորգի դիրքային անկյունում, քիչ հնարքով կհաղթեմ մրցակցին» և դա մեծամտություն չէր: Նա 99 տոկոսով կատարում էր խոստացածը: Արտյոմ Տերյանի մայրը՝ տիկին Լուսիկը իր որդու Սոֆիայում 1952 թ. նվաճած գավաթը 1980 թ. ամռանը Բանանցում նվիրել է նորածին որդու՝ Հարության: Դա անվանի մարզիկի պահպանված միակ մրցանակն է: Ցավոք, նրա նվաճած բոլոր մեդալները (օլիմպիական, աշխարհի, Եվրոպայի, ԽՍՀՄ) մնացել են Բաքվում, ազերի ընկերների մոտ: 1979 թ. ամռանը Բաքվում և 1980 թ. ամռանը Բանանցում Արտյոմի մորը առաջարկել եմ Ա. Տերյանի բոլոր մեդալները հանձնի Հայաստանի պատմության թանգարանին, հայտնելով իմ պատրաստակամությունը ուղեկցել նրան Բաքվից Երևան: Սակայն տիկին Լուսիկը մերժել է ասելով՝ որ նրա մեդալները իր հավատարիմ ազերի ընկերների մոտ են և ապահով ձեռքերում են: Այսօր ցավով փաստում ենք, որ անհայտ է այդ մեդալների ճակատագիրը:

Վալերի Գրիգորյան



Արտյոմ Տերյանի Սոֆիայում 1952 թ. ստացած գավաթը (պահվում է Վալերի Գրիգորյանի մոտ)



ԱՐՄԵՆ ՅՈՒՐԻԻ ԲԱԴՂԱՍԱՐՈՎ

Արմեն Բադդասարովը (Վիրաբունց Սերգի թոռը)՝ ծյուղոխտ, այնուհետև՝ մարզիչ, ծնվել է 1972 թ. հուլիսի 31-ին Գանձակ քաղաքում: 1990-1992 թթ. ԽՍՀՄ երիտասարդական առաջնության հաղթողն է, 1993-2001 թթ. Ուզբեկստանի ծյուղոխի հավաքականի անդամ: Նրա մարզական նվաճումների բարձրակետը եղել է 1996 թ., երբ դարձել է Ասիայի չեմպիոն, և Ատլանտայի օլիմպիական խաղերում նվաճել է արծաթե մեդալ: 1998 թ. Ասիական խաղերում նվաճել է արծաթե մեդալ: 1999 թ. դարձել է Ասիայի առաջնության հաղթող:

Ուզբեկստանի անկախության տասներորդ տարելիցի կապակցությամբ թողարկված նամականիշներից մեկը նվիրվել է Արմեն Բադդասարովի մարզական նվաճումներին: 2005-2016 թթ. եղել է Ուզբեկստանի ծյուղոխի ֆեդերացիայի պրեզիդենտը:

Արմեն Բադդասարովը անկախ Ուզբեկստանի առաջին մարզիկն է, որը ամառային օլիմպիական խաղերում դարձել է մրցանակակիր: 2001 թ. Ուզբեկստանի հավաքականի գլխավոր մարզիչն է:

2007 թ. մինչ օրս ծյուղոխի միջազգային ֆեդերացիայի սպորտ-տնօրենն է, նաև մրցավարական հանձնաժողովի նախագահը: 2017 թ. նրան շնորհվել է սև գոտի 8-րդ դաս: Արմեն Բադդասարովը մարզական նվաճումների համար բազմիցս պարգևատրվել է Ուզբեկստանի բարձրագույն պարգևներով:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՂԱԶԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՄԱՅՐԻԿԻ՝ ԶԱՎԱՀԻՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

Հարություն, Ալեքսանդր (Գառնիկ), Ղազարոս Գրիգորյան եղբայրների մարզական կենսագրությունը այն եզակի դեպքերից է, երբ երեք եղբայրները իրենց հայրիկի խորհրդով որոշում են զբաղվել սպորտով՝ ձյուդո մարզաձևով։ Նրանց մարզական կենսագրությունը սկսվում է 1992 թ., երբ սկսում են հաճախել Հրազդան քաղաքի մարզադպրոց։ Քրոնաջան մարզումների ու հաստատակամության շնորհիվ եղբայրները շատ արագ ձեռք են բերում մարզական լավագույն վիճակ և երկու տարի հետո մասնակցելով հանրապետությունում անցկացվող ձյուդոյի մրցումներին, գրանցում են բարձր արդյունքներ։ Հարություն, Գառնիկ, Ղազար եղբայրներին մշտապես մեծ հոգածություն և բարոյական աջակցություն են ցուցաբերել ծնողները՝ Վալերի Գրիգորյանը և Զավահիր Սարտիրոսյանը, որը ժամանակին զբաղվել է ձեռքի գնդակ մարզաձևով, ունեցել է սպորտի վարպետի կոչում և նույն մարզաձևի մարզիչի որակավորում։ 1994թ. եղբայրները անդամակցում են «Հայաստան» ՄՄ-ին։ Հետաքրքիր է, որ եղբայրների բառապաշարում ձյուդոյի նրանց սիրված հնարքներից մեկը կոչվում էր «Բանանցի հնարք»։ Այս հնարքը եղբայրները հաճախ էին օգտագործում մրցումների ու մենամարտերի ժամանակ։

*Հողվածի հեղինակ՝ Ս. Մամյան
«Երևան» թերթ, 1995 թ.*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱԼԵՐԻԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնվել է 1980 թ. Բանանցում։ Մի կական անգամ դարձել է ՀՀ պատանիների, երիտասարդների և մեծահասակների առաջնության հաղթող։ 1997-2000 թթ. սովորել ու ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը։ Բազմաթիվ անգամներ ՀՀ առաջնություններում զբաղեցրել է 2-րդ և 3-րդ տեղերը։ 1998 թ. Թեհրանում անցկացված ուզբեկական Կուրաշ մարզաձևի միջազգային մրցաշարի 71 կգ քաշային կարգում դարձել է հաղթող։

ԱԼԵՔՍԱՆԴՐ (ԳԱՌՆԻԿ) ՎԱԼԵՐԻԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնվել է 1981 թ. Երևանում։ 1996-1997 թթ. դարձել է ՀՀ պատանիների և երիտասարդների առաջնությունների հաղթող։ 1997 թ. 60 կգ քաշային կարգում մասնակցել է Փարիզում անցկացված ձյուդոյի աշխարհի առաջնությանը։ 1997-2000 թթ. սովորել ու ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը։ 1998թ. դարձել է ՀՀ երիտասարդական առաջնության հաղթող։

1999 թ. դարձել է ՀՀ մեծահասակների չեմպիոն։ Նույն թվականին մասնակցել է ՀՀ սամբոյի առաջնությանը և դարձել հաղթող։ 1999 թ. մասնակցել է Սոֆիայում կայացած սամբոյի Եվրոպայի առաջնությանը և 70 կգ քաշային կարգում դարձել հաղթող, եզրափակիչում մաքուր հաղթանակ տանելով ազերի մարզիկի նկատմամբ։ Նույն թվականին Սանկտ Պետերբուրգում անցկացված աշխարհի առաջնության ժամանակ նվաճել է բրոնզե մեդալ։ Մասնակցել է նաև Փարիզում, Մարսելում, Լյուբլյանայում, Թեհրանում, Թբիլիսիում և ՌԴ տարբեր քաղաքներում անցկացվող միջազգային մրցաշարերի։

ՂԱԶԱՐՈՍ ՎԱԼԵՐԻԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնվել է 1982 թ. Երևան քաղաքում։ 1992թ. հաճախել է Հրազդանի մարզադպրոցի ձյուդոյի խմբակ և ունեցել է մարզական եռուն կյանք։ 1995 թ. դարձել է պատանիների Հայաստանի չեմպիոն։ 1996 թ. Ֆրանսիայի Էքսան-Պրովանս քաղաքում դարձել է պատանիների աշխարհի գավաթի հաղթող, 1997 թ՝ Հայաստանի երիտասարդների և մեծահասակների առաջնության հաղթող։ 1998-2001 թթ. սովորել ու ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը։ 1998 թ. մասնակցել է մեծահասակների՝ Եվրոպայի առաջնությանը Իսպանիայի Օվիեդո քաղաքում։ 2000թ. Հայաստանի երիտասարդական առաջնության հաղթող է, 2001թ.՝ Հայաստանի մեծահասակների առաջնության գավաթակիր։ 2001 թ. և 2003 թ. մասնակցել է Չինաստանում և Կորեայում անցկացվող ուսանողական օլիմպիական խաղերին։



«Բանանցի հնարք» Ղազարի կատարմամբ


2003 թ. Ղազարը դարձել է Հայաստանի մեծահասակների և երիտասարդների առաջնության հաղթող: 2003 թ.՝ Եվրոպայի մինչև 23 տարեկանների առաջնության բրոնզե մեդալակիր է: Նույն թվականին մասնակցել է Ճապոնիայի Օսակա քաղաքում անցկացվող աշխարհի և Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքում անցկացվող Եվրոպայի առաջնություններին:

2006 թ. Թբիլիսիում անցկացվող աշխարհի գավաթի խաղարկությունում զբաղեցրել է 4-րդ տեղը: 2008 թ. ԱՄՆ Կոլորադո քաղաքում մասնակցել է Ամերիկայի բաց առաջնությանը, դարձել արծաթե մեդալակիր, 2008–2012 թթ. ԱՄՆ Օհայո նահանգի առաջնության հաղթող: Այժմ Օհայո նահանգի Քլիվլենդ քաղաքում իր հիմնադրած «Արարատ» մարզական դպրոցում մարզում է պատանի ձյուդոյիստների: Նրա սաներից շատերը դարձել են ԱՄՆ պատանիների առաջնության հաղթողներ:



ՊԵՏՐՈՍ ՀԱԿՈՒԻ ԱՆԱՆՅԱՆ

Պետրոս Անանյանը ծնվել է 1988 թ. հոկտեմբերի 18-ին Արմավյան քաղաքում: Բռնցքամարտի դպրոց է հաճախել ՌԴ Կալինինգրադ քաղաքում: 2013-ին դարձել է ՌԴ առաջնության բրոնզե մեդալակիր և ընդգրկվել հավաքականի կազմում: 2015 թ. դարձել է ՌԴ չեմպիոն պրոֆեսիոնալ բռնցքամարտի 66 կգ քաշային կարգում: IBF վարկածով պրոֆեսիոնալ բռնցքամարտի առաջնություններում ունեցել է 15 հաղթանակ և 2 պարտություն: 2017 թ. 63,5 կգ քաշային կարգում դարձել է IBF-ի վարկածով հաղթող: 2021 թ. 63,5 կգ քաշային կարգի ռեյտինգում ընդգրկված է 10 լավագույն մարզիկների ցուցակում:



ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՏԵՓԱՆԻ ԲԱԼՅԱՆ

Սամբոյի և ձյուդոյի մարզիչ Արշալույս Ստեփանի Բալյան. ծնվել է 1958 թ. Բալանց գյուղում: 1970 թ. տեղափոխվել է Արմավյան, որտեղ էլ հաճախել է սամբոյի խմբակ: 1976 թ. դարձել է ՀԽՍՀ երիտասարդների չեմպիոն: Վնասվածքների պատճառով ակտիվ սպորտը թողել է և անցել մարզչական աշխատանքի Նոր Հաճնի մարզադպրոցում, որտեղ էլ հիմնադրել է ձյուդո մարզաձևը: Նույն մարզադպրոցում աշխատել է մինչև 1997 թ.: Այդ ընթացքում նրա սաներից չեմպիոններ են դարձել տասից ավելի մարզիկներ, որոնցից չորսը՝ սամբոյի աշխարհի և Եվրոպայի չեմպիոն:

1997թ. տեղափոխվել է Արմավյանի Օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց, որտեղ աշխատում է մինչ օրս: 1998 թ. Սամբոյի միջազգային ֆեդերացիայի կողմից նրան շնորհվել է միջազգային կարգի մրցավարի կոչում: 1999 թ. նրա չորս սաները նվաճել են չեմպիոնի գավաթներ, որից հետո նրան շնորհվել է ՀՀ վաստակավոր մարզիչի կոչում: Արմավյանի մարզադպրոցում աշխատելու տարիներին պատրաստել է բազմաթիվ ՀՀ չեմպիոններ, Եվրոպայի և աշխարհի առաջնությունների հաղթողներ և մրցանակակիրներ:

Ա. Բալյանի բանանցեցի մեդալակիր սաներն են.

Պողոս Սուրենի Բաղալյան (Մուրդունց), Հայաստանի սամբոյի բազմակի չեմպիոն, երկու անգամ դարձել է Եվրոպայի սամբոյի առաջնության բրոնզե մեդալակիր:

Ավետիք Գրիգորի Պողոսյան (Իծիրածունց), Հայաստանի սամբոյի բազմակի չեմպիոն, մարտական սամբոյի Եվրոպայի առաջնությունում զբաղվել է 5-րդ տեղը:

Անուրանալի է Արշալույս Բալյանի դերը Հարություն, Գառնիկ և Ղազար Գրիգորյանների (Թիկունց) մարզական հաջողություններում:

Տեսլական, որ անպայման իրականություն է դառնալու

Բանանցը բարեկարգ տներով ու փողոցներով մեծ, գեղեցիկ բնակավայր է: Փողոցները ասֆալտապատ ու սալահատակված են: Միահարկ, երկհարկ ու եռահարկ կարմիր և դեղին կղմինդրածածկ տները, որոնք ունեն փայտե նախազարդ պատշգամբներ, աչք շոյող գեղեցկություն են հաղորդում Բանանցին:

Որոշ տներ ունեն այգիներ ու փոքր պարտեզներ, որտեղ աճեցվում են մրգատու ծառեր ու ծաղիկներ: Տների պատշգամբները պարուրված են վեր մագլցող բույսերով, այդ թվում՝ հոտավետ վարդերով:

Բանանցում փողոցները միշտ ջրցանված ու մաքուր են: Չգրված մի սովորույթի համաձայն՝ յուրաքանչյուր կին առավոտ շուտ ավլում է ոչ միայն իր բակը, այլև՝ փողոցի իր հատվածը: Փողոցները նեղիկ են, բայց սալարկված, ինչը հաճելի է դարձնում քայլերը:

Բանանցի կենտրոնը Փողոսկն է, որից սկիզբ են առնում վեց այլ սալարկված փողոցներ: Այդ փողոցներով Բանանցի կենտրոնը կապվում է թաղամասերի հետ: Փողոսկում են գտնվում Բանանցի միջնադարյան Մարիամ Աստվածածին և Գր. Լուսավորիչ եկեղեցիները, 1950-ական թթ. կառուցված ակումբը, 2-րդ համաշխարային պատերազմի բանանցեցի մասնակիցներին նվիրված աղբյուր-հուշարձանը, հանրախանութը, Բարատովի գինետունը, բնակելի տներ և այլն: Բոլոր շենքերը վերանորոգված ու գեղեցիկ տեսքի են բերված: Աղբյուր-հուշարձանի մոտ տեղադրված է «Մայր Հայաստան» քանդակը: Փողոսկի կենտրոնում ոչ շատ բարձր շատրվան է՝ ջրավազանով: Ամենուրեք ծառեր ու ծաղիկներ են, որոնք շատ գեղեցիկ են դարձնում հրապարակը: Բարեկարգ փողոցները ամենուր են: Իսկ դրանք տանում են դեպի բարեկարգ դպրոց, հիվանդանոց, գրադարան, այլ թաղամասեր, կայարան (ստանցի), որտեղից կարելի է գմայլվել կանաչազարդ «Դիմաց տեղ» թաղամասով, միջնադարյան միաթոփչ կամարածև կամրջով և այլն: Ի դեպ, Բանանցում տարածված կարծիք կա, որ այդ կամրջը կառուցել է Ալ. Մակեդոնացին, որպեսզի իր զորքն անցնի Արթինաջուր գետի մյուս ափը (այս մասին ինձ պատմել է Սանդուխտ տատս, որն այդ պատմությունը լսել է իր տատից):

Բանանցի մաքուր օդը, մեղմ կլիման, անտառապատ սարերը, հյուրասեր բնակիչները դեպի իրենց են ձգում հարյուրավոր հյուրերի ու զբոսաշրջիկների: Անտառապատ սարերի փեշերին կառուցվել ու կառուցվում են հանգստյան տներ, հյուրանոցներ ու այլ շենք-շինություններ, որոնք հարմարավետ պայմաններ են ստեղծում հյուրերի ու զբոսաշրջիկների համար: Բանանցում եռում է մշակութային կյանքը: Կա ֆուտբոլի թիմ «Բանանց»:

Բանանցում՝ ճղպարուտում գործում է գինու գործարան, որտեղ հանրահայտ «Բանանց» խաղողի տեսակից ստանում են «Բանանց» գինի: «Սարայի տակ» կոչվող վայրում գործում է անասնապահական ֆերմա, որտեղ պահվում են բարձր կաթնատվություն ունեցող տոհմական կովեր: Ինչպես նկատում ենք,

լուծվում է բանանցեցիների զբաղվածության հարցը (տուրիզմ, գինեգործություն, մտավորականներ, նաև զանազան արհեստներով զբաղվող մարդիկ...):


Բանանցում գործում է թանգարան, որտեղ ցուցադրվում են «Կալեր» կոչվող տեղամասից նոր պեղումներով հայտնաբերված մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներով թվագրվող հնագիտական իրեր: Թանգարանում ցուցադրվում է նաև ազգային իրերի մեծ հավաքածու (պղնձե, երկաթե, փայտե կենցաղային իրեր, զարդեր...), հայտնի ու հերոս բանանցեցիների մասին նյութեր և այլն: Որպես թանգարանի շենք կարելի է օգտագործել Կանտորի կամ Գյուղխորհրդի շենքերը: Գործում է նաև բանանցեցի հայտնի նկարիչ Մարտիրոս Բաղալյանի նկարների հավաքածուի թանգարանը և այլն:

Բանանցում ապրում են բարի, գեղեցիկ, հյուրասեր, արարող, շնորհաշատ, հումորով ու կյանքով լեցուն բնակիչներ, որոնց մեծ մասն ունի բանանցյան արմատներ: Կան նաև այլ տեղերից եկածներ: Բանանցը ղեկավարում է հայրենասեր, մարդկային բարձր արժանիքներով օժտված ընտրված տանուտերը՝ տեղակալների հետ, որոնք անում են ամեն ինչ, որ Բանանցը դառնա տարածաշրջանի հայտնի բնակավայրերից:

Հավատանք, որ այսպիսի ապագա է սպասվում Բանանցին:



Երագ ու ապագայի Բանանց Ակարիչ՝ Մարտիրոս Բաղալյան



Հավատանք, որ փոքրիկ Ալբերտ Գրիգորյանը ապրելու է պապերի հայրենիք Բանանցում

**ՏՈՒՄԻԿ ԲԱՆԱՆՑԵՑԻՆԵՐԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ**



Հայ կին Բանանցից
(Մանուշակյան տոհմից)



Մեծ Նան:
Սիպտակունց (Պողոսյան) Սապետը,
Սանդուխտ տատիս մայրը, 1901 թ.



Կանգնած են. ձախից՝ Արղղըսունց Ուսեփը, Մարտիրոս վարժապետը Թուրքիայից, Մուսունց Արշակը, Իրիցի Իվանը: Նստած են՝ Ստեփան Տեր-Ավետիքյանը, Ավետիքյան Մարիան, Եգոր Տեր-Ավետիքյանը, Թագուհի Հովհաննիսյանը, Վազգեն Ավետիքյանը և Հովհաննես Հովհաննիսյանը: Թիկնած են՝ Խորեն Տեր-Աբրահամյանը, Համասիյուղը և Սիմոն Եպիսկոպոսյանը: 1904 թ.



Բանանցեցիներ, 20-րդ դարի սկիզբ. (սկարը Ռուբեն Մկրտչյանի ՖԲ էջից)



Զաղեթյաններ



Բանանցեցիներ, 20-րդ դարի սկիզբ



Ջալաղյան Վարդանը (Քաղթան) ընտանիքի անդամների՝
կնոջ, քրոջ ու երեք աղջիկների հետ:



Աթանեսյան Արշակ և Վարսենիկ, 1926 թ.



Հարս Խանում Տերյանը (կենտրոնում)
Տերունց տոհմի անդամների հետ, 1906 թ.



Բանանց, Ղվանդի Քիքի գերդաստանը



Բանանցեցիներ: Առաջին շարքում ծախից երկրորդը Բարատովն է,
կողքը կինն է, հետևում՝ երկու աղջիկները, 1956 թ.

ԲԱՆԱՆՑ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ԿԵՆՏՐԱԴԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Բանանց: Ուսուցչական կոլեկտիվը դպրոցի բակում, 1950-ական թվականների վերջ



Առաջին զանգի արարողությունը: Սեպտեմբերի 1, 1973 թ.:
 Դպրոցի բակում X դասարանցիները ընդունում են I դասարանցիներին:



Բանանցի դպրոցում գործում էր ռուսական խումբ, որտեղ սովորում էին խառը (հայ-ռուս, հայ-բուլղարացի ծնողներ) ընտանիքի երեխաներ: Նրանց դասավանդում էր վաստակաշատ մանկավարժ Ալեքսան Շահմուրադյանը:



Բանանցեցիներ



Բանանցեցիներ



Բանանցեցի կանայք, 1950-ական թթ.



Ձախից՝ Բարատովը, կոլտնտեսության նախագահ Բորիսը, Միրզանց Սաթենիկը և ուրիշներ խաղողաքաղի ժամանակ, 1960-ական թթ. վերջ



Խաղողաքաղին մասնակցում էին նաև դպրոցի աշակերտները:



Ճախարակով թել մանելու աշխատանքային պահ: Պատկերված են տատ ու թոռ Սանդուխտ Գրիգորյանները



Ամուսնը ջրի պակասության պատճառով աղբյուրների մոտ հերթեր էին գոյանում: 1960-ական թթ. վերջ:



Ուրախ էր անցնում կյանքը Բանանցում:



Բանանցեցիներ, ընտրություններ



Բանանցեցիներ, Փողոսկ



Այսպիսին էին Բանանցի կանայք,
միշտ կոկիկ ու ճաշակով հագնված, 1950-ական թթ.




Բանանցի գեղեցկուհիները, 1950-ական թթ.



Բանանցի կանայք՝ հագնված ժամանակի մոդային համապատասխան,
1950-ական թթ.



Բանանցի աղջիկները, 1960-ական թթ. սկիզբ




Բտրակունց փուռը:
Այսպիսին էին Բանանցի համեղ հացերը. կլոր, մեջտեղում փոսիկ


ԲԱՆԱՆՑ. ՏԵՍԱՐԱՆՆԵՐ



Գանձակի կողմից Բանանցի մուտքը: Պատը և գրությունը՝ «Վ.Մ. ԵՐԱՅԻՆ 1946» գերմանացի զերինների աշխատանքի արդյունքն է:




Բանանց: Տեսարան Դիմաց տեղից: Հեռվում երևում է Տիրքի գյահը (սարը):
Գյուղի պաշտպանության ժամանակ այս սարի վրա Եգորի հրամանով գյուղի պաշտպանները դիրքավորվել են: Այստեղից էլ Տիրքի գյահ՝ Դիրքի սար անվանումը:





Բանանց: Տեսարան Դիմաց տեղից



Տերունց Համբարձումի տունը Յանցի աղբյուրի մոտ




Բանանց, Կանտորի շենքը: Շենքի առաջին հարկում ձախից վարսավիրանոց էր, որտեղ աշխատում էին Սիմոն դային և Թիվի Գրիբորը: Նրանք վարսավիրանոցի պատին կախել էին Անդրանիկի նկարը, որը նյարդայնացնում էր թուրքերին և վերևից տրված հրահանգի համաձայն նկարը հանվեց: Շենքի աջ մասում մեկ սենյակ էր հատկացվել Սոնային ու Մայանին, ուր նրանք ապրում էին իրենց այժմի հետ: Ներքևում կոլտնտեսության ձիանոցն էր, որի բաց կտուրը երեխաների համար խաղահրապարակ էր:




Դեպի Փողոսկ տանող ճանապարհը



Բանանց, տեսարան




Բանանց, բնակելի տուն (Ջալլաղյան Մուխի՝ Դոգի տունը) դեպի Փողոսկ տանող ճանապարհին




Գր. Լուսավորիչ և Աստվածածին եկեղեցիները (կառուցվել են ժայռի վրա)



Բնակելի տուն (Անյանց տունը) Գր. Լուսավորիչ եկեղեցու հարևանությամբ



Աստվածածին եկեղեցու մուտքը:
եկեղեցին խորհրդային տարիներին վեր էր ածվել պահեստի:



Բանանց: Յանցի կյոխը,
Դեպի Խաչակապ (Կուշչի) և Քարիատ (Դաշքեսան) տանող ճանապարհը




Բանանց: Անապատի վանքը անտառապատ սարերում




Բանանց: Անապատի վանքը անտառապատ սարերում




Բանանց, Շինի հանդը



Քանանց: Բոլորացջուր գետը



Արթինաջուր գետի Հին ու Նոր կամուրջները



Արթինաջուր գետը և Հին կամուրջը



Արթինաջուր գետի Նոր կամուրջը և երկաթգիծը

ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԱՆԱՆՑԻ «ԾԵՐ», «ՊԱՀԱՊԱՆ» ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1973 թվականի ամռանը՝ ուսանողական արձակուրդի օրերին, գտնվելով Բանանցում, հորս՝ Հարություն Գրիգորյանին, որը 40 տարուց ավելի աշխատել է Բանանցի գյուղխորհրդում որպես քարտուղար, խնդրեցի սովխոզի գրասենյակից մեր տուն բերել այնտեղ պահվող հինավուրց ավետարանը: Երեկոյան տուն գալով՝ սեղանի վրա տեսա ավետարանը: Ուրախությունս սահման չունեի: Ձեռագիրը թերթելուց և թռուցիկ դիտելուց հետո ինձ համար պարզ դարձավ, որ գործ ունեմ հնարույր մատյանի հետ, որը պատմական մեծ արժեք է ներկայացնում: Ամառվա ընթացքում ավետարանը գտնվել է մեր տանը: Բազմիցս փորձել եմ կարդալ այն, սակայն ինձ զարմանք են պատճառել տառերը՝ բոլորը մեծատառ. չկան հայերենում ընդունված կետադրական նշաններ: Արձակուրդի ավարտից հետո հայրս ասաց, որ ավետարանը բերեմ Երևան և հանձնեմ կամ Մատենադարանին, կամ կաթողիկոսին: Նկատի ունենալով, որ ավտոբուսով պիտի երթևեկեի, նախընտրեցի տանը թողնել, մինչև այն ժամանակ, երբ քեռու մեքենայով կգնայի գյուղ:

1974 թվականի ամռանը համալսարանի այն ուսանողները, որոնք ավարտելուց հետո պետք է զորակոչվեին բանակ՝ որպես սպա, տասնօրյա արձակուրդ ստացան, այդ թվում նաև ես: Մեկնեցի Բանանց: Նույն օրը երեկոյան գյուղ եկավ նաև հորս հորաքրոջ տղա Գրիգոր Հակոբյանը, որը պատմական գիտությունների դոկտոր էր, Լ. Բրեժնևի մտերիմ ընկերը, իսկ Հայրենական պատերազմի ժամանակ 18-րդ բանակում եղել էր նրա տեղակալը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեքենա կար՝ այն էլ ԱԱԾ աշխատակիցներով, հայրիկիս ասացի, որ ավետարանը կարող եմ ապահով Երևան հասցնել: Մեծ եղավ զարմանքս, երբ նա ասաց, որ ավետարանը տվել է Քիբունց Ավետիս ամի աղջկան՝ Ասյա Գրիգորյանին, որը Գանձակի (Կիրովաբադ) եկեղեցում մոմավաճառ էր աշխատում, թեմի առաջնորդի միջոցով էջմիածին ուղարկելու համար: Այստեղից էլ սկսվել է ավետարանի ողիսականը:

1975 թ. Ադրբեջանի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տերյանը հունվարի մեկին, մակագրություն կատարելով Բանանցի Ծեր ու Պահապան ավետարանի մագաղաթի էջին, որի իրավունքը չունեի, Ավետարանը նվիրում է Վազգեն Ա կաթողիկոսին: Մակագրությունը այսպիսին է՝ «Հնարույր, խնկարույր, հայաբույր մատյանս այս նվիրում եմ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին վասն հիշատակի հանգուցյալ Տիրամոր՝ Սիրանուշ Պալճյանի, որը նվիրեց մեր ազգին շինարար, հայրենասեր, բարի ու անբիծ Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Վազգեն Ա-ին»: Վեհափառը ընծայականով Ավետարանը նվիրում է Մատենադարանին: Ընծայականը այսպիսին է. «Մենք Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց այսօր, 25 յուլիսի 1975 թ. սույն ձեռագիր Ավետարանը յանձնեցինք Երևանի Ս. Մեսրոպի անվան Մատենադարանին»: Մատենադարանում սույն ձեռագիրը ի հիշատակ Վեհամայր Սիրանուշ Պալճյանի «Վեհամոր Ավետարան» մականունով մուծվել

է Մատենադարանի ձեռագրատուն 10680 համարի տակ: Ավետարանը երկր
անգամ վերանորոգվել է.

«Զվերջին նորոգել տուող Սուրբ զԱստվածաշունչ Ծեր Ավետարանս Պատենա
ցայ 1625 էր: Նորոգեցազ ձեռամբ Շամախեցի Յովհաննես երեցու...»:

Վերոգրյալից պարզվում է, որ Ավետարանը ունեցել է ազգանուն, անուն
և հայրանուն, այն է՝ Բանանցի Ծեր և Պահապան Ավետարան, սակայն Մա
տենադարան մուտքագրվել է «Վեհամոր Ավետարան» մականունով, որն ըն
դունելի չէ բանանցեցիների համար: Եվ հարյուրավոր բանանցեցիների ստորա
գրություններով, Ավետարանի անվանափոխության մասին գրավոր պահանջ է
հանձնվել Մատենադարանի տնօրեն պարոն Վ. Տեր-Ղևոնդյանին, որտեղ նշվել
է. «Եթե Ավետարանը ունի ազգանուն, անուն և հայրանուն՝ Բանանցի Ծեր և
Պահապան Ավետարան, ինչո՞ւ է այն հանդես գալիս Վեհամոր Ավետարան մա
կանունով»:

Ի գիտություն, հայտնեմ, որ Վազգեն Ա Վեհափառը, Վահան եպիսկոպոսին
կարգալույծ է արել:

2019 թվականի աշնանը Անժելա Տերյանի հետ գնացինք Մատենադարան,
խնդրեցինք բանանցեցիների ուխտագնացություն կազմակերպել Մատենադարանի
ի տես Բանանցի Ավետարանի: Գաղափարը Մատենադարանի տնօրինության
կողմից սիրով ընդունվեց:

Վալերի Գրիգորյան

Ուխտագնացության գաղափարը Մատենադարան, ի տես Բանանցի Ավե
տարանի, մեծ սիրով ու ոգևորությամբ ընդունվեց նաև բանանցեցիների կող
մից: Կազմակերպչական աշխատանք ծավալեց նաև Մարիամ Ավագյանը: Մա
տենադարանի տնօրինությունը ընդառաջելով բանանցեցիների ցանկությանը
կազմակերպեց այդ միջոցառումը և Մատենադարանի մեծ սրահում 2019 թ.
հոկտեմբերի 19-ին Ավետարանը ներկայացվեց բանանցեցիներին:



Բանանցեցիները Մատենադարանում: Ուխտագնացության օրը, 19 հոկտեմբերի 2019թ.

Նույն օրը Մատենադարանի տնօրենին դիմում ներկայացվեց նշելով, որ եթե
ավետարանն ունի ազգանուն՝ **Բանանցի**, անուն՝ **Մեծ**, և հայրանուն՝ **Պահապան**,
ինչո՞ւ պիտի հանդես գա «Վեհամոր Ավետարան» կեղծ անունով:

Ներկայացնում ենք բանանցեցիների նամակը Մատենադարանի տնօրեն
պարոն Վ. Տեր-Ղևոնդյանին ԱՎԵՏԱՐԱՆԸ ԻՐ ՆԱԽԿԻՆ ԱՆՈՒՆՈՎ՝ «ԲԱՆԱՆՑԻ ԾԵՐ
ՈՒ ՊԱՀԱՊԱՆ ԱՎԵՏԱՐԱՆ» կամ «ԲԱՆԱՆՑԻ ԱՎԵՏԱՐԱՆ» կոչելու մասին:

Մատենադարանի տնօրեն պարոն Վ. Տեր-Ղևոնդյանին

Մատենադարանում պահվող հնագույն ամբողջական ձեռագիր մատյանը
7-րդ դարի «Բանանցի Ավետարանն» է: Այն կոչվում է նաև Բանանցի «Ծեր» ու
«Պահապան» Ավետարան: Այն դարեր շարունակ պահվել է Գարդման-Ուտիքի
Բանանց գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում: Բանանցեցիները հնության ու
զորության համար Ավետարանն անվանել են «Ծեր» ու «Պահապան»:

1974 թ. Բանանցի գյուղխորհրդի քարտուղար Հարություն Գրիգորյանը
ավետարանը հանձնել է Գանձակի սբ. Խաչ եկեղեցու մոմավաճառ Այա Գրի
գորյանին Ատրպատականի թեմի առաջնորդ եպս. Վահան Տերյանի միջոցով այն
Մատենադարանին կամ կաթողիկոս Վազգեն Ա-ին հանձնելու համար: Սակայն
եպս. Վ. Տերյանը Ավետարանը բաժանել է երեք մասի և Ավետարանի մասը
կաթողիկոսի մայրիկի մահվան կապակցությամբ նվիրել Վազգեն Ա-ին հետևյալ
մակագրությամբ. «Հնաբույր, խնկաբույր, հայաբույր մատյանս այս նվիրում եմ
Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին Վասն հիշատակի հանգուցյալ Տիրամոր՝ Սիրանուշ
Պալճեանի, որը նվիրեց մեր ազգին շինարար, հայրենասեր, բարի ու անբիծ
Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին: Վահան եպիսկոպոս
Տերյան 1/1-1975 թ.»:

1975 թ. Վազգեն Ա-ն մատյանը հանձնել է Մատենադարանին, որտեղ այն
մուտքագրվել է «Վեհամոր Ավետարան» մականունով, ստանալով 10680 հա
մարը, այն դեպքում, երբ Ավետարանը ուներ անուն՝ «Բանանցի Ավետարան»
կամ «Բանանցի «Ծեր» ու «Պահապան» Ավետարան»: Այսպիսով եպիսկոպոսը
տնօրինել է Ավետարանը, ինչպես իր սեփականություն՝ նվիրելով այն կաթողիկոսի
մոր հիշատակին: Ավետարանի մյուս երկու մասերը առանձին-առանձին հանձնել է
Մատենադարանին: Ի ուրախություն բոլորիս՝ Մատենադարանի աշխատակիցների
ջանքերով Ավետարանը ամբողջացվել է:

1989 թ. Բանանցը հայաթափվել է, գրկվելով իր բնիկ հայ բնակչությունից:
Կորցնելով հայրենի Բանանց գյուղը, բանանցեցիների ցանկությունը և խնդրանքն
է, որ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՆՈՐԻՑ ԿՈՉՎԻ ԻՐ ՆԱԽԿԻՆ ԱՆՈՒՆՈՎ՝ «ԲԱՆԱՆՑԻ ԾԵՐ
ՈՒ ՊԱՀԱՊԱՆ ԱՎԵՏԱՐԱՆ» կամ «ԲԱՆԱՆՑԻ ԱՎԵՏԱՐԱՆ»:

Հարգելի պարոն Տեր-Ղևոնդյան, բանանցեցիների խնդրանքն է, որ յուրա
քանցյուր տարվա հուլիսի 27-ին կամ նրան հաջորդող շաբաթ օրը լինի ուխտա
գնացության օր, նվիրված Բանանցի «Ծեր» ու «Պահապան» Ավետարանին, քանի
որ 1969 թ. հուլիսի 27-ին Ադրբեջանի կառավարության գիտությամբ, Բանանցում

գիշերը, գաղտագողի քանդվել է արդեն պատրաստ, դեռևս չբացված «Արծիվ» հուշարձանը, նվիրված Հայրենական պատերազմում զոհված 600 բանանցեցիների հիշատակին: Քանդակի հեղինակն էր անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը: Այդ դեպքը չդատապարտեցին ոչ ԽՍՀՄ-ի, ոչ էլ՝ Հայաստանի կառավարությունները: Ադրբեջանը Հ. Ալիևի գլխավորությամբ կարողացավ չեզոքացնել բանանցեցիների բողոքները: Դա շատ մեծ հարված էր ոչ միայն բանանցեցիներին, այլև ամբողջ ադրբեջանահայությանը: Բանանցեցիները հուսով են, որ մի օր «Արծիվ» հուշարձանը նորից կկառուցվի Բանանցում:

Այդ ժամանակը հարմար է նաև այն առումով, որ աշխարհով մեկ ցրված բանանցեցիները ամռան այդ օրը կարող են գալ Երևան և մասնակցել ուխտագնացությանը, որն էլ ավելի կամրապնդի նրանց կապը Մայր Հայաստանի հետ: Արդեն տեղեկություններ կան, որ Գարդման-Ուտիքի այլ բնակավայրերի տեղահանված բնակիչներ ևս ցանկություն ունեն մասնակցելու այդ միջոցառմանը:

Հարգելի պարոն Տեր-Ղևոնդյան, խնդրում ենք ընթացք տալ բանանցեցիների խնդրանքին, մատյանը նորից ներկայացնել իր նախկին անունով, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա հուլիսի 27-ը կամ նրան հաջորդող շաբաթ օրը համարել ուխտագնացության օր:

*Մի խումբ բանանցեցիներ
(կից ներկայացվում է ցուցակ)
19.10.2019 թ.*

Ներկայացնում ենք Մատենադարանի գլխավոր ավանդապահ
Ա. Ս. Մաթևոսյանի հոդվածը Բանանցի Ավետարանի մասին:

ԵՐԿՈՒ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՁԵՌԱԳՐԵՐ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի Ն

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա -ի հոգածությամբ անցյալ տարի Մաշտոցի անվան Մատենադարանը հարստացավ երկու մեծարժեք ձեռագրերով: 1975 թ. հուլիսի 25-ին Վեհափառը Երևանում հանդիսավոր պարագաներում ձեռագրերը հանձնեց Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Լևոն Խաչիկյանին: Նույն օրը ձեռագրերը մուծվեցին Ձեռագրատուն⁹⁷:

Ձեռագրերից մեկը Վեհամոր Սիրանույշ Պալճյանի հիշատակին նվիրված մատյանն է: Ձեռագիրն առաջին հայացքից դիտողին պատկառանք է ներշնչում իր հնությամբ՝ դեղնավուն մագաղաթով ու երկաթագրով: Ձեռագիրը 1975 թ. հունվարի 1-ին Վեհամոր հիշատակին է նվիրել Մայր Աթոռի միաբան Վահան Եպիսկոպոս Տերյանն այսպիսի մակագրությամբ. «Հնաբույր, խնկաբույր, հայաբույր մատյանս այս նվիրում եմ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, վասն հիշատակի հանգուցյալ Տիրամոր՝ Սիրանույշ Պալճյանի, որը նվիրեց մեր ազգին շինարար, հայրենասեր, բարի և անբիծ Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին: Վահան Եպիսկոպոս Տերյան, 1/1 1975 թ.»:

Սույն հիշատակագրությունից ձախ կարդում ենք Վեհափառի ընծայականը. «Մենք Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց, այսօր, 25 յուլիսի 1975 թուին, սոյն ձեռագիր Աւետարանը յանձնեցինք Երևանի ս. Մեսրոպի անուան Մատենադարանին: ՎԱԶԳԵՆ Ա»:

Սույն ձեռագիրը, ի հիշատակ Վեհամայր Սիրանույշ Պալճյանի, «Վեհամոր Աւետարան» մականունով մուծվեց Մատենադարանի ձեռագրատուն 10680 համարի տակ⁹⁸:

Վեհամոր Ավետարանի վերաբերյալ առաջին գրավոր տեղեկությանը հանդիպում ենք Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանցի «Արցախ»-ում, Գարդման գավառի Մեծ Բանանց գյուղի նկարագրության մեջ. «Տաճարում (խոսքը Մեծ Բանանց գյուղի Լուսավորիչ եկեղեցու մասին է - Ա. Մ.) կան հետևյալ գրչագրերը.

Ա. Աւետարան մագաղաթեալ, մեծադիր, ամբողջապէս գրուած գլխագրերով և առանց պատկերի, որի սկզբից և վերջից թափուած են թերթեր, կամ գողացուած են, վասնորոյ չունի յիշատակարան. միայն գրուած է բուն ընդօրինակողի գրով. «Շնորհիւն Աստուծոյ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ ԵՒ ԱՂՈԹԻԻՔ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ... ԺԱՌԱՆԳԵՍՅԷ (ջնջված)»⁹⁹:

⁹⁷ Ներկայացվում է հոդվածի՝ Բանանցի Ավետարանին նվիրված հատվածը:

⁹⁸ Հիշատակարանները դրված են ձեռագրի 202 բ էջում:

⁹⁹ Մակար եպս. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 278-279: Վերջին բառը ճիշտ չի վերծանված: Ճիշտը տես քիչ հետո:

Այնուհետև բերում են մյուս հիշատակարանները, որոնք այժմ բացակայում են ձեռագրում, և որոնց կանդրադառնանք հետո:

Հետագա հիշատակագրությունները ցույց են տալիս, որ ձեռագիրը շատ վաղուց է պահվել Մեծ Բանանց գյուղում և այնտեղից էլ 1974 թ. տեղի բնակիչ Ասյա Գրիգորյանի ձեռքով անցել Վահան եպիսկոպոսին: Վեհամոր Ավետարանն ունի 26,5 X 33,5 մեծություն, 255 մագաղաթյա թերթ, ինչպես և մեկական մագաղաթյա թերթ պահպանակ սկզբից և վերջից: Պրակները բաղկացած են ութական թերթերից: Բնագրի սկզբից պակասում է մի պրակ: Պահպանված առաջին թերթը Մատթեոսի Ավետարանի ԼԷ տունն է: Վերջից պակասում է մի թերթ՝ Հովհաննու Ավետարանի ՄԻԲ տանից հետո:

Ընկած թերթերից մեկի վրա եղել են հետագա հիշատակագրություններ, որոնք արտագրվել են ժամանակին Մ. Բարխուդարյանցի կողմից: Ըստ այդ հիշատակագրությունների, «Աւետարանը նախ նորոգած է Թադեոս անուն ոմն միայնակեաց, ապա Ալեգսանոս արքեղան ՋԲ (1453) թուին, ապա նորոգուած է ՋԿ (1511) թուին, ուր և գրուած է. «Կաման Ամենակալին Աստուծոյ ես՝ Կոչ որդի Սեթիկին, թոռն Թադեոսին, Աւետարանս իմ պապեց գնուած էր. եկի, դաւի արարի, էլ բարիշեցաք և սաղեցաք Բ եզն ինձ ծառայութեան: Ես էլ գիր տուի ի զԱւետարանիս դաւէն անցա: Էլ ոչ ես, ոչ իմ որդին էլ դաւի չանէ, ՅԺԸ հայրապետաց անիծած է... Մուրատ փաշէն վկայ, Զ-սնդարն վկայ, Մուրատ րէկն վկայ»¹⁰⁰:

Ինչպես տեսնում ենք, այս նորոգման հիշատակարան չէ և թվական չունի, այսինքն կապ չունի ՋԿ (1511) թվականի նորոգության հետ: Ձեռագրում Ղուկասի Ավետարանի վերևում պահպանվել է այդ թվականի նորոգության հիշատակարանը և կապվում է Ալեգսանոսի հետ. «Զվերջին կազմող սուրբ Աւետարանիս զԱլեգսանոս, արքեղէս անուամբ միայն և գործով ունայն, աղոթս յիշեցէք, և Աստուած զծեղ յիշէ, ամէն: Թիւս ՋԿ (1511)»¹⁰¹:

Ուրեմն, Ալեգսանոսը կազմել և նորոգել է ոչ թե ՋԲ (1453), ինչպես նշում է Մ.Բարխուդարյանցը, այլ ՋԿ (1511) թվականին: Իսկ ՋԲ (1453) պետք է վերաբերվի Թադեոս միայնակյացին, որի մի հիշատակարանը գտնվում է նույն էջում, բայց թվական չունի: Ահա այն. «ԶԹադեոս միայնակեցս որ ետ նորոգել զԱւետարանս և պատուական զարդարեաց իշատակ իւր և ծնողաց իրոց՝ հաւրն Յոհանէս քահանային և մաւրն Հինեարին, և եղբարցն՝ Կոստանդին, Իբրիանոսին, Մարկոսին, Ղուկասին, Մաթեոսին, Ովանիսին և քներացն, ամէն: Զվերոյգրեալս յաղափս յիշեցէք, և որ իշէ յիշեալ լիցի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամեն»¹⁰²:

Վերջում այլ գրով գրված է. «Այլ և զպագքն մեր Թաթոս քահանայ և զամուսին իմ Սառայ, Մարկոս որդին իմ իշեցէք ի Քրիստոս»: Թադեոսի, թոռան՝ Սեթիկի որդի Կոչին պատկանողն վերջին հիշատակարանները ՋԿ (1511) թվականին չեն վերաբերվում: Հավանականն այն է, որ Թադեոս Միայնակյացի ջանքերով ձեռագիրը նորոգվել է 1453 թվականին, իսկ նրա թոռան՝ Կոչի հիշատակարանն ընկնում է մինչև 1511 թ., մինչև Ալեգսանոս արքեղայի ձեռքով ձեռագրի կազմվելը: Ձեռագրում եղել է նորոգման մի երրորդ հիշատակագրություն ևս, որն այժմ չկա, և բերված է «Արցախ»-ում. «Զվերջին նորոգիլ տուող սուրբ զԱստուածաշունչ Ծեր Աւետարանիս Պանանցայ... ճամահաթխութիւն ՌՀԴ (1625) էր: Նորոգեցաւ ձեռամբ Շամախեցի Յովհաննէս երիցու...»¹⁰³: Այստեղ հետաքրքրական է, որ Ավետարանը կոչվում է «Ծեր» և «ՊԱՆԱՆՑԱՅ»: Վերջինս տեղի անունն է, Բանանց գյուղը, ուր երկար տարիներ պահվել է ձեռագիրը, իսկ «Ծեր» մականունը, դեռևս այն ժամանակ, տրվել է նրան հնության համար: Եվ արդարացի է այդ որակումը: Ձեռագրի վրա նորոգման բազմաշերտ հետքեր կան: Առաջին նորոգման ժամանակ թերթերը մաշվել, քայքայվել էին արդեն արմատից, այսինքն՝ կազմի թիկունքամասից, և նորոգվում, լրացվում են մագաղաթյա պատառիկներով: Մագաղաթյա ձեռագիրն այդ վիճակին հասնելու համար բավական շատ ժամանակ պիտի անցներ:

Նորոգված կտորներից կամ կարկատաններից երկուսի վրա (3բ, 4բ) Ղուկասի Ավետարանի համաբարբառի նշումները կան, որոնց գրերը նույնն են մեր Ավետարանի համաբարբառի գրերի հետ, թվում է նույն գրչի կամ, ավելի ճիշտ, նույն դպրոցի ու ժամանակի գործ են: Նշանակում է, ձեռագիրը նորոգելիս օգտագործել են նրանից ավելի քայքայված մի այլ ձեռագիր, որը ժամանակով մոտ է եղել նրան: Երևում է նաև Հովհաննես Շամախեցու նորոգումը՝ կատարված թղթով: Նորոգել է նույնիսկ մագաղաթով նախկինում նորոգված մասերը, որոնք իրենց հերթին ավելի մաշվել ու քայքայվել էին: Այս նշանակում է, որ առաջին նորոգումը շատ վաղուց է կատարվել, որ մաշվել է այդ աստիճան: Կազմը Ալեգսիանոսի գործն է, կաշեպատ տախտակ, կոստղապատ: Կենտրոնում խաչ է. թևերի ծայրերին և կենտրոնում՝ գունավոր քարեր: Շուրջը՝ երկաթյա խաչեր և կոստղեր, փակիչի երեք մեխերով: Երկրորդ փեղկը նույնպես կոստղած է՝ իրար մեջ գծված երկու քառանկյունների պատկերով և փականներով: Կազմն ունի դռնակ: Կազմաստաղը դեղին մետաքս է:

Ձեռագիրը հիմնականում գրված է երկու գրիչների ձեռքով: Գրիչների անուններն անհայտ են: Առաջին գրչից պահպանված երկու հիշատակագրություններ

¹⁰³ Այնուհետև շարունակում է. «Ով հանդիպողք, խիստ դառն, նեղ ժամանակ այսմ տարոյս Շահ Ապազն բագում խան ու իշխան ուղարկեց Վրացտան ի բաղաթն Տպղիս՝ ընդ ձեռամբ իշխանին անուն Մովրով, սպանեց հնարաբ Ղարչդախանն, որ իշխանութեամբ ստրատելատ էր, և այլ սիրելի խանն Յուսուբ սպանիո ընդ նմա. մեծ դառնութիւն եղաւ ի մէջ պարսիկ ազգին. վերջն Աստուած գիտէ թէ ինչ կուլի» («Արցախ», էջ 279):

¹⁰⁰ Նույն տեղը:
¹⁰¹ Նույն տեղը:
¹⁰² Նույն տեղը:

րի մեջ անուններ չեն հիշատակվում: Ահա դրանք. «Կատարեցաւ Աւետարանս Մատթեոսի շնորհին պահպանութեամբ սուրբ խաչին եւ աղաւստուծոյ և ողորմութեամբ սուրբ Հոգւոյն, թիւք ամենայն սրբոց, ընդ հով(անեալ)¹⁰⁴... Տէր տուր զաւրոյթին ծառայս քո»¹⁰⁵ «Տէր Աստուած տուր զաւրոյթին: Կարեցաւ գլովս Մարկոսի շնորհին Աստուծոյ»¹⁰⁶:

Ձեռագրի հնութեան ամենապերճ ապացոյցը ձեռագրում օգտագործված գիրն է ու գրչության արվեստը: Ձեռագիրը գրող երկու գրիչներն էլ գրել են **երկաթագրով**: Առաջինը ավելի ազատ է վարվել գրի հետ, արագագիր է, նույնիսկ ոճավորել է որոշ գրեր, հատկապես գլխագրերը: Այս ու այստեղ թոչուններ ու ծաղիկներ է գծագրել: Դրանք լուսանցազարդեր չեն իսկական իմաստով:

Երկրորդ գրիչը զուսպ է և գեղեցկագիր: Նրա տառերը իսկապես երկաթագիր են, զգաստ, անայլայլ: Գրության մեջ համատարած կարգով օգտագործում են «Հ» տառի այնպիսի ձև, որին առաջին անգամ այս ձեռագրում ենք հանդիպում, և որը համապատասխանում է գրերի ստեղծման մաշտոցյան սկզբունքին: Նույն սկզբունքով է ներկայանում նաև «Կ» տառածևը, որին միայն հնագույն պատահիկներում և պահպանակներում ենք հանդիպում, որը գործածել է առաջին գրիչը: Այդ տառածևերը պահպանվում են նաև ձեռագրում գործածված մյուս գրատեսակներում, համաբարբառների գրության և սրբագրության ժամանակ: Խիստ հնաբույր են «վ», «ծ», «ճ», «գ», «ժ», «վ» տառերը: «Փ»-ն առաջին գրչի մոտ դեռ երկու տողերի միջև է տեղավորված: Համաբարբառն առաջին գրչի մոտ գրված է հին բոլորգրով և շղագրով, իսկ երկրորդի մոտ՝ գրչագրով (այսպես կոչված «ուղղագիծ երկաթագրով») Մատթեոսի Ավետարանի սկզբում, եզրալուսանցքի կամ կողքի լուսանցքի համաբարբառը գրված է ոչ թե կողք-կողքի, այսինքն, ոչ թե ժա, այլ վերից վար ժ/ա կամ ճ/բ: Մեր կարծիքով կարող էր այդպես գրվել **յոթերորդ դարի երկրորդ կեսում**, երբ Շիրակացին մաշտոցյան այբուբենը իննյակներով ձախից աջ հորիզոնական դասավորության փոխարեն, թվաբանական գործողությունների համար կարգեց վերից վար իննյակների գրության ձև՝ միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր կարգով, որից նմուշներ է պահպանվել ձեռագրերում «Այբուբեն Անանիայի» կամ «Այբ գիրն Անանիայի» վերտառությամբ:

Հավանաբար դրա արտահայտությունն է համաբարբառների այդ կարգի գրությունը: Ձեռագրում անկանոն է գլխավոր Ավետարանների նշանակումը: Առաջին գրչի մոտ այն համարյա բացակայում է և նշանակված են հետագայում, իսկ երկրորդ գրչի մոտ նշանակվածները տեղ-տեղ չեն համապատասխանում հետագայում գրված ձեռագրերի գլխավոր Ավետարաններին, որոնք նշվում են

զարդագրերով, և իրենց դիմաց ունեն լուսանցազարդեր: Ձեռագրում գործածվում է գրչագիր, բոլորգիր և շղագիր գրատեսակները, ինչպես հնագույն Լազարյան Ավետարանում՝ գրված 887 թվականին:

Գրչագիր, ավելի շուտ երկաթագրախառն է երրորդ գրչի գրած երեք էջերը (209 բ, 235ա, 250 ա): Սույն գրատեսակը գործածված է նաև համաբարբառներում և սրբագրություններում: Գրության մեջ բառանջատում չկա, հետևաբար գոյություն չունի տողադարձի կանոն: Հաճախ նոր տողից չի գրվում նաև նոր տունը (էջ 8ա, Մատթեոս 4 բ), երկույթ, որին հետագայում երբեք չենք հանդիպում, քանի որ յուրաքանչյուր տուն համարակալվում է լուսանցքում: Կան գրության հնագույն ձևեր, որոնք չունեն մեր հնագույն՝ Թ, Ժ դդ. Ավետարանները, ինչպես, օրինակ. «Եւ ուղեւ արարէք զշաւեղս նորա» (71 ա), «ովմն» (119 բ), «փախանակ» (120բ), «մղիոն» (3բ) և այլն: Պատվագրված են միայն տերունական անունները, հանդիպում են պատվագրության հազվադեպ ձևեր, «Աստուծոյ» և «Տեառն» բառերի, «Այ» և «Տն» պատվագրությունների փոխարեն գործածված են «Աոյ» և «Տրն» ձևերը¹⁰⁷: Ձեռագրի հնության կարևոր ապացոյց է նաև կետադրությունը: Երեք գրիչների մոտ էլ կետադրության բոլոր նշանների պարտականությունը կատարում է երկու տողագծերի կենտրոնում (տառի մեջտեղին հավասար) դրված միակ կետը, որը մերթ նշանակում է վերջակետ, մերթ միջակետ, մերթ ստորակետ, առանց տեղը փոխելու:

Հնագույն Մլքե թագուհու (862 թ.) Ավետարանում (որքան հնարավոր եղավ դատել հրատարակված մի էջից) գործածված է երկու կետ (այսինքն՝ մի կետը դրվում է երկու տեղ), իսկ Լազարյան Ավետարանի մեջ՝ երեք կետ (մի կետը՝ երեք տեղ): Վեհամոր Ավետարանի կետադրությունն ավելի մոտ է **Անանիա Շիրակացու «խրախճանականք»-ի պատառիկի կետադրությանը**, որը **7-րդ դարի հնություն ունի**¹⁰⁸:

Այս բոլորը թույլ են տալիս ենթադրելու, որ Վեհամոր Ավետարանը մեզ հասած հայերեն հնագույն ամբողջական ձեռագրերից ամենատարեցն է, ամենածերը, որի հնությունը հասնում է մինչև 7-րդ դար և արժանի է հատուկ, մանրախույզ քննության:

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Մատենադարանի գլխավոր ավանդապահ
«Էջմիածին» հանդես, 1976, թիվ 12

¹⁰⁴ Հաջորդ բառերը քերված են:

¹⁰⁵ Ձեռագիր № 10680, էջ 70 բ: «Արցախ»-ում այս տողը վերծանված է «Ժառանգէսցէ», որը ճիշտ չէ (տես անդ, էջ 278–279):

¹⁰⁶ Մատենադարան, ձեռ. № 7040, էջ 280 ա:

¹⁰⁷ Մատենադարան, ձեռ. № 10680, էջ 119ա և 39ա:

¹⁰⁸ Ա. Մաթևոսյան, Նորահայտ պատառիկներ Անանիա Շիրակացու թվաբանության դասագրքից, ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր», 1974, թիվ 6, էջ 65–76:

ԲԱՆԱՆՑԻ «ԼԵՂՈՒՆ»

(Համառոտ ակնարկ)

Ըստ Հր. Աճառյանի դասակարգման՝ Բանանցի լեզուն մտնում է Արցախի բարբառի Ղազախի (Տավուշ) ենթաբարբառի մեջ. ըստ աշխարհագրական տեղակայման՝ արևելյան է, ըստ բայի ներկայի կազմության՝ Ում ճյուղի: Բանանցի բարբառը ընդհանրություններ ունի Արցախի, Արարատյան և Թիֆլիսի բարբառների հետ: Այն առանձին ենթաբարբառ կարելի է համարել՝ ըստ Գ. Ջահուկյանի դասակարգման:

Բանանցի բարբառը ունի 10 ձայնավոր՝ **ա, ա, օ, օ, ու, ու, է, ըէ, ի, ը** (և ոչ մի երկհնչյուն): Արանք այն ձայնավոր հնչյուններն են, որոնք բարբառում իմաստազատիչ դեր ունեն. մեկը մյուսով փոխարինելիս բառիմաստը կարող է փոխվել: Դիտարկենք մի քանի օրինակ. **պահիլ** (պահել) և **պա հիլ** (բահել) բայերը իրարից տարբերվում են ընդամենը **ա** հնչյունի արտասանության ձևով (քմային տարբերակ), նույն կերպ՝ **տասը** (տասը) և **տա սը** (դասը), **կալ** (ցորեն կալսելու տեղ) և **կ(յ)ա լ** (գալ) բառերը: **Տէղ-տէղէր** (դեղ) և **տըղէ-տըղէրէր** (տեղ, վայր, անկողին), **կէնամ** (գենամ՝ հագնեմ) և **կըէնամ** (մնամ) բառերը իրարից տարբերվում են է ձայնավորի արտասանական տարբերակով:

Օօր (ծորալը) և **ծօր** (ծոր) բառերի մեջ արտահայտվում է **օ** ձայնավորի արտասանական տարբերակների իմաստային արժեքը: **Կուտի** (կուտի) և **կ(յ)ու տի** (կուտակի(ր)) բայերի մեջ արտահայտված է **ու** ձայնավորի տարբերակների իմաստային տարբերությունը: Ինչպես տեսանք, դրանք իմաստազատիչ դերից բացի նաև ձևաբանական նշանակություն ունեն՝ **կուտի-կ(յ)ու տի, կալ-կ(յ)ա լ** և այլն: Այն բառերը, որտեղ ձայնավորների արտասանական տարբերակները իմաստազատիչ արժեք չունեն, կարող են ունենալ զուգահեռ ձևեր՝ **ճաղաց//ճա ղա ց, հաքի//հա քի, արծիվ//ա րծիվ, անձօղ//ա նձօ ղ, թաժա//թա ժա:**

Բանանցի բարբառի բաղաձայնները համապատասխանում են գրաբարի բաղաձայն հնչյուններին. ձայնեղ՝ **բ, գ, դ, ձ, ջ, գ, ժ, դ, վ.** խուլ՝ **պ, կ, տ, ծ, ճ, ս, շ, խ, հ.** շնչեղ խուլ՝ **փ, ք, թ, ց, չ.** ձայնորդ՝ **լ, մ, յ, ն, ո, ր:** **Ֆ** բաղաձայն չկա, փոխարենը գործածվում է **փ-ն՝ փարթուկ, փայտօն, փանար, փոսնտ, փօկուս, ափէրիստ, սարափան, ըշկափ, շրփանէրկա, քէփ** և այլն: Կոկորդային ձայնավորներից առաջ հնչող քմայնացած բաղաձայնները՝ **կյ (կյա լու ր, կյօ դ, կյու մէշ), գյ (գյա նք, գյօ լ, գյու լու լ), քյ (քյա մա ր, քյօ լօ գ, քյու լբա), ծյ (իրիսծյա սկա ն), հյ (հյու լու նք, հյու ն), րյ (րյու գու), վյ (վյու լու կ), խյ (խյու լ), ւյ (ւյա վ, ւյա ցկա ն), այ (այու ոը),** առանձին բաղաձայններ չեն, քանի որ իմաստային նշանակություն չունեն:

Ինչպես ասացինք՝ Բանանցի բարբառը երկաստիճան ձայնեղազուրկ հնչյունական համակարգ ունի: Այդպես է կոչվում այն համակարգը, որտեղ գրաբարյան ձայնեղ բաղաձայնները (բ, գ, դ, ձ, ջ) վերածվում են խուլերի (պ, կ, տ, ծ, ճ) կամ որոշ դեպքերում՝ շնչեղ խուլերի (փ, ք, թ, ց, չ), օրինակ՝ բարձր-**պա ցըրը**, բերել-**պիրիլ**, բոռ-**պյու ոը**, գետ-**կէտ**, գառ(ն)-**կյա ոը**, դուռ(ն)-**տու ոը**, դիրք-

տիրք, ձյուն-ծու ն, ձի-ծի, ջարդել-ճա ոթիլ, ջիլ-ճիլ: Սակայն դա չի նշանակում, թե բարբառում առհասարակ բացակայում են ձայնեղ բաղաձայնները: Դրանք կան, ուղղակի չեն արտացոլում գրաբարյան լեզվավիճակը, այլ պահպանվում են փոխառությունների մեջ՝ թե՛ օտար լեզուներից, թե՛ գրաբարից կամ գրական հայերենից, ինչպես, օրինակ՝ գրաբարյան **բան** «խոսք, գործ» բառը դառնում է **պա ն**, բայց **բանդաղ** (կախան) բառը **պա նդա ղ** չի դառնում, քանի որ փոխառություն է. այդպես նաև՝ **դարդ, դանա, բասանուշկա, դամաշնիկ, բաբաթ, բանկա, ջան, ջիա ննա մ** և այլ փոխառություններ:

Բնիկ հայերեն **ջուր** բառը դառնում է **ճու ր**, բայց մեկ այլ բառի մեջ **ջ-ն** չի հնչյունափոխվում, օրինակ՝ **ջրվար՝** (ջրվար՝ ջուր բաժանող), նույնը տեսնում ենք նաև այլ բառերում՝ **պա նիլ** (աշխատել), բայց **բանվօր, կիր** (գիր), բայց **գրական, տան** (դաս), բայց **դասատու:**

Ձայնեղների խլացման այլ օրինակներ. **բ>պ, գ>կ, դ>տ, ջ>ճ, ձ>ծ.** բակ>**պա կ**, գալ>**կյա լ**, դաղ>**տա դ**, բիր>**պրիիր**, բանջար>**պա նջա ր**, բոքիկ>**պիպիկ**, գենալ>**կէնալ**, դիմանալ>**տիմա նա լ**, բոլոր>**պիլօր**, գաղել>**կյա դիլ**, գորտ>**կյօ ոտ**, գործ>**կօրծ/կ(յ)օ րծ**, դողալ>**տօ դալ**, դատարկ>**տա ոտա կ**, բութ>**պիթ**, գութան>**կյու թան**, դու>**տու**, ձագ>**ծա ք**, ձեռք>**ծէոք**, ձար>**ծա ր**, ձեթ>**ծէթ**, ջերմել>**ճէրմիլ**, ջնջել>**ճինջիլ:**

Ձայնեղների շնչեղացման օրինակներ. **բ>փ, գ>ք, դ>թ, ձ>ց, ջ>չ.** բոնել>**փռոնիլ**, բուսնել>**փըսնիլ**, գնալ>**քինա լ**, գտնել (գտանել)>**քիթա նա լ**, գիշեր>**քիշէր**, գցել>**քիցիլ**, դռն>**թըռլօն**, դողոշ>**թօթօշ**, դադարել>**թիրթա րիլ**, ջրհորդան>**չըռօթան:**

Օտար փոխառությունները երբեմն կարող են նաև հնչյունափոխվել բնիկ բառերի պես՝ բամբակ>**պա մբա կ**, դանակ>**տա նա կ**, բերդ>**պէրթ**, բաժին>**պէժինք**, դամոն>**տա մբու լ**, գոմեշ>**կյու մէշ** և այլն:

Մասնավոր դեպքերում հնարավոր է նաև հակառակ երևույթը՝ խուլերի ձայնեղացում, շնչեղների խլացում. այս դեպքում կյանք-ը դառնում է **գյա նք**, կիրակի-ն՝ **գիրա գի**, անտեր-ը՝ **անդէր**, ընտրել-ը **հընըդրիլ**, աշխատանք-ը՝ **ըշխադանք**, աստված-ը՝ **անտօծ**, դատարան-ը՝ **դըդարան**, կենաց-ը՝ **գէնաց**, ընկնել-ը՝ **ինգնիլ**, ընկեր-ը՝ **հինգէր**, երկար-ը՝ **էրգա ն**, գիտենալ-ը՝ **գիդալ**, և ցախ-ը՝ **ճախ**, թթխմոր-ը՝ **տըխտըմօր**, փաթաթել-ը՝ **պըտատիլ**, թմրել-ը՝ **տիմբիրիլ:**

Ինչպես սովորաբար լինում է բոլոր լեզուներում, Բանանցի բարբառում էլ մեծ տեղ են զբաղեցնում լեզվական ազդեցությունները՝ հատկապես թուրքերենից ու պարսկերենից, նոր շրջանում՝ նաև ռուսերենից: Դրանք վերաբերում են ամենագործածական ոլորտներին: Բայց բարբառային բառերի շարքում հետաքրքրություն ներկայացնողը հայերեն բնիկ բառերն են, որոնք բնական ճապարհով ավանդված են գրաբարից, կամ առաջ են եկել գրաբարի հենքի վրա:

Լեզվաբանները կարծում են, որ Արցախի բարբառը, որի մի առանձին ճյուղն է Բանանցի խոսվածքը, որոշ դեպքերում ավելի հարազատ է մնացել գրաբարյան

քերականական ձևերին՝ պահպանելով ձևաբանական, բառակազմական, իմաստաբանական հնաբանություններ:

Նման մի հնաբանության օրինակ է Բանանցի բարբառի բայը: Որպես Ում ճյուղի բարբառ՝ անկատար ձևաբայը կազմում է **-ում** մասնիկով՝ **կիրու մ** «գրում», **կարթում**, **մտնում**, **լիվա նու մ**, **տըէ(ս)նում**, **ըստակում** (սատկում), **թոչում** «թոչում» և այլն: Ներկա ժամանակաձևը կազմվում է այս ձևաբայի և օժանդակ բայի ներկայի միջոցով՝ **կիրու մ ըէմ**, **կարթում ըէնք**, **մըտնում ա**, **լիվա նու մ ըէս**, **տալիս էք**, **թոչում ըէն** (կյա լիս էմ, էս, ա, էնք, էք, էն. փոում ըէմ, ըէս, ա, ըէնք, ըէք, ըէն): Բայց ի տարբերություն աշխարհաբարի, որտեղ անկատար անցյալը համապատասխանաբար կազմվում է անկատար ձևաբայի և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ գրում էի, կարդում էիր, մտնում էիք, լվանում էին, Բանանցի բարբառում այն կազմվում է երկու ձևով՝ առանց օժանդակ բայի (ինչպես գրաբարում) և օժանդակ բայով (ինչպես աշխարհաբարում). այսպես՝ **կիրի/կիրու մ ի** «գրում էի», **կըրթին/կարթում ին** «կարդում էին», **մըտնիք/մըտնում իք**, **լիվինիք>լիվա նու մ ինք**, **թոչին/թոչում ին**, **ըստըկին/ըստակում ին**: Համեմատենք բարբառային առաջին ձևերը գրաբարյանի հետ՝ **կիրի-գրեի**, **կըրթին-կարդային**, **մըտնիք-մտանէիք**, **թոչըէր-թոչէր**, **լիվա ներ-լուանայր**, **ըստըկին-սատակէին**, **տը(ս)նինք-տեսանէաք**: Է և **ա** ձայնավորները ընկել են, մնացածը նույնն է, եթե մի կողմ դնենք բարբառային օրինաչափ փոփոխությունները:

Է և **ա** հնչյուններն ընկել են նաև օժանդակ բայի անցյալի ձևերի մեջ, ինչպես էի>ի, էիր>իր, էր>եր. վերջինս մնացել է նույնը. **էաք** գրաբարյան օժանդակ բայի փոխարինվել է աշխարհաբարի **էինք** տարբերակով, որն էլ բարբառային տեսք է ընդունել՝ էինք>ինք, էիք>իք, էին>ին. օրինակ՝ **րախա ի**, **րախա իր**, **րախա էր**, **րախա ինք**, **րախա իք**, **րախա ին**, կամ **կաղնած ի** (կանգնած էի), **կաղնած իր**, **կաղնած ըր**, **կաղնած ինք**, **կաղնած իք**, **կաղնած ին** (**ի**, **իր**, (**ը**)**էր**, **ինք**, **իք**, **ին**):

Ինչպես տեսնում ենք, օրինաչափությունից շեղվում է միայն հոգնակի առաջին դեմքի կազմությունը. գրաբարում այն կազմվում է **-էաք**, **-այաք** վերջավորություններով՝ գրէաք, մտանէաք, կարդայաք, լուանայաք, իսկ Բանանցի բարբառում կազմվում է **-ինք** մեկ ընդհանուր վերջավորությամբ՝ **կիրինք**, **մըտնինք**, **կըրթինք**, **լիվինինք**: Եթե գրեի-**կիրի**, կարդայի-**կըրթի**, մտանէին-**մըտնին**, լուանայի-**լիվինի** բառերում վերջավորությունները կրկնվում են՝ առանց խոնարհիչի, ապա **ե** խոնարհման գրեի- **կիրի** և **ա** խոնարհման կարդայի-**կարթըր** ձևերում խոնարհիչ ձայնավորը պահպանվում է, քանի որ եզակի երրորդ դեմքի վերջավորությունը այլ ձայնավոր չունի:

Այսպիսով՝ Բանանցի բարբառում բայը ավանդաբար պահպանել է գրաբարյան անցյալ ժամանակի կազմությունը: Ներկա ժամանակի ոճական կամ դարձվածային ձևերում նույնպես կան գրաբարյան քարացած կազմություններ՝ **յաշէմ-տըէնամ** «նայում եմ-տեսնում եմ»՝ նայեմ-տեսնեմ: «**Յա շէմ-տըէնամ էրգինքը մըթնըժոռըէլ ա**»: Օրինակներ. «**Հընիրակ ըր էն վըխտըրքին, պա**

նջա ըը քըղինք, տընինք ըխպիրու մը չըխչըխպինք, պիրինք հըղաղինք, աղ ընինք ըտինք...» «**Մըրը ռախըէքը թալակը կըրմիդի տակին սըրին հու ճամպա պըհին, վըրը մի ծիտ կէր նի ինգէր... վիզը հիլօ ռին, տընին Մէծ ծօ թումը թըէփոին հու խըրօված ընին...**»:

Բանանցի խոսվածքին հատուկ մեկ այլ հնաբանություն է **ա** արտաքին հոլովումը՝ **Բընանցա կինի**, **Վըզանա ճու ռ**, **Ըրըվանա շօք**, **Քըրհատա կյու մէր**: Այն համաբանորեն տարածվել է նաև որոշ այլ բառերի վրա, օրինակ՝ **կինգա** (կնոջ), ինչպես նաև այս բառով կազմված բարդությունների՝ **տըքըրկինգա** (տեգրակնոջ), **ըխպըրկինգա**, **մըրթըրկինգա** (մարդ ու կնոջ):

Այս **ա** հոլովումը գրաբարում մեծ թվով բառեր է ընդգրկում՝ անձնանուններ, տեղանուններ՝ Տրդատայ հովանոց, Անահտայ տաճար, Վանայ լիճ, Գեղամայ ծովակ: Արդի գրական հայերենում **ա** արտաքին հոլովումը կա միայն մեկ բառում՝ աղջիկ-աղջկա: Բայց պատմականորեն ավանդված տեղանուններում լիովի պահպանվել է, ինչպես՝ Սևանա լիճ, Վրկանա ծովակ, Սասնա ծոեր, Գարդմանա իշխան, Բաթմանա կամուրջ և այլն: Այս շարքին են պատկանում նաև Բանանցի բարբառի մի շարք տեղանուններ, որոնք փոխանցվել են ավանդաբար և որոնց նմանությամբ շարունակում են կազմվել տեղանունների սեռական հոլովները՝ **Ըրէվանա**, **Ղարաբանա**, **Բընանցա**, **Ղաշքեսանա**, **Չըվդանա**, **Քըրհատա** և այլն:

Հետաքրքիր իրողություն է բարբառի հոգնակի թվի կազմությունը: Դրա համար գործածվում են ոչ միայն աշխարհաբարի **-եր**, **-ներ** հոգնակերտները, այլ նաև պահպանվում են գրաբարյան ձևեր՝ **-(յ)անք**, **-ինք**, **-(տ)ունք**, **-ենի**, **-անի**, **-նի**, **-էք**, **-ք**, **-որայք**, օրինակ՝ **տափ-տափըր**, **կիլ-կիլըր** (գայլեր), **կյօ մ-կու մէր** (գոմեր), **վըտ-վըտունըր**, **ծու կը-ծիկներ** (ծկներ), **յէզը-յէզներ**, **մուկը-մըկնըր**, **ծի-ծիան(ք)** (ծիեր), **կիր-կրյանք/կիրէր** (գրքեր), **ծու -ծիվա ն**, **լու -լիվա ն**, **քիր-քըվըրտունք**, **ախպըր-ըխպըրտունք/ախպըրք**, **հինգէր-հինգէրտունք**, **քու լբա-քիլբենի** (գուլպաներ), **պինա լիք-պինիլբենի** (բանալիներ), **աման-ըմըննի**, **վէղրա-վէղրէք** (դուլլեր), **բախճա-բըխճըրէք**, **տըղա-տըղըրէք**, **րախա-ըրխէք**, **դասատու-դասատվըրէք**, **կատու-կատվըրէք**, **խինձօ ՚րի-խինձօ ՚րիք**, **հու նի-հու նիք**, **հիլի-հիլիք** (հայելի), **ծիլի-ծիլիք** (ածելի), **հա քի-հա քիք** (ագիներ), **քօցի-քօցիք**, **գյուղ-գյուղարանք** (գյուղորայք՝ գյուղեր) **տէղ-տէղարանք** (դեղորայք՝ դեղեր):

Ինչպես նաև կան անկանոն ձևեր՝ **աղճիկ-ըխճըկըրէք**, **տըղա-տըղըրէք**, **քիր-քըվըրէք**, **կընիկ-կընանիք**, հավաքական գոյականներ՝ **հէր-հէրանք**, **տատ-տատունք**, **պապ-պապունք**, **ագի-ագունք**, **մըէնք-մէրունք** (մերոնք), **տու ք-ծէրունք** (ծերոնք). **-ավոր** ածանցով հավաքական գոյականներ՝ **կըղնըձավըր** (որևէ արարողության ժամանակ ոտքի վրա սպասարկող մարդիկ), **թըմըշավըր** (թամաշա անողներ), **հըրսընքավըր** (հարսանիքի մասնակիցներ), **տինիկա վըր** (դանակավոր) և այլն: Օրինակ՝ «**Յէզը վըրը վըրը ա ինգնու մ, տինիկա վըրը շըտանումա**»:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Բանանցի բարբառի շեշտը Ընդունված է կարծել, թե Արցախի բարբառում շեշտը միմիայն ընկնում է նախավերջին վանկի վրա, ինչպես՝ **ծաղիկ**, **քյա՛մա ր**, **կո՛ւճուր**, **հա՛րգա կ**, **յէրգինք**, **հա՛նգիստ**, **վիրած**, **կըէծակ**, **դինակ**, **արկաթ**, **վյու լու կ** (ավելուկ), **պըրզանու ր**, **վըտնաման**, **կարմունջ**, **կըտօղին**, **վիրի**, **վիրած**, **խօրակ**, **էրակ** (երեկ), **հընիրակ** (երենկ), **անիւ**, **անիւ**, **դիվէրիւ**, **ըշտափիւ**, **ոնիւ**, **ըղօղիւ**, **կարիւ**, **կարաւ**, **հէռաւ**, **կըծանաւ**, **կըէնաւ**, **հըմանչկուտ**, **ըստըկօտին** (սատկոտում էին), **նըստօտած**, **տըվարած**, **անօթկը**, **դա՛նչաք**, **արկանք**, **դինակ**: Բայց դա համընդհանուր երևույթ չէ. Բանանցի բարբառում շեշտը կարող է ընկնել նաև վերջին վանկի վրա, օրինակ՝ **յըղըծու՛**, **մըղմո՛ղ** (ցեց), **պիհիր**, **ըղտիրի** (աղաման), **պամիդօր**, **ծըվծըվալ**, **կըսկըծալ**, **հըվըքի՛** (հավաքում էի), **քինին** (գնում էին). հատկապես առաջին վանկում գաղտնավանկ ունեցող բառերում՝ **բըրչիմ** (մրջյուն), **սըռսոռ**, **քըրսոնք** (քրտինք), **քիթալ** (գդալ), **կըրակ**, **փըթրոկ**, **կըպչան**, **մըղակ**, **հինգէր**, **տընագ**, **սըխտօր**, **խինձօ՛ր**, **թըխծըկան**. որոշ գոյականների հոգնակի ձևերում՝ **ծըղկընի՛**, **դընգընի՛** (եղունգներ), **վըրցըկնի՛** (աքլորներ), **տըխտըկնի՛**, **վըտնըմընի՛** (կոշիկներ), **հըրըվընի՛**, **քա մա րնի՛** (գոտիներ), **պինիլքնի՛** (բանալիներ), **ծիան** (ծիեր), **ծիվա՛ն** (ծվեր), **կըրյանք** (գրքեր), **գյուղարանք**, **ճըմպըէք**, **բըխճէք**, **տիոնէր**, **կըոնըէր**, **ծընգնըէր**. որոշ բայերի անորոշ ձևերում՝ **կիրիւ**, **կըրիլ** (կրել՝ տեղափոխել), **տինիւ**, **սըրիւ**, **ճիրիւ**, **կըզնըվիլ**, **պըրծընիլ**, **ինգնիլ**, **պըտըռիլ** (պտրել՝ փնտրել), **կըտրիլ**, **չըխչըխպիլ**, **մընջալ** (ննջել), **ճըրըրալ**, **դըմբըղմբալ**, **մընալ**, **քինա՛լ**, **ծըլլալ**:

Պետք է նկատել, որ առաջին վանկում գաղտնավանկ ունեցող վերջնաշեշտ երկվանկ բառերի նմանությամբ, որպես կանոն՝ այլ բառերում էլ շեշտից առաջ եղած ձայնավորները՝ հնչյունափոխվում են **ը-ի՛** ըրէքնակ (արեգակ), **ճըպատ** (ճիպոտ), **կըսօր** (կեսօր), **ծըհան**, **պըղարաք**, **հըցատուն**, **վըրթիվեր**, **պըհարանք**, **պըտըհան** (պատուհաս). համեմատենք նաև տարբեր բառաձևեր՝ **վըտնաման-վըտնըմընի՛**, **անջակ-ընջըկնի՛**, **կըէոիք-կըռքընի՛**, **լըբանստրակ-լըբըստրըկնի՛**, **արկաթ-ըրկըթնի՛**, **դինգ-դընգընի՛**, **հալավ-հըլըվնի՛**, **ագատ-ըզըղութու՛ն**, **հըպարապ-պըրըպութու՛ն**, **առանչ-ըոչինա՛կ**, **ոնջ-ընջօտիւ**, **ոնք-ընքանէչ**, **թըէփուռ-թըփոըկանիլ**, **ծալ-ծըլպատակ**. կան նաև բացառություններ՝ **հոլլը-հուլատըէր**, **թըռթըռու՛նք-թըռթըռունքնի՛** (թարթիչ), **սու թու՛ն-սու թու՛նի** (սյուններ), **իրէս-իրէսնի՛**, **դինակ-դինակնի՛**, **արծիվ-արծիվնի՛**, **հէրու-հէրվանըէց**, **պու՛ն-պինա՛կ** կա՛լ:

Հայտնի է, որ հայ արևելյան բարբառները չեն պահպանել գրաբարյան նախդիրները: Բայց կան մեծ թվով բառեր ու բառակազմություններ, որոնց մեջ դրանք առկա են քարացած ձևով և չեն գիտակցվում որպես բառակազմական միավոր: Բանանցի բարբառում մի շարք բառեր կան՝ կազմված **գ**, **առ**, **ի**, **յ**, **ընդ** նախդիրներով, օրինակ՝ **գիրավ ածիլ** (վրան, իր վրա փաթաթել), **գիրավ կյալ**, **գիրավ տալ** (նույնը), **գիրավ հընցնիլ** (իրար անցնել՝ անհանգստանալ,

հետաքրքրվել, այցելել), կամ **յ(հ)օտն անիլ** (կանգնեցնել, արգելակել), **յ(հ)օտն իլիլ** (կանգ առնել):

Առ նախդիրի քարացած մնացուկ է **առին** բառը, որ նշանակում է հետը՝ **րախըէն առին/ս/տ(դ)**: **Ն**, **ս**, **տ** բաղաձայնները դիմորոշ հոդեր են: Այս կապակցությունները բառերի սերտաճման օրինակ են, որի արդյունքում նոր բառեր են առաջանում: Նման օրինակներ են **տու՛րու րկյա լ** (ընդ իրար գալ), **քանց//կանց** (քան գ-), կամ **դիբա** (դեպ ի), **դըվըէր** (դեպի վար), **դիվէր** (դեպի վեր), **դէս/տ/ն** (ընդ այս/դ/ն), **դ/թօ րը** (ընդ ռրը՝ ռր), **վըրդըէվըէրի** (որտեղ որ է), **տըղօրմա** (տեր ողորմյա՝ թագեհ), **կըլխըվըէր** (գլուխն ի վեր՝ զառիկոյ), **ծըկնուի** (կայծոռիկ), **կըհըէրը** (քո հայրը՝ միայն որոշյալ առումով) բառերը:

Բառեր կան, որոնք այնքան են հեռացել նախնական ձևից, որ անճանաչելի են դարձել: Օրինակ՝ **ծըհան** բառը: Սա իրականում բարդ բառ է՝ կազմված հաց և հան արմատներից. նշանակում է հացը փոխից կամ թոնրից հանելու երկաթե ձող: Բառասկզբի հա վանկը ընկել է՝ կարելի է ենթադրել՝ վերջնաշեշտության պատճառով. մնացել են երկրորդ և երրորդ վանկերը. այսպես՝ **հացահան>հըց ըհան>ցըհան>ծըհան**:

Նման զարգացում են ունեցել նաև **ծիլի** (ածելի), **հիլի** (հայելի), **դինակ** (եղանակ), **դինգ** (եղունգ), **դանչաք** (աղաչանք), **դօթիլ** (աղոթել), **րաբա** (արաբա), **րախա** (երեխա), **ռավըէտ** (առավոտ), **րու գու** (իրիկուն), **րէգի** (երեկ), **րէժան** (արաժան), **վու լու կ** (ավելուկ), **նանուխ** (անանուխ), **դարկիլ** (ուղարկել), **բըսպարիլ** (ապսպրել) և այլ բառեր: Քանի որ եռավանկ, քառավանկ բառերը շատ երկար են խոսակցական լեզվի համար, առաջին վանկը թուլանալով ընկնում է, և բառերը նոր կերպարանք են ստանում: Հնարավոր է, որ հենց այս երևույթն է ընկած նաև **ծըկըլթալ** բառի հիմքում: Նախ դիտարկենք իմաստը. նշանակում է կարճ ճիչ արձակել, ծղրտալ, հեծկլտալ. օրինակ՝ **«Ռավըէտը հըվըխօսին մի վըէրցակ ծըկըլթաց թառին»**: Իմաստային զուգորդությունն ակնհայտ է:

Նախ հեծկլտալ բառի մեջ կարող էր, բնածայնական բառերի համաբանությամբ, **(խըլթխըլթալ, բըլթբըլթալ)**՝ տ>թ հնչյունափոխություն լինել՝ կլտ>կըլթ, ապա կրճատվել առաջին անշեշտ վանկը՝ **հեծկլտալ>հեծկըլթալ>ծըկըլթալ**:

Բարբառներին, ինչպես բոլոր խոսակցական լեզուներին, հատուկ են տարբեր տիպի դարձվածքները: Դրանց մեջ մեծ տեղ են գրավում հարադիր (երկու և ավելի բառերից կազմված) բայերը: Նման մի շարք կապակցություններ, որոնք մեծ տարածում ունեն բարբառախոսների շրջանում, գործածական են նաև գրական հայերենում: Բայց կան հատկապես բարբառային կազմություններ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում իմաստային առումով, քանի որ գրական հայերենում չկան, և բարբառից բարբառ տարբեր են: Օրինակ.

ա) **վըէր ունիլ-վերցնել**. **վըէր կըցնիլ-արթնացնել**, վեր կացնել. **վըէր հընցնիլ-վերանալ**. **վըէր թըռչիլ-արթնանալ**, անակնկալի գալ. **վըէր հատիլ-թակել**, ծեծել.

ՎՐԷՐ ԶԱՊՎԻԼ-անհետանալ (անեծքի ժանր. «**ա՛, տու վրէր քաղվրէս...»**). **ՎՐԷՐ ԿԱԼ**-վերցրու:

բ) **ՎՐԷՐ** (վար) **ածիլ**-թափել. **ՎՐԷՐ տա ոնա** Լ-թափվել (հեղուկի մասին՝ **ճուրը վրէր ա տառնում**). **ՎՐԷՐ կյա** Լ-1. թափվել (ոչ հաշվելի առարկաների մասին՝ **տիրէվը, մազը վրէր ա կյա լի**), 2. իջնել (**ՎՐԷՐ յէ-իջիր**). **ՎՐԷՐ թափիլ**-թափվել (դարձված՝ «**միսըս վրէր թափրէց**»). **ՎՐԷՐ ինգնիլ**-1. ընկնել, 2. մնալ. **ՎՐԷՐ անիլ**-1. թափել, 2. սափրել:

գ) **Տու ս անիլ**-ամուսնալուծվել. **տու ս կյա** Լ-ելնել, դուրս գալ (**տո՛ւ սյէ-դուրս ել**). **տու ս պիրիլ**-դուրս բերել. **տու ս ինգնիլ**-դուրս ընկնել. **տու ս տա ոնա** Լ-դուրս թափվել. **տու ս պրծնիլ**- դուրս պրծնել. **տու ս տալ**-դուրս տալ:

դ) Ամենաարտառոց իմաստներն ունեն **նի** (ներս) մասնիկով կազմված դարձվածները. **նի անիլ**-ներս անել. **նի ինգնիլ**-ներս ընկնել. **նի հիլ**-1. ելնել՝ ծառ, աստիճան, 2. հեծնել. **նի կյա** Լ-ձեռք տալ. **նի ոնիլ**/**կալիլ**-սկսվել՝ անձրև, ձյուն, կարկուտ. **նի պրծնիլ**-ներս պրծնել. **նի տալ**-ներս տալ, ուտել. **նի կրէնալ**-բռնկվել, **նի կրցնիլ**-հրդեհել. **նի մըտնիլ**-ներս մտնել, **նի կապիլ**-խփել. **նիստա կրէնալ**>կպչել:

ե) **Վիրա անիլ**-նետել. **Վիրա կյա** Լ-1. հարձակվել, 2. գիրանալ. **Վիրա պիրիլ**-վրա բերել, **Վիրա հըսնիլ**-վրա հասնել. **Վիրա տալ**-վրա տալ:

զ) **Տակն անիլ**-սուզվել. **տակը տալ**-1. սադրել, 2. կրակը բորբոքել. **տակավն անիլ**-թաքցնել:

է) **Մէջ անիլ**-միջուկը դուրս տալ՝ ձմերուկի, լոբու. **մէջինգնիլ** - մեջ ընկնել, **մէջ տալ**-1. միջուկ տալ, 2. ընդմիջել. **մէջ քիցիլ**-մեջ գցել:

ը) **Յէտ անիլ** - 1. բացել, 2. գրտնակել. **յէտ ինգնիլ**-հետ մնալ, ուշանալ. **յէտ ոնիլ**-կտրվել՝ անձրևը, ձյունը. **յէտ կյալ** - 1. վերադառնալ, 2. հալվել. **յէտ կրէնալ**-հրաժարվել. **յէտ քիցիլ**-հետ գցել՝ 1. կուտակել, 2. ուշացնել:

թ) **Հէտ անիլ**-փակել՝ դուռը, լուսամուտը:

Բարբառային հնագույն բառերի առանձին տեսակ են բնիկ հայերեն բառերը, որոնք երբեմն գրաբարից ավելի հնատիպ կերպարանք ունեն: Դրանցից մեկը անուն բառն է, որ Բանանցի բարբառում հնչում է **անում** ձևով՝ առանց մ>ն հնչյունափոխության, ինչպես նախագրային հայերենում պետք է որ հնչած լինի: Բացառական հոլովը նույնպես պահպանում է հնատիպության դրոշմը՝ **անըմանի՝** անվանից. որպես կապական բառ կա դերանվանական կապակցությունների մեջ՝ **իմ, քո, նրա անունից՝ իմ անըմանի, քու անըմանի:**

Մի քանի հնատիպ տարբերակով է ավանդված մրջյուն բառը՝ **մրջիմն>բըրչիմ, մօրմօնջ, մըրճէղ:**

Անեծքի մեջ պահպանվել է (**յ**)**ատակ** բառը՝ ստորին աշխարհի՝ դժոխքի իմաստով. գուգորդվում է փոխառյալ **ջիհա ննա մ** բառի հետ. «**ջիհա ննա մը քինա ս, ատակը քինա ս**»:

Եվս մի բարբառային բառ՝ դարերի փոշին վրան **փըռանց**. նշանակում է հազիվ, հազիվհազ, «**փռանց յէկա**» (հազիվ եկա), «**փռանց հըսա՛**» (հազիվ հասա), «**փըռանց հըսկանցանք**» (հազիվ հասկացանք): Բնիկ հայերեն բառ է. **բուռն** բառի գրաբարյան հոգնակի սեռականը՝ **բռունք-բռանց: Բուռն** բառը փոխաբերաբար նաև ուժ, զորություն է նշանակում: **Բռանց** կնշանակի գոռով. «**փռանց յէկա**»՝ գոռով եկա:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն բարբառային բառերը, որոնք հաճախ չեն հանդիպում բարբառներում, երբեմն էլ տեղական նշանակության, դիպվածի բերումով ստեղծված բառեր են, օրինակ՝ **հըռածած, հըլատար, պըհարանք, հընիրակ** (երնեկ), **էրակ, պատճառիվէր, կօկօզ, պըրտըտու ս, պըրտօ դ, տափըմըտած, կիտա տա ր** (գետատար), **թըրըջօղում** (վեճ, կռիվ), **ծիծինք** (ճկոյթ), **հօջիլ, հօրթունք** (շարժուն երեխա), **յէ** (արի), **պիթ** (ուղքի մատ), **օնչօր** (ոչ ոք), **պիրօ վիլ, քածան** (փաղաքշական՝ աղջիկ երեխա)...

Հըռածած. թանապուր, թանավ (եռ ածած՝ ի տարբերություն չեռացրած թանապուրի): Հ. Աճառյանն արմատական բառարանում գրում է ց-ով՝ հռացած՝ ստուգաբանելով որպես եռալ չեզոք բայի հարակատար դերբայ՝ եռալ-եռացած: Ըստ իս՝ հռածած-ը պետք է ստուգաբանել որպես եռ ածած (եռ ածել հարադիր բայի հարակատար դերբայ), քանի որ Արցախի բարբառի տարբեր խոսվածքներում եռացնել բայի փոխարեն գործածվում է եռ ածել կազմությունը (եռալ չեզոք բայի եռացնել պատճառականի փոխարեն՝ **եռ ածել ներգործական** բայը):

Ըստ այդմ էլ **հըռածած** բարբառային բառը նշանակում է եռ ածած (եռացրած), և ճիշտ է ծ-ով տարբերակը, ինչպես հնչում է բարբառում:

Պըրան(վ)իլ. պառկել, մեկնվել: Շրջել, շրջվել բառերից իմաստափոխությամբ կազմվել է պառկել իմաստով նոր բառ՝ և պարզ՝ **պըրանվիլ**, և հարադիր՝ **պարան ինգնիլ**: Պառկել իմաստով գործածվում է նաև **թէք ինգնիլ** հարադիր բայը, իսկ պառկել-ը գործածությունից դուրս է եկել:

Պըհարանք. բարբառում մի հետաքրքիր բառ կա՝ պըհարանք (պահարանք). նշանակում է պատկեր, դեմք, դիմանկար, արտաքին տեսք...Թվում է, թե թյուրիմացություն պիտի լինի կամ սխալանք. ինչ կապ կարող է ունենալ մարդու արտաքինը պահարան իմաստի հետ: Պարզվում է՝ կարող է, և այն էլ՝ սերտ կապ:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն պահարան բառի դիմաց գրում է. «Պղատոն ասէ. որպէս ահա յումեմն՝ ի պահարանում եմք... պահարան գոլ զմարմին բանականին անձին», այսինքն՝ «Պղատոնն ասում է, որ պահարանի մեջ ենք... մարմինը անձի բանականության պահարանն է»: Ահա այս «բանականության պահարանը» մեր լեզվում վերածվել է **պահարանք> պըհարանք**-ի և հոմանիշ դարձել պատկեր(ք), դեմք, տեսք հասկացություններին: Իմաստի նեղացման արդյունքում էլ **պըհարանքը** սկսել է նշանակել դեմք. «**Ինքը փիսն ա, ամա պըհարանքը լա վն ա**»: Անեծքի մեջ նույնանում է **պատկէր(ք)** բառի հետ, որը

նույնպես արտաքին տեսք, դեմք է նշանակում. «Պրհարանքըտ//պանտկեր(ք) ըտ թաղըէմ», «Պրհարանքըտ մըգօված (նգովված)»:

Հըլատար իլիլ. վախենալ, սարսափել: Նույն իմաստով մոտիկ բարբառներում տեսնում ենք **հըլածակ իլիլ**՝ հալածյալ լինել բայը: Հալածել բայի հիմքը՝ հալած (հալածանք), գրեթե բոլոր բարբառներում կա, բայց ամեն տեղ տարբեր կերպարանքով. ինչպես և գրական հայերենում, հանդիպում է միայն կապակցությունների մեջ: Հիմնականում գործածվում են *հալածական* ածականի կապակցությունները՝ *հալածական լինել, հալածական դառնալ, հալածական անել* և այլն: Արցախի բարբառների մեծ մասում այս հալածական ածականը վերջից կրճատվել է, դարձել հալածակ՝ **հըլածակ անել, հըլածակ դառնալ** և այլն (հալածվել, քշվել): Ընդ որում՝ բառը նաև իմաստային զարգացում է կրել. նոր իմաստը ածանցվել է նախորդից. նշանակում է սարսափահար լինել, լեղաճաք լինել:

Բանանցի բարբառում այս բառը այլ կերպարանք է ստացել՝ **հըլատար իլիլ, հըլատար անիլ**՝ վախենալ, վախեցնել: Կարծում եմ՝ հիմքում կրկին «հալած» արմատն է, բայց այլ կապակցությունից՝ հալածատար. ոչ թե հալածական լինել, այլ հալածատար լինել, որն էլ կրճատվել է, դարձել հալատար (հըլատար) լինել, անել:

Բանանցի բարբառում կան բառեր, որոնց զուգահեռները գրական լեզվում արդեն չեն հանդիպում, օրինակ՝ **փըրսըվըէր**՝ փորս ի վար (փոր բառի գրաբարյան հոգնակի հայցականը), նշանակում է բերանքսիվար. պառկել բառի հոմանիշն է՝ **փըրսըվըէր ինգնիլ**՝ պառկել: **Պըռտըտու ս.** նշանակում է թարս, ներսը՝ դուրս, պորտը դեպի դուրս. «**Քու լըէնին պըռտըտու ս ա կէցէլ**»: **Պըռըշկած.** նշանակում է խեղճ, խեղճացած, իսկ բառացի՝ պոռոշը արած: Կազմված է պոռ(ն)կ՝ եզր, շուրթ բառից՝ -ոշ վերջածանցով:

Ունենք նման կազմությամբ՝ -տի վերջածանցով **պըռուշ-տի և լօշ-տի** (լոշ, լավաշ) բառերը:

* **Մըղակ.** մուտք, շեմ(ք). ըստ Գ. Զահուլյանի՝ մուղ, մղել արմատից է կազմված: Եթե այդ մեկնությունը հաստատվի, ապա այս բառին շատ հին ծագում պետք է վերագրել՝ սկսած այն ժամանակներից, երբ տուն մտնելը ավելի շուտ ներս մղվել էր նշանակում՝ դեպի գետնափոր կացարան:

* **Ունել//ունիլ.** այս բառը ունենալ բայի հիմքն է, որ պահպանվել է ոչ միայն հարադիր բայերի մեջ՝ **վըէր ունիլ, նի ունիլ, գիրավ ունիլ**, այլև անկախ գործածական բառ է, որ նշանակում է փակել, կալել. օրինակ՝ **աչքըէրո ունիլ**՝ աչքերը փակել պահմտոցի խաղի ժամանակ: Խաղի անունը նույնպես պարունակում է *ուն* արմատը՝ **կյու դլու կու նի**. կազմված է գաղ+լու+կ+ունի բաղադրիչներից. ծագում է «**կյա դլու կըէնալ**» արտահայտությունից:

* **Քըռանգաճ.** բարբառներում ականջ բառը շատ է փոփոխվել. բառի երկու հատվածները դրափոխվել են՝ անջ-ը եկել է առաջ: Որոշ բարբառներում այդպես էլ մնացել է՝ **անջակ** <ականջ:

Բայց մեր բարբառում գոյություն ունեցող **քըռանգաճ/ջ-ը** (քառականջ՝ չլսող, չար, անհնազանդ) բոլորովին այլ բառից է կազմված՝ անգաջ/ճ-ից: Այս դեպքում արդեն տեղափոխված վանկերով **անջակ-ի կ և ջ** բաղաձայններն են տեղերով փոխվել, բառը դարձել է *անկաջ, կ-ն ն* ձայնորդի ազդեցությամբ ձայնեղացել է, դարձել գ՝ անգաջ (ինչպես անտեր-ը՝ **անդըէր**), բառավերջի ջ-ն էլ երբեմն ճ է հնչում: Որոշ բարբառներում ականջին անգաջ են ասում: **Քառանգաջ** բառը այս **անգաջ**-ից է կազմվել:

Ընջըկըփըռնուկ. «ընջըկըփըռնուկն ինչ». հարցնում էին, երբ մեկին լավ լուր էին բերում (**ավէղիս**): Եվ լավ լուրի հասցեատերը կարող էր նվեր տալ, կամ խոստանալ, կամ բավարարվել միայն շնորհակալությունով: Լավ լուրի դիմաց՝ երեխայի ծնունդ, գինվորի վերադարձ, օտար երկրից հարազատի վերադարձ և այլն, նվերն անպակաս էր: Մանր-մունր լուրերի համար ուղղակի բավարար էր այդ բարի, ուրախ արտահայտությունը. այն ինքն իրենով արդեն նվեր էր լուր ստացողի և լուր բերողի համար, ինչպես, ասենք, «**անշկըտ լիս**»-ը:

Ընջըկըփըռնուկ-ը աչքալուսանքի դիմաց տրվող նվերն էր: Իսկ որտեղից է առաջացել այդ արտահայտությունը:

Որոշ վայրերում ականջըռնուկի ասում էին դրամին, որ նետում էին մարդկանց հարսանիքի ժամանակ: Դրամի փոխարեն կոնֆետ կամ միրգ կարող էր լինել: *Ականջըռնուկ-ը* կամ *ականջկալեք-ը* որոշ վայրերում նաև մանկական խաղ էր: Խաղը մոտավոր նկարագրված է այսպես. խաղացող երեխաները մեկի ականջը քաշում էին այնքան ժամանակ, մինչև գետնից վերցրած իրը ցած էր գցում:

Վարդուհի Բաղայան

Գրականություն

Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, 1913:
Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն, 1911:
Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, 1926:
Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայոց լեզվի բարբառային բառարան, 2001:
Ալգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1836:
Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, 1944:
Զահուլյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, 2010:
Սարգսյան Ար., Ղարաբաղի բարբառի բառարան, 2013:

